# ԷՋՄԻԱԾԻՆ



ԾԹ ՏԱՐԻ

# ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ
ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Յ. – Է.
2003

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ


ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանին
«Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . 3
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Արմանդ Արապյանին «Ս. Գրիգոր Լուսավորիչ»
շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . 5
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը
Ֆադեյ Սարգսյանին «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ»
շքանշանով պարգևատրելու մասին . . . . . . . . 7
Հայրապետական գնահատություն . . . . . . . . 9

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության
Սահմանադրության օրվա առիթով . . . . . . . . 10
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի
ցավակցական գիրը Արմեն Խոստիկյանի սգակիր ընտանիքին . . . . . . 11


## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ


Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Պատարագին . . . . 12
Տ. Նորվան եպիսկոպոս Զաքարյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Պատարագին . . . . 14
Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Պատարագին . . . . 17
Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանի քարոզը՝ խոսված
Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ուխտի Պատարագին . . . . 20


## ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ


**Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ** - «Յովսէփ այրն նորա» . . . . . . . . . . 25
**ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈԼՈՎՅՈՎ** - Զոհի և ողորմության մասին . . . . . . . . 28

## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Կիլիկյան Հայաստանի ու Եգիպտոսի մամլուքյան սուլթանության առաջին ռազմաքաղաքական բախումը . . . 37
**ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ** - Մահկանաբերդ . . . 44

Կիլիկյան դրվագներ
**ՄԻՍԱՔ ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ** - Մի բարավորի պատմություն . . . 50

**ՍԱՄՎԵԼ Մ. ՇԱՀԻՆՅԱՆ** - Քարանձավները հայ ժողովրդի հոգեկերտվածքի և մշակույթի ձևավորման գործընթացում . . . 55
**ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ** - Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ ազգային կուսակցությունները 1889-1891 թվականներին . . . 75
**ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԱՏԻԿՅԱՆ** - Խանասորի հերոս քահանան . . . 80
**ՊԱՐԳԵՎ ՎԱՅՈՑՁՈՐԵՑԻ** - Երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոս Չորեքչյանի նամակները Մոսկվայում ուսանող Մայր Աթոռի սարկավագներին . . . 85

## ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

**ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ** - Նորահայտ մի էջ Նիկողայոս Ադոնցի կրոնագիտական ժառանգությունից . . . 89
**ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ** - Հայոց Տերունական սրբապատկերները . . . 94
**ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ** - Հայ ոգին Կոստան Զարյանի որոնումներում . . . 97

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

**ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿԱՎԱԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** - Մայր Աթոռում փեղի ունեցավ Սուրբ Էջմիածնի ընդհանուր միաբանական հավաքը . . . 101
Ձեռամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծվեց Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի նորակառույց Սրբոց Նահատակաց եկեղեցին . . . 107
Վիրահայոց թեմի ուխտագնացությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . 108
Հարավային Ռուսաստանի հայոց թեմի ուխտագնացությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածին . . . 109
Գայ գյուղի երեխաների աշխատանքները ցուցադրվեցին Մայր Աթոռում . . . 110

**Լուրեր Ամերիկայի հայոց Արեւմտյան թեմից**

Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան պաշտամունքը Առաջնորդարանի մէջ . . . 111

Դատատր Արմանդ Արապեան կը պարգեւատրուի «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով . . . 112

**Ամերիկայի հայոց Արեւելյան թեմում**

Ծատրակի աշխարհի ախոյեան Գարրի Կասպարովի հանդիպումը իր ազգակիցներուն հետ . . . 114

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ** - Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի /CEC/ 12-րդ Գլխավոր Ասամբլեան Նորվեգիայի Թրոնդհայմ քաղաքում . . . 115

**ՏԻԳՐԱՆ ՄՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆ** - Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու Երիտասարդաց Միությունը դարձավ «Սինդեսմոսի» անդամ . . . 118

Հանգիստ Արժանապատիվ Տ. Սահակ ավագ քահանա Աշակերտյանի . . . 122

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Իտալիայի դեսպանին. . . . 123

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց ՄԱԿ-ի ներկայացուցիչներին . . . 123

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Միջազգային Իրավունքի հարցերին նվիրված գիտաժողովի մասնակիցներին . . . 124

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Կանադա-Հայաստան բարեկամության պատգամավորական խմբի անդամներին . . . 124

Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդունեց Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին . . . 125

Եկեղեցական բժմ. լուրեր . . . 126

"Эчмиадзин" официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 127

"Etchmiadzin" official monthly of Holy Etchmiadzin . . . 130

"Etchmiadzine" organe officiel du Saint-siège d'Etchmiadzine . . . 133

ՀՐԱՄԱՆԱՒ

# Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՎ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՒՈՐՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈԶԱՊԱԼԵԱՆ

Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ գոհունակութեամբ անդրադառնում շնորհաշատ ու բազմավաստակ հոգեւորականիդ ազգօգուտ ու եկեղեցաշէն երկարամեայ գործունէութեանը:

Սիրելի Սրբազան,

Աւելի քան չորս տասնամեակ առաջ Ձեր ձեռքն առաք հովուական գաւազանը եւ «զհետ երթալ բարեաց» ու «ծառայել Աստուծոյ» պատուիրանին ականջալուր քահանայագործելու ելաք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու լուսապայծառ անդաստանում՝ Ձեզ առաջնորդ ու ապաւէն ունենալով հաւատքն առ Աստուած եւ ծառայութեան նուիրումն ու սէրը հանդէպ հարազատ մեր ժողովուրդը:

Հովուական Ձեր առաքելութիւնը Դուք սկսեցիք Ժնեւի Սուրբ Յակոբ եկեղեցում, այնուհետեւ ընտրուեցիք Անգլիոյ հայոց առաջնորդ եւ Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ արժանացաք Եպիսկոպոսութեան Սուրբ Օծման՝ որպէս նուիրեալ ու բարի ծառայ հաւատաւոր մեր ժողովրդի:

Արդիւնաշատ է Ձեր վաստակն առաւելաբար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Շուրջ քսան տարիներ ծառայեցիք որպէս Մայր Աթոռի դիւանապետ. Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ, Հոգեւոր Ճեմարանի վերատեսուչ, մեր Եկեղեցին ներկայացրեցիք բազմաթիւ միջեկեղեցական խորհրդաժողովներում, ընտրուեցիք Կաթողիկոսական Տեղապահ եւ այժմ էլ շարունակում էք Ձեր փորձառութիւնն ու կարողութիւնները ներդնել Մայր Աթոռի հրապարակչական գործունէութեան արդիւնաւոր իրականացմանը:

Երկարամեայ Ձեր աշխատանքի շնորհիւ այսօր նաեւ ընթերցողի սեղանի վրայ են Ձեր քարոզչական հոդուածներն ու հեղինակած բանաստեղծական ժողովածուները, որոնք հաւատացեալ հայորդեաց հոգիներում սերմանում են սէր հանդէպ Հայ Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան արժէքները, հանդէպ Հայրենի մեր երկիրը՝ իր սրբացած հողով եւ Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնով:

Ձեր գործունէութեան պսակը, անշուշտ, Կոտայքի թեմի Թեղենիք գիւղում կառուցուած Սրբոց Նահապետաց եկեղեցին է, որն այս տարի աստուածապարգեւ մեր հողին եւսռնեց Ձեր փեսիկքով ու նախաձեռնութեամբ: Այսուհետ նաեւ Ձեզ համար է «Երանի եկեղեցի շինողաց» աղօթքը, որ դարեր շարունակ առ Աստուած է բարձրանում հայորդեաց շնորհակալ ու երախտագէտ հոգիներից:

Սիրելի Սրբազան, բարձր գնահատելով տարիների Ձեր վաստակն ու ծառայութիւնները աստուածասէր մեր ժողովրդին, Հայրապետական այսու Սրբատառ Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

**Ս Ո Ւ Ր Բ   Գ Ր Ի Գ Ո Ր   Լ Ո Ւ Ս Ա Ւ Ո Ր Ի Չ**

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Բարին Աստուած հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջութիւն եւ անսպառ կորով ու եռանդ, որպէսզի Դուք շարունակէք Ձեր առաքելութիւնը՝ ի փառս Տիրոջ Սուրբ Անուան եւ ի պայծառութիւն Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցու:

*«Զօրացարուք Տէրամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա» (Եփես. Զ 11) եւ «գիտասջիք թէ իւրաքանչիւր ոք որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի եւ ի Տեառնէ» (Եփես. Զ 8):*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Յուլիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 199

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐՄԱՆՏ ԱՐԱՊՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԱՐՄԱՆՏ ԱՐԱՊԵԱՆ, ՈՐ Ի ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն Արապեան,

Գոհութիւն եւ փառք ենք բարձրացնում առ Աստուած, որ մեր ժողովրդի զաւակները, հաւատարիմ ազգային եւ քրիստոնէական մեր արժէքներին, հայ մարդու ստեղծագործ ու արարող նկարագրին, իրենց ազնիւ ներդրումն են բերում աշխարհի տարբեր երկրների հասարակական կեանքին: Ձեր անունն էլ ծանօթ է ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում՝ իբրեւ բարձրաստիճան դատաւորի, ով իր յաջողուած գործունէութեամբ պատիւ է յաւելում մեր ժողովրդին:

Այսօր առիթն ունենք անդրադառնալու Ձեր ջանքերին ու մասնակցութեանը հայրենական մեր կեանքին: Ձեր ազնիւ նուիրատուութեամբ շուտով պիտի իրականացուի Սուրբ Գայանէ վանքի վերանորոգութիւնը, որպէսզի այն բարեկարգ տեսքով լիարժէքօրէն ծառայի մեր ժողովրդի զաւակների հոգեւոր կարիքներին եւ, իբրեւ հնագոյն ու նշանաւոր սրբավայր, շարունակի աստուածային օրհնութիւն սփռել նուիրական մեր հողին: Մայր Հայրենիքում հոգեւոր վերազարթօնքի այս շրջանում բազմադարեան վանքերի պահպանութիւնն ու վերանորոգութիւնը առաջնային մտահոգութեան ու հոգածութեան առարկայ են Մեզ համար, եւ իւրաքանչիւր նման ջանք կամ աշխատանք այս ուղղութեամբ մեծապէս մխիթարում է Մեզ:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նկատմամբ դրսեւորած Ձեր նախանձախնդրութիւնը եւ Սուրբ Գայանէ վանքի վերանորոգութեանը բերած Ձեր աջակցութիւնը. Հայրապետական Մեր այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամն Աստուած հաւատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ Իր օրհնութեան ներքոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, գործոց յարանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Թող Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ բիւր բարիքների եւ առատ ողորմութեան:

*Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Յուլիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 176

# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍԵԱՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ եւ շնորհաւորում Ձեր ծննդեան 80-րդ տարեդարձի առիթով:

Ցարգարժան պրն Սարգսեան,

Աւելի քան կէս դար Դուք իբրեւ գիտնական, պետական ու քաղաքական գործիչ, նուիրումով ծառայում էք մեր ժողովրդին: Այսօր Մենք ուրախ ենք հաստատելու, որ Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանը Դուք դիմաւորում էք հայրենաշէն ու ազգօգուտ գործերի վաստակով, սիրուած ու գնահատուած հարազատ ժողովրդի ու հայրենի պետութեան կողմից:

Առ Հայրենին որդիական Ձեր սէրն ու անյոգնաբեկ ջանքերը բազում բարի պտուղներ են տուել մեր ժողովրդի կեանքում: Ձեր անմիջական ղեկավարութեամբ ձեռք բերուած գիտատեխնիկական նուաճումները լայն կիրառութիւն են գտել տարբեր ասպարէզներում՝ ընդգրկուելով արտադրութեան ու պաշտպանութեան, կառավարման ու գիտահետազօտական ոլորտներում: Վարելով վարչական պատասխանատու պաշտօններ եւ աւելի քան մէկ տասնամեակ ղեկավարելով Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը, Դուք մեծապէս նպաստել էք մեր երկրի տնտեսական առաջընթացին, յատկապէս՝ Հայաստանի արդիւնաբերութեան վերակառուցմանն ու հեռանկարային զարգացմանը, կրթութեան ու մշակութային կեանքի զօրացմանը:

Մեծապէս ուրախ ենք, յարգարժան պրն Սարգսեան, որ այսօր, որպէս ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի պրեզիդենտ, աննուազ նոյն եռանդով ու նախանձախնդրութեամբ եւ Ձեր հարուստ փորձառութեամբ ծառայում էք հայրենի գիտական մտքի առաջընթացին: Ձեր նախագահութեամբ Ազգային Ակադեմիան յաջողութեամբ շարունակում է իր շնորհակալ առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում՝ բարձր պահելով հայ գիտութեան վարկն ու համարումը:

Մեր սիրեցեալ Հայրենիքին ու ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

**ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ**

պատուոյ բարձր շքանշանը։

Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ յարատեւ եւ քաջամիտ ու քաջակորով գործելու յանուն հայրենի գիտութեան, Մայր Հայրենիքի ու Առաքելական Սուրբ Եկեղեցու։

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ միշտ առողջ ու երջանիկ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին։

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն։*

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 4-ն Յուլիսի
յամի Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 173

# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2003 թվականի հուլիս ամսվա ընթացքում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.
Սարգիս Ավագյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Խաչիկ Չոպանյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Արթր Քեյիշյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Գրիգոր Մանվելյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
Նուբար Հակոբյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

**Օրհնության գիր** է փրվել
Հովհաննես ավ. քհն. Մարուքյանին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով և օրհնությամբ ողջունում ենք համայն մեր ժողովրդին և շնորհավորում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով:

Սահմանադրության ընդունման պատմական իրողությունը խորհուրդ է այն, որը խտացնում է մեր ժողովրդի ազատության ու հայրենյաց սերը, ազգային պետականությունը վերագտնելու դարավոր երազը և այն մարմնավորված տեսնելու երջանկությունը՝ իբրև Աստվածային օրհնություն:

Սահմանադրությունը օրինահարգության մեր ձգտումն է, որպեսզի մեր հինավուրց հողում արդարության և իրավունքի պաշտպանությամբ ծաղկի խաղաղ կյանքը, և մեր զավակները միշտ վստահությամբ ու լավատեսությամբ նայեն գալիքին: Արդ, սիրելի հայորդիք, զորանանք այս տոնական օրվա սրբազան խորհրդով և ողջունենք մեր հանապազօրը, քանզի շնորհընկալ ենք հայոց ազատ երկնքին նայելու: Հավատավոր հոգով ջանանք ու գործենք ի սեր ազատ ու անկախ Հայաստանի անշրջելի առաջընթացության ու բարօրության:

Թող Բարձրյալն Աստված օրհնի հայրենակերտումի մեր ճանապարհը, մեր պայքարի մեջ զորացնի մեզ բոլորիս և ի բարին առաջնորդի մեր ընթացքը:

*Սէր եւ խաղաղութիւն Աստուծոյ եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեանն. ամէն:*

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Ս. Էջմիածին,
4 հուլիսի 2003 թ.

# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ցավով և խորին ափսոսանքով տեղեկացանք հայ թատերական արվեստի կրած ծանր կորստի՝ անվանի դերասան Արմեն Խոստիկյանի մահվան մասին:

Կյանքից հեռացավ մեր ժողովրդից սիրված ու գնահատված տաղանդաշատ դերասանը, ով թատերական բեմերում և կինոֆիլմերում մարմնավորած իր դերերով սերունդների մեջ դաստիարակել է առ հայրենին սեր ու նվիրում և դժվարությունները ծիծաղով հաղթահարելու լավատեսություն: Արմեն Խոստիկյանը ծանրաբեռն իր վաստակով հավերժ պիտի ապրի հայ սերունդների հիշողության մեջ:

Ծանր կորստյան այս պահին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Սուրբ Էջմիածնի միաբանության, Մեր վշտակցությունն ենք բերում հանգուցյալի ընտանյաց անդամներին և բոլոր հարազատներին:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև աղոթում ենք առ Բարեգութ և Ողորմած Աստված, որ երկնային երանական Իր հանգրվաններում խաղաղության ու լույսերի մեջ ընդունի հանգուցյալի հոգին և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի նրա ընտանիքին և բոլոր մերձավորներին:

*Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն:*

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
24 հուլիսի 2003 թ.

# ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

## Տ. ՆԱՐԵԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՇԱՔԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(6 հուլիսի 2003 թ.)

Սիրելի հավատացյալներ. Իջման այս Սուրբ Սեղանին առջև մտովի կերթանք չորրորդ դարու սկիզբը. երբ Հայոց դարձից հետո շինվեց և դեպի երկինք խոյացավ Մայր Տաճարը. և հաստատվեց Ամենայն Հայոց Հայրապետությունը:

Այս տարի տեսա այդ զույգ և աստվածային երևումների 1700-ամյակն է. այսինքն՝ հոբելինական մի տարեթիվ՝ հռչակված Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Երկրորդի սրբատառ կոնդակով:

Ս. Էջմիածինը տվչությունն ու արդյունքն է մեր առաջին Հայրապետ և Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորչի աստվածային տեսիլքի: Ս. Գրիգորն աղոթքի պահին ունենում է հրաշալի և նախախնամական այն տեսիլքը, որը հետո մարմնանալով կամ առարկայանալով՝ դառնում է հայ նորադարձ ժողովրդի առաջին աղոթքի տունը՝ իր մշտամնա հավերժական փայլով և օրհնությամբ: Փոթորկոտ ծովի պես է եղել այդ հրաշքը: Հրաշքներն այսպես են, սիրելիներ: Աստծո միջնորդությամբ եղած իրականություններ, ինչպես տեսա Հայոց երկնքի բացվելը, երբ հրաշք տեսիլքի մեջ տեսա վերից դեպի վար ուղիղ ճառագայթումով ծագում է լույսը երկնային, երևում են լուսեղեն էակներ և նրանց կենտրոնում Ինքը՝ Աստծո Որդին, մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոս: Նա Իր ձեռքում ուներ ոսկե մուրճը, որ զարկում է Արարատյան հեթանոս այս դաշտի սանդարամետին և կոչում. «Ո՛վ մարդ, ինչո՞ւ ես զարմացած»:

Ահա նաև խոսք Աստուծո, որ պետք է կարևորվի և ըմբռնվի ուշադրությամբ, չմոռանանք: Ավետարանիչը երևի այսպես կասեր տեսիլքն ունեցող հայոց Լուսավորչին. «Դու հավատացիր և այժմ էլ քեզանով քո հոտդ. այսպես ձեզ պիտի երաշխավորվի ոչ թե դատապարտությունը, այլ՝ կյանքը հավիտենական»: Ուրեմն հաղթանակ հեթանոսության, անհավատության, սնոտիապաշտության վրա: Մեծ հրաշքի ավարտին Հայոց առաջին Հայրապետն իր գլուխը բարձրացնում է դեպի վեր և ունկնդիր Աստծո այս հրամանին և գոհունակ սրտով անուշտ, ձեռնարկում է հայոց աղոթքի առաջին այս տան կամ, ինչպես սկզբում ասում էին՝ Վաղարշապատի եկեղեցվո կառույցին: Ս. Գրիգոր Լուսավորիչը և հետո արդեն դարձի եկած Արշակունի Տրդատ III թագավորն անձամբ կատարում են կամ ձեռնարկում շինությունն այս եկեղեցվո: Հետո ամփոփում են Հռիփսիմյանց նահատակ կույսերի և մյուս մարտիրոսների նշխարները: Կառուցում են նաև երեք ուրիշ վկայարաններ ևս, աղոթքի տներ:

Շուրջ 1700 տարիներ Ս. Պատարագ է մատուցվում նաև Իջման Ս. Սեղանին՝ Մայր Տաճարի մայր գմբեթի ներքո: Ս. Էջմիածնին հատուկ այս Խորանը արդյունքն է, մարմնավորումը, ինչպես քիչ առաջ ասացի, Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքին: Իջման Խորան, ուր տարին մի քանի անգամ կատարվում են Ս. Պատարագներ: Ս. Էջմիածնի մեջ օծում ստա-

ցած կոչումնավորներ և այլ նվիրյալներ այստեղ՝ Իջման Ս. Խորանի առջև ծնկաչոք կապարում են իրենց ուխտը, զինվորի իրենց նվիրումի պարտականությունը:

Ս. Էջմիածին. ինքը 17 դարյա եկեղեցի: V դարից գմբեթ և ուրիշ շինություններ: Բարեբախտաբար հարավային և մասամբ Հ արևմտյան պատերից մնացած են քարեր հին օրերից որպես հատուկ նշխարներ: Եվ նույնիսկ հունարեն արձանագրություն կա, գիտե՞ք, մեր այս Մայր եկեղեցվո պատին: Ինչո՞ւ հունարեն, որովհետև նախամաշտոցյան եկեղեցի է այս: Ս. Էջմիածինը կառուցվեց, և մոտ մեկ դար հետո մենք ունեցանք մեր Ոսկեդարը՝ Մեսրոպյան Այբուբենը:

Երբ Շահ Աբասն Արարատյան աշխարհի հայությանը գաղթեցրեց և հիմնեց Նոր Ջուղան, հրամայեց բերեն և՛ Գրիգոր Լուսավորչի Աջը, և՛ Մայր Տաճարի որոշ քարեր: Բարեբախտաբար փարված քարերը մի կողմ չեն նետվել, այլ դրվել Նոր Ջուղայում կառուցված Ս. Ամենափրկիչ եկեղեցու շարվածքում:

1804-1813 թթ. ռուս-թուրքական պատերազմների ժամանակ մեծ վնասներ է կրել մեր եկեղեցու՝ Մայր եկեղեցու այս փանիքը: Ռուսական զորքերը երկար ժամանակ այս փանիքի վրա դիրքեր են ունեցել, կրակ են վառել և փանիքը ավերվել է: Ահա այսպես ընդ հուր և ընդ սուր է անցել Ս. Էջմիածինը:

Այսօրվա մեր այս փոքրիկ փուրքը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով, որդիական մեր պարտքն է, նաև փվչությունը, հարգանքն առ այսօրվա 132-րդ Կաթողիկոսն Ամենայն Հայոց, ով օրինակովը մեր բոլոր մեծանուն և շինարար կաթողիկոսների շարունակում է գործը 1700-ամյա սկիզբ ունեցող պատմության: Որով և մենք ասում ենք. «Ուրախ լեր, հարսն անարատ՝ Եկեղեցի Հայաստանեայց» անքննելի քո խորհրդով, «Զանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

«Թագաւոր երկնաւոր, Եկեղեցի քո անշարժ պահեա եւ զերկրպագուս անուանդ քում պահեա ի խաղաղութեան այժմ եւ յաւիտեանս. ամէն»:

# Տ. ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 հուլիսի 2003 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Քոյրեր եւ եղբայրներ,

Նախ եւ առաջ շնորհակալութիւն կը յայտնեմ Աստուծոյ, որ խնձի այս օրը եւ այս ժամը պարգեւեց, անգամ մը եւս արժանացնելով զիս սրբութեան եւ փառաբանութեան այս յարկին վրայ հոգիներու բժշկութեան ու փրկութեան համար Պատարագ մատուցանելու:

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Կաթողիկոսին, Որու հրաւէրով կը գտնուիմ այսօր այստեղ, ուխտի Պատարագ մատուցանելու Ս. Էջմիածնի Մայր Տաճարի շինութեան 1700-ամեակի առիթով, եւ Որու շնորհիւ բախտը ունիմ աղօթքի հրաշալի այս պահը ապրելու ձեզի հետ:

Ուրախ եմ նաեւ, որ այսօր այս Ս. Պատարագին ներկայ են Ֆրանսայէն ուխտաւորներ, որոնք եկած են ամրապնդելու իրենց քրիստոնէական հաւատքը, վերանորոգելու իրենց ուխտը եւ Ս. Էջմիածնէն ստանալու իրենց օրհնութիւնը:

Թող Աստուած բարին կատարէ բոլորին խնդրանքները: Թող հաճելի դառնայ Իր մօտ ձեր բոլորի ուխտերը:

Սիրելի հաւատացեալներ,

Քանի որ այս տարի կը նշուի Մայր Տաճարի շինութեան 1700-ամեակը, բնականօրէն միտքս ու մտածումներս կը յղուին անոր հիմնադրութեան պատումին: Այդ պատումի իմացումով, հոգիս փառք կու տայ Աստուծոյ, որովհետեւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Համբարձումէն քանի մը դարեր ետք, Աստուած անգամ մը եւս Իր Միածին Որդին կը ղրկէ աշխարհ, այս անգամ իբրեւ վայր ընտրելով Հայաստանը:

Հոգ չէ, թէ Միածնի էջքը տեսանելի կը դառնայ միայն մէկ հոգիի՝ Գրիգոր Լուսաւորչին: Հոգ չէ, թէ Ան չիջներ մարմնացման եւ մարդացման աստուածային միեւնոյն ծրագրով կամ միեւնոյն կերպարանքով, բայց Ան կ'իջնէ փրկութեան եւ փրկչական միեւնոյն նպատակով եւ խորհուրդով: Ինչ որ կը պատահի ոսկեայ մուրճի հարուածներու տակ, այս իսկ վայրին վրայ, ուր կը գտնուինք, ճարտարապետական յատակագծի մը գծագրութիւնը չէ միայն, այլ մաքրագործումն է հողի ընդերքին չարի ույժերէն, *հողին արբացումը*, պիտի ուզէի ըսել: Մուրճի հարուածներու տակ կը քեւեռուի չարը, Սատանան, եւ կ'արտաքսուին սանդարամետական անդունդները: Որմէ ետք, այս վայրը կը դառնայ սրբավայր, այսինքն՝ բնակարան երկնքի զօրաց եւ հրեշտակաց, եւ մարդոց քաւարան:

Միածնի էջքը այս վայրին վրայ նշան մըն է, որով Աստուած կ'ուզէ ցոյց տալ հայ ժողովուրդը փրկելու Իր կամքը, նպատակը եւ փափաքը: Եւ կաթողիկէն կը բարձրանայ այստեղ իբրեւ աշտարակ փրկութեան փարոսի, որուն ով որ նայի, չընկղմիր մեղքի ծովուն մէջ:

Այսպիսով, Հայաստանի այս հողատարածքը կը դառնայ կտոր մը երկնային տարածք եւ հայու քրիստոնէական հաւատքի հաւաքական կեդրոնը եւ աղբիւրը: Էջմիածինը իր հիմ-

նաորութեան առաջին իսկ օրէն կ'ըլլայ մեկնակէտը Հայաստան աշխարհի աւետարանումին: Աստուծոյ խօսքը, լոյսը կը սկսի սփռուիլ այստեղէն ամբողջ Հայաստան աշխարհի մէջ: Մեծ է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կատարած դերը 1700 տարուայ հայոց պատմութեան ընթացքին: Քարոզի մը թոյլատրած պահը բաւարար չէ ներկայացնելու համար մանրամասնութիւնները Էջմիածնի կատարած դերին ողջ հայ ժողովուրդի գոյութեան պայքարին մէջ: Բայց այսքանը ըսեմ, թէ Էջմիածինը եղաւ հայ ժողովուրդին գոյութեան եւ փրկութեան վայրը: Արշակունիներու թագաւորական պետութիւնը, առաջին իսկ վայրկեանէն հասկցաւ, թէ հայ հասարակութեան դաստիարակչական աշխատանքը պէտք է վստահի Հայ Եկեղեցիին, եւ Մայր աթոռ Ս. Էջմիածինը տարաւ կազմակերպչական մեծ աշխատանք: Եկեղեցին հայկական ընկերութիւնը հիմնեց քրիստոնէական բարոյականի վսեմ սկզբունքին վրայ: Ժողովուրդը դարձաւ աստուածապաշտ եւ աստուածասէր, եւ որովհետեւ դարձաւ այդպիսին, դարձաւ նաեւ ազգասէր եւ հայրենասէր:

Այս առթիւ կ'ուզեմ օգտագործել ընդհանուր տարազ մը, որ շատ յաճախ քարոզիչներ օգտագործած են, որը հետեւեալն է. *Էջմիածինը ունենալով հարուստ անցեալ, անցեալ մը չէ միայն, այլ՝ նաեւ ներկան եւ երաշխիքը վաղուան գոյութեան:* Ասոնք, սիրելիներ, աժան կերպով արտասանուած բառեր չեն, ասոնք մէկ կողմէ կը վկայեն անցեալի ճշմարտութիւնը, միւս կողմէ ցոյց կուտան, որ Էջմիածինը այսօր դեռեւս պիտի շարունակէ իր առաքելութիւնը, որովհետեւ աստուածային փրկչական ծրագիրը դեռ չէ աւարտած, կը շարունակուի եկեղեցիով: Հետեւաբար Էջմիածինը այսօր եւ դեռ վաղը ընելիք ունի միեւնոյն կարեւորութեամբ:

Անցնող դարուն Ս. Էջմիածինը անցաւ վերիվայրումներէ, դժուարութիւններէ, փառք Աստուծոյ, ներկայիս ատոնք կը պատկանին անցեալի փխուր էջերուն: 21-րդ դարու սկիզբը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջ կը բացուին լուսեղէն նոր ճանապարհներ:

Առաքելական գործունէութեան լծուելու պահը հնչած է:

Կ'ընդարձակուի Էջմիածնի հողատարածքը, կը բազմանան գործադաշտերը, քարոզչական դաստիարակչական կազմակերպութիւններ ծնունդ կ'առնեն վերաքրիստոնէացնելու համար Հայաստանը, Երեւանի Պետական Համալսարանի մէջ Աստուածաբանութեան ֆաքիւլթէթ կը հիմնուի, ուրկէ ամէն տարի որակաւոր աշակերտներ դուրս կու գան ուսուցիչ դառնալու այս ժողովուրդին, եւ անոր ընկերային կեանքին օգնելու, ընկերային կեանք՝ հիմնուած, անշուշտ, դարձեալ քրիստոնէական ուսմունքի վսեմ բարոյականին վրայ:

Այս բոլորին զուգահեռ ժողովուրդէն կը սպասուի, որ որոշ չափով շտկէ իր նայուածքը հանդէպ Էջմիածնին: Մենք պէտք չէ այցելենք Ս. Էջմիածնի Տաճարը որպէս թուրիսթներ, որպէս զբօսաշրջիկներ, այլ պէտք է գանք ճշմարիտ ուխտով, ճշմարիտ ուխտ դրած մեր սրտերու մէջ: Պէտք է գանք աղօթելու համար եւ ոչ թէ դիմաւորելու անցեալի մշակութային փառք մը: Դժբախտաբար քրիստոնէութիւնը, քրիստոնէական ցամաքամասերու վրայ, վտանգին տակ կը գտնուի քարացած մշակոյթ դառնալու: Մեր հաւատքը կենդանի հաւատք է, կենդանի վէմի վրայ հիմնուած, ան կապ ունի կենդանի Աստուծոյ հետ, ան չվերածուի թող քարացած հաւատքի, քարացած մշակոյթի մէջ: Աստուած չընէ, որ քրիստոնէութիւնը քարացած մշակոյթի վերածուի, կռապաշտութեան նոր ձեւի մը ծնունդ տալով:

Սիրելի հաւատացեալներ, մարդկութեան մեծ մասը այսօր սկսած է ընդունիլ, թէ Աստուած գաղափար մըն է մարդկային միտքէն բխած, այլ խօսքով՝ մարդկային մտածողութեան արդիւնք: Կարելի չէ թէ՛ քրիստոնեայ ըլլալ եւ թէ՛ հետեւորդ նման մտածողութեան մը կամ

համոզումի մը: Որովհետեւ ան կը հակասէ Աստուածաշունչի այն խօսքին, որ կ'ըսէ. *Աստուած մարդը ստեղծեց իր պատկերին համաձայն*: Ընդունիլ նման վարկած՝ կը նշանակէ, թէ արարածը կ'ուզէ Արարչին տեղը գրաւել: Մենք որպէս քրիստոնեայ ճշմարիտ հաւատացեալներ պիտի չփորձենք մեր անձնական, անհատական կրօնքը ստեղծելու. մենք եթէ իսկական քրիստոնեայ հաւատացեալներ ենք, մեր հաւատքը պիտի հիմնենք Քրիստոսի հաւատքին վրայ, Քրիստոսի անձին վրայ եւ ոչ թէ մենք մեր կրօնքը ու հաւատքը պիտի յօրինենք եւ պիտի ցանկանք, որ Քրիստոս մեր յօրինած կրօնքին յարմարի:

Ճիշդ է, որ մեր երկրին մէջ աղքատութիւն կը տիրէ, բացայայտ են աշխատանք ճարելու դժուարութիւնները, բայց այդպիսի պահեր այս ժողովուրդը իր ամբողջ պատմութեան ընթացքին անցուցած է եւ դիմագրաւած՝ շնորհիւ իր քրիստոնէական հաւատքին: Անցեալին երբեք այս ժողովուրդի մէջ թշուառութեան պահերուն յոյսը իրենց սրտին մէջ չէ՛ մարած: Անոնք իրենց հաւատքը պահած էին ճշմարտապէս, որովհետեւ իրենց հաւատքը պատուաստուած էին Յիսուս Քրիստոսի Յարութեան հաւատքին հետ: Ատոր համար էր, որ այս ժողովուրդը ամէն անգամ իր դժուարութիւններու եւ դժբախտութիւններու մէջէն յաղթութիւն կ'առնէր: Բայց այսօր, Հայաստանի ժողովուրդին դէմքերը երբ կը դիտենք, անոնց դէմքերուն վրայ փխրութիւն մը կը նշմարենք, որովհետեւ հաւատքի ներքին ուրախութիւնը բացակայ է, ոչ թէ անպայման անոր համար, որ աղքատութիւն կայ, այլ որովհետեւ յոյսը հատուած է, մարած է, փոխանակ վառուելու եւ յուսադրուելու:

Կը զգանք, որ այսօրուան հայկական ընկերութեան մէջ մեր Եկեղեցւոյ պարտականութիւնն է՝ վերարծարծել բոցը յուսավառութեան յուսահատեալ մեր ժողովուրդին:

Սիրելիներ, բնական է, որ ժողովուրդի մը ծոցին մէջ գաղափարական տարբերութիւնները բաժանումներ ստեղծեն, բայց հաւատքի նոյնութիւնը կոչումն ունի բաժանումները հաշտեցնելու եւ բաժանուած հատուածականութիւնները Աստուծմով իրարու քով բերելու:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը որպէս հաւատքի կեդրոն միշտ խաղացած է այդ դերը: Հայաստանը երբ բաժնուած էր երկուքի, միացեալ Հայաստանը կը խորհրդանշուէր Սուրբ Էջմիածնով: Այսօր ալ Էջմիածինը կը խորհրդանշէ մեր ժողովուրդի միութիւնը, որովհետեւ Էջմիածինը կը մնայ միշտ քրիստոնէական հաւատքի մեր կեդրոնը: Այս կեդրոնին հանդէպ մեր նայուածքը պէտք է յստակ ըլլայ: Մեր յոյսի կեդրոնն է անիկա: Եթէ Էջմիածինը փրկութեան փարոս է, ապա այդ փարոսը մեզի միշտ պիտի ազդէ փորձանքներէ:

Թող Աստուած անսասան պահէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, իր Գահակալը, եկեղեցական դասը եւ ողջ հայ ժողովուրդը, անսասան պահէ մեր Հայրենիքը, զօրացնէ մեր պետութիւնը: Աստուած մեր պետութեան ղեկավարներուն առաւել եւս մօտեցնէ իր աստուածային ճշմարտութիւններուն, անոնք չսահմանափակուին միայն երկրաւոր մտահոգութիւններով, որովհետեւ կեանքի մէջ միայն քաղաքական ճշմարտութիւններ չկան, այլ կան նաեւ տիեզերական ճշմարտութիւններ: Ո՛չ միայն կայ երկրի վրայ ապրած մեր այս ժամանակաւոր կեանքը, այլ նաեւ յաւիտենականը:

Տիեզերական ճշմարտութիւնը երբ իրօք ապրուի, այն ատեն մենք այս երկրաւոր ժամանակաւոր նեղութիւններուն բարձր աչքով կը նայինք, համբերութիւնը մեր մէջ կը սկսի տեղաւորուիլ եւ յոյսը կը վերսկսի բոցավառիլ եւ այդ կերպով մեր ժողովուրդը անգամ մը եւս կը դառնայ Աստուծոյ ժողովուրդ:

Այն, ինչ որ գծագրուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքով, ուր՝ *Աստուած, Հայրենիք եւ ժողովուրդ* եռեակը մէկ միութիւն կազմեց, այդպէս ալ այսօր հայ ժողովուրդը մնալով յարութեան հաւատքի մէջ միացած եւ զօրացած, թող կերտէ իր Հայրենիքի ապագան:

# Տ. ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՈՒԽՏԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(20 հուլիսի 2003 թ.)

*«Հաւատամք յեկեղեցի սուրբ, զթողութիւն մեղաց, հաղորդութեամբ սրբոցն»:*
(Ժամագիրք)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Հավատում ենք Սուրբ Եկեղեցուն, սրբերի հաղորդությամբ մեղքերի թողությանը»:

Սիրելի հավատացյալ հայորդիներ, ուխտավոր քույրեր և եղբայրներ.

Սուրբ Գրիգոր Տաթևացին այս մեկ նախադասությամբ ամբողջացրել է խորհուրդը Եկեղեցի հասկացության: Այս խորհրդով է, Եկեղեցուն հավատալով է, որ մենք հավաքված ենք այստեղ աղոթքի, որ մենք շարունակում ենք լինել մեկ մասնիկը ողջ քրիստոնյա աշխարհի, և այս հավատքով է, որ ամեն օր մենք մեկ մոմ ենք վառում մեր հոգու փրկության համար, դիմում մեր սրբերի բարեխոսությանը, որպեսզի Եկեղեցին ամբողջական դառնա, որպեսզի մեր սրբերի բարեխոսությամբ մեր մեղքերին թողություն լինի և դրանով կարողանանք ազատ հաղորդվել մեր Աստծո հետ:

Աստված իրապես խոսեց մեր հայրերին, և մենք անկեղծորեն հավատում ենք Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքին, հավատում ենք ոչ միայն, որ պատմությամբ և ավանդությամբ փոխանցվեց մեզ, հավատում ենք Ս. Էջմիածնի առաքելության միջոցով, հավատում ենք, որ Էջմիածինը իրապես ոչ միայն պատմություն է, այլ նաև առաքելություն, և այդ առաքելությունն է, որ դառնում է մեզ համար խորհուրդ ու մեզ տանում պատմության գիրկը՝ անդրադառնալու այդ մեծ տեսիլքի խորհրդին, որ ավելի էր, քան ինքը՝ տեսիլքը, և այդ տեսիլքով է, որ այսօր մենք ունենք Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և այս օրհնյալ հողը:

Մեզ համար, որ Հայաստանի սահմաններից դուրս ենք ծառայում, Հայաստանի այս օրհնյալ հողը և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունն ավելի ենք զգում, երբ գալիս ենք այստեղ, քայլում ենք Մայր Աթոռի պարիսպներից ներս, մտնում ենք Ս. Էջմիածնի Տաճար, տեսնում ենք, որ այստեղ օրհնյալ հող է, այստեղից մենք զորություն ենք ստանում, ուժ ու ջերմություն ենք ստանում, որը մեզ օգնում է մեր ծառայության մեջ: Էջմիածինն առաքելություն է այսօր՝ իր բազմաթիվ գործերով, իր 30-ից ավելի թեմերով, ավելի քան 50 եպիսկոպոսներով, ավելի քան 80 վարդապետ-աբեղաներով և 80 ու ավելի սարկավագներով և 100-ից ավելի քահանաներով, իր բազմահազար և բազմամիլիոն հավատացյալներով, իր կառույցներով, իր պատմությամբ, և եթե երբևէ մեկը փորձի հասկանալ Էջմիածնի խորհուրդը, նա անպայմանորեն պետք է տեսնի, որ սա անհասանելի խորհուրդ է, անճանաչելի խորհուրդ է ու անպարագրելի խորհուրդ:

Տեղին է, որ մենք Ս. Գրիգոր Նարեկացու խոսքերով այդ խորհուրդը բացատրենք՝ ասելով, որ անմերձենալի հեռավոր և անքննմիջելի մերձավոր: Իրապես, երբ մենք սիրում ենք մեր Էջմիածինը, երբ շաղախում ենք Էջմիածինը մեր հոգուն ու դարձնում ենք մեր անվան պես, նա դառնում է մերը, մեր հարազատն ու մեր սիրտը ու մեր հոգին, աշխարհի որ մասում էլ որ մենք բնակվենք, բայց եթե մենք նույնիսկ Էջմիածնում ապրենք, ծառայենք այստեղ ու չսիրենք, անմերձենալի հեռավոր է նա դառնում: Այս խորհուրդը մեծ է, որքան էլ որ մեր բանաստեղծները փորձել են Հայ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը բացատրել իրենց բանաստեղծությունների ու խորհուրդների միջոցով՝ դարձնելով նրան իբրև երկինք բարձրացող ցաղկի ճամփա ունեցող հասկացություն, միևնույն է, Էջմիածինը մեզ համար մնում է խորհուրդ, սիրելի հավատացյալներ, և այդ խորհրդին անհրաժեշտ է մոտենալ ամենայն զգուշությամբ և սրբությամբ: Երբեմն ամենօրյա առնչություններով և սպառողություններով գուցե թվում է, թե խորհուրդները հասարակ ու ճանաչելի են դառնում, ամենևին այդպես չէ, որովհետև մեր ծնողը մեզ համար չի դառնում սովորական, որովհետև նա մնում է ծնողական խորհրդի մեջ, անհասանելի մայրական զգացումների մեջ, նույնը նաև Մայր Եկեղեցին, Մայր Տաճարը, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ահա այսօր մենք, իբրև այս Տաճարի սպասավորներ, այդ զգացումով ենք այստեղ: Գուցե վիրահայությունը մի ուրիշ կերպով է զգացել այս խորհուրդը, որ 200 տարիներ առաջ Թբիլիսիի հայաբնակ վայրում խոյացրել է դեպի վեր մի նոր Էջմիածին, ուր նույնիսկ անհավատության ամենադաժան տարիներին այդ եկեղեցու դռները չեն փակվել, խունկ և աղոթք է այնտեղ ծխացել: Ահա խորհրդի հասկացողության մի կերպ ու ձև, որ վիրահայությունը տարիներով իր ավանդապահությամբ ընկալել և ունեցել է և այսօր, կանգնած այս Տաճարի խորանի վրա, նորից մեր մտածումները բևեռվում են դեպի մեր Եկեղեցու հայրերը այն մեծ խորհրդով, որ իրավ և հավաստյավ հայությունը կա և ապրում է՝ հոգևոր խարիսխ ունենալով Ս. Գրիգոր Լուսավորչի աջը և Ս. Էջմիածինը:

Հայությունն ո՞վ է առանց Էջմիածնի, այնպես, ինչպես մարդկությունն առանց Քրիստոսի է, այդպես էլ կարող է լինել հայությունն առանց Ս. Էջմիածնի: Մայր Աթոռն առանց Քրիստոսի՝ ոչ ոք, և հայն առանց Ս. Էջմիածնի՝ ոչինչ: Սա է մեր ուժն ու զորությունը: Եթե կորցնենք մեր Էջմիածնի հավատքը, ապա մենք կորած ենք. չէ՞ որ աշխարհի տարբեր անկյուններում այնքան ազգային հավատքի, կրոնական, մշակութային մարտահրավերներ են այսօր ուղղվում հայության դեմ, որ եթե դույզն իսկ չափով կորցնենք Էջմիածնի խորհուրդը, մենք կդադարենք հայի մեր տեսակից, մեր կերպից ու ձևից, մենք չենք կարող այլևս ստեղծել Կոմիտասի պես մեծ երաժշտություն, մենք չենք կարող երգել մեր հոգևոր շարականները, մեր աղոթքները: Կորցնելով այդ ամենը՝ մենք կորցնում ենք ինքներս մեզ:

Եվ, սիրելիներ, ամենամեծ սերը, որ մենք կարող ենք կենդանի կերպով տածել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նկատմամբ, մեր հավատարմությունն ու հարազատությունն է այս Աթոռին: Ամենքս էլ գիտենք պատմությունը Ս. Էջմիածնի, գիտենք Ամենայն Հայոց Կաթողիկոսության տեղափոխությունները և, վերջապես, 1441 թ. վերադարձը այստեղ, Արևելյան Հայաստան: Հավատում ենք, որ Ս. Էջմիածնի Արևելյան Հայաստանում գտնվելով է, որ հայությունն ունի այս մի փոքրիկ հողակտորը: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այս օրհնաբեր Տաճարի գոյությամբ էր, որ բազմաթիվ նվաճողներ չկարողացան վերջնականորեն ջնջել հա-

յությունն այս աշխարհից: Եթե մեր հայրենիքի Արևմտյան մասը ոչնչացրին, ապա Արևելյան մասը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջոցով կարողացավ գոյատևել, և ահա այսօր մենք ունենք Հայաստանի Անկախ Հանրապետությունը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինն առաքելություն է, և մենք բոլորս այսօր այդ առաքելության մեջ ենք ամենապարզ խոնարհ մեր սպասավորից մինչև ամենաբարձրը և մեր հավատացյալ ժողովրդով այս մեծ խորհրդի նավից ոչ ոք թող դուրս չգա: Այս նավը բոլորիս՝ ողջ հայությանը Հայաստանում թե Սփյուռքում և թե՛ Արցախում ապրող, առաջնորդելու է դեպի նավահանգիստը խաղաղության, և այս մեծ խորհուրդը թող մեզ օգնի, որ մենք հավատարիմ ու հարազատորեն կանգնենք մեր Վեհափառ Հայրապետի կողքին, մեր նպաստը բերենք Նորին Սրբության ծրագրերի իրականացմանը, մեր բոլոր եկեղեցիներում աղոթք բարձրացնենք Հայոց Հայրապետի արևշատության համար, որ կարողանա նա էլ, իբրև մեր Եկեղեցու, մեր ազգի Հայր, նայի մեզ, հովվի մեզ և իր բարի աչքով և օրհնությամբ զորացնի ողջ հայությանը:

Ահա այս մտածումներով, սիրելիներ, իբրև ուխտավոր և ուխտապահ ժողովուրդ վիրահայոց, եկել ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ ասելու, որ մենք շարունակում ենք հարազատ զավակները մնալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և մեր եղբայրական ողջույններն ենք բերել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեր ողջ միաբանությանը՝ եպիսկոպոսական դասին, վարդապետներին, սարկավագաց ու դպրաց դասին, Մայր Տաճարի լուսարարապետությանը, որն այնքան շքեղորեն պահում ու պահպանում է այս Տաճարը, նաև Մայր Տաճարի երգչախմբին, որն այսօր այնքան փառահեղ կատարեց Պատարագը մեր Կոմիտաս մեծ վարդապետի:

Թող զորանա հայությունն իր Էջմիածնով, և Էջմիածնի օծման 1700-ամյա այս մեծ խորհրդով դեպի նոր նվաճումներ գնանք այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

# Տ. ՄՈՎՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(27 հուլիսի 2003 թ.)

*«Դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ. դմա լուարուք»:*
*«Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրա՛ն լսեցեք»:*
(Մատթ. ԺԷ 5)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալ քույրեր և եղբայրներ, սիրելի ուխտավորներ,

Նախ և առաջ այս Սուրբ Սեղանի վրա գոհություն և փառք ենք վերառաքում մեր երկնավոր Հորը՝ Հիսուս Քրիստոսին, որ մեզ ևս Հարավային Ռուսաստանի ժողովրդի հետ միասին, օրհնությամբ Վեհափառ Հայրապետի, արժանի դարձրեց Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով գալու այս սուրբ վայրը, համբուրելու Իջման Սուրբ Սեղանը և այս Սուրբ Խորանի վրա սպանալու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի կենդանի մարմինն ու արյունը և լի հոգով ու լի հավատով մասնակիցը դառնալու այսօրվա այս մեծագույն տոնին, որը հեթանոսական մեկ տոնի անունով կոչվում է Վարդավառ, իսկ քրիստոնեական անվանումով՝ Այլակերպություն կամ Պայծառակերպություն:

Սիրելի հավատացյալներ, այս տոնական օրը եկեք մեկ անգամ ես բացենք մեր հոգու և սրտի դռները, մտածենք ու խորհենք այն մասին, թե ինչ դեր և ինչ նշանակություն ունեցավ պայծառակերպությունը մեզ համար, և թե ինչի համար Աստված պայծառակերպվեց Թաբոր լեռան բարձունքին: Եկեք մի պահ այսօր մտածենք ու խորհենք այդ մասին: Նախ, սիրելի հավատացյալներ, ինչո՞ւ երկու անվանումներ՝ միևնույն տոնին, հեթանոսական և քրիստոնեական, Վարդավառ կամ Պայծառակերպություն:

Վարդավառը հեթանոսական Հայաստանի շատ սիրված ու պաշտպված տոներից մեկն էր, որ ուղղված էր գեղեցկության դիցուհի Աստղիկին: Այդ տոնին ժողովուրդը վարդեր էր սփռում նրա արձանի առջև, այստեղից էլ՝ Վարդավառ անունը: Այդ նույն օրը ժողովուրդը գնում էր գետերի և աղբյուրների մոտ, միմյանց վրա ջուր էին ցանում, ջուր էին սրսկում և միմյանց բարեմաղթանքներ անում՝ ասելով. «Կյանքդ գետի ջրի նման երկար լինի, ակնաղբյուրի պես մաքուր և ազնիվ լինի, վարդի նման գեղեցիկ ու բուրումնավետ լինի»:

Ահա այսպես մեր հեթանոս նախահայրերը վարդերի ու ջրերի մեջ փորձում էին մոռանալ կյանքի դժվարություններն ու փորձությունները: Հայոց Մեծ Դարձից՝ 301 թ. հետո մեր իմաստուն Հայրապետները չջնջեցին, չվերացրեցին հեթանոսական այն տոները, որոնք սիրված և պաշտպված էին ժողովրդի կողմից, այլ նրանք փոխեցին, վերափոխեցին, պայծառակերպեցին, այլակերպեցին և նրանց նոր խորհուրդ ու նոր նշանակություն և նոր դե-

ռակատարություն հաղորդեցին՝ պահելով հանդերձ նրանց արտաքին ձևն ու գրավչությունը:

Այսօր, մեր օրերին անշուշտ, Վարդավառը կորցրել է իր նախկին փայլն ու արարողությունները: Մնացել են առանձին դրվագներ, երբ որ կարող ենք հանդիպել փողոցներում կամ բակերում, թե մանուկները և երեխաները ինչպես են միմյանց վրա ջուր ցանում և ուրախանում: Այսօր այն էապես և ամբողջապես դարձել է քրիստոնեական տոն, որը նկարագրում է մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության հրաշալի դրվագը Թաբոր լեռան բարձունքին:

Սիրելի հավատացյալներ, մեզանից յուրաքանչյուրի կյանքում պատահում են պահեր, վայրկյաններ, երբ ցանկանում ենք, որպեսզի այդ պահը կամ այդ ժամանակը վերջ չունենա, քանզի այն բերում է մեծապես հոգեկան խաղաղություն և հանգստություն մեր հոգիներին, և մենք ցանկանում ենք մնալ և ապրել այդ պահի մեջ: Ահա այդպիսի մի պահ, այդպիսի մի վայրկյան ապրեցին նաև Քրիստոսի աշակերտները՝ Պետրոսը, Հովհաննեսը և Հակոբոսը, երբ Քրիստոսի հետ միասին բարձրացան Թաբոր լեռը: Ինչպես որ մեր Փրկչի կարևոր պատգամները և աստվածային իրադարձությունները հիմնականում տեղի էին ունենում լեռների բարձունքին, այս անգամ ևս Հիսուս լեռան բարձունքին, ինչպես ավետարանիչներն են հաստատում, այլակերպվեց, պայծառակերպվեց: Տիրոջ դեմքը փայլեց ինչպես արեգակը, և Նրա զգեստները դարձան սպիտակ, ինչպես լույսը, և այդ լույսը, որ տարածվեց լեռան բարձունքին, ամբողջապես ողողեց նաև այնտեղ գտնվող առաքյալների հոգիները և դեմքերը: Եվ այդ պահի ամբողջ գեղեցկությունը, ամբողջ գրավչությունն արտահայտել է Պետրոսը՝ դիմելով Քրիստոսին. «Տեր, բարվոք է մեզ աստ լինել. Տեր, մեզ այստեղ լավ է, կառուցենք տաղավարներ մեկը Քեզ, մեկը Մովսեսի և մյուսն էլ Եղիայի համար, և ապրենք այստեղ, այս խաղաղության և հանգստության մեջ»:

Ահա, սիրելի հավատացյալներ, ինչպես է իրեն զգում մարդ անհատը սրբության, մաքրության դիմաց և չի ցանկանում այնտեղից հեռանալ: Եվ իրավացի է Հովհան Ոսկեբերանը, երբ ասում է. «Աստծո լույսով լավ է ամեն տեղ, մթության մեջ լույս է, անապատում ուրախ է»: Մինչ Հիսուս Եղիայի և Մովսեսի հետ խոսում էր իր ապագա չարչարանքների և խաչի մասին, այդ պահին երկնքից մի սպիտակ ամպ իջավ և ծածկեց աշակերտներին, և ամպի միջից մի ձայն լսվեց, որ ասում էր. «Դա՛ է իմ սիրելի որդին, որին հավանեցի, դրան լսեցեք» (Մատթ. ԺԷ 5): Այդ ամենն այնպես էին վախեցրել աշակերտներին, որ նրանք վայր էին ընկել ու վախից ծածկել իրենց դեմքերը: Նրանք վեր կացան միայն Քրիստոսի քաջալերական խոսքերից հետո. «Ոտքի կանգնեցեք և մի վախեցեք», և տեսան իրենց Վարդապետին միայնակ կանգնած լեռան բարձունքին:

Սիրելի հավատացյալներ, ուխտավորներ, մոտենում էին Հիսուսի չարչարանքի, տանջանքի և խաչելության օրերը: Աշակերտներին քաջալերելու, նրանց հավատքն ամրապնդելու համար անհրաժեշտ էր, որ նրանք մեկ պահ, մեկ ակնթարթ զգային Աստծո արքայությունն իրենց աչքի առջև, որպեսզի կարողանային դիմանալ մոտեցող փորձություններին: Ուստի նրանք հոգեպես, մտովի առավել պատրաստ էին տեսնելու և զգալու Քրիստոսի Աստվածության խորհուրդը:

Պետրոսն առաջինն էր հավատքի մեջ, Հովհաննեսը՝ սիրո, իսկ Հակոբոսը՝ համբերության և չարչարանքի մեջ: Բավական է հիշել, թե ինչպես, երբ ժողովուրդը Քրիստոսին ընդունեց Եղիայի փոխարեն, Պետրոսը դեմ գնաց ժողովրդի կամքին և հայտարարեց, որ Քրիստոս Աստծո Որդին է:

Պայծառակերպության հրաշքը կատարվեց, սիրելի հավատացյալներ, մեզ համար, միայն մեզ համար: Մեր Եկեղեցին միշտ այս Սուրբ խորանից դարեր շարունակ հիշեցրել է, թե ինչպե՛ս պետք է մենք արժանի մասնակիցը դառնանք Քրիստոսի պայծառակերպության խորհրդին, բայց նաև ինչպե՛ս կարող է մարդ անհատը մասնակիցը դառնալ աստվածային այդ մեծագույն խորհրդին: Կարող է, կարող է՝ հոգևոր իմաստով, քանզի Աստված Սուրբ Հոգին տվեց առաքյալներին և առաքյալների միջոցով, մկրտության միջոցով այն նաև բաշխվում է յուրաքանչյուր քրիստոնյայի, ուստի պարզ է դառնում, որ մենք կարող ենք մասնակիցը դառնալ Քրիստոսի պայծառակերպության խորհրդի, քանզի մենք ևս, ինչպես ավետարանիչները, ստացել ենք Սուրբ Հոգու շնորհները, և Պողոս առաքյալն ասում է, թե պայծառակերպությունը շարունակվում է բոլոր քրիստոնյաների համար, ովքեր հավատում և հետևում են Քրիստոսին: Իսկ ահա Հիսուսի հանդիպումը լեռան բարձունքին Մովսեսին և Եղիային ունի իր ավետարանական բացատրությունը, քանզի Մովսեսը հիմնադիրն էր և օրենսդիրը Մովսիսական կրոնի, իսկ Եղիան առաջինն էր, որ հրեղեն կառքով երկինք բարձրացավ, և Հին Կտակարանի այս երկու լուսե մարդիկ իրենց երկրային կյանքի մեջ լուսապսակով պսակվեցին. Մովսեսը՝ երբ Սինա լեռան բարձունքից փառաբանյա պատգամը ձեռքին իջնում էր ցած, և Եղիան՝ հրեղեն կառքով երկինք բարձրանալիս: Եվ ահա Հին Կտակարանի երկու լուսե մարդիկ եկան վկայելու նոր լույսի, Աստվածային լույսի մասին, որն ասում էր. «Ես եմ լույսն աշխարհի»:

Հետևաբար, սիրելի հավատացյալներ, պայծառակերպության այս դրվագն ուսուցանում է մեզ, որ Քրիստոս Աստծո Որդին էր և Փրկիչը աշխարհի, և բացվում է թաքնված գաղտնիքը, և Քրիստոսի ֆիզիկական մարմինը միանում է Նրա Աստվածայինին, միանում է մարդ և Աստված. և երկրորդ՝ բացվում է հետմահու հավիտենական կյանքի խորհուրդը մեր մեջ, երրորդ՝ ցույց է տրվում այն երանությունը, այն գեղեցկությունը, որ սպասվում է հավիտենական կյանքում, և չորրորդ՝ պայծառակերպության խորհրդով ասվում է, որ Թաբոր լեռը առաքյալների ելնելով մարդն էլ պետք է բարձրանա ժամանակավորից, երկրավորից, որպեսզի արժանի դառնա հավիտենական կյանքին: Ահա այս էր իմաստը և խորհուրդը և բովանդակությունը Քրիստոսի պայծառակերպության:

Սիրելի հավատացյալներ, այսօր մենք ապրում ենք այդ խորհուրդը, Քրիստոսի պայծառակերպությունը, խորհուրդը Նրա Աստվածային փառքի, Աստվածային լույսի, որ ողողել է մեզանից յուրաքանչյուրի հոգին և խորհել և մտածել է տալիս ազնվության մասին, մաքրության մասին, եղբայրության մասին, թե ունե՞նք արդյոք մենք համապատասխան հոգեկան արժեքները, որպեսզի կարողանանք պայծառակերպվել Քրիստոսի նման, թե այդպես էլ չպիտի հեռանանք ինքնախաբեությունից, սին վայելքներից և չդարձնենք մեր հայացքները, չտեսնենք Աստծո փառքը, չբարձրանանք Թաբոր լեռը, ազատվենք մեղքերից և քայլենք հավիտենական կյանքի լուսավոր ճանապարհով, լույսով, որ ողողում է մեզանից յուրաքանչյուրին:

Ս. Օգոստինոսն ասում է. «Արևը մեր մարմնի աչքի համար է, իսկ Պայծառակերպության լույսը՝ մեր հոգու աչքի համար է»:

Սիրելի հավատացյալներ, մեր ազգային Թաբոր լեռը Մայր Աթոռ Ս. Էջմիածինն է, այս սուրբ վայրը, ուր 301 թվականին, համաձայն Սուրբ Գրիգոր Լուսավորչի տեսիլքի, իջավ Աստծո Միածին Որդին և Իր լույսով ողողեց Հայոց աշխարհը, հողը մեր հայրենի թանձրացյալ, և այս Ս. Խորանից 1700 տարիներ շարունակ լսում ենք ձայնը, որն ասում է. «Դա՛ է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, նրա՛ն լսեցեք», և 1700 տարիներ շարունակ Աստծո Որդու ձայնը Հայոց Հայրապետների միջոցով, նրանց շուրթերից փոխանցվում է մեր ժողովրդին, որպեսզի լսենք Աստծո Որդու ձայնը, և այսօր այն փոխանցվում է մեր օրերի Հայրապետ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շուրթերից, որպեսզի լսենք Աստծո ձայնը, լսենք Տիրոջը, հետևենք Նրան, որպեսզի հոգևոր ոլորտի՛ բարձրանանք սովորական կյանքի ոլորտից, բարձրացնենք մեր աչքերը, տեսնենք լեռներին բազմած մեր վանքերն ու եկեղեցիները, լսենք այնտեղ դարերով աղոթող և ճգնող մեր վարդապետների ձայնը, որոնք կարծես թե երկնքից ասում են մեր ականջին. «Պիտի աղոթեք և աղոթքի մեջ գտնեք մխիթարությունը, պիտի հավատաք և հավատքի մեջ գտնեք ճշմարտությունը, պիտի բարձրանաք և բարձունքի մեջ գտնեք լույսը»:

Սիրելի հավատացյալներ, մենք բոլորս այսօր ուխտավոր ենք այստեղ, Վեհափառ Տեր, մենք ուխտավոր ենք, որ եկել ենք Ռուսաստանից, Ռուսաստանի տարբեր քաղաքներից՝ Սոչիից, Արմավիրից, Կրասնոդարից, Կիսլովոդսկից, Ստավրոպոլից, Վլադիկավկազից և այլ քաղաքներից: Եկել ենք, որպեսզի Իջման այս Սուրբ Սեղանի առջև խոնարհվենք և ուխտենք և խոնարհվենք Ձերդ Սրբության առջև և ասենք. «Մենք հավատարիմ զավակներն ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և հավատարմորեն կպահպանենք, վառ կպահենք Լուսավորչի անմար կանթեղը՝ մեր հավատքը, հեռուներում կենդանի կպահենք մեր մայրենի լեզուն, մեր մշակույթը և մեր ավանդությունները: Գիտենք, Վեհափառ, այս սուրբ վայրում միշտ աղոթում եք Ձեր աշխարհասփյուռ զավակների համար, այդ թվում նաև՝ Ռուսաստանում ապրող:

Ձեր զավակները, Վեհափառ Հայր, ապրում են Ռուսաստանում, ապրում են կարոտով դեպի իրենց հայրենին, դեպի Արարատը, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, դեպի իրենց ազգային սրբությունները: Եկել ենք այստեղ, Վեհափառ Տեր, որպեսզի Դուք նրանց օրհնեք, որպեսզի նրանք ամրանան հավատքով և որպես նոր առաքյալներ՝ պայծառակերպված, վերափոխված, այլակերպված, հետ դառնան դեպի իրենց օջախները՝ տարածելու այսօրվա խորհուրդը և Էջմիածնի խորհուրդը, իմանալի լույսն իրենց ընտանիքներից ներս, նրանց ավելի ջերմացնելու, ավելի ամրապնդելու կապը Մայր Հայրենիքի և Սփյուռքի միջև:

Հետևաբար, սիրելի ուխտավորներ, այսօր դուք այստեղից կգնաք պայծառակերպված, վերափոխված, հոգեպես զորեպնդված, որպեսզի օրվա խորհուրդն իրապես տանեք և հասցնեք յուրաքանչյուրդ ձեր քաղաքին, ձեր բարեկամներին և ձեր հարազատներին: Այս սրբազան պահին ցանկանում ենք մեր խորին շնորհակալությունը հայտնել նախ և առաջ Վեհափառ Հայրապետին, որ այս պատիվը, այս առիթը ընձեռեց մեզ այս տոնական օրը բարձրանալու և մեր ժողովրդի հետ միասին Ս. Պատարագ մատուցելու այս Ս. Սեղանին:

Մեր շնորհակալությունը նաև լուսարարապետությանը, որ այսպես գեղեցկորեն սարկավագաց դասով, դպրաց դասով կազմակերպեց այսօրվա Պատարագը, մեր Սրբազան Հայրերին՝ Հոգևոր Հայրերին, որ իրենց ներկայությամբ պատվեցին մեր Պատարագը և ավելի տոնականություն հաղորդեցին նրան: Անշուշտ նաև ձեզ, սիրելի հավատացյալներ, որ Մայր Աթոռի հավատացյալներն եք մշտապես: Մեր խնդրանքն է, որպեսզի միշտ աղոթք անեք այս սուրբ վայրում արտասահմանում ապրող, հայրենիքից դուրս ապրող ձեր հարազատների, քույրերի և եղբայրների համար, քանզի նրանք ձեր աղոթքի կարիքը շատ ունեն, որպեսզի ամուր լինեն հավատքով, կարողանան օտար ափերում պահպանել իրենց մայրենի լեզուն և իրենց հայրերի հավատքը:

Ահա այս ապրումներով և մտածումներով, սիրելի հավատացյալներ, շնորհավորում ենք ձեզ բոլորիդ այս տոնական օրը, որ իրապես Աստծո լույսը սփռվի ձեր վրա, իրապես վերափոխվեք, պայծառակերպվեք և քայլեք հավիտենական կյանքի ճանապարհով, որը տանում է դեպի Աստված, երբ որ հանդիպենք Աստծուն, կարողանանք նայել Նրա հայացքի մեջ և ասել. «Պատերազմեցի բարի պատերազմը, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը» (Բ Տիմոթ. Դ 7):

Աստծո սերը, շնորհը և լույսը թող լինի բոլորիդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

# ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

*Տ. ԱԴԱՄ ՔԱՀԱՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ*

## «ՅՈՎՍԷՓ ԱՅՐՆ ՆՈՐԱ»

Նոր՝ Կտակարանի՝ վերջին տարիներին կատարված հայերեն թարգմանություններում երբեմն լինում են դեպքեր, երբ թարգմանիչները հունարեն և գրաբար բառերը թարգմանում են ոչ բառացիորեն, որը երբեմն վիճելի է համարվում: Սակայն իրականում բառիմաստի ճիշտ արտահայտումը տեղին լինելու դեպքում ոչ թե քննադատելի է, այլ գովելի, քանի որ կատարվում է գիտակցորեն՝ Սուրբ Գրքի՝ բառերի իմաստին հավատարիմ մնալով:

Քննարկենք Մատթեոսի Ավետարանի Ա գլխի 19 համարի՝ *Յովսէփ այր նորա* կապակցությունը, ուր «*Այր նորա*» արտահայտությունն Ավետարանի հայերեն նոր կատարված թարգմանություններում հանդիպում է հետևյալ ձևերով՝ ա) նրա մարդը, բ) նրա ամուսինը, գ) նրա նշանածը: Երբեմն քննադատվում է թարգմանությունների այն տարբերակը, որտեղ օգտագործված է *նշանած* բառը՝ այն պարզ պատճառով, որ գրաբարում *այրը* նախ նշանակում է *մարդ*, *ամուսին*, և աշխարհաբարում անպայմանորեն պետք է *ամուսին* թարգմանվի, քանի որ գրաբար տեքստն էլ, որը թարգմանված է հունարենից, ճշգրտորեն արտացոլում է այս բառի հունարեն իմաստը: Եվ հայերեն թարգմանություններում *նշանած* բառի օգտագործումը հաճախ ընթերցողների կամ քննադատների կողմից համարվում է թարգմանչի կամայականություն կամ սխալ: Բայց *նշանած* բառի օգտագործումն ավելի է համապատասխանում շարադրանքի տրամաբանությանը, քանզի շատ հավանական է, որ ավետարանիչն ինքն այս բառն օգտագործել է պահպանողի, հովանավորի և նշանածի իմաստով: Այս կարծիքը կարելի է հիմնավորել այն իրողությամբ, որ Սուրբ Գրքում, որտեղ բառերը նաև իրենց իմաստային հատուկ օգտագործումներն ունեն, *այր* և *կին* բառերը միշտ չէ, որ գործածվում են ամուսիններ իմաստով: Աստվածաշնչում՝ հետևյալ հատվածներում, *այր* և *կին* բառերն օգտագործված են այլ իմաստով: «*Զայրն*, որ լկեաց *զկին* ընկերի իւրոյ» (Բ Օրինաց ԻԳ 24): «Եւ ասէ Յակոբ ցԼաբան, Տուր ինձ *զկին* իմ, լցեալ են աւուրք, զի մտից առ նա» (Ծննդոց ԻԹ 21): Այստեղ Հակոբի խոսքում *կին* բառը վերաբերում է նրա նշանածին, և այն նույն աշխարհաբար թարգմանությունը[1], որը Մատթեոսի Ավետարանի Ա 19-ի *այրը* թարգմանել է *մարդ* բառով, այս հատվածում արդեն աշխարհաբարում *կին* բառի իմաստն արտահայտում է *հարսնացու* բառով:

Այս իրողությունն արտացոլվել է նաև Աստվածաշնչի ֆրանսերեն թարգմանություններում, որոնք կատարվել են Ֆրանսիայի Աստվածաշնչային ընկերության կողմից: Թարգմանություններից մեկում[2] *այր* բառը թարգմանված է որպես նշանած՝ «Joseph, son

---

* Սկիզբը տես «Էջմիածին», Ձ. էջ 33-38:

[1] Աստուածաշունչ մատեան Հին և Նոր Կտակարանների. արեւելահայերէն նոր թարգմանութիւն. Հրատարակութիւն Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1994:

[2] La Bible, traduction oecuménique, edition intégrale, Paris, 1988.

fiancn» իսկ մյուսում[3] որպես ամուսին՝ «Joseph: son npoux»: Անգլերեն մի քանի թարգմանություններում *այր* բառի իմաստն արտահայտված է *ամուսին* բառով, իսկ որոշ նորագույն թարգմանություններում այս բառն ընդհանրապես դուրս է թողնված և կատարված է ազատ թարգմանություն: Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից հրատարակված Նոր Կտակարաններում *այր* բառը թարգմանված է՝ մեկում[4] որպես *մարդ*, իսկ մյուսում[5] որպես *նշանած*: Իսկ 2001 թ. մեկ այլ թարգմանությունում, որը, ինչպես նշված է գրքի սկզբում, Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից նվիրվում է Հայ Եկեղեցու զավակներին, Մատթեոսի Ավետարանի Ա գլխի 19 համարում դարձյալ հանդիպում ենք *նշանած* բառին:

*Այր* բառն *ամուսին* թարգմանելու դեպքում կարող է նաև հակասություն առաջանալ ավետարանական պատումի մեջ, որովհետև նախորդ համարում Հովսեփի մասին խոսվում է որպես Մարիամի նշանածի, ուստի հաջորդ համարում արդեն *այրը* չի կարող լիարժեքորեն ամուսին նշանակել այս բառի բուն իմաստով, այլ, ինչպես արդեն նշել ենք, ավելի հավանական է, որ ավետարանչի կողմից այս բառն օգտագործվել է հովանավոր, պահպանող իմաստով: Այս բացատրությունը կարող է կամայական թվալ, սակայն բացի Սուրբ Գրքում *այր* և *կին* բառերի ոչ ամուսիններ իմաստով օգտագործման փաստից, բերենք նաև եկեղեցական մեծագույն հեղինակություններից մեկի՝ Սուրբ Եփրեմ Ասորու կարծիքն այս մասին, որն արտահայտվել է նրա՝ «Չորս Ավետարանների մեկնության» մեջ:

Նախ պետք է նշել, որ Եփրեմ Ասորին Ավետարանի իր մեկնության շարադրման ընթացքում հետևել է ոչ թե մի ավետարանչի, այլ իր առջև ունեցել է ավետարանական տեքստերի մի ժողովածու՝ կազմված ըստ չորս ավետարանիչների: Դա այն նույն ժողովածուն է, որը կազմվել է երկրորդ դարի եկեղեցական հեղինակ Տատիանոսի[6] կողմից, մեծ տարածում ունեցել Սիրիայում և հայտնի է «Դիատեսսարոն» անունով:

Տատիանոսի «Դիատեսսարոնը» համարվել է նաև հերետիկոսական, քանի որ նա այնտեղից դուրս է թողել Քրիստոսի ազգաբանությունը և բոլոր այն հատվածները, որոնցում ցույց է տրվում, որ Քրիստոս ըստ մարմնի սերում է Դավթի սերնդից: Սակայն նույնիսկ առաքելական ուսմունքին հավատարիմ մարդիկ օգտվում էին այս համառոտ ժողովա-

---

[3] La Bible, Ancien et Nouveau Testament, Paris, 1990.

[4] Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Նոր Կտակարանը, յոյն բնագրից թարգմանուած, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 1998:

[5] Աստվածաշունչ, Նոր Կտակարան Հիսուս Քրիստոսի, աշխարհաբար նոր թարգմանություն, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, Երևան, 2001:

[6] Տատիանոսը ծնվել է Սիրիայում, հեթանոս ընտանիքում, Հռոմում հանդիպել և ծանոթացել է Հուստինոս Վկայի հետ և հավանաբար այնտեղ էլ քրիստոնյա դարձել: Սակայն Հուստինոս Վկայի նահատակությունից հետո Տատիանոսն ընկնում է մոլորության մեջ, սկսում սխալ համարել գինու օգտագործումը նույնիսկ Հաղորդության պատրաստման համար և ամուսնությունը համարում է անառակություն: Նա իր այս սխալ հայացքներին հավատարիմ է մնում մինչև իր կյանքի վերջը և վախճանվում մոտ 175 թ.: «Դիատեսսարոնը» նա կազմել է հավանաբար իր իսկ կողմից հիմնադրված դպրոցներում Ավետարանի ուսուցման համար:- (Encyclopedia Of Early Christianity, second edition, Garland publishing, inc., 1998, p. 1105).

ծուից[7]։ Բացի Քրիստոսի՝ մարմնապես Դավթի սերնդից լինելու հատվածների բացթողումից, ուշադիր ընթերցման դեպքում երևում է, որ «Դիատեսսարոնի» մեջ կան նաև որոշ շեղումներ Եկեղեցու կողմից այժմ ընդունված ավետարանական տեքստից, ինչպես նաև հին սիրիական թարգմանությունից՝ Պեշիթթայից[8]։

«Դիատեսսարոնի» մասին այս տեղեկությունները այստեղ նշեցինք հատկապես այն բանի համար, որ այստեղից ևս հետաքրքիր դիտարկումներ կարող ենք անել մեզ հետաքրքրող հատվածի վերաբերյալ։ Մատթեոսի Ավետարանի Ա գլխի 19 համարը Եփրեմ Ասորու մոտ հետևյալ ձևով է սկսվում. «Հովսեփը, *արդար մարդ* լինելով...»[9]։ Իսկ Գրաբար Աստվածաշնչում այսպես է. «Եւ Յովսէփ, *այր նորա, քանզի արդար էր*...»։ «Դիատեսսարոնի» և գրաբար տեքստի այս հատվածի համեմատությունից նկատելի է դառնում, որ «Դիատեսսարոնում» *նորա* բառը դուրս է թողնվել, իսկ *այրը* մոտեցվել է *արդար* բառին, որն էլ դարձել է *այր* բառի լրացումը։ Այս նույն երևույթը, ինչպես վերևում նշել էինք, հանդիպում է նաև Աստվածաշնչի անգլերեն նորագույն թարգմանություններում, որոնցում *այր նորա*-ն նույնպես դարձել է *այր արդար*, կամ անգլերենից բառացիորեն՝ *մարդ, որը միշտ գործում էր այն, ինչ արդար է*։ Օրինակ՝ "Joseph was a man who always did what was right"[10]։ Նախադասությունը այս նույն ձևով է նաև մեկ այլ անգլերեն հրատարակությունում[11]։

Չնայած *այր նորա* կապակցությունը չկա Եփրեմ Ասորու կողմից բերվող տեքստում, նա, այնուամենայնիվ, իր մեկնության մեջ անդրադառնում է Մարիամի և Հովսեփի ամուսիններ լինելու խնդրին։ Մատթեոսի Ավետարանի Ա գլխի 25 համարը մեկնելիս «Առ յինքն զկին իւր», Սուրբ Հայրն ասում է, որ Մարիամի հղությունից հետո Հովսեփը Մարիամի ամուսին կոչվեց[12]։ Ո՞ւմ կողմից կոչվեց։ Հովսեփը Մարիամի ամուսին կոչվեց հրեշտակի կողմից անուղղակիորեն, որը տեսիլքում երևալով Հովսեփին, ասաց. «Մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ *կին* քո» (Մատթ. Ա 20)։ Եվ քանի որ առանձնաբար էին ապրում, և նոր պետք է Հովսեփը Մարիամին իր մոտ առներ, ապա ինչպե՞ս կարող էին ամուսիններ կոչվել այդ բառի բուն իմաստով։ Այնուհետև Ս. Եփրեմ Ասորին ասում է. «Ինչպես որ մեր Տերը, Մարիամին հանձնելով Հովհաննեսին, ցույց տվեց, որ այդ աշակերտները (Հովհաննեսը և մյուսները) Մարիամի որդիները չէին, այդպես էլ և Հովսեփը Մարիամի ամուսինը չէր»[13]։

Դարձյալ, իբրև ևս մեկ ապացույց *այր* բառի այլ իմաստով գործածման, նշենք, որ հունարեն Աստվածաշնչում ոչ ամուսին իմաստով *այր* բառի համար հունարենն ունի նման իմաստ հետևյալ հատվածներում։ «Մի՛ եղիցի հանդերձ առնացի զկանամբք, և մի՛ զգեցցի *այր* զգեստ կանացի» (Բ Օրինաց ԻԲ 5)։ «Եւ եթէ գտցի *այր* շնացեալ ընդ առնակնոջ» (Բ Օրինաց ԻԲ 22)։

---

[7] **Святой Ефремъ Сиринъ.** Творения, томъ 8, издание Свято-Троицкой Лавры , издательство "Отчий дом", 1995, ст. 7.

[8] Նույն տեղում, էջ 10։

[9] **Святой Ефремъ Сиринъ.** Նշվ. աշխ., էջ 34։

[10] **Holy Bible.** Good News colour reference edition.

[11] **Good News Bible.** Today's English Version. The Bible Societies. Collins

[12] **Святой Ефремъ Сиринъ.** Նշվ. աշխ., էջ 37։

[13] Նույն տեղում, էջ 38։

*ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈԼՈՎՅՈՎ*

# ՋՈՀԻ ԵՎ ՈՂՈՐՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ճշմարիտ* աղոթքի մեջ Աստծու հետ բարոյապես միավորվելով՝ մարդը ոչ միայն իրեն, այլև ուրիշներին է միավորում Նրա հետ. նա կապող օղակներից մեկն է դառնում Աստծու և արարչագործության, աստվածայինի և բնական աշխարհի միջև: Մարդկային կամքը, ազատորեն Աստվածային կամքին տրվելով. նրա կողմից չի կլանվում, այլ նրա հետ *ներդաշնակվում* է և նոր *աստվածամարդկային* զորություն դառնում՝ ի վիճակի մարդկային աշխարհում Աստծու գործեր կատարելու: Սրանով ճշմարիտ աղոթքը, իբրև Աստծու հետ շնորհական - բարոյական կապ, տարբերվում է առ Աստված մարդկային մյուս բոլոր հարաբերություններից, քանզի հավատացյալի կողմից Աստվածությանն ուղղված այլ հարաբերություններ ևս գոյություն ունեն, և հավատացյալի՝ իր հավատքի առարկայի հետ ամեն մի առնչություն չէ, որ նրանց միջև իրական բարոյական կապ և ճշմարիտ միավորություն է առաջացնում:

Եթե Աստվածությունն արդարև գոյություն ունի, ապա Նրանից դուրս ապրող մարդը ևս պետք է զգա Նրան, բայց միայն որպես արտաքին՝ օտար զորություն, որը միշտ կարող է կլանել և ոչնչացնել իրեն: Բուն պատկերացման համաձայն, Աստված միշտ մեր վերևում գտնվող ամենակարող զորություն է, բայց նույն այդ ամենակարողությունը տարբեր դրսևորումներ ունի. առանց Աստծու ապրող՝ բնության ստրուկի համար այն իբրև լափող կրակ, ամեն ինչ կլանող, ամենակործան զորություն է արտահայտվում: Այսպիսի սարսափելի և անիմանալի զորության հետ բարոյական միավորությունն անհնարին է. մարդը չի կարող նվիրաբերել նրան իր ներքին էությունը, այն, ինչ ինքն է. նա այդ արտաքին զորությանը միայն իր արտաքին գոյությունը կարող է տալ, այն, ինչ նա ունի. իր ֆիզիկական կյանքը, իր երեխաներին, իր մարմնի մի մասը, իր կենդանիներին և ծառաներին: Աստվածության լափող հրեղեն զորությունը զոհեր է պահանջում: Սուրբ հայրերի վկայությամբ, այն դիվական զորությունները, որոնք հեթանոսների համար Աստծու տեղ էին բռնել, կարիք ունեին զոհաբերությունների ամենից առաջ սեփական կյանքի պահպանման համար. նրանք արյունոտ գոլորշիներով էին սնվում: Բայց Իսրայելի ժողովրդին իր հրեղեն հատկությամբ հայտնված զորությունների Աստված Եղողը ևս նախ ֆիզիկական զոհեր պահանջեց, որպեսզի Աստծու հետ ներքին միավորությանն անընդունակ «խստապարանոց սերունդը» գոնե առերևույթ հնազանդվի բարձրյալ կամքին:

Հավատացյալը միշտ անձնատուր է լինում իր հավատքի առարկային, և կրոնը միշտ զոհի վրա է հաստատված: Սակայն զոհի որպիսությունը տարբերվում է ըստ այնմ, թե

---

* Բերվող թարգմանությունը մի հատված է Վ. Սոլովյովի «Կյանքի հոգևոր հիմքերը» երկից: Տե՛ս В. Соловьев. Избранные произведения, Ростов-на-Дону, 1998, ст. 167-179.

նրա ֆիզիկական էությունը, Աստված էլ նրան հայտնվել կարող է ոչ այլ կերպ, քան որպես նույնպիսի ֆիզիկական էակ, միայն թե առավել հզոր, և տրվել այդպիսի Աստծուն նա կարող է միայն զոհելով նրան իր ամբողջ ֆիզիկական գոյությունը կամ [դրա] մի մասը: Նախնադարյան[1] մարդկության համար, որը գոյություն էր պահպանում սպանությամբ և օտարի արյամբ, կրոնն սկզբնավորվեց սեփական արյան հեղմամբ, լրիվ կամ մասնակի, իսկական կամ սիմվոլիկ ինքնասպանությամբ: Մարդկային կամավոր զոհաբերությունները Հնդկաստանում, երեխաների այրելը Ասորեստանում և Փյունիկիայում, փռյուգիական գալլերի (Կիբելայի քրմերի) ինքնաամորձատումը և այլն, - ահա հին հեթանոսության իսկական կրոնական ներթահողը, որը մեզանից քողարկեցին հույն - հռոմեական առասպելաբանության հետագա ծաղիկները:

Առաջին կրոնական զգացումը՝ *վախն է*. ոչ թե աստվածներ ծնող վախը, այլ աստվածների հարուցածը: Անտեսանելի ծածուկ *հուրը*, ամեն ինչ *քաոսի* վերածելու ի զորու՝ ամենակուլ *զորությունը* աստվածության [մասին] առաջին պատկերացումն է, առաջին պաշտամունքը՝ *արյունալի զոհը*: Սրանում անհիմն կամ չպատճառաբանված ոչինչ չկա: Այդպես պետք է լինի, քանի դեռ մարդն առանց Աստծու է ապրում, քանի դեռ չար և մութ կրքերը իշխում են նրա վրա: Եվ մինչև այժմ իր անկատարությունը գիտակցող մարդու համար իմաստության սկիզբը Աստծու *երկյուղն* է և նույնիսկ մարդիկ, որոնք իրենց հոգու լավագույն մասով են Աստծու հետ միավորված, հարկադրված են նրա վատագույն հատվածը *զոհ* մատուցել:

Բայց մարդը թեպետև իրեն դեպի գետին կռացնող և աներևույթ տիրոջ առջև դողալ ստիպող՝ մութ հակումներից դեռևս անկախ չէ, այնուամենայնիվ, ի վիճակի է ճակատը վեր բարձրացնել և նայել տիեզերական լուսատուներին: Աշխարհի պատկերը մտահայող մարդու համար աշխարհն արարող Աստծու զորությունը որպես աշխարհի լույս է հանդիսանում: Այստեղ նա այլևս չի վախենում Աստվածությունից, այլ հիանում է նրանով՝ տիեզերքի հրաշալի կառուցվածքի մեջ: Աստծու ամենակարողությունն այստեղ այլևս լափող հրեղեն զորություն չի ներկայանում, այլ՝ ամեն ինչ լույսով ողողող գաղափար, համայնապարփակ և ամենայն ինչ կենդանացնող իմաստ: Այստեղ այլևս չկան արյունալի զոհերը, Մողոքի կրակը, տարերային ուժերի քաոսային շարժումը նմանակող *կորիբանտների* վայրի աղաղակներն ու մոլեգին պարերը, այլ՝ համաշխարհային գեղեցկության (տիեզերքի) խաղաղ մտահայեցողությունը, մեղմ երգեցողությունը, ներդաշնակ երաժշտությունը՝ իբրև համաշխարհային կառուցվածքի համակարգի արձագանք, իմաստուն զրույցը և անարյուն ընթրիքը... Այս դեպքում Աստվածությանը տրվում կամ նվիրաբերվում է ոչ թե մարմնի կյանքը, այլ՝ մտքի կենսագործունեությունը:

Այս երկրորդ աստիճանի վրա վախի կրոնական զգացումը հիացմունքի կամ *երկյուղածության* է վերածվում. կրոնական պատկերացման մեջ հրեղեն զորությունը *բանականության լույսի* առաջ տեղի է տալիս, իսկ արյունալի ինքնակործան զոհաբերությունները փոխարինվում են զուտ *հայեցողական* ասկետիզմով: Բայց կրոնասեր մարդը սրա վրա էլ չի

[1] «Նախնադարյան» հարաբերական և զուտ պատմական իմաստով եմ ասում: Հաստատ հիմքեր կան կարծելու, որ այն գազանային կերպարանքը, որով պատմության նախադռանը մարդկությունը մեզ է ներկայանում, մարդու մեջ Աստուծո սկզբնական Պատկերի *աղավաղումն* է միայն:

կարող կանգ առնել: Այն բանից հետո, երբ Նրա մտավոր աչքերը բացվեցին և լույսի ու բանականության մեջ տեսան Աստվածությանը, Նրա բարոյական էությունը բացվել է կամենում կենդանի. ոչ թե մտահայեցողական. այլ՝ Աստծու հետ իրական և իսկական միավորության համար. կամենում է քանդել մասնավոր կեցության կապանքները, իր անձուկ սրտով հարել տիեզերքի համայնապարփակ սրտին:

Մարդու ամենախոր էությունը Նրա բարոյական ազատությունն է կամ կամքը, և Աստծու հետ իրական միավորումը մարդու համար ազատորեն Նրան իր կամքը նվիրաբերելու ամնշանակությունն ունի: Հենց սա էլ տեղի է ունենում ճշմարիտ աղոթքի ժամանակ, որն բողջությամբ մարմնավորվում է *«Թող Քո կամքը լինի»* որոշման մեջ: Այստեղ Աստված ևս իրեն բնորոշ հատկությամբ է մեզ հայտնի դառնում. իբրև անսահման *բարի*, կատարյալ կամք, իբրև ամենաթափանց և կենդանարար, միաժամանակ բոցեղեն և պայծառ, սիրո ոգի: Այս երրորդ աստիճանի վրա կրոնական զգացումը վախից և երկյուղածությունից *սիրո* է փոխակերպվում, Աստծու զորությունը բարեգթության և սիրո *ոգու* մեջ է երևան գալիս, իսկ պաշտամունքը բաղկացած է հոգևոր զոհից և ճշմարիտ աղոթքի մեջ Աստվածային կամքի հետ մարդկային կամքի ազատ ներդաշնակումից:

Սակայն, Աստծու հետ իր կամքը միավորելով, իբրև իր ողջ կեցության սկզբի, ճշմարիտ աղոթքի մեջ շնորհական, հոգևոր կյանքի նոր սկիզբ ենթադրելով, կրոնասեր մարդը չի կարող կանգ առնել այդ սկզբնակետի վրա: Մաքուր կրոնի բարձունքին հասնելով, Աստծու հետ բարոյական դաշինք կնքելով՝ լուսավորված և նորոգված նա պետք է աշխարհ իջնի, մարդկանց հետ նոր կրոնական հարաբերության մեջ մտնի: Այս նոր դաշինքի պատվիրանը կատարյալ սերն է («Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, սիրեցեք միմյանց») և այն տեսանելի կերպով ամենից առաջ բարեգործության և *ողորմության* մեջ է արտահայտվում: Ճշմարիտ ողորմությունը զուտ բարոյական, շնորհական վերաբերմունք է մերձավորի նկատմամբ, ինչպես որ ճշմարիտ աղոթքն է զուտ բարոյական, շնորհական վերաբերմունք Աստծու նկատմամբ:

«Ողորմություն եմ ուզում և ոչ թե զոհ» - Քրիստոսի կողմից հաստատված այս մարգարեական խոսքը կրոնական ըմբռնողության մեջ բեկումնային կետ է ցույց տալիս: Կրոնի ստորին աստիճաններում մարդն իր զոհերը մատուցելիս կարծում էր, թե Աստված դրանց կարիքն ունի, որ Աստված հավասարապես կամենում է մարդու այդ զոհերը, ինչպես որ մարդն ինքն է ողորմություն հայցում Աստծուց: Այսպիսի ըմբռնման համաձայն՝ Աստվածությունը ոչ միայն կյանք է տալիս մեզ, այլև ինքն իսկ մեր հաշվին է ապրում: Հենց սրա դեմ է ուղղված Աստծու «Ողորմություն եմ ուզում և ոչ թե զոհ» խոսքը, այսինքն՝ այն չեմ ուզում, ինչ դուք եք ինձ տալիս, այլ՝ ինչ Ես եմ ձեզ տալիս: Եվ երբ կրոնի առավել բարձր մակարդակի վրա ճշմարիտ աղոթքում մարդն Աստծուն գերագույն հոգևոր զոհ է մատուցում, զոհաբերում է իր կամքը և այն «Թող Քո կամքը լինի» որոշման մեջ միավորում Աստծու կամքի հետ, ապա հենց դրանով իր գործունեության համար Աստծու «ողորմություն եմ ուզում և ոչ թե զոհ» խոսքն է սեփականում, այսինքն՝ ոչ թե մերձավորից վերցնել եմ ուզում, այլ՝ տալ նրան, ոչ թե ի հաշիվ ուրիշի ապրել, այլ՝ որ ուրիշն իմ հաշվին ապրի: Մարդկային կամքի Աստվածայինի հետ ներդաշնակման շնորհիվ՝ Աստծու ամենաբարի կամքի արտահայտումը մարդկային կամքի սկզբունք է դառնում՝ ողորմություն եմ կամենում և ոչ

թե զոհ: Մյուս կողմից, Աստված էլ մարդկային կամքի հոգևոր զոհը ընդունել կարող է ամենևին ոչ թե հանուն զոհի, ոչ թե այն կլանելու համար, այլ, որ այդ կամքն Իրեն զուգակցելով, այն Իր շնորհի կամ ողորմության ազատ տարածիչը դարձնի: Եվ բարոյապես Աստծու հետ միավորված մարդը պարտավոր է մարդկանց *Աստվածավայել* վերաբերվել, նա պարտավոր է ուրիշներին վերաբերվել այնպես, ինչպես Աստված է իրեն իսկ վերաբերվում.

*Ջրի առաք, ձրի էլ տվեք, տուր մերձավորիդ ավելին, քան նա վաստակել է, ավելի լավ վերաբերվիր մերձավորիդ, քան նա արժանի է: Տուր նրան, ում պարտական չես, և մի պահանջիր նրանից, ով քեզ է պարտք : Այդպես են մեզ հետ վարվում երկնային զորությունները, այդպես էլ մենք ենք պարտավոր վերաբերվել միմյանց նկատմամբ:*

Այս պատվիրանից բխող մարդկանց միջև գործելակարգը համակեցության մյուս բոլոր օրենքները գերազանցում է այնքան, որքան աղոթական սխրանքը վեր է արյունալի զոհերից կամ վերացական Աստվածհայեցությունից:

Բարեգործության կամ ողորմության սկզբունքը հասարակայնության գերագույն զարգացումն է: Համակեցության ստորին աստիճանին, այսպես կոչված, ցեղի վիճակի մեջ հարաբերությունները մարդկանց միջև հակադիր սկզբունքով են որոշվում. ուժով և բռնությամբ: Զոհեր մատուցող և նույնիսկ աստվածային (դիվական) զորությունների կողմից կլանվող մարդն ինքն էլ ուրիշներին իբրև *ուժ* է վերաբերվում, որքան կարողանում կլանում է ուրիշներին, ուրիշի կյանքի հաշվին է ապրում: Պատերազմն ու ստրկությունը նախնական հասարակայնության գլխավոր գործոններն են:

Բայց պատերազմը չի կարող շարունակական դրություն լինել, իսկ ստրկությունը միայն անհավասար կամ տարատեսակ ուժերի միջև հնարավոր է: Հավասար կամ գոնե միատեսակ ուժերը չեն կարող մնալ տիրապետության և ենթակայության միակողմանի հարաբերության մեջ: Բախվելով իրար հետ՝ նրանք ո՛չ կարող են կլանել, ո՛չ ճնշել մեկը մյուսին և անհրաժեշտաբար հարկադրված են *սահմանափակել* միմյանց: Հասարակական ուժերի այդ փոխադարձ սահմանափակումն ընդհանուր բանաձևի է բարձրացվում և *օրենք* դառնում: Օրենքը կյանքի որևէ նոր, դրական սկզբունք հասարակության մեջ չի ներմուծում. այն միայն ազատ ուժերի վերջնակետային սահմաններն է մատնանշում և դրանով՝ նրանց միջև առավել կոպիտ բախումները կանխում: Օրենքն ուժերին իր ազատության բոնի սահմանափակումը կրելու անհրաժեշտությունից ազատում է՝ *նախօրոք* ցույց տալով նրան դրա սահմանները:

Օրենքը սոսկ քանակական, մաթեմատիկական արդարության արտահայտություն է. գործունեությանը հավասար ներգործություն, հավասարն ընդ հավասարի, ակն ընդ ական, ատամն ընդ ատաման: Որքանով որ իմ ուժն օրենքով ամրակված արտաքին հասարակական հավասարակշռությունը չի խախտում, այդքանով այն իմ իրավունքն է կազմում: Իրավունքն այստեղ միևնույն ուժն է, միայն թե՝ օրինական սահմաններում: Բայց որտեղի՞ց այդ սահմանները: Օրենքից, որ չեն, քանզի օրենքը չի հորինում, այլ միայն հաստատում է գոյություն ունեցող հասարակական հավասարակշռությունը: Իսկ եթե տվյալ ուժի սահմաններն օտար ուժից կամ օտար հրամանների ամբողջությունից են միայն առաջ գալիս, ապա դրանք անկայուն են, պատահական և ինքնին ամենևին արդարություն

չեն արտահայտում: Այդ ժամանակ իրավունքը սոսկ ընդհանրացած բռնություն է: Օրինականությունը ոչ մի ձևով չի երաշխավորում արդարության համար, քանզի կարող են լինել և ընդհանուր խոստովանությամբ. լինում էլ են անարդար օրենքներ: Նմանապես չի կարելի արդարություն ենթադրել հասարակական համերաշխության մեջ. այն բանում, որ բոլորի կամքը հավասարապես անհրաժեշտ է յուրաքանչյուրի համար: Քանզի «բոլոր»՝ այստեղ նշանակում է «շատեր», իսկ շատերը կարող են համերաշխ լինել նաև անիրավ գործում, օրինակ՝ երբ ժողովրդի մեծամասնությունը հավատալիքի տարբերության պատճառով հետապնդում է փոքրամասնությանը և նրա դեմ հրապարակում խիստ օրենքներ, որոնք նման դեպքում ուղղակի բռնություն են հանդիսանում: Իմ գործողությունների սկզբունքն ու որակը բոլորովին չեն փոխվում այն բանից, որ մյուս ուժերն *իմին* սահման են դնում, *իմը* սահմանափակում են: Էական նշանակությունն այստեղ, այնուամենայնիվ, ուժին է վերապահվում, իսկ իրավունքը սոսկ կաղապար է հանդիսանում՝ առանց որևէ ինքնուրույն բովանդակության:

Այդպիսի ձևական իրավունքը բավարարվում է նրանով, որ յուրաքանչյուրն իր իրավունքն է պաշտպանում: Բայց եթե ես միայն *իմ* իրավունքն եմ պաշտպանում, ապա նշանակում է, որ ինձ համար ամբողջ բանն իրավունքը չէ, այլ՝ սեփականը, այսինքն՝ ես պարզապես *ինձ* եմ պաշտպանում, իմ ուժը, իմ շահը: Եվ եթե յուրաքանչյուրը փաստորեն միայն իրեն և իրենն է պաշտպանում, ապա ընդհանուր իրավունքը կամ հասարակական ճշմարտությունը վերածվում է լոկ վերացական հասկացության:

Այնինչ, մենք արդարության մասին՝ որպես մասնավոր ուժերի հավասարակշռություն ոչ միայն վերացական մտածական պատկերացում ունենք, այլև՝ արդարության կենդանի բարոյական *զգացում*, և այդ զգացումը էապես փոխում է մեր գործողությունների բուն սկզբունքն ու որակը: Ըստ արդարության այդ զգացումի մենք ոչ միայն մեզ ենք պաշտպանում, այլև ուրիշներին, ոչ միայն մեր, այլև՝ ուրիշի իրավունքը, և իսկապես, այստեղ է միայն երևում, որ մեզ համար հենց իրավունքը՝ արդարությունն ինքը նշանակություն ունի: Պաշտպանել սեփական, նույնիսկ անվիճելի իրավունքը, կարող է անիրավ լինել, քանզի այն կարող է էգոիզմից և աչառությունից առաջացած լինել, իսկ *ամեն մի* իրավունք ամեն դեպքում էլ որպես սեփական պաշտպանելն իսկական արդարության գործն է :

Բայց առաջ անցնենք: Եթե ես ուրիշի իրավունքն իմ սեփական իրավունքի նման հավասարապես պաշտպանում եմ, ապա նշանակում է, որ ուրիշինն այլևս իմի սահմանը չէ, ուրիշ էակն այս դեպքում արդեն սահման չի հանդիսանում, այլ՝ իմ գործունեության առարկա: Եվ սա միանգամայն *արդարացի* է: Արդարության ըմբռնումի համաձայն՝ իմ և մյուսների միջև պետք է հավասարություն լինի, ես պարտավոր եմ մյուսներին հենց այնպես վերաբերվել, ինչպես ինքս եմ ինձ վերաբերվում, իսկ իմ վերաբերմունքն իմ հանդեպ միանգամայն որոշակի է. ես անխուսափելիորեն և անդավաճանաբար սիրում եմ ինձ («Որևէ մեկն իր մարմինն ատելով չի տաքացնի և սնի այն»): Այսպիսով, արդարությունը պահանջում է, որ ինձ սիրելով՝ ուրիշներին էլ սիրեմ իմ անձի պես: Ինձ ես սիրում եմ ամեն դեպքում և ոչնչի չնայելով, հետևաբար՝ մյուսներին էլ պետք է սիրեմ ամեն դեպքում և ոչինչ չնայելով, ուրեմն՝ ես պետք է սիրեմ նաև իմ թշնամիներին: Բայց սերն իբրև զգացմունք չի կարող պարտականություն լինել, չի կարելի պահանջել կամ կարգադրել (պատ-

վիրել), որ ես սեր տածեմ, երբ չեմ տածում: Սիրո ներքին կատարումը շնորհի գործն է և մեր մեջ նրա աճը ուղղակի կախված չի մեր բարի կամքից: Բարոյական օրենքը մեզ *սիրո զգացումի* չէ, որ պարտավորեցնում է, այլ՝ սիրո *գործերի*: Արդարության համաձայն՝ ես ուղղակի պարտավոր եմ ուրիշներին բարիք անել, որքանով ինքս եմ ինձ բարիք կամենում: Իսկ ինձ ամեն տեսակի բարիք եմ կամենում (և ըստ կարելվույն անում եմ) անվերջ: Այսպիսով, ես ամեն տեսակի բարիք պետք է անեմ ամեն մի մերձավորի, յուրաքանչյուրին տամ այն ամենը, ինչ կարող եմ, և այն ամենը, ինչ նրան հարկավոր է:

Այսպիսով, արդարության գաղափարը մեզ հանգեցնում է հասարակ արդարությունը գերազանցող գթասրտության պատվիրանին: Խնդրողին տուր և քեզնից փոխ ուզողից [երես] մի դարձրու: Ջրի առաջ, ձրի էլ տվեք: Մերձավորիդ ավելին տուր, քան նա վաստակել է, և նրան ավելի լավ վերաբերվիր, քան նա արժանի է: Քանզի ինքդ քեզ ավելին ես վերցնում, քան վաստակել ես, և ավելի լավ ես վերաբերվում, քան արժանի ես:

Տալ խնդրողին առանց հարցնելու՝ որևէ բան ստանալու նրա իրավունքի մասին, նշանակում է՝ *Աստվածավայել* վարվել, քանզի Աստծու զորությունը՝ օգնության գալով և մեզ փրկելով, չի հարցնում, արդյո՞ք մենք օգնության և փրկության իրավունք ունենք: Ինչպես որ Աստված է վերաբերվում մեր աղոթքին, այդպես էլ մենք ենք պարտավոր վերաբերվել կարիքավորի (չքավորի խնդրանքին): Իսկական ողորմությունն այն է, որ մյուսների վրա տարածենք (սփռենք) այն շնորհը, որն ինքներս ենք Աստծուց ստանում ճշմարիտ աղոթքի մեջ:

Ողորմությունն իր այս կրոնական նշանակության հետ, ինչպես տեսանք, հասարակական կյանքի գերագույն սկզբունքն է կազմում: Ուժի թագավորությունից սկզբնավորված հասարակությունը, անցնելով օրենքի թագավորության միջով, պետք է ողորմության կամ բարեգործության թագավորությանը հասնի: Ուժի թագավորության մեջ տկարները ամբողջությամբ հզորներին են զոհաբերվում, հզորները տկարների հաշվին են ապրում. նրանց աշխատանքով են կերակրվում: Օրենքի թագավորությունը ո՛չ հզորներ, ո՛չ տկարներ է ճանաչել ուզում. այն յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում որոշ սահմանների մեջ իրեն պաշտպանելու և այդ սահմաններից դուրս որևէ մեկի մասին չի մտահոգվում: Այնպես որ, գործնական արդյունքում օրենքի թագավորությունը միևնույն ուժի թագավորությունն է, միայն թե՝ սահմանափակված և հավասարակշռված (ասենք, ինքնին հասկանալի է, որ ո՛չ բացառապես ուժի զուտ թագավորություն, ո՛չ բացառապես օրենքի զուտ թագավորություն գոյություն ունենալ չի կարող, և մենք միայն հասարակական զարգացման այս կամ այն աստիճանին տիրապետող, գերակշռող սկզբունքի մասին ենք խոսում): Բարեգործության թագավորության մեջ հզորներն ու հարուստներն իրենց հոժարակամորեն զոհաբերում են թույլերին և աղքատներին, այս վերջիններն առաջինների հաշվին են ապրում և նրանց կողմից են կերակրվում: Ոմանք ի սեր Աստուծո տալով՝ մյուսները հանուն Աստծու խնդրելով և ընդունելով՝ իրենց *բարոյական* արժանապատվությունն են պահում և ըստ ամենայնի դրսևորում՝ հավասարապես վեհանալով (վեր խոյանալով) թե՛ կոպիտ ուժի, թե՛ օրենքի անտարբերության նկատմամբ:

Ամենուրեք, ուր մարդու մոտ ներքին կրոնական կյանքի սկզբունքն է ի հայտ գալիս, ամենուրեք, ուր նա վեհանում է ֆիզիկական ուժի և ձևական օրենքի նկատմամբ, այն ամե-

նուրեք ողորմությունը հիմնական կրոնական պարտականություններից մեկն է համարվում: Այդպես է այն ընդունվում բրահմանների և բուդդիստների մոտ. հրեաների և մուսուլմանների մոտ: Սակայն իր լիակատար դրսևորմանն ու նվիրագործմանն այդ սկզբունքը քրիստոնեության մեջ է հասնում, ուր ինքը բացարձակ զորությունն ու բացարձակ առատությունը (բարիքի լրությունը)՝ Աստված, մեր տկարությանն ու աղքատությանն իրեն զոհ է մատուցել և անընդհատ մատուցում է՝ իր մարմնով ու արյամբ կերակրելով մեզ: Այստեղ է ի հայտ գալիս բացարձակ ողորմությունը և մեկտեղ՝ բացարձակ զոհաբերությունը (հունարեն *եվխարիստիան բարեգթություն* կամ *գոհություն* է նշանակում)։

Բայց հատկապես քրիստոնեական աշխարհում, որը ողորմության կատարյալ իդեալն է համարվում, ամեն տեսակ ողորմության հակառակորդներ են ի հայտ գալիս, որոնք կամենում են բարեգործության սկզբունքը հասարակական հարաբերություններից իսպառ բացառել: Ողորմության թշնամի այդ երկու խմբերը, ըստ երևույթին, հակադիր նպատակներ ունեն, թեև ղեկավարվում են հակաքրիստոնեական և հակակրոնական միևնույն ոգով: Մի մասն այժմ գոյություն ունեցող տնտեսական ազատության անվերապահ կողմնակիցներն են, մյուսները՝ դրա հակառակորդ սոցիալիստները: Մի մասը բարեգործությունն այն պատճառով է մերժում, որ չի կամենում *իր ունեցածից ոչինչ բաժին հանել*, մյուսները՝ քանի որ կամենում են իրենք *վերցնել ուրիշի ամբողջը*[2]: Հատկանշական է, որ ո՛չ սրանք, ո՛չ էլ մյուսներն իրենց հիմնավորումներն ուղղակի չեն արտահայտում, այլ ուրիշ, առավել հարմարներն են ճարում: Առաջինները, կապիտալի և աշխատանքի վրա հիմնված գոյություն ունեցող հասարակական կարգին ի պաշտպանություն հանդես գալով, ողորմությունը անբանության խրախուսում և աշխատանքի սրբության հանդեպ ոտնձգություն են ներկայացնում: Ըստ նրանց կարծիքի, արդարությունը պահանջում է, որ յուրաքանչյուրն իր աշխատանքով ապրի, հետևաբար, բարեգործությունն ինչ-որ անարդար կամ առնվազն ավելորդ, *անպետք* մի բան է: Սոցիալիստներին, ընդհակառակն, այն *անբավարար* ինչ-որ բան է թվում: Եվ նրանք նույնպես արդարությունն են վկայակոչում, բայց, նրանց կարծիքով, արդարությունը պահանջում է, որ յուրաքանչյուրը բոլորի հետ համահավասար նյութական բարիքների բաժնի իրավունք ունենա, և հրավիրում են բոլոր ընչազուրկներին *իրենց իրավունքին հետամուտ լինելու*՝ չսպասելով, որ հարուստներն իրենց պարտականությունը կատարեն:

Այս բոլորի վերաբերյալ կրոնական և բարոյական հայեցակետից պատասխանը միանգամայն հստակ է: Բարեգործության հակառակորդներից առաջիններին մենք պետք է այսպես ասենք. եթե դուք ողորմությունը հանուն *աշխատանքի* անկեղծորեն եք մերժում, ապա դուք ամենից առաջ պարտավոր եք հոգալ բոլոր նրանց մասին, ովքեր *անկարող են* աշխատել՝ ծերերի և երեխաների, հիվանդների և հաշմանդամների, դրանից բացի դուք

---

[2] Բացառություն են կազմում այն սակավ սոցիալիստները, ովքեր անձնապես հարուստներ լինելով՝ ընչազուրկների հարստացմանն են ձգտում: Նրանց նկրտումն անշահախնդիր է, սակայն պետք է ըմբռնել, թե հենց այդ անշահախնդիր ձգտումը ընչազուրկ զանգվածներին ներշնչել (ինչն ուղղակի նրանց նպատակի մեջ է մտնում), իսկույնեթ այն դադարում է անշահախնդիր լինելուց: Խուսափել այս հակասությունից նրանք կարող են միայն անմիջականորեն ողորմության տեսակետը պաշտպանելով, այսինքն՝ *իրենց* հարստությունից աղքատներին բաժին հանելով, այլ ոչ թե նրանց ուրիշինը կողոպտել ներշնչելով:

պետք է ջանաք նաև բոլոր մյուսներին ազատելու ուժից վեր կամ վնասակար աշխատանքից, այսինքն՝ ուրիշ խոսքով, նախքան ողորմածության պատվիրանն ավելորդ հռչակելը, դուք պետք է կատարեք այն: Իսկ ինչ վերաբերում է սոցիալիստներին, ապա ճշմարտությունը բռնությանը շաղկապելուց առաջ, նրանք պետք է առնվազն ապացուցեն, որ չքավոր դասակարգը, բռնությամբ տիրանալով ողջ հասարակական սեփականությանը, արդարամտությամբ կտնօրինեն այն և իրար միջև հավասարաչափ կբաժանեն: Ապացուցելն այդ անհնարին է թվում, ընդհակառակն, ամեն մի անաչառ մտքի համար միանգամայն ակնհայտ է, որ խռովությունն ու կողոպուտը՝ արդարության վատ դպրոց (մեթոդ) են և որ ընչազուրկներն ունևորներին թալանելով, անպայմանորեն իրար կսկսեն թալանել և կեղեքել:

Որպեսզի հասարակական հեղաշրջումը գոհացնի ճշմարտությանը և հասարակության բարոյական նվաճումը կազմի, այն պետք է *անշահախնդիր* լինի, պետք է *ի վերուստ* գա, ոչ թե շինծու իրավունքների պահանջից, այլ իրական պարտականությունների կատարումից: Ունևորներն իրական կրոնական և բարոյական պարտավորություն են կրում չքավորների մասին հոգ տանելու, հզորները՝ թույլերի, և ամեն տեսակ բարոյական միջոցներով նրանց դրան մղելը կրոնի սպասավորների պարտավորությունն է կազմում:

Արդի հասարակության մեջ շատերը, չհամարձակվելով անմիջականորեն ժխտել բարեգործության բուն սկզբունքը, նրա ամենապարզ և առավել նկատելի ձևի (եղանակի) դեմ են ընդվզում: «Ճշմարիտ ողորմությունը,- ասում են նրանք, -նրանում չէ, որ դրամ տաս՝ դրամ տալը չէ»: Իհարկե, այդպես է. ճշմարիտ ողորմությունը նրանում է, որ տաս այն, ինչ *հարկավոր* է, տաս այն, ինչի համար խնդրում են. խնդրողին տուր և քեզանից փոխ վերցնել կամեցողին մի՛ վանիր: Եթե բարոյական աջակցության կարիք ունեցողին դրամ առաջարկելը անհեթեթություն է, ապա առավել ևս անհեթեթություն է սովածին կամ հիվանդին բարոյական մխիթարություն առաջարկելը, որին նախ և առաջ դրամ է հարկավոր՝ հացի կամ դեղորայքի համար: Բոլոր այն սոփեստությունները, որոնցով ցանկանում են գլուխներն ազատել (ազատվել) ողորմածության պատվիրանից, քար են հացի փոխարեն և օձ՝ ձկան փոխարեն: Այս կազմի մեջ է մտնում նաև բավական սովորական այն դատողությունը, թե ողորմությունը բարիքի փոխարեն հաճախ չարիք է բերում: Ճշմարիտ ողորմությունը, ոչ միայն հանուն մերձավորինը, այլև ի սեր Աստծունը, Աստծու շնորհի շարունակությունն է և չի կարող չարիքի հանգեցնել: Բայց անկեղծություն չկա էլ այդ դատողության մեջ, քանզի միայն այն դեպքում են դիմում (ապավինում) դրան, երբ պահանջվում է ուրիշին տալ և թե՛ երբ հարկավոր է անձամբ ստանալ, մինչդեռ երկու դեպքում էլ գալիք վնասի հնարավորությունը միանման պետք է ընդունվի:

Կծծիությունը (ժլատությունն ու կեղծավորությունը, երեսպաշտությունը) մարդկային բնության բավականին սովորական արատներ են և այդ արատներով թելադրված առարկություններն ընդդեմ բարեգործության արտառոց ոչինչ չեն ներկայացնում: Բայց հույժ զարմանալին այն է, որ գոյություն ունեն քրիստոնեական պետություններ, որոնցում օրենքն արգելում է ողորմություն խնդրելը և առավել ևս նեղացնում այն «ասեղի անցքը», որի միջով է հարուստներին վիճակված Երկնքի Արքայություն մտնել (մուտք գործել): Բայց սրանով քրիստոնեական պետությունն իր սեփական հիմքերի տակն է քանդում, հիմքերն

Է քայքայում, քանզի այն մասնավոր արատների (կծծիության և կնճռավորության) հովանավորության համար չէ, որ գոյություն ունի, այլ՝ համընդհանուր բարօրության հոգածության, և նրա գերագույն նպատակը հատկապես ողորմածության պատվիրանի հետ է կապված. օգնել տկարներին, պաշտպանել հարստահարվածներին, բարեգործություն անել չքավորներին՝ երկրի վրա Աստծու բարեպաշտ ներգործությունը (ազդեցությունը) տարածել: Կրոնական պետությունը պարտավոր է ծառայել ոչ թե աշխարհի բնական, այլ՝ զուտ բարոյական կամ շնորհական կարգավորությանը (կարգին): Բնական կարգավորությունը փոխադարձ ոչնչացման կամ, լավագույն դեպքում, մարդկանց փոխադարձ սահմանափակումների վրա է հենված: Բարոյական կամ շնորհական կարգավորությունը փոխադարձ համերաշխության կամ միաբանության վրա է հիմնվում և այդ բարոյական կարգավորության առաջին, սկզբնական ու ամենապարզ արտահայտությունը՝ ձրի օգնությունը, անշահախնդիր բարեգործությունը կամ պարզապես ողորմությունն է:

*Ռուսերենից թարգմանեց*
*ԳԵՎՈՐԳ ԱԲՂ. ՍԱՐՈՅԱՆԸ*

# ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԽՈՒՄԸ

13-րդ դարի 60-ական թվականներին Կիլիկիայի հայկական թագավորության դրությունը, միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով, էականորեն փոխվեց: Նախ տարածաշրջանի խաչակրաց պետությունները բավականին թուլացել էին և կործանման եզրին էին հասել: Եվրոպական պետությունների հարաբերությունները էլ բավականաչափ սրված էին և նոր խաչակրաց արշավանքի հույս չկար: Միաժամանակ եվրոպական երկրների թագավորները և Հռոմի Պապը ձգտում էին իրենց ազդեցության ոլորտները ընդարձակել Կիլիկիայում: Ինչ վերաբերում է Իկոնիայի սելջուկյան սուլթանությանը, ապա պետք է նշել, որ 1243 թ. Քյոսեդաղի («Չմանկատուկ քաղաքագլուղի») մոտ տեղի ունեցած ճակատամարտում կրած պարտությունից հետո սելջուկները բավականաչափ թուլացել էին[1]: Եվ դրա հետևանքով փոխվել էր ուժերի փոխհարաբերությունը Փոքր Ասիայում: Իկոնիայի սուլթանությունը դարձել էր մոնղոլների վասալը: Իր հերթին Կիլիկիան էլ կարողացել էր հետագա տարիներին մի շարք կարևոր հաղթանակներ տանել սելջուկների դեմ և ամրապնդել իր դիրքերը:

Անդրադառնալով հայերի դաշնակիցներին՝ մոնղոլներին, պետք է նշել, որ Մանգուի եղբայրը՝ Հուլավուն, մեծ բանակով եկավ Իրան, հնազանդեցրեց տեղական հնագույն ֆեոդալներին և 1256 թ. հիմք դրեց Հուլավույանների մոնղոլա-իրանական պետությանը, որը և պատմության մեջ մտել է «իլխանություն» անունով[2]: Նորաստեղծ պետության կենտրոնը դարձավ Թավրիզը: Իշխանության կազմի մեջ մտնում էին ողջ Իրանը, Ատրր-

---

[1] **Рашид-ад-дин**, Сборник летописей, т. II, Москва, 1960, с. 197, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, թարգմանեց Հ. Նալբանդյանը, Երևան, 1965 թ., էջ 235, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 281-283, The Encyclopedia of Islam, vol. II, London, 1965, p. 36, **B. Spuler**, The Muslim World, part. II, Leiden, 1960, p. 27, The Cambridge history of Iran, vol. V, Cambridge, 1968, p. 338, **Ա. Խաչատրյան**, Աբուլ Ֆարաջ Գրիգորիս իբն Ալ-Իբրիի պատմագրական երկերը որպես Կիլիկյան Հայաստանի XIII դարի պատմության սկզբնաղբյուր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հատ. XVII, Երևան, 1998, էջ 151, **В. Гордлевский**, Государство Сельджукидов Малой Азии, Москва, 1941, с. 36-37, **Г. Микаелян**, История Киликийского Армянского Государство, Ереван, 1952, с. 196, 295, **Կ. Մուրադյան**, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001, էջ 416, **D' Ohsson**, Histoire des Mongols, vol. III, Amsterdam, 1852, p. 81:

[2] **Juvaini**, The history of the world-conqueror, vol. II, Manchester, 1958, p. 615-632, The Cambridge history of Iran, էջ 342-344, Encyclopedia Iranica, vol. V, California, 1992, p. 135, **B. Spuler**, նշվ. աշխ., էջ 25-26, **К. Босворт**, Мусульманские династии, Москва, 1971, с. 200-201, **История Ирана**, Москва, 1977, с. 150, The Cambridge history of Islam, vol. I A, Cambridge, 1977, p. 163:

պատականը. Արևելյան Վրաստանը. Հայաստանը. Իկոնիայի սելջուկյան սուլթանությու-
նը. Իրաքը: Բացի նշված երկրներից. Հուլավույաններից կախյալ պետություններ էին
Արևմտյան Վրաստանը. Տրապիզոնի կայսրությունը. Կիլիկիայի հայկական թագավո-
րությունը: Մոնղոլները բուդդայական ազդեցության տակ գտնվող հեթանոսներ էին. ո-
րոնք միևնույն ժամանակ մեծ հետաքրքրություն և հանդուրժողականություն էին ցուցաբե-
րում քրիստոնյաների հանդեպ: Արևելքի քրիստոնյա միսիոներների շնորհիվ մոնղոլներն
ունեին քրիստոնեություն ընդունած մի թև, որի ազդեցությունը չի կարելի թերագնահատել.
քանի որ դրա ներկայացուցիչները գործում էին նույնիսկ արքունիքում: Նրանք հարում
էին նեստորականությանը[3]: Միակ կրոնը, որ մոնղոլներն ատում էին, մահմեդականութ-
յունն էր:

13-րդ դարի 60-ական թվականների սկզբներին մոնղոլական իշխանությունը բավակա-
նին ուժեղ պետություն էր և մեծ վտանգ էր ներկայացնում իր թշնամիների համար: Ինչ վե-
րաբերում է Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների հակառակորդներին՝ Եգիպտոսի մամ-
լուքյան սուլթանությանը, ապա պետք է նշել, որ 1250 թ. Եգիպտոսում գալով իշխանութ-
յան գլուխ՝ մամլուքները մի քանի տարի պայքարում էին իրենց իշխանության հետագա
ամրապնդման և սահմանների ընդարձակման համար[4]: Հավատքի հարցում լինելով բա-
վականին խիստ, նրանք կրկին առաջ էին քաշում ջիհադի՝ մոնղոլների և քրիստոնյաների
դեմ սրբազան պատերազմի գաղափարը: Եգիպտոսի սուլթանությունը շատ զորեղացավ,
երբ սուլթան Ալ մալիք ալ Մուազզամ Կատուզզի դավադրաբար սպանությունից հետո
1260 թ. գահ բարձրացավ Բեյբարսը (1260-1277 թթ.)[5]: Այդ ժամանակվանից սկսած Եգիպ-
տոսի պատմության մեջ տեղի ունեցան շրջադարձային փոփոխություններ:

Անդրադառնալով հայ-եգիպտական հարաբերություններին, պետք է նշել, որ հայերը,
դաշնակցելով մոնղոլների հետ, շատ բնական էր, որ ներքաշվեցին մամլուքների դեմ պա-
տերազմի մեջ: Մոնղոլները, 1258 թ. գրավելով Բաղդադը, նպատակ ունեին շարժվելու ա-

---

[3] **K. E. Luprian**, Die Beziehungen Der päpste zu islamischen und mongolischen Herrschern im. Vaticana, 1981, p. 60, **M. Setton**. A history of the Crusades, 1189-1311, London, 1969, p. 653, **B. Spuler**, նշվ. աշխ., էջ 16-17, **T. Boase**, The Cilician Kingdom of Armenia, London, 1978,p. 25, **S. Runciman**. A History of the Crusades, vol. III, London, 1978, p. 315.

[4] **Bar Habraeus**, The Chronography, London, 1932, p. 415-416, **Makrizi**, Histoire des Sultans Mamelouks, part I, Paris, 1837, p. 20-30, Արաբական աղբյուրները, էջ 271, **D. Ayalon**, Studies on the Mamluks of Egypt (1250-1517), part VI, London, 1977, p. 3-5, **S. W. Muir**, The Mamluke or slave dynasty of Egypt, 1250-1517, London, 1896, p. xxix, **S. Lane-Poole**, A history of Egypt in the middle ages, London, 1901, p. 243-244, **К. Босворт**, նշվ. աշխ., էջ 100-101, The Encyclopaedia of Islam, p. 1124-1125, The Cambridge history of Islam, p. 210, **M. Setton**, նշվ. աշխ., էջ 739-741, **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 426:

[5] **Bar Habraeus**, էջ 416-417, **Makrizi**, էջ 116-122, **Սամվել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 151, Արաբական աղբյուրները, էջ 271, **Рашид-ад-дин**, с. 54, **М. Заборов**, Крестоносцы на Востоке, Москва, 1980, с. 288, The Encyclopaedia of Islam, p. 1124-1125, **S. Lane-Poole**, նշվ. աշխ., էջ 244-245, **D. Ayalon**, նշվ. աշխ., part VI, էջ 3-6, **К. Босворт**, նշվ. աշխ., էջ 100-102, The Cambridge history of Islam, p. 213, **M. Setton**, նշվ. աշխ., էջ 745, **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 428, **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 315, **B. Spuler**, նշվ. աշխ., էջ 20, **Օսման իբն ալ Թուրք**, Հայ ժողովրդի պատմություն, Հալեպ, 1960 (արաբերեն), էջ 153, **Л. Семенова**, Салах-ад-дин и мамлюки в Египте, Москва, 1966, с. 179-181, **R. Irwin**, The middle east in middle Ages (1250-1382), Londress, 1986, p. 36.

ռաջ և գրավելու Սիրիան ու Եգիպտոսը: Իրենց նպատակին հասնելու համար նրանք 1259-1260 թթ. կազմակերպեցին մի շարք արշավանքներ: Մասնագիտական գրականության մեջ տիրապետում է այն կարծիքը, որ Հեթում Ա թագավորի մասնակցությունը մոնղոլական նվաճումներին սկսվում է 1259 թ.[6]: Ընդ որում, հայկական աղբյուրները նշում են, որ Հեթում Ա թագավորը Հուլավուի առաջարկով մասնակցել է Սիրիայի նվաճմանը՝ Սուրբ Երկիր արշավելու համար[7]: Սակայն հետագա ռազմական գործողությունների մասին հայ պատմիչները լռում են: Ռազմարշավին մասնակցել է նաև Բոհեմոնդ Զ Անտիոքցին, որին Հեթումը համոզել էր միանալ այդ դաշինքին, չնայած այն բանին, որ Անտիոքը 15 տարի առաջ մերժել էր մոնղոլների առաջարկած պայմանները[8]:

Հեթումի մասնակցության մասին հաղորդում են հայ պատմիչներ Վարդանը և Հեթումը, ըստ որոնց՝ Հուլավուն Բաղդադի գրավումից հետո մեկ տարի հանգստանալով՝ հայոց թագավորին իր զորքով կանչում է Եդեսիա, որովհետև ուզում էր գրավել Սուրբ Երկիրը, որպեսզի այն տա քրիստոնյաներին[9]: Եվ ահա Հեթումը 12 հազար հեծելազորով ու 40 հազար հետևազորով գնում է Հուլավուի մոտ և խորհուրդ տալիս նրան նախ գրավել Հալեպ քաղաքը, ապա՝ Միջագետքը, որովհետև Երուսաղեմի նախադուռը Հալեպ քաղաքն էր[10]: Հուլավուն հավանություն է տալիս այդ խորհրդին և հրամայում իր զորավարներին՝ նախ գրավել Հալեպը: Թե որքանով է Հեթումի խորհուրդն ազդել Հուլավուի վրա՝ դժվար է ասել, որովհետև Հուլավուն դեռ վաղուց ցանկանում էր գրավել Հալեպը, Երուսաղեմը և սիրիական նավահանգիստները՝ մոնղոլների իշխանությունը Առաջավոր Ասիայի առևտրական ճանապարհների նկատմամբ հաստատելու համար: Մոնղոլների կողմից Միջագետքը գրավելուց հետո, Հեթում թագավորը և Կոստանդին Կաթողիկոսը 1259 թ. գնացին Եդեսիա՝ Հուլավուի մոտ, և, ինչպես նշում է Վարդանը, կաթողիկոսը օրհնել է խանին[11]:

1260 թվականը նշանավորվում է նրանով, որ մոնղոլական իշխանությունը, դաշնակցած Կիլիկիայի հետ, կազմակերպեց սիրիական քաղաքների պաշարումը և գրավումը: Այս ժամանակաշրջանում մահմեդական Սիրիան (Ասորիքը) դեռևս գտնվում էր Այյուբյանների իշխանության տակ, չնայած որ նրանք արդեն բավականաչափ թուլացել էին:

---

6 Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 235, Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842, էջ 50, Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 388, Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 152-153, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան 1984, էջ 299, **M. Setton**, նշվ. աշխ., էջ 653, **M. Canard**, Le Royaume D' Arménie-Cilicie, et les Mamelouks jusqûou_traité de 1285, Revue Des Etudes Arméniens, t. IV, Paris, 1967, p. 219: (Միշտ չէ Ղ. Ալիշանի այն կարծիքը, թե իբր Հեթում թագավորի միանալը մոնղոլներին տեղի է ունեցել 1256 թ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 554), Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 424, Հայ ժողովրդի պատմություն, հատ. III, Երևան, 1976, էջ 706, **Г. Микаелян**, նշվ. աշխ., էջ 321, **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 305.

7 Վարդան Վարդապետ, էջ 152-153, Հեթում պատմիչ, էջ 50:

8 **J. Richard**, La Papauté et les Missions D'Orient, Au Moyen Age. (XIIIe-XVe siècles), Roma, 1998, p. 99, **M. Setton**, նշվ. աշխ., էջ 653, **T. Boase**:

9 Հեթում պատմիչ, էջ 50, Վարդան վարդապետ, էջ 153:

10 Հեթում պատմիչ, էջ 47, Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 299:

11 Վարդան վարդապետ, էջ 153:

Հայ և օտար միջնադարյան հեղինակները հարուստ տեղեկություններ են հաղորդում այս արշավանքի մասին: Դաշնակիցների զորքերն իրենց առաջին հարվածն ուղղում են Հալեպին, որի գրավման մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Աբու Ֆա-րաջը (Բար Հեբրաուս), ըստ որի՝ Հուլավուն իր զորքերի մի մասն ուղարկեց Սիրիայի տարբեր շրջաններն ասպատակելու, իսկ ինքն անձամբ ձեռնարկեց Հալեպի պաշարումը և գրավումը[12]: Ըստ Աբու Ֆարաջի՝ մոնղոլական զորքը Հալեպ ներխուժեց Հիջրի 658 թ. սաֆար ամսի 9-ին (1260 թ. հունվարի 23), կիրակի օրը, և ավելի շատ մարդ կոտորեց, քան Բաղդադի գրավման ժամանակ[13]: Աբու Ֆարաջի տեղեկությունը հաստատում է նաև Ռաշիդ ադ-Դինը[14]: Իսկ arab պատմիչ Մաքրիզին Հալեպի գրավումը մոնղոլների կողմից թվագրում է 1260 թ. սեպտեմբերի 26-ին[15]: Մենք հակված ենք ավելի շատ հավատալու Աբու Ֆարաջի տեղեկությանը, որովհետև նա տվյալ արշավանքի ժամանակ գտնվել է Հալեպում ու եղել տեղի Հակոբիկ ասորական եկեղեցու եպիսկոպոսը և շատ դեպքերի ականատեսը: Հալեպի բնակչության մեծ մասը ապաստան է գտնում քաղաքի հունական եկեղեցում: Ի վերջո, Հալեպի գրավման ժամանակ սրի քաշվեց 50 հազար մարդ, իսկ մոտ 100 հազար էլ՝ կանայք ու երեխաներ, գերեվարվեցին ու վաճառվեցին ֆրանկների ու հայերի երկրներում[16]:

Ուսումնասիրողներից Մ. Կանարը նշում է, որ Հալեպի առումից ի վեր արաբները Հեթում արքային վատ արարքներ էին վերագրում՝ սպանությունները մզկիթում, շրջակա տարածքների հրկիզումը և այլն[17]: Ամենայն հավանականությամբ, նրա այդ տեսակետը սխալ է, որովհետև մահմեդական հեղինակները Հալեպի ռազմական գործողություններին Հեթում թագավորի մասնակցության մասին լռում են, հանգամանք, որը հազիվ թե վրիպեր ժամանակակից մահմեդական պատմիչների ուշադրությունից: Այսուհանդերձ, արաբ հետազոտողները գտնում են, որ Հեթում թագավորը, ելնելով հայ-մոնղոլական դաշինքի պարտավորություններից, հյուսիսի՝ սելջուկների, և հարավի՝ մամլուքների վտանգից, իր թագավորությունը պաշտպանելու համար միացել էր Հուլավուին[18]:

Կարելի է ենթադրել, որ Հեթում թագավորը, որպես մոնղոլների դաշնակից, անձամբ իր զորագնդով չի մասնակցել ռազմական գործողություններին, բայց օգնել է նրանց պարենով, ձիերով ու հագուստով: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ հայ պատմիչներից և ոչ ոք հայերի ռազմական գործողությունների մասին տեղեկություններ չի հաղորդում: Միայն հայ պատմիչներ Վարդանն ու Հեթումն են նշում, որ 1259 թ. թագավորը Կոստանդին Կաթողիկոսի հետ զորքերով միացել է Հուլավուին Եդեսիայում[19]:

---

12 Bar Hebraeus, էջ 435:

13 Նույն տեղում:

14 Рашид – ад – дин, էջ 49-50:

15 Makrizi, էջ 90:

16 Makrizi, էջ 90-92, P. Hitty, History of the Arabs. London, 1951, p. 487, Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 425:

17 M. Canard, նշվ. աշխ., էջ 219:

18 Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 157:

19 Վարդան Վարդապետ, էջ 153, Հեթում պատմիչ, էջ 47:

Մոնղոլական տիրակալ Հուլավուն Հալեպի գրավումից հետո շարժվում է դեպի Հարիմ ամրոց: Նա խոսք է տալիս ամրոցի կառավարիչ Ֆախր ադ-Դինին, որ կամովին հանձնվելու դեպքում կապահովի ամրոցի պաշտպանների անձեռնմխելիությունը: Երբ բացվում են ամրոցի դռները, մոնղոլական զորքը սրի է քաշում բոլորին: Դրանից հետո հայ-մոնղոլական զորքերը հպատակեցնում են Օրոնտեսի հովտի քաղաքները, ապա մոտենում են Դամասկոսին[20]: Դամասկոսի Այյուբյան սուլթան ալ-Նասիրը (1237-1260 թթ.) որոշում է քաղաքն առանց արյունահեղության հանձնել մոնղոլներին: Ըստ արևելյան հեղինակների, Դամասկոսի հանձնումը մոնղոլական ներկայացուցիչներին տեղի է ունեցել հիջրայի 658 թ. ջումադա առաջին ամսվա կեսին (1260 թ. ապրիլի 29)[21]: Անտիոքի դուքսը և Սսի թագավորը մոնղոլների հետ մտնում են Ասորիքի մայրաքաղաք, որը խաչակիրներին երբեք չէր հաջողվել գրավել: Մոնղոլների հետ այս դաշնակցությունը հնարավորություն է տալիս Անտիոքի դքսությանը՝ հետ նվաճելու Լաոդիկեա նավահանգիստը, մինչդեռ Հեթումը Հուլավուից ստանում է Մարաշը, Բեհեսնին[22]: Այն ժամանակ, երբ մահմեդական Ասորիքը գտնվում էր մոնղոլների ձեռքում, իսկ վերջիններս պատրաստվում էին շարժվել դեպի Երուսաղեմ ու Եգիպտոս, մեկ կարևոր իրադարձություն փրկում է Մերձավոր Արևելքի մահմեդական աշխարհը հետագա հարձակումներից: Հուլավուն Հալեպում ստանում է Մանգուի մահվան լուրը, և գահաժառանգության հարցերը նրան ստիպում են գնալ Մոնղոլիա[23]:

Ըստ Աբուլ Ֆարաջի, Հուլավուն Սիրիայում 10 հազարանոց զորք է թողնում՝ հրամանատար նշանակելով Քիթբուղա զորավարին[24]: Քիթբուղային շնորհվում է նաև նոյին տիտղոսը: Ըստ Կիրակոս Գանձակեցու և Վարդան վարդապետի, Քիթբուղայի տրամադրության տակ թողնվել էր 20 հազարանոց բանակ[25]:

Աբուլ Ֆարաջի նշած 10 հազարն ավելի հավանական է երևում, քանի որ Հուլավուն, հեռանալով դեպի Մոնղոլիա, պետք է որ, ինչքան հնարավոր է, մեծաքանակ զորքով գնար, որովհետև հնարավոր էին նաև բախումներ գահի շուրջ: Սակայն Թավրիզում Հուլավուն տեղեկանում է, որ Խուբիլայն ընտրվել է մեծ խան, և որոշում է վերադառնալ Սիրիա՝ անձամբ ղեկավարելու պատերազմական գործողությունները: Ըստ Սմբատ Սպարապետի, երբ Հուլավուն Սիրիայից դուրս էր եկել, հրամանատար Քիթբուղան արշավում է դեպի Եգիպտոս և մինչ արշավելը նա Հեթում թագավորից պահանջում է 500 հայ մարտիկ[26]: Մամլուքյան առաջապահ զորքը սուլթան ալ-Մուզաֆֆար Սայֆ ադ-դին Կուտուզի (1259-1260 թթ.) գլխավորությամբ դուրս է գալիս մոնղոլական ջոկատների դեմ՝ Պաղես-

---

[20] Ա. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 157, **M. Canard**, նշվ. աշխ., էջ 219, **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 307:

[21] **Makrizi**, էջ 97, **Bar Habraeus**, էջ 436:

[22] **J. Richard**, նշվ. աշխ., էջ 99-100, **M. Canard**, նշվ. աշխ., էջ 222, **T. Bosse**, նշվ. աշխ., էջ 25:

[23] The Cambridge history of Iran, 351, Encyclopaedia Iranica, vol. V, p. 135, **D' Ohsson**, նշվ. աշխ., էջ 328, История Ирана, էջ 150, **Г. Микаелян**, նշվ. աշխ., էջ 323, **M. Canard**, նշվ. աշխ., էջ 220, **M. Setton**, նշվ. աշխ., էջ 744:

[24] **Bar Habraeus**, էջ 436:

[25] Կիրակոս Գանձակեցի, էջ 388, Վարդան վարդապետ, էջ 153:

[26] Սմբատ Սպարապետ, էջ 237:

տինի Բիսան և Նաբլուս քաղաքների միջև. Այն Ջալուտ կոչված վայրում: Հակառակորդ-ների միջև առաջին ճակատամարտը տեղի է ունեցել հիջրի 658 թ. ռամադան ամսի 25-ին (1260 թ. սեպտեմբերի 3)[27]: Թեև մոնղոլական զորքը կռվում է քաջաբար, բայց պարտութ-յուն է կրում, իսկ հրամանատար Քիթբուղան սպանվում է: Մոնղոլները պարտություն կրե-ցին, քանի որ եգիպտացիները չափազանց մեծ թվական գերակշռություն ունեին:

Այն Ջալուտի ճակատամարտում Քիթբուղայի պարտության մասին խոսելիս. Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Քիթբուղայի զորքի կազմում կային շատ հայեր, որոնք նույնպես մահացան[28]: Վարդան վարդապետն ավելացնում է, որ Քիթբուղայի զորքերը ջախջախվե-ցին, որովհետև մոնղոլական բանակը շատ սակավաթիվ էր[29]: Այսպիսին էր մոնղոլների առաջին պարտությունը Առաջավոր Ասիայում:

Երկու օր անց տեղի է ունենում մամլուքների և մոնղոլների զորքերի միջև երկրորդ բախումը, և այս անգամ մոնղոլական զորքը խայտառակ պարտություն է կրում հիջրի 658 թ. ռամադան ամսի 27-ին (1260 թ. սեպտեմբերի 5)[30]: Քիթբուղայի գլուխը տարվում է Կահիրե՝ ավետելու հաղթանակը:

Եթե ճշմարիտ համարենք Սմբատի այն տեղեկությունը, թե 500 հոգիանոց հայկական մի զորաջոկատ միացել էր Քիթբուղային[31], ուրեմն պետք է փաստել, որ դա հայերի առաջին շփումն էր մամլուքների հետ: Մինչ այժմ մեզ հասած գրականության մեջ Այն Ջալուտի հայտնի ճակատամարտի մասին կարծիքները խիստ հակասական են: Հետազոտողներից, օրինակ, Մ. Կանարը գտնում է, որ Քիթբուղան Հուլավուի հեռանալուց հետո, անտեսելով նրա հրամանը՝ չհեռանալ Սիրիայից, որոշեց արշավել Եգիպտոս[32] և փաստորեն ինքը նախաձեռնողը դարձավ այդ ճակատամարտի: Իսկ Ա. Խաչատրյանը և Կ. Մութաֆյանը գտնում են, որ սուլթան Կատուզն է նախաձեռնողը եղել և հարձակվել առաջինը[33]:

---

27 **Bar Habraeus**, էջ 437, **Makrizi**, էջ 105, **Рашид-ад-дин**, էջ 52, **Կիրակոս Գանձակեցի**, Մանր ժամանակագրություններ, հատ. II, Երևան, 1951, էջ 70, 143, էջ 389, **K. E. Lupprian**, նշվ. աշխ., էջ 65, **J. Richard**, նշվ. աշխ., էջ 100, **R. Röhricht**, Geschichte des Königreichs Jerusalem, (1100-1291), Amsterdam, 1966, p. 910, Encyclopaedia Iranica, vol. II, p. 502, **B. Spuler**, նշվ. աշխ., էջ 20, **M. Setton**, նշվ. աշխ., էջ 745, The Cambridge history of Islam, p. 164, 212-213. **J. Boyle**, The Mongol World Empire 1206-1370, London, 1977, part XIII, p. 556, **S. Runciman**, նշվ. աշխ., էջ 313, The Cambridge history of Iran, p. 351, Encyclopaedia of Islam, vol. I, p. 1124. **P. Hitty**, նշվ. աշխ., էջ 631, **S. Lane-Poole**, նշվ. աշխ., էջ 262: (Սխալ է Մ. Զաբորովի այն կարծիքը, ըստ որի Այն Ջալուտի ճակատամարտում եգիպտական զորքերը գլխավորում էր Բեյբարսը: **М. Заборов**, նշվ. աշխ., էջ 288): Թյուրիմացություն է նաև Կ. Բոսվորտի պնդումը, որ Այն Ջալուտի կռվում մոնղոլական բանակը ղեկավարում էր Հուլավուն (**К. Босворт**, նշվ. աշխ., էջ 102):

28 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 389:

29 **Վարդան Վարդապետ**, էջ 153:

30 **Bar Habraeus**, էջ 438, **Рашид-ад-дин**, էջ 52-53, **Makrizi**, էջ 105, **B. Spuler**, նշվ. աշխ., էջ 20, **M. Canard**, նշվ. աշխ., էջ 220, **P. Hitty**, նշվ. աշխ., էջ 631, Encyclopaedia of Islam, էջ 1125, **T. Bosse**, նշվ. աշխ., էջ 26, **M. Setton**, նշվ. աշխ., էջ 745:

31 **Սմբատ Սպարապետ**, էջ 237:

32 **M. Canard**, նշվ. աշխ., էջ 220:

33 **Ա. Խաչատրյան**, նշվ. աշխ., էջ 158, **Կ. Մութաֆյան**, նշվ. աշխ., էջ 427:

Ավելի հավանական է Ա. Խաչատրյանի և Կ. Մութաֆյանի կարծիքը, քանի որ Կոստուգը լավ էր հասկանում, որ Հուլավուի հնռանալը դեպի Մոնղոլիա ճակատագրի նվերն էր և ինքը պետք է օգտագործեր այդ առիթը: Այդ է վկայում նաև Կոստուգի հայտնի ճառը, ուր նա ասում է. «Բոլոր այս երկրները Հուլավուն նվաճեց զենքի ուժով: Նա արդեն տիրել էր Դամասկոսին և եթե չստանար իր եղբոր՝ Մանգուի վախճանի լուրը, ապա Եգիպտոսը կարժանանար մյուս գավառների ճակատագրին»[34]:

Փաստորեն ինչպես մոնղոլները, այնպես էլ հայերն ու ֆրանկները դառնում են մամլուքների թշնամիները: Այսպիսով սկսած 13-րդ դարի 60-ական թվականներից մամլուքները կասեցրին մոնղոլների հետագա առաջխաղացումը Մերձավոր Արևելքում և կոտրեցին իսլամական աշխարհում մոնղոլների անպարտելիության նկատմամբ առկա համընդհանուր համոզումը: Իրանի իշխողների նկատմամբ մահմեդականների ընդհանուր ատելությունը նպաստեց մամլուքների և Ոսկե Հորդայի քաղաքական և առևտրական դաշինքի կայացմանը: Իսկ իշխանները իրենց հերթին փորձեցին կազմակերպել հակամահմեդական դաշինք և իրենց կողմը գրավել Եվրոպայի քրիստոնեական տերություններին, Մերձավոր Արևելքի ծովափնյա խաչակիրներին և Կիլիկիայի հայկական թագավորությանը[35]: Ահա այս նոր ռազմաքաղաքական իրավիճակում Կիլիկիայի հայկական թագավորությունը շարունակում էր մնալ մոնղոլների գլխավոր հենակետը Եգիպտոսի ու Սիրիայի մամլուքների դեմ պայքարում: Միաժամանակ ուժեղանում է մոնղոլների քաղաքական ազդեցությունը Կիլիկիայի արտաքին քաղաքականության հետագա ընթացքի վրա, քաղաքականություն, որն արդեն չէր ելնում Մերձավոր ու Միջին Արևելքի ռազմաքաղաքական ուժերի իրական վիճակի սթափ գնահատումից:

[34] Рашид-ад-дин, էջ 57:

[35] J. Richard, նշվ. աշխ., էջ 76-80, K. E. Lupprian, նշվ. աշխ., էջ 59-60, L. Balletto, Le Commerce Arméno-Italien (XIIIe-XVe siècle), Roma-Armenia, Roma, 1999, p. 187, К. Босворт, նշվ. աշխ., էջ 201:

*ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ*

# ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴ



Հարավ-արևմտյան պարիսպը

Արշակունյաց թագավորության անկումից հետո, հայ ժողովրդի չորս ու կես դար տևած անդադրում հերոսական ոգորումների արդյունքը հանդիսացավ IX դարի վերջին Հայաստանի անկախ պետականության վերականգնումը՝ Բագրատունյաց մեծագործ իշխանական տոհմի գլխավորությամբ: Սակայն լիիրավ անկախության հասնելու հրամայականով թելադրված Բագրատունիներին հարկ եղավ նոր պետականության ամրապնդման նպատակամետ քայլեր ձեռնարկել՝ նուրբ արտաքին քաղաքականությունը զուգակցելով տնտեսական զարգացման և հատկապես ռազմական շինարարության հետ: Վերջինիս կարևոր տարրերից մեկը տերության սահմանների երկայնքով պաշտպանական համակարգի (ամրությունների) ստեղծումն էր, որը կոչված էր արգելակել թշնամական բանակների մուտքը Հայաստանի ներքին շրջաններ: Բերդեր ստեղծվեցին նաև երկրի հյուսիսարևելյան գավառների նախալեռնային գոտու ձորահովիտների վրա իշխող դժվարամատչելի կետերում, ուր կարող էին հարձակումների ժամանակ հուսալիորեն պաշտպանվել և հակառակորդի դեմ հաղթական մարտեր մղել սահմանակալ գավառների տերերը:

Ներկայիս Տավուշի մարզում այդ ժամանակներին վերաբերող պաշտպանական համակարգի բաղկացուցիչներն են Գագ, Կայան, Կածարեթ, Տավուշ, Մածնաբերդ և Երգեվանք բերդերը: Նաև Մահկանաբերդը, որը, ինչպես նկատել է պատմաբան Ռաֆայել Մաթևոսյանը, ճարտարապետական առումով լավ չի ուսումնասիրված[1]: Իսկ որոշ հետազոտողներ էլ շփոթել են այս ամրոցի տեղադրությունն ու անունը: Այսպես, ըստ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի (հ. 3, Երևան, 1991, էջ 650), Մահկանաբերդը տեղադրվում է «Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Ձորոփոր (Կայան) գավառում, Աղստև գետի միջին հոսանքի մոտ, Ոսկեպար վտակի աջ ափին, Դեղձնուտ վանքի մոտակայքում»: Այո, պատմական աշխարհագրությունից հայտնի է, որ վաղ միջնադարում Ձորոփոր, հետագայում Կայան կոչված գավառը գտնվել է Աղստև գետի միջին հո-

[1] Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 7, Երևան, 1981, էջ 185:

սանքի մոտ, իսկ Ոսկեպարի հովտում տարածվել է Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կանգարք գավառը[2], որը XII-XIII դարերում կոչվել է «գաւառ Մահկանաբերդոյ»: Իսկ Մահկանբերդը չի գտնվում Աղստնի Ոսկեպար վտակի աջ ափին, ուր և պիտի լինի Դեղձնուտի վանքը: Իրականում Մահկանաբերդը գտնվում է Ոսկեպարի աջակողմյան օժանդակ Քարահանի (կամ Կիրանց) Սամսոն վտակի աջ ափին և Դեղձնուտի վանքի դիմաց, հարավարևելյան կողմում: Սակայն մի այլ տեղում մասնագետներից մեկը հայտնի ամրոցն անվանում է Բերդախոր[3] առանց նշելու օգտագործած աղբյուրը: Իսկ Սարգիս Բարխուդարյանն աշխարհագրական այս միջավայրին վերագրելով Մահկանաբերդ վանքը, այն ենթադրաբար նույնացրել է Քարահան (Կիրանց) գետի միջնամասում գտնվող Առաքելոց հնավայրի* բարձունքում հառնող վանք-ամրոցի հետ: Եվ իրավացի է եղել մեծավաստակ գիտնականը, քանզի շրջակայքում բազմաթիվ են Մահկանաբերդի Արծրունիներին վերաբերվող արձանագիր հուշարձանները: Անշուշտ, միջնադարյան քարավանային ճանապարհների[4] խաչմերուկում գտնվող շահաշատ մեծ գյուղաքաղաքը խաղաղ օրերին հանդիսացել է գավառի իշխանների նստավայրը, իսկ թշնամական հարձակումների դեպքում նրանք, հետ քաշվելով, սատարել են ոչ շատ հեռվում գտնվող իրենց անառիկ բերդին:

Անհայտ է Մահկանաբերդի կառուցման ստույգ ժամանակը, նաև ում կողմից կառուցված լինելը: Արդեն XII-XIII դարերում այն պատկանել է վրաց թագավորությունում բարձր դիրքի և շնորհների արժանացած Արծրունիներին, որոնք իրենց գավառի և բերդի անունով կոչվում էին Մահկանաբերդի Արծրունիներ: Նրանց տիրապետության տակ տարբեր ժամանակներում եղել են նաև Աղստև գետի միջին հոսքը զբաղեցրած Կայան (ավելի հնում՝ Ձորոփոր) գավառը, Հաղբատն ու Սանահինը: Իսկ Մահկանբերդը գտնվում է այդ տարածաշրջանի կենտրոնում, Քարահանի (Կիրանցի) ձորում, ավելի ստույգ՝ նրա աջակողմյան նշանակալի վտակ Սամսոնի ստեղծած ակնահաճո գոգահովտի գրեթե կենտրոնում, Մթնասարի լեռնաշղթայի արևմտյան հիմքից սկզբնավորվող խիտ անտառապատ, երկու կողմերից խիստ զառիթափ լանջերով ժայռապարի ծայրին, ճիշտ անդունդի եզրին, որի մութ ու խոնավ հատակին բնության լռությունը խախտում է միայն մշտահոսով գետակը: Մահկանաբերդն, իհարկե, հանդիսացել է ոչ միայն անառիկ ամրություն, այլև հիանալի դիտակետ, որովհետև այստեղից անզեն աչքով հստակորեն տեսանելի է Մթնասարի լեռնաշղթայի լեռնալանջերով և Սամսոնի ձորով ձեռնարկված յուրաքանչյուր շարժում:

---

[2] Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 935:

[3] Նույն աշխատությունը, հ. 4, Եր., 1988, էջ 489:

* Հնավայրը ներկայումս կոչվում է վանական համալիրի անունով: Հավանաբար դա Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կանգարք գավառի արդեն VII դարից հայտնի իշխանանիստ Կուենե գյուղաքաղաքն է, որին XII-XIII դարերում իշխել են Մահկանաբերդի Արծրունիները, XVI - XVIII դարերում՝ Խնրումյան տոհմի մելիքները (տե՛ս «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 3, Եր., 1991, էջ 145, և «Էջմիածին» ամսագիր, 1998, Զ, էջ 77 - 80):

[4] «Էջմիածին» ամսագիր, 2001, Ե., էջ 94 -107:

# ՄԱՀԿԱՆԱԲԵՐԴԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ




**Անվան ստուգաբանությունը**

«Մահկանաբերդ» անվանումը բանասիրության մեջ ստուգաբանվում է երկու՝ «մահկան+ացու» և «բերդ», կամ «մականա+ա» և «բերդ» իմաստներով: Առաջինով կոչվել է մահկանացու արարածներին պատկանելո՞ւ, թե՝ կործանման ենթակա լինելու պատճառով, անհայտ է: Սակայն տեղավայրի ուսումնասիրությունից հետո մենք հակված ենք ընդունելու երկրորդ անվանումը՝ ունենալով տրամաբանված բացատրություն: Բանն այն է, որ

ժայռաբերդը գտնվում է Մթնասարի լեռնաշղթայի միջնամասում գտնվող բարձրադիր Սանգյառ սարավանդի հիմքից ճիշտ արևելք-արևմուտք ուղղությամբ դեպի Սամսոնի ձորի գոգահովտի կենտրոն ուղիղ գծով ճառագայթվող լեռնաբազկի զանգվածեղ ծայրին: Ներքևում Սամսոնի վանքն է, իսկ աջակողմյան բացատում՝ նշանավոր Դեղձնուտի վանքը, որի մոտով դեպի Կյուրիկյանների Տաշիր-Ձորագետի թագավորության մայրաքաղաք Լոռիբերդ է ձգվել քարավանային ճանապարհը (տե՛ս Մահկանաբերդի տեղավայրի քարտեզը): Կողքից նայելիս ուղիղ գծով ձգվող լեռնաբազուկը չափազանց նման է դեպի նպատակակետ մեկնված թագավորական իշխանության խորհրդանշան մականի (=գայիսոն): Սարավանդի հիմքից դեպի անդունդի եզր խիստ զառիթափ լանջերով անտառապատ լեռնաբազուկը մականի նման հաստանալով, ավարտվում է բարձրակետից ճառագայթվող երկար ու կարճ նոր ժայռեղեն սլաքներով (Ա և Բ)՝ կազմելով մի եռաթև աստղ, որոնց ելման կետում կերտվել է բերդի համալիրը (տե՛ս Մահկանաբերդի հատակագիծը):

Ինչպես և վայել է գայիսոնին (=մականին), մեր կողմից «Մական» կոչված ավելի քան մեկ կիլոմետր ձգվող լեռնաբազուկը զառիթափ լանջերի վերին շարունակության վրա, ողջ երկայնքով, ակնակուռ քանդակների նման պատված է կարծես երկնի լազուրից կաթած ուլունքաշար ինը գեղեցիկ ժայռերով, որոնք արևելյան կողմից գրեթե անմերձենալի են դարձնում ամենամեծի կատարին թառած բերդը: Հայոց բնության ոգին մի անձեռակերտ զարդ է շնորհել, իսկ նրա զավակները, հավանաբար երկրի պաշտպանունակությամբ մտահոգ՝ Բագրատունյաց գահատոհմի պայազատները, մականի նմանվող լեռնաբազկին հագցրել են ադամանդե մի ակ՝ Մականաբերդ անունով, որին հետագայում հավանաբար հավելվել է «հ» հնչյունը և սկսվել է կոչվել Մահկանաբերդ: Իսկ ավելի ուշ նախնական անունը մոռացած տեղաբնակները նախ կոչել են բերդի քար, ապա դարձրել հատուկ անուն՝ Բերդաքար*:

Խորին հարգանք մեր բերդաշինարար ճարտարապետին: Անանուն վարպետն իր ստեղծագործությունը կարողացել է լավագույնս տեղադրել Սամսոնի ձորի հատակից ուղղահայաց լանջերով, 200-250 մետր բարձրության վրա հառնող ժայռի կատարին՝ լիովին բավարարելով պատվիրատուի պայմանն անառիկության մասին: Տեղանքի խիստ զառիթափության շնորհիվ այստեղ իսպառ բացառված է եղել հակառակորդի կողմից պարսպակործան մեքենաների կիրառումը: Բոլորովին էլ դյուրին չեն եղել նաև հակառակորդի զորքերի քարագնաց և անձավամուտ ստորաբաժանումների բերդին գեթ հասնելու փորձերը, որովհետև վերևի հարմար դիրքից մեկ հարյուրյակը կարող էր հեշտությամբ խափանել ներքևից վեր ձգտող հազարյակի առաջխաղացումը: Հավանաբար Մահկանաբերդը գրավել ձգտող հակառակորդի հիմնական կռվանը մնացել է տևական պաշարումը, քանզի

* «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում (հ. 1, Եր., 1986, էջ 667) «Բերդաքար» հոդվածի հեղինակը, մեր կարծիքով, ճիշտ է ներկայացրել կառույցի տեղը, սակայն չնշելով, որ դա Մահկանաբերդն է: Նաև անընդունելի է, որ բերդը ներսում ունեցել է ջրավազան, և ջուրը խողովակներով բերվել է դրսից, որովհետև դիմացի սարալանջից բերված ջրի ճնշմանը ձորից բարձրանալու ճանապարհին չէին դիմանա կավե խողովակները:

ունեցել են մի խիստ խոցելի կողմ: Չեն ունեցել ջրաղբյուր և դրա պակա-
բերդականները ունեցել են մի խիստ խոցելի կողմ: Չեն ունեցել ջրաղբյուր և դրա պակա-
սության պատճառով շուտով սկսել են տոչորվել ծարավից: Ինչպես երևում է ներկայաց-
վող գծագրից, Մահկանաբերդն ունեցել է ոչ ուղղանկյուն հատակագծով, սակայն չորս
որմնահեցավոր միջնաբերդ, նաև դրսի բակ՝ նորից պարիսպներով, զույգ զորանոցներ
(մեր կարծիքով), ջրամբար և օժանդակ սենյակներ: Դրանք կերտված են հիմնականում
մանր քարերից, կապակցված կրաշաղախով: Հասկանալի է, դարերն անհետ չեն անցել:
Պարիսպների և մյուս շինությունների վերնամասերն ավերված են երկրաշարժերից, տե-
ղումներից, քամուց և արևից: Մեր օրերի գանձախույզներն էլ իրենց սև գործն են կատա-
րել պայթեցումներով:

Համալիրի առանցքային կետը N 1 որմնահեցն է, որը մյուսներից (N 2, 3, 4) չափերով
մեծ է գրեթե 3 անգամ: Դրանից դեպի հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք 120° անկ-
յան տակ բացվում են «Մական» լեռնաբազկի վերջնակետից ճառագայթվող Ա և Բ սան-
րանման սրակատար ժայռերը: Բ կամ կարճ ճառագայթի մեծ մասը մնացել է միջնաբերդի
տակ և հատակագծի վրա նշված է սպիտակ շրջագծիկներով: Դժվարին տեղանքի փոքր-
ինչ հարմար յուրաքանչյուր մակերես արդյունավետ օգտագործելու նպատակով մտահոգ
ճարտարապետը երկար, կամ Ա ճառագայթի երկու կողմերին կարծես կպցրել է մի քանի
օժանդակ շինություններ և, մեր կարծիքով, երկու զորանոցներ՝ 4x12 մ չափերի: Ժայռի
արևմտյան լանջին, միջնաբերդի մուտքի մոտ, կառուցվել է նաև 2.5x4 մ չափերով ջրամ-
բարը, որը պահպանվել է 2 մ խորությամբ և ունեցել է ծածկ: Ոչ ուղղանկյուն հատակա-
գծով միջնաբերդի հարավ-արևմտյան 17 մ երկարությամբ և 6-8 մ բարձրությամբ պահ-
պանված պարսպապատը միացնում է N 2 և Բ ճառագայթի վրա կերտված N 3 որմնահե-
ցերը: N 1 և N 2 որմնահեցերը միացնող պատի մեջ, միջնաբերդի հյուսիսային կողմում,
գտնվում է 1,45 մ լայնքով և 1.50 մ բարձրությամբ միակ մուտքը, որի բարավորը պահե-
լիս են եղել հավանաբար կենի կամ կաղնի չորս հաստ կլորկոճերը, որոնց վրա կախվել է
դուռը: Բերդի տարողությունը մեծացնելու, ավելի շատ խաղաղ բնակիչ ընդունելու նպա-
տակով միջնաբերդի հարավային և արևելյան կողմերը վերածվել են արտաքին բակի, որը
միջնաբերդից ցածր է եղել 8-10 մետրով: Կան ավերված բազմաթիվ սենյակների, ան-
շուշտ, կացարանների հետքեր: Այս բակը պաշտպանված է անդունդներից ելնող հաճախ
ուղղահայաց ժայռերի շարունակությունը կազմող արտաքին պարսպով, որը սկսվում է
մեծ (N 1) որմնահեցի հյուսիսային հիմքից, ուղիղ գծով 35 մ ձգվում դեպի հարավ-արևելք,
ապա սուր անկյան տակ թեքվում արևմուտք և, ուղղությունը մի քանի անգամ ժայռերի
կատարներով փոխելով, N 3 որմնահեցի հիմքին միանում արևելյան կողմից: Այս որմնա-
հեցի բարձրության միջնամասից սկիզբ է առնում միջնաբերդի հարավային ոչ ուղիղ, մեջ-
տեղում անկյունավոր պարսպապատը, որը միանում է արտաքին բակի մեջ բարձրացող
N 4 որմնահեցին: Վերջինս իր հերթին ձգվելով հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք ուղ-
ղությամբ՝ միանում է N 1 որմնահեցին:

Մնում է նորից զարմանալ ու հիանալ մեր նախնիների շինարարական տաղանդով ու
անսպառ տոկունությամբ: Ինքնապաշտպանության, ազգակիցների կյանքն անողորմ
բարբարոսների հարվածներից զերծ պահելու հրամայականին ունկնդիր՝ նրանք «Մա-
կան» լեռնաբազկի բարձրակետում կերտել են անառիկ ամրոց, իսկ ջուրը, կիրը, ավազն ու

քարի մեծ մասը վեր բարձրացրել ձորերի հատակից: Եթե ջրի, կրի ու ավազի մասին խոսքն աներկբա է, ապա ասենք, որ բերդաշինարարները ողջ քարը չէին կարող հավաքել նման բարձրությունում, և դրա ապացույց են պարիսպների մեջ շարված մեծաքանակ գետաքարերը: Հանուն կյանքի շարունակման, թե ինչով են վեր բարձրացվել շինանյութերը, կարելի է միայն կռահել: Գրաստների աշխատանքի համար շատ թե քիչ հարմար են եղել Բ ճառագայթի ներքին լանջերը, որոնց միջնամասից վեր կարող է հարմարվել միայն մարդու ոտքը: Ուստի այստեղ հավանաբար մի քանի տարի լարվել են հազարավոր բանվորների մկաններ: Իսկ պատմությունից հայտնի է, որ նման ծավալուն աշխատանքների մեջ ներգրավվելիս է եղել հայոց զորքը: Շինանարության ավարտից հետո ծագել են այլ խնդիրներ, որոնց մեջ չափազանց կարևորվել է խմելու ջրի պաշարների լրացումը: Ուստի մինչև հակառակորդի մոտենալը մերձակա ձորերից տկերով, կժերով ջուր են կրել ու լցրել 20-25 խմ տարողությամբ ջրամբարը: Գուցե ջրահավաք (տեղումներից) հարմարություններ են եղել նաև միջնաբերդից ներս և արտաքին բակում: Դրանց մասին կարող են ասել միայն ապագայի ուսումնասիրողները, որոնք կձեռնարկեն պեղումներ և մանրակրկիտ կչափագրեն պատմական Մահկանաբերդը:

Ինչպես Տավուշի մարզի մյուս բերդերը, այնպես էլ Մահկանաբերդը պաշտպանական կարևոր դեր է խաղացել Բագրատունիների, նրանց շառավիղ Կյուրիկյանների, ապա Զաքարյանների և Արծրունիների տիրապետության ժամանակներում, երբ այդ կառույցները սահմանակալ ամրությունների դեր էին կատարում: Իսկ մոնղոլների տիրապետության հաստատումից հետո (XIII դարի կեսեր), երբ նախկին սահմանակալ բերդերը մնացին նոր տերության ներքին նահանգներում, արագ սկսեցին կորցնել իրենց նշանակությունը, լքվեցին: Օրինակ, Մահկանաբերդի Արծրունիները մեկընդմիշտ հաստատվեցին Տփխիսում և Կունեն գյուղաքաղաքում: Ուստի բերդերն էլ մնացին անխնամ և արդեն 7-8 դար շարունակվում են քանդվել-քայքայվել: Այդ ճակատագրով է իր տարեգրությունը շարունակում նաև Մահկանաբերդը:

## ԿԻԼԻԿՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐ

*ՄԻՍԱՔ ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ*

# ՄԻ ԲԱՐԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ



Սելևկիայի բերդը

Ռազմի շռինդը պատել էր Կիլիկիայի Հայկական Թագավորության Սելևկիա բերդաքաղաքի տարածքը: Իշխանաց իշխան և Հեթում I-ի հայր Կոստանդին Պայլը, 1230 թվականի օգոստոսի երկրորդ կեսին, թագավորի անձնապահ հեծելազորով պաշարել էր քարաբլրի գագաթին թառած Սելևկիայի ամրակուռ բերդը և բերդակալից պահանջում էր հանձնել Զաբել թագուհուն: Ծվարել-մնացել էր Երուսաղեմի Հիվանդանոցի Ս. Հովհաննու (Օսպիթլուն, Hospitaliers) ասպետների կարգապետ և բերդակալ Ֆրեր Բերդրանը: 1210 թվականի պարգևագրով Մեծն Լևոն I (1187-1219 թթ.) թագավորը նրանց էր պարգևել Սելևկիա, Նորբերդ և Կամարտիաս բերդերը[1]: Դրա փոխարեն ասպետները պարտավորվել էին Լևոն I թագավորի ծառայությունում լինել և թշնամու դեմ պաշտպանել Հայոց երկրի սահմանները:

Ընդվզման առիթ էր հանդիսացել հանգուցյալ Լևոն I թագավորի երկրորդ կին և նախկին թագուհի Սիպիլ Լուսինյանի Կիպրոսից Սելևկիա անցնելը և բերդում՝ ասպետների կողմից հյուրասիրվելուց հետո աղջկան՝ Զաբել թագուհուն տեսության համար Սելևկիա կանչելը. Զաբել թագուհուն ճանապարհին ընկերակցող Կոստանդին թագավորահայրը խայտառակ կերպով բերդից դուրս արտաքսելու և ամրոցի դռները երեսին փակելու անարգանքը: Այս մասին հիշատակում են երկու ժամանակագրություններ: Դրանցից առաջինում նշված է հետևյալը. «Ի թուին հայոց ՈՀԹ (1230 թ.), յամիս ագոստոս ԻԵ (25) աւրն, յաւուր կիրակէի եկն առ մեզ Սարգիս հայրն եւ եբեր մեզ վատ զրոյց, որ եկեալ Լեւոն թագաւորին թագուհի ի Կիպռասա ի Սելեւկիա, որ տեսանայր զիւր դուստրն, որ էր Հեթում թագաւորին թագուհի, եւ տարան զթագուհին ի Սելեւկիա, եւ անդ ետես զմայրն իւր եւ խաբեց. զթագաւորին հայրն զպարոն Կոնստանդին. եւ մտաւ ի Սելեւկիա եւ մոտեց[2] հետ իր մաւրն.

[1] **Victor Langlois**, Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, 1863, Venise, p. 113.

[2] Մոտել - խռովություն ստեղծել, ապստամբել:

եւ զպարոնն հանին քաշնաւք[3] բերդէն: Այս այսպէս գործեցաւ, եւ ենք աճի եւ յերկեղի, այլ յառաջկայն Աստծոյ է գիտելի...»[4]:

Երկրորդ տեղեկությունը գտնում ենք Սմբատ Սպարապետի «Տարեգրքում», որտեղ գրել է հետևյալը. «Եւ յաւուրս յայս շարժեցաւ դիւական բարկութիւն ի թագուհին Զապէլ եւ ուզեց երթալ տեսնուլ զիւր մայրն յՕսպիթլուն բերդն ի Սելևկիա եւ գնաց եւ խռովեցաւ ընդ թագաւորն եւ ընդ ամէն Հայք: Նա պարոն Կոստանդին ժողովեց հեծեալ ու գնաց, իջաւ առաջի Սելեւկիոյ. Նա օսպիթալն վանաց որ շատ կու ծախվեր զինքն Սելեւկիա, ու կու վախէին ի յԱլատին[5] սուլտանէն. նա ուզեց տալ զբերդն թագուհուվն ու սէր ունենալ ընդ Հայք: Եւ ֆրէր Բերդրանն այս կերպովս եռ, եւ ասէ թէ զբերդս Լեւոն թագաւորն եռ մեզ, մեք չկարեմք ասել ընդ իւր դուստրն թէ եղ ի բերդէս, ապա մեք կու ելնենք. դուք առէք զբերդն ու զինքն. եւ այս ցեղ առին զՍելեւկիա ու Թագուհին»[6]:

Զապել թագուհու՝ Հեթումի հետ ամուսնանալուց (1226 թ.) հետո, նրա մայր Սիբիլ Լուսինյանն ապրում էր Կիպրոսում, իր հարազատների մոտ[7]: Նա երբ (1230 թ.) ցանկացել էր տեսնել աղջկան, եկել էր Կիլիկիա և հյուրընկալվել Սելևկիա բերդի Հիվանդանոցի ասպետների մոտ: Նա չէր գնացել Սիսի պալատ, այլ Զապել թագուհուն կանչել էր իր մոտ: Վերջինս 14 տարեկան հասակում, Կոստանդին Պայլի ուղեկցությամբ, գնում է Սելևկիա, մորը տեսության: Սմբատ Սպարապետի տեղեկությունից պարզվում է, որ իր եղբորկին Զապել թագուհին նախօրոք ունեցել էր «դիւական բարկութիւն», այսինքն՝ երեխայական[8] կամայականություններ: Հավանաբար մայրը Կիպրոսից եկել էր այդ խնդրի կապակցությամբ: Զապելը խաբում է իր կեսրայրին՝ թագավորահայր Կոստանդինին ու մոր հետ միասին մտնում Սելևկիայի բերդը: Մայր ու աղջիկ աղմուկ են բարձրացնում Հեթում I թագավորի, թագավորահոր և առհասարակ հայերի նկատմամբ: Եթե Զապել թագուհուն հաջողվեր մոր հետ միասին Սելևկիայից անցնել Կիպրոս, ապա կստեղծվեր քաղաքական շատ բարդ իրադրություն: Լևոն I-ի վախճանումից (1219 թ.) հետո Կիլիկիայի Հայկական Թագավորության գահի շուրջ ստեղծվել էր քաղաքական մեքենայություններ կատարելու լայն ասպարեզ: XIII դարի 20-ական թվականները լի են այդպիսի եղելություններով: Ռուբեն-Ռայմունդի, Սելջուկյան սուլթան Ալա ալ-Դին Կեյկուբատի և Անտիոքացի Ֆիլիպի կատարած քայլերը ցույց էին տվել, որ Կիլիկիայի Հայկական պետությունը երկար չէր գոյատևի, եթե խնամակալ իշխանները չունենային երկաթյա ձեռքեր: Այդ պատճառով էր, որ

---

[3] Քաշնաւք - քաշնոք. քաշել-քաշքշել, կապկպել, բռնություն գործադրել:

[4] 1230 թ. հավանաբար Կիլիկիայում արտագրված ձեռագիր Ավետարանը գտնվում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Ուիչիտա քաղաքում: Հարություն Քյուրտյան, Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածոյի ի Ուիչիտա. Կանզաս. ԱՄՆ, «Բանբեր Մատենադարանի», N 11, Երևան, 1973, էջ 405: Բնագրի էջ 382:

[5] Իկոնիայի Սելջուկյան սուլթան Ալա ալ-Դին Կեյկուբատ (1220-1237 թթ.):

[6] Սմբատ Սպարապետի Տարեգիրք. 1956, Վենետիկ, էջ 226:

[7] Սիբիլ Լուսինյանը Կիպրոսի Հենրի I (1218-1253 թթ.) թագավորի հորաքույրն էր: Նա Լևոն I-ի հետ ամուսնացել էր 1210 թ., 12 տարեկան հասակում: Այդ ժամանակ Լևոն I թագավորը 60 տարեկան էր:

[8] Հեթում I-ը ծնվել էր 1215 թ., ուստի Զապել թագուհու հետ 1226 թ. ամուսնացած ժամանակ 11 տարեկան էր, իսկ Զապելը՝ 10 տարեկան: Հիշյալ 1230 թ. դեպքի ժամանակ Հեթում I-ը 15 և Զապելը 14 տարեկան երեխաներ էին:

Կոստանդին Պայլը շտապ կերպով դիմել էր զենքի ուժին և բերել հեծելազորքն ու պաշարել Սելևկիա բերդը: Բերդակալ Բերդրանը տեսնելով ստեղծված անել վիճակը՝ խուսափում է ընդհարվելուց և առանց կռվելու դուրս է հանում ասպետներին, որպեսզի Պայլը թագուհուն առնելով տանի Սիս: Կոստանդին Պայլն այս բերդն իր իշխանության ներքո է պահում մինչև 1236 թ. և ապա հանձնում որդուն՝ Հեթում I-ին: Կոստանդին Պայլը մինչ այդ բերդը թագավորին էր տվել, երբ նա 21 տարեկան էր:

Ավատական տիրույթների, հատկապես բերդերի տերերի փոփոխության պայմաններում ընդունված էր, որ նոր իշխանության հաստատմամբ պիտի փոխվեին նաև ամրոցի դռան բարավորի ճակատակալ քարի արձանագրությունները: Նույն կերպ փոխվել էին նաև XIII դ. առաջին կեսին ձեռքից ձեռք անցնող Սելևկիա բերդի բարավորի ճակատակալ քարերի արձանագրությունները: Սելևկիան 1236 թ. Հեթում I-ի անձնական տիրույթների թվում գրանցվելուց հետո դասվել էր «Արքունի տիրույթների» շարքում: Բերդի բարավորին ամրացվել էր նոր արձանագրություն Հեթում I թագավորի անունով: Պետք է բարեբախտ դիպվածի արդյունք համարել արձանագրության մինչև վերջին տասնամյակները (1956 թ. ապրիլ՝ տողերիս հեղինակի կողմից տեսնելը) իր տեղում մնացած լինելը: Բերդի դռան բարավորի արձանագրությունը կազմված է եղել երեք քարերի վրա: Ամենավերևի քարի վրա քանդակված է եղել բերդի զինանշանը: Նրանից ներքև գտնվող երկու քարերի վրա հավասարապես քանդակված է եղել արձանագրության բովանդակությունը:

Բոլոր երեք քարերն էլ տեղում էին մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիները: 1953 թ. իմ՝ առաջին անգամ Սելևկիայի բերդ այցելության ժամանակ արձանագրության ամենաներքևի քարը հանված էր գանձախույզի ձեռքով: Ինձ համար անհնար եղավ կորած քարը գտնել: Արձանագրության տառերը 720 տարիների ընթացքում հողմնահարվել էին աղի գոլորշիներով հագեցած հարավային քամիներից: Արձանագրության երկու քարերից տեղում մնացածն ունի շրջանակի 46x74 սմ չափեր և պատրաստված է Կիլիկիայի տեղական կրաքարից: Ամենավերևի զինանշանի քարը համեմատաբար ավելի փոքր է նախորդից: Սելևկիայի բերդի հայերեն արձանագրությունը unicum (եզակի) է իր տեսակի մեջ: Նա ներկայացնում է հայկական բերդերից ամենից արևմուտքում գտնվող բերդի հայատառ արձանագրությունը: Դրանից ավելի արևմուտք գտնվող բերդերի որմերին չկան բարավորի հայագիր արձանագրություններ:

Կիլիկիայի հայկական պետությունում թեև Սելևկիայից էլ ավելի արևմուտք եղել են Հայոց ենթակա բերդեր, սակայն դրանք չունեն հայկական արձանագրություններ: Այդ առումով պատմա-փաստական կարևոր նշանակություն է ներկայացնում Սելևկիայի բերդի Հեթում I-ի արձանագրությունը:

Սելևկիայի միջնադարյան բերդը գտնվում է Կիլիկիայից արևմուտք, Հին Իսավրիա երկրամասի մայրաքաղաք Սելևկիայի (այժմ Սիլիֆկե շրջկենտրոնի) հյուսիսի եզրին բարձրացած քարաբլրի գագաթին: Սիլիֆկեն Միջերկրականի ծովափից 11 կմ ներս է գտնվում: Կիլիկիայի տեղական կրաքարից է պատրաստված զինանշանի քարը: Զինանշանը ձևավորված էր բարձր ճաշակով և Կիլիկիայի հայկական հերալդիկայի ոճով: Եվրոպական հերալդիկայում «ֆրանսիական» կոչվող վահանակը քանդակված է գլխիվայր դիրքով (ինչպիսին է արդի Սաուդյան Արաբիայի թագավորության գերբը), այսինքն՝ երկ-

կենտրոն կամարի տակ, երկաստիճան պատվանդանի վրա, կանգնեցված է լատինական խաչ: Դրա շուրջ կան հայերեն չորս տառեր և իբր հավերժության խորհրդանիշ՝ երկու լրիվ և երկու քառորդ մարգարտածաղիկներ: Խաչի հորիզոնական մեծ թևից վերև, ձախ կողմում, քանդակված է պատվով Ս և աջ կողմում Մ տառերը: Հորիզոնական մեծ թևից ներքև, ձախ կողմում պատվով Ա և աջ կողմում պատվով Ս տառերը:Այս չորս տառերը պատիվների հետ միասին ձևացնում են քառակուսիներ, որոնք խաչի շուրջ տեղակայվելով՝ գծագրում են «Կաթուղիկէ խաչ»: Չորս սկզբնատառերի ամբողջությունից կազմվել է բերդի «Սուրբ Մարիամ Աստուածածին Սելեւկիոյ» անունը: Զինանշանի վահանակի ներքին հատվածում, խաչափայտից դեպի աջ և ձախ եղած ազատ տարածությունում, գտնըվում են հերալդիկական մեկական ամբողջ և ներքևի անկյուններում էլ մեկական քառորդ մարգարտածաղիկներ (նկ. 1): Խաչի պատվանդանից քիչ վերև, խաչափայտի վրա, քանդակված է փոքր քառակուսի փոսիկ: Հավանաբար Սելևկիայի բերդի մատուռում անցյալում պահվել է սրբանվեր մի մասունք: Հետագայում թուրքերն այդ մատուռը վերածել են մզկիթի:



Նկար 1

Հայագետ Վ. Լանգլուան ընդօրինակել է Սելևկիայի բերդի դռան բարավորի արձանագրությունը և զինանշանը: Նա սխալմամբ սովորական մի խաչարձան է կարծել զինանշանը և պատկերել մտացածին մի խաչ՝ շուրջը ՅՍ և ՔՍ տառերով[9], որը կարդացվել է «Յիսուս Քրիստոս»[10]: Վ. Լանգլուային պետք չէ մեղադրել, որովհետև անճանաչելի կերպով ջարդված է զինանշանի «խաչ» մոտիվը: Բավականին աշխատանք պահանջվեց, որպեսզի խաչի և տառերի եզրերի հետքերից օգտվելով՝ կարողանայինք վերականգնել զինանշանի կոմպոզիցիան: Վ. Լանգլուան և Ղ. Ալիշանը ճիշտ չեն վերծանել այս արձանագրությունը: Կարևոր է սակայն, որ նրանց ժամանակ կատարված ընդօրինակությունում պարզորոշ ընթերցվում է «Ի Հայոց մեծ թվն Ո եւ ՁԵ[11]: Ամեն. թագաւոր .... Հեթում Հայոց ....» բառերը:

Ըստ թագավորների արձանագրությունների ձևավորման սովորույթի, գրությունը սկսել է հերալդիկական մարգարտածաղիկով ու խաչով: Այստեղ տեղին կլինի նշել այն կարևոր հանգամանքը, որ հիշյալ բարավորի զինանշանում գործածված հերալդիկական «խաչ» և «մարգարտածաղիկ» մոտիվների տարբերակներից կան նաև Սելևկիայի մոտակա Կոռիկոս նավահանգստային քաղաքի Կոստանդին Պայլի իշխանության շրջանում 1222-1250 թթ. միջև կատարված զինանշաններում:

[9] Viktor Langlois, Rapport sur l'exploration archéologique de la Cilicie et de la Petite-Arménie 1852-1853, Paris, 1854, էջ 5:

[10] Ղ. Ալիշան, Սիսուան, 1885, Վենետիկ, էջ 285:

[11] ՈՁԵ = 1236 թ.:



Նկար 2



Նկար 3

Սրանից հինգ տասնամյակ առաջ, իր ունեցած անցյալով այնքան հիշարժան բարավորից ցարդ մնացածը փրկելու մտադրությամբ, որոշեցի, ինչ գնով էլ լինի, գաջով պատճենահանել (էստամպաժ) երկու քարերը (նկ. 2, 3): Դրանք քառասունհինգ տարի է, ինչ փակվում են Երևանում և տակավին չեն հրապարակվել: Մինչ այժմ չի վերծանված փակագրով գրված արձանագրությունը, ուստի շրջանառության մեջ դնելու նպատակով այժմ ցանկանում ենք այն հրատարակել «Էջմիածին» ամսագրի էջերում:

*ՍԱՄՎԵԼ Մ. ՇԱՀԻՆՅԱՆ*
*Հայաստանի անձավագիտական կենտրոնի նախագահ*

# ՔԱՐԱՆՁԱՎՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ցանկացած լեռնային երկրամասի համար քարանձավները մեծ դեր են խաղացել այդ տարածքում ապրող բնակչության կենցաղի, սովորույթների, աշխարհայացքի ձևավորման գործում: Այդ են վկայում տարբեր մայրցամաքների բնիկ բնակչության լեգենդները, առասպելները, էպոսները և հեքիաթները[1]:

Հայաստանը և հայ ժողովուրդը այս առումով բացառություն չեն: Հայ մշակույթի մի ամբողջ շերտ է զբաղեցնում «քարանձավային մշակույթը», որը, քիչ ուսումնասիրված ոլորտ լինելով հանդերձ, երևի թե իր մեջ պարունակում է բազմաթիվ հարցերի պատաս-

[1] Շումերական էպիկական «Գիլգամեշ» հերոսապատման հերոսը՝ Գիլգամեշը, անմահություն փնտրելու համար ճամփորդում է դեպի աստվածների երկիրը և այնտեղ հասնելու համար ստիպված է լինում անցնել Մաշու (հմմ՝ Մասիս) լեռան թունելով: Տե՛ս Գիլգամեշ. թարգ. և ներած. Ն. Մարտիրոսյանի, ՀՍՍՌ ԳԱ, 1963 թ., էջ 74:

«Սասունցի Դավիթ» էպիկական հերոսապատման տարբերակներում քարանձավը ներկայացվում է որպես գործընթացների և հարաբերությունների հանգուցալուծման վայր՝

«... Ասաց. «Կանգնի՛ր, իմ թուր զարնեմ էդ քարին,
Թե կտրեց, ես չեմ մեղավորցեր
Թե չը կտրեց, մեղավորցեր եմ»:
Թուր, որ էզար քարին,
Քար երկու կողմեն փեղկվավ,
Ինք, իր ձին գնացին մեջ,
Քար էկավ, իրար կպավ»:
(«Սասունցի Դավիթ» էպոս: Առաջաբանը Լ. Մկրտչյանի: Երևան, Արևիկ, 1988, էջ 415):
Կամ՝
«Պտի երթաս Վան, Կըռպահու քար կա,
Ընտե մի զաղա կա, մտնիս էն զաղեն,
Մնաս էնտեղ, ապրիս (պատմեց՝ Մոկացի Մարտիրոս Մուրադյան, էջ 55):
Ես իմ թուր թալիմ, էս խայեն բացվի,
Ես էրտամ մեջ:
Ու գուրզը զարգեց,
Զարգելուն՝ խայեն բացվավ»:
(պատմեց՝ Ալաշկերտցի Սեդրակ Արաքյան, էջ 245):
«Սասնա Ծռեր», գրառումը՝ Սարգիս Հարությունյանի և Արուսյակ Սահակյանի, ՀՍՍՀ ԳԱ, 1979:
Քարանձավը նաև մեկուսանալու թաքստավայր է.
«Հռեան չուզեց իր վերջին մանկանն էլ կորցնել: Իր ծնողների Ուրանոս - երկնքի և Գեա - երկրի խորհրդով նա հեռացավ, գնաց Կրետե կղզին, և խորունկ մի անձավում ծնվեց նրա կրտսեր որդին՝ Զևսը»: Տե՛ս Ն. Ա. Կուն, «Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները», Երևան, «Լույս», 1989 թ., էջ 21:

հետազոտողները չեն գտնում անցյալի տար-
խանքներ, որ հնագույն և հին պատմության
բեր հուշարձանները և հնագիտական նյութը քննելիս:
Միայն այն փաստը, որ քարանձավային բնակավայրերը Փոքր Ասիայում և Հայաստա-
նում գոյություն են ունեցել մինչև XX դարի կեսերը[2]. խոսում է այն մասին, որ այս բնագա-
վառը երևի թե ավելի մեծ ուշադրության է արժանի, քան՝ է:
Հայաստանի Հանրապետության տարածքում մարդաստեղծ (անտրոպոգեն) քարան-
ձավները տարածված են ամենուր: Բնակելի համալիրներ են պահպանվել Գեղարդում,
Ոսխտուակունքի (Խոսրովի արգելոց) ստորին հոսանքի կիրճի ժայռաստերին, Գորի-
սում և շրջակա գյուղերում, Լոռիում, Աշտարակի ձորում, Ողջաբերդում, Ախուրյանի ձո-
րում և այլն:
Սրանք եղել են բնակավայրեր, բայց կան եկեղեցիներ և համալիրներ, որտեղ բնակվել
են ճգնավորներ՝ Գեղարդ, Հոշանց[3]:
Քարանձավների և ժայռափոր կառույցների նման զանգվածային օգտագործումը կեն-
ցաղում չէր կարող չանդրադառնալ մարդկանց մտածողության վրա և պատճառ չդառ-
նար բազմաթիվ նոր լեգենդների ու առասպելների երևան գալուն:
Սակայն փաստն այն է, որ քարանձավների մասին եղած ժողովրդական բանահյու-
սության նմուշները մեզ են հասել դարերի խորքից, իսկ նոր լեգենդներ կամ հեքիաթներ
չեն հորինվել: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ նախկին քարանձավաբնակների ամե-
նակամ ժառանգների մոտ որևէ հիշողություն «քարանձավային» կյանքից չի պահպանվել:
Նախքան ՀԱԿ[4]-ի արշավախումբը որևէ տարածքում հետազոտություններ սկսելուց առաջ
ուսումնասիրում է գրավոր աղբյուրները և տեղում հարց ու փորձ անում բնակիչներից:
Զրուցում են հիմնականում հովիվների, որսորդների, անտառապահների և ծերերի հետ:
Մի տեսակետ է տարածված ժողովրդի մոտ, որը հանրապետության գրեթե բոլոր վայ-
րերում լսում ենք: Մեր այն հարցին, թե տվյալ բնակավայրի շրջակայքում քարանձավներ
կան, հիմնական պատասխանը լինում է՝ թե կան, բայց շատ խորն են, ոչ ոք չի կարող
մտնել, որովհետև օդը քնչելու համար պիտանի չէ, և ոչ մեկը չի խորացել մինչև վերջ: Հա-
ճախ հավելում են նաև, որ այս կամ այն քարանձավը երկար մի թունել է, որն իրենց բնա-

[2] Տե՛ս Սոլոմոն Վարդանյանի «Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն», Հայ-պետհրատ, 1959 թ., Երևան, էջ 5–20, Le Citta Sotterranee Della Cappadocia. Ezga Edizioni. Genova, 1995. 31–32, 106–120. Tavola 3. 4. 5. 6. Токарский, Дзрвеж II Воххджаберд. Ереван, 1964. Д. Кипшидзе, Пещеры Ани. АН Арм. ССР. Ереван, 1972, с. 23, Токарский, По страницам истории армянской архитектуры, "Айастан". Ереван, 1973. Այլ հեղինակներ ևս անդրադարձել են այս փաստին: Ավելացնեմ միայն, որ ես ճանաչում եմ մարդկանց, որոնք այսօր էլ կենդանի են, որոնք ծնվել և մանկության տարիներին ապրել են Սևանի ավազանի և Գորիսի ժայռափոր տներում (Հեղ.):

[3] Ս. Շահինյան, Քաշաթաղի քարանձավային սրբատեղիները և բնակավայրերը. «Հայացք Երևանից», Երևան, 2002 թ., N 10, էջ 21–24: Ս. Շահինյան, Հոշագ գետի ավազանի քարանձավները, «Հայացք Երևանից», Երևան, 2002 թ., N 11, էջ 25–28:

[4] Տե՛ս Հայաստանի անձավագիտական կենտրոնի, ՀԽՍՀ ԳԱ Աշխարհագրական ընկերության քարանձավագիտական ջոկատի և արշավախմբի քարանձավագիտական հետազոտությունների գիտական հաշվետվությունները, որոնք գտնվում են ՀՀ Հուշարձանների պահպանության վարչության, ԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և ԱԱ արխիվներում:

կավայրից սկսվում և ձգվում է գետնի տակով մի քանի կամ մի քանի տասնյակ կիլոմետրեր, հակառակ այն պնդմանը, թե ոչ ոք մինչև վերջ չի խորացել:

Այս երկու տեսակետները, որ չափազանց տարածված են գյուղական վայրերի բնակիչների շրջանում, իրական որևէ հիմք չունեն: Այս մտածողության պատճառը երևի թե պետք է փնտրել մարդկանց ենթագիտակցական հիշողության շերտերում: Մարդը վերջնականապես ուզում է խզել կապը, այսպես կոչված, «քարանձավային քաղաքակրթության» և քարանձավային կենցաղի հետ, և այս պատճառով ամենամութ և սարսափելի գույներով է ներկայացնում քարանձավը՝ դրանով իսկ մերժելով «քարանձավային» կենցաղին վերադառնալու որևէ ցանկություն կամ շարժառիթ:

Այս առումով տիպական է և այն փաստը, որ փլուզման կամ շինարարական աշխատանքների ժամանակ եթե որևէ ստորգետնյա թունելի, անցուղու կամ քարանձավի մուտք է բացվում, տարբեր պատճառաբանությամբ տեղի բնակիչները այն լցնում են խիճ ու ավազով և բետոնե խցան հագցնում[5]: Տարածված այս վատ սովորույթը պատճառ է դարձել հնագիտական և բնագիտական չափազանց արժեքավոր նյութերի անդառնալի կորստի: Պատմական վկայություններն ու գրավոր աղբյուրները մանրազնին ուսումնասիրելով մենք (ՀԱԿ–ի քարանձավագետները) համոզվել ենք, որ ստորգետնյա, ճարտարագիտական և բնական հուշարձանների ոչնչացումը բացառապես նոր երևույթ է մեզանում:

Հայաստանի քարանձավների և քարանձավային բնակավայրերի մասին գրել են Քսենոֆոնը, Ստրաբոնը, Խորենացին, Դավրիժեցին, Արտեմ Արարատցին և իհարկե նոր շրջանի հետազոտողները՝ Մառը, Օրբելին, Տոկարսկին, Թորամանյանը, Ղիփշիձեն, Բայյանը և այլոք: Քարանձավագիտական նյութը Հայաստանի անթրոպոգեն քարանձավների և ժայռափոր ճարտարագիտական ստորգետնյա կառույցների մասին թե՛ քանակական և թե՛ որակական առումով շատ է, որը և հնարավորություն է ընձեռում գիտականորեն ծավալվել խնդրո առարկայի շուրջը:

Մի շարք հեղինակներ փորձել են ստուգաբանել *անձավ, քարանձավ* բառերը՝ պարզելու դրանց ծագումը: Այս հետազոտությունները առանձնապես արժեվորվում են նրանով, որ հետազոտողները այս բառերի ծագումը ոչ միայն կապում են կենսատողի[6] տարրերի և նրանց փոխհարաբերության, այլև հայ էթնոգենեզի և զարգացման գործընթացների հետ:

Այսպես. հայ ճարտարապետության զարգացման պատմության երախտավորներից մեկը՝ Տոկարսկին, գրում է. «Теперь пещера называется այր>եր, или քարայր (Вруйр); слово այր самое обычное в древнелитературном армянском, քար այր – каменная пещера

[5] Երևանում Նորագյուղ, Բութանիա, Արեշ, Էրեբունի թաղամասերում հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ շինարարական աշխատանքների ժամանակ բացված թունելները պարզապես լցրել են բետոնախառնուրդով ու փակել: Սամիրամի հայտնի ջրանցքի բավական մեծ հատվածներ այդպես են ոչնչացվել: Գյումրիում դարեր շարունակ գոյություն ունեցող քարվեզների (ստորգետնյա ջրատար համակարգ) վերջնական ավերումը տեղի ունեցավ երկրաշարժից հետո: Օրգով գյուղի վերին հատվածում ռադիոաստղադիտարանի և գյուղի գերեզմանոցի (մանկինում կիկլոպյան կառույց) բլրի տրանքում բացված հնագույն թունելի անցքը փակեցին խոշոր քարերով ու հողով: Լոռվա Վարդաբլուր գյուղից Կուրթան տանող ճանապարհի մոտ բացված թունելի անցքը փակելու համար, ըստ ականատեսների, անհրաժեշտ եղավ քսան բեռնատար մեքենա ավազ ու խիճ:

[6] Կենսացենոզի ապրելու վայրն է: Տես Ս. Շահինյան, Ն. Թաճմազյան. Էկոլոգիա, «Զանգակ», 2002 թ., Երևան:

употребляется только в живой речи. Мне пришлось слышать это только в Ани, чаще всего от г. Вруйра, его сына Арташеса, Тарагроса, ... Оно построено так же, как и **кар – тун**, и это потверждает, что термин **кар – тун** действительно был и заменился (между XIII–XX вв) новым **кар – айром**»[7]: Այս եզրակացությանը Տոկարսկին հանգել է՝ ծանոթանալով վրաց Թամարա թագուհու պատմության անանուն հեղինակի գործի հետ, որտեղ մատենագիրը հիշատակում է 1211 թ. Զատկի գիշերը Արդեբիլի սուլթանի հարձակումը Անիի վրա: 12000 մարդ կոտորվեց եկեղեցիներում աղոթքի պահին, իսկ մնացածը խուճապի մեջ փախան. մի մասը՝ պալատ, մյուս մասը՝ քարանձավներ, որը վրաց հեղինակն անվանում էր քարտուններ: «Քարտունի» բառը բառացիորեն նշանակում է քարե տուն, բառակապակցություն, որը, ըստ Տոկարսկու, տիպին հայկական բառ է: Այստեղից նա եզրակացնում է, որ տեղացիների կողմից օգտագործվող բառը բնակելի քարանձավների անվանումն է, ոըը վրաց պատմիչն օգտագործելիս նաև բացատրություն է տալիս, թե ինչի մասին է խոսքը: Այնուհետև Տոկարսկին, խորացնելով այս միտքը, գտնում է, որ XIII–XX դդ. «քարտունի» «տունը» փոխարինվել է «այր»-ով: Սակայն հնարավոր չէ համաձայնել գիտնականի հետ հենց թեկուզ այն պատճառով, որ «այր» բառին մենք հանդիպում ենք V–XIII դարերում մի շարք պատմիչների մոտ՝ սկսած Խորենացուց մինչև Այրիվանեցին: Այնուամենայնիվ, «քարտուն» բառի գոյությունը խոսում է այն մասին, որ անեցիների համար քարանձավ-բնակարանները ծառայել են ոչ թե որպես բնակվելու ժամանակավոր վայր, այլ տուն, որտեղ սերունդներ են հաջորդել իրար: Չափազանց աղքատիկ են այն տվյալները, որ մարդիկ քարանձավային բնակարանը համարել են տուն. հարազատ օջախ, սակայն կարծում ենք, որ պատմիչները այս հարցին ընդհանրապես չեն անդրադարձել՝ երևույթը համարելով ինքնըստինքյան հասկանալի, առօրեական և սովորական մի բան, որի մասին խոսելը, առավել ևս արձանագրելը անիմաստ էր: Այս տրամաբանության ֆոնի վրա շահեկանորեն առանձնանում է Քսենոֆոն Աթենացու «Անաբասիսը», որտեղ պատմիչն ամենայն մանրամասնությամբ նկարագրում է ժայռափոր տունը և կենցաղը, որպես արտասովոր և եզակի երևույթ, մի բան, որ տեղացի պատմիչների ու գրիչների համար չափազանց սովորական և առօրեական լինելով՝ գրավոր նկարագրության չի արժանացել վերջիններիս կողմից[8]:

Այս առումով հետաքրքիր է Մովսես Խորենացու կողմից Վանի ժայռափոր քարանձավների ոչ միայն ճշգրիտ նկարագրությունը, ինչպես շատ դիպուկ է նկատում Մոնթե Մելքոնյանն իր «Վանի ուրարտական դամբարանները» գրքում, այլև կառուցման ժամանակը: Մովսես Խորենացին մեկ այլ տեղում էլ խոսում է Արաքսի ժայռապատերի ան-

---

[7] Տես Д. А. Кипшидзе, Пещеры Ани, АН Арм. ССР, 1972, Ереван, с. 24. «Այժմ քարանձավն անվանվում է այր>եր կամ քարայր (Վրույր): *Այր* բառն ընդունված է հին գրական հայերենում, *քար-այր* բառը գործածվում է միայն կենդանի խոսակցական լեզվում: Այն ես լսեցի միայն Անիում, բոլորից հաճախ պրն Վրույրից (նկատի ունի Անիի արշավախմբի լուսանկարիչ Արամ Վրույրին, (18631924 թթ.) խմբ.), նրա որդուց՝ Տարագրոսից…Այս բառն ունի այն կազմությունը, ինչ որ՝ *քար-տուն*-ը,որը գալիս է հաստատելու, թե *քար-տուն* տերմինն իսկապես եղել է և փոխարինվել (XIII-XX դդ. միջև) նոր *քար-այր*-ով»:

[8] Տես **Քսենոֆոն Աթենացի**, Անաբասիս, ՀՍՍՀ ԳԱ. 1970, Երևան, էջ 96–97: Տես **С. М. Шагинян**, Ксенофоновы дома и их аналоги в Арм. ССР. UIS Congress Communications 13–20 August, 1989. BUDAPEST, p. 446 – 448.

մատչելի քարանձավների և էպիկական Արտավազդի համար զնդան դարձած Մասիսի քարանձավի մասին: Եվ ոչ մի խոսք քարանձավային բնակավայրերի և նրա բնակիչների մասին, այն դեպքում, երբ Լեռնահայաստանի բնակչության մի ստվար մասն ապրում էր քարանձավային բնակավայրերում: Պատճառը երևի նույնն է: Քարանձավային բնակավայրերը և սրան համապատասխանող կենցաղն այն աստիճանի սովորական և առօրեական երևույթ են եղել, որ ժամանակակիցները հարկ չեն համարել գրավոր անդրադարձ կատարել ինքնըստինքյան հասկանալի և պարզ այս երևույթին:

Այստեղ ավելորդ չէր լինի «քարայր», «քարանձավ», «այր», «անձավ» բառերի ստուգաբանության մի քանի հեղինակների տեսակետները դիտարկել: Հետաքրքրություն ներկայացնող տեսակետ են առաջ քաշում Ա. Փիլիպոսյանը և Ռ. Մկրտչյանը[9] պնդելով, որ

---

[9] Տես Ա. Ս. Փիլիպոսյան, Ռ. Ա. Մկրտչյան, Գեղհովիտի Վանտոսայան (Սրբարտական) քարայր դամբարանները, Երևան, «Զանգակ», 2001 թ., էջ 66: Հեղինակները գրում են. «Այս համատեքստում, թերևս, անհրաժեշտություն կա անդրադառնալ նաև Հայերեն արմատական բառարանի «այր» և «անձավ» արմատներին և վերջիններից կազմված «քարայր» և «քարանձավ» բառերին: Սրանց հոմանիշները հայերենում բազմաթիվ են (քարախոռոչ, քարախորշ, ժայռախորշ, վիմախոռոչ, վիմախորշ, լեռնախոռոչ, լեռնախորշ, ծերպ, ժայռածերպ, որմնածերպ, քարածերպ, ժայռանեղք, քարանեղք, որմնանեղք և այլն): Թեև դատելով հրապարակի վրա առկա մասնագիտական գրականությունից, քննարկվող երկու բառերի և մասնավորապես «անձավ» բառարմատի նախնական ձևն ու ստուգաբանությունն առ այսօր ներկայացվում է հարցականով (Ջահուկյան Գ., 1987, էջ 112): Ինչ են մատնանշում և իմաստավորում «քարայր» և «քարանձավ» բառերը: Բանն այն է, որ նշված երկու բարդ բառերի և՛ «-այր», և՛ «-անձավ» բաղադրիչները նաև ինքնուրույն բառեր են և որոշակի (ըստ որում՝ հոմանիշ) իմաստային ծանրաբեռնվածություն կարող են դրսևորել: Այսպես, «այր» նշանակում է նաև «տղամարդ», և «քարայր» երկարմատ բառային գոյացությունը հնարավոր է նախապես ընկալվել է «քարի, ժայռի մեջ բնակվող այր՝ տղամարդ» իմաստով: Թերևս նմանատիպ կազմություն են նաև «այրուձի»՝ «ձիու վրա նստած այր՝ տղամարդ», «այրասեր»՝ «ամուսնուն սիրող, տղամարդ սիրող», «այրընտիր»՝ «ընտիր տղամարդ, աչքի ընկնող այր՝ տղամարդ», «սկեսրայր»՝ «ամուսնու հայր, սկեսրոջ այր, ամուսնու մոր այր՝ տղամարդ» և այլ բարդ բառակազմությունները:

Նմանօրինակ մեկնաբանություն կարելի է առաջադրել նաև «քարանձավ» բարդ բառի «-անձավ» բաղադրիչին: Վերջինս, հնարավոր է, «անձն»՝ «մարդ» բառի հետագա հոլովական դրսևորման մի տարբերակն է, որը, ըստ երևույթին, գոյացել է բառավերջի «ն» բաղաձայնի սղման հետևանքով (օրինակ՝ ոտն-ոտ, մատն-մատ, ձեռն-ձեռ, որմն-որմ, լեռն-լեռ, նաև՝ անձն-անձ, որտեղից էլ անձնամբ-անձամբ և անձնաւ-անձաւ): Եթե առաջարկվող ենթադրությունը չի հակասում հայերենի քերականական օրենքներին, ապա «քարանձավ» երկարմատ բառային գոյացությունը ևս նախապես, հնարավոր է, ընկալվել է «անձով (անձաւ)՝ տղամարդով բնակեցված քար, ժայռ, քարախոռոչ» իմաստով: Ավելացնենք նաև, որ «-այր» և «-անձավ» բաղադրիչները՝ քննարկվող բարդ բառերը կազմում են միայն «քար» արմատի հետ («քար-այր», «քար-անձավ») և չեն միանում նրա հոմանիշներին («ժայռ», «ծերպ», «որմն», «վեմ» և այլն): Եվ սա հատկանշական է, քանի որ բերված հոմանիշներից միայն «քար»-ն՝ «ամուր, կարծր, պինդ, կոշտ» իմաստներից զատ հնդեվրոպական որոշ լեզուներում ունի նաև «ընկույզ, ընկույզի կեղև, կոկոսի ընկույզ» և «խեցգետին» իմաստները (համեմատիր, սանսկրիտի «karka»՝ «կոկոսի ընկույզ», «karkatas»՝ «խեցգետին», հունարեն «χαρχινος»՝ «խեցգետին», լատիներեն «carina»՝ «ընկույզի կճեպ», «carcm-cancer»՝ «խեցգետին», ինչպես նաև հայերենի «քարծանկ»՝ «խեցգետին» և բարբառային «կակալ» (գուցե «կարկար, կարկառ՝ քար» նախնական ձևից)՝ «ընկույզ, պնդուկ» բառագոյացությունները (Աճառյան Հ., 1979, էջ 558-561): Այսինքն «քար» արմատն իմաստավորում է նաև կարծր մակերես և համեմատաբար փոքր կամ դատարկ միջուկ ունեցող առարկա կամ գոյացություն, որի միջից կարող է ծլարձակվել ընձյուղ կամ դուրս ելնել կենդանի արարած: Երևույթ, որ մեկ անգամ ևս իր էությամբ համադրվում է քարայրում ամփոփված և վերածնման ունակ Մեռնող-Հառնող Աստծո (նաև էպիկական հերոսի) վարքագծին: Այս ամենը թույլ է տալիս են-

«քարանձավ» բառը բաղկացած է «քար» և «այր» արմատներից, որտեղ «քարը» դա պինդ մակերես կամ կեղև ունեցող մարմին է, իսկ «այրը» տղամարդն է: Երկրորդ արմատի մեկնաբանության հետ կարելի է համաձայնել, սակայն «քար» բառի նման մեկնաբանությունն այնքան էլ չի համոզում: Հեղինակներն իրենց այս մեկնաբանության վրա կառուցում են Մեռնող-Հառնող Աստծո «բնակավայրի» կամ գտնվելու, գերեվարվելու վայրի վարկածը՝ գտնելով, որ «քարը» նշանակում է բնական այնպիսի մի դատարկություն, ուր կարելի է մտնել, սողոսկել, և կամ որտեղից «կարող է ձլարձակել ընձյուղ»: Այս վերջին օրինակն ընդհանրապես համահունչ չէ նախաքրիստոնեական հայերի բնապաշտական աշխարհընկալմանը: Որովհետև ստորգետնյա դատարկությունները ծածկող երկրաբանական և հողային շերտերը հիմնականում ջրազրկված և անբերրի են նամանավանդ կրաքարային կարստացող ապարներով հարուստ շրջաններում, որտեղ հողային ծածկույթն ընդհանրապես բացակայում է: Մեկ ուրիշ հեղինակ՝ նկարիչ, քանդակագործ, խաչքարի մասնագետ Վ. Պետրոսյանը[10] առաջ է քաշում մի հետաքրքիր տեսակետ, որի հետ դժվար է չհամաձայնել: Նա պնդում է, որ խաչքարի գաղափարը բնակելի քարայրի սիմվոլացման արդյունք է: «Քարայր», ըստ Վ. Պետրոսյանի, նշանակում է այրվող քար, կամ քարանձավ, որտեղ կրակ է վառվում: Կրակը, որպես ջերմության, կյանքի, լույսի աղբյուր, միաժամանակ կարող էր հանգել կենաց ծառի սիմվոլին, իսկ այն շրջանակող զարդաքանդակված կամարը՝ քարանձավի մուտքի գաղափարին: Խաչքարի մասին, որպես թե նախաքրիստոնեական և քրիստոնեական ժամանակաշրջանները կամրջող հայկական մշակույթի մի ինքնատիպ երևույթ, Վ. Պետրոսյանն անդրադարձ է կատարել «Հավատի գինանշանը» հոդվածում[11]:

Ա. Փիլիպոսյանի «այր» բառի ստուգաբանությունը և Վ. Պետրոսյանի տեսակետը, թե «այր» բառը նշանակում է կրակ, չեն հակասում իրար, այլ կարելի է պնդել, որ լրացնում են իրար: Այստեղ տեղին կլիներ հիշատակել կրակի աստվածությանը՝ Վահագնին[12]: Վահագնի աստվածության մասին տարբեր հեղինակների բազմակարծիքության պայմաններում այնուամենայնիվ գրեթե բոլորն ընդունում են, որ նա նաև կրակի ու հրի աստվածն է,

---

թադրել, որ «քարայր» և «քարանձավ» հասկացությունների տակ նախապես ընկալվել են բնական կամ ձեռակերտ այն ժայռախոռոչները, որտեղ, ըստ վաղնջական առասպելաբանական պատկերացումների, փակվել են մեռնող-հառնող դյուցազունները, կամ, վերջիններիս հետ կապված, ծիսակարգի համաձայն ամփոփվել են նրանց հավասարեցված և սոցիալական բարձր կարգավիճակ ունեցող հասուն տարիքի տղամարդկանց (հաճախ նաև նրանց անդրաշխարհյա ուղեկիցների) դիակներն ու աճյունները»:

[10] Տեսակետը Վ. Պետրոսյանը հայտնել է խաչքարերի մասին մեր զրույցի ընթացքում: Տեսակետը տպագրվում է նրա բանավոր համաձայնությամբ: Ընդ որում, ըստ վարկածի հեղինակի, այս միտքն ընդգրկված կլինի խաչքարերի մասին առաջիկայում հրատարակվելիք հոդվածաշարում և գրքում:

[11] «Սնունդ առնելով և շարունակաբար գոյատևելով պատմական հայրենիքում՝ Հայաստանում, խաչքարն իր գոյանյութի մեջ ներառել է հայ ժողովրդի պատմական հիշողությունը, կապված նախաքրիստոնեական հազարամյակներում մարդու կողմից բնության երևույթների ուսումնասիրման, ճանաչման, գնահատման և կանոնակարգման հետ», և ապա նույն հոդվածում «... չէր մերժում (իմա՝ խաչքարը) նախաքրիստոնեական աշխարհընկալումը, հակառակը, հաշտեցնում էր հին ու նոր մտածողությունը ...»: Տես՝ «Հավատի գինանշան (խաչքար)», «Հորիզոն», N 22, Երևան, 2003, էջ 2:

[12] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1990, էջ 54:

թերևս այս հարցում, թե ուրույն տեսակետով առանձնանում է Ս. Գասպարյանը, որը մերժում է Վահագնի՝ կրակի աստված լինելու գաղափարը[13]: Ինչևէ, եթե այժմ մի շղթայի մեջ նայենք և քննենք վերոհիշյալ մեկնաբանությունները, ապա կստանանք հետևյալ սխեմատիկ պատկերը՝




Եթե շղթան շարունակելու միտումով դիմենք, «Սասնա ծռեր», դյուցազնավեպի Փոքր Մհերի և առասպելական Արտավազդի և Միհր աստծո կերպավորումներին, ապա կունենանք շղթայի բնականոն ավարտը, որը բնապաշտական հայեցակարգից բխող և այդ ընկալումների սահմաններում ձևավորված մտածողության արգասիք լինելով հանդերձ, ամբողջացնում է նախաքրիստոնեական հայերի վերաբերմունքը և իմացությունը շրջակա միջավայրի վերաբերյալ: Դիտարկելով բիոտոպ, բիոցենոզ փոխհարաբերությունները էկոգործոնների անընդհատական փոխհարաբերությունների պայմաններում, նախաքրիստոնեական հայերը հասել են բնության ներդաշնակության ընկալման այնպիսի մի որակի, որում բացակայում են «վատ», կամ «լավ» հասկացությունները, իսկ տարբեր հերոսների և կերպարների արարքներն ընկալվում է այնպես, ինչպես կա՝ առանց կողմնակալ մեկնաբանությունների[14]:

Այժմ հայ էպիկական բանահյուսության զարգացման պատմության գիտական վերլուծությունների հիման վրա ամփոփենք շղթան՝[15]

---

[13] Ս. Ծ. Գասպարյան, Վահագն աստծո պաշտամունքի հարցը. «Հայաստան», 1993 թ., Երևան, էջ 51. «... Վահագնը պետական դիցարանում ամենից առաջ հանդես է եկել որպես պատերազմի, ռազմի և քաջության աստված, և ոչ թե շատերի կողմից հորջորջվող արևի, ամպրոպի ու կայծակի, կրակի, անձրևի, ամպի և այլնի աստված»:

[14] Թե՛ Փոքր Մհերի քարանձավում փակվելու և թե՛ Արտավազդին Մասիսի քարանձավում գերելու վերաբերյալ էպոսում և առասպելում չկան բնորոշում դեպքի «վատ» կամ «լավ» լինելու մասին: Բացասաբար չեն բնութագրվում նաև վիշապազունները: Այստեղ նույնիսկ հայրական անեծքը, որը հերոսների մեկուսացման կամ բանտարկության պատճառ է դառնում, դիտարկվում է որպես ինքնըստինքյան հասկանալի և բնականոն մի բան:

[15] **Ա. Փիլիպոսյան, Ռ. Մկրտչյան, Գեղհովիտի Վանտոսյան քարայր-դամբարանը, «Զանգակ», 2001, Երևան, էջ 62: «Այս սյուժեում եվրասիական և մասնավորապես նաև հայկական առասպելաբանական համակարգերից լավ հայտնի արևի (իր ծագելու և մայր մտնելու՝ նաև լեռան կամ լճի «մեջ մտնելու» հատկությամբ), հողմի-ռազմի և Մեռնող-Հառնող աստվածությունների զուգորդված, անձնավորված և վիպականացված կերպարն է, իրեն բնորոշ կենդանական կող խորհրդանիշներով (ագռավ-Անզուդ-Ֆենիքս, կինճ-վարազ-Նինշուբուր, ձի-Քուռկիկ Ջալալի-Աշվինները), բնավորության երկվությամբ (բարություն-չարություն, հանցանք-զղջում) և երկհականիր լոկուսներում (ջուր-ցամաք, լույս աշխարհ-մութ քարայր) գոյատևելու կարողությամբ»:**

**Վերոհիշյալ մեջբերման հեղինակների մեկնաբանությունը եթե իմաստասիրական մակարդակից տեղափոխենք էկոլոգիական մակարդակ, այսինքն հետազոտման այլ մեթոդաբանություն ընտրենք, ապա կհամոզվենք, որ խոսքը ոչ թե հակասություններին է վերաբերում, այլ էկոլոգիական տարբեր գործոններին, որոնք էլ ապահովում են էկոհամակարգի դինամիկ զարգացման կենսականորեն անհրաժեշտ գործընթացը (Հեղինակ):**




Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ քարանձավների առաջացման հիմնական պատճառը ջուրն է՝ իր էրոզիոն և կոռոզիոն հողմնահարման գործոններով: Այս առումով հատկանշական է «Վահագն» բառի ստուգաբանական մեկնաբանությունը, ըստ որի «Վահ» - ջուրն է և «ագն» - կրակը: Եթե ընդունենք, որ սպելեոգենեզի հիմքում ջուրն է, որը ձևավորում է քարանձավը, իսկ այն բնակության համար պիտանի դարձնելու համար մարդը միանշանակ պիտի օգտվի կրակից, ապա ոչ թե իրար հակասող երևույթների հետ գործ ունենք, այլ մարդու էկոտոպին անհրաժեշտ երկու էկոլոգիական գործոնների հետ: Կստանանք շղթայի վերջնական տեսքը՝




Քարանձավ-բնակարանները սփռված են Հայաստանով մեկ, սակայն որոշ տեղերում նրանք մեծ թիվ են կազմում: Տոկարսկին գտնում է, որ Անիի քարանձավային քաղաքի ծաղկման շրջանում Ծաղկոցաձորում, Իգաձորում և Գայլաձորում ընդհանուր առմամբ եղել են հազարից ավելի քարանձավային բնակելի համալիրներ[16]: Գորիսում և շրջակա գյուղերում՝ Խնձորեսկ, Տեղ, Քարաշեն և այլն, բնակելի քարայրների թիվը նույնպես հազարից ավելին է: Ավելին, Տոկարսկին, վկայակոչելով Ներսես Սարգիսյանին[17] ու Ղևոնդ Ալիշանին[18], պնդում է, որ Անիի քարայրներից մի քանիսը գործածվել են որպես կրպակ[19]:

Ըստ մի շարք, այդ թվում վերոհիշյալ հեղինակների՝ քարանձավների նման կուտակումը մի վայրում պատահական կամ քաոսային բնույթ չի կրել, հակառակը, սրանք բոլորն իրար հետ կազմել են օրգանական ամբողջություն, որի բաղադրիչների և տարրերի փոխհարաբերությունը տիպական է կայացած քաղաքներին: Օրբելին Անիի ստորգետնյա ժայռափոր հատվածն այդպես էլ անվանում է՝ «Ստորգետնյա Անի»[20]: Եվ իսկապես, եթե ընդունենք, որ յուրաքանչյուր քարանձավային համալիրում ժամանակին բնակվել են նվազագույնը 5-7 մարդ, ապա հազար ժայռափոր բնակարաններում բնակվել են մոտ վեց հա-

[16] Տես Д. Кипшидзе. Пещеры Ани, с. 22.

[17] Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 144:

[18] Շիրակ, 1881, էջ 87:

[19] Տես Д. Кипшидзе. Пещеры Ани, с. 22.

[20] И. Орбели. Краткий путеводитель по городищу Ани. Анийская серия N 4. СПб, 1910, с. 9.

զար մարդ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ X-XIII դարերում Լոնդոնը 15000, իսկ Փարիզը ընդամենը 10-12000 բնակիչ է ունեցել, ապա «ստորգետնյա քաղաք» կամ «ստորգետնյա Անի» անվանումը ամենևին էլ չափազանցություն չէ: Ս. Վարդանյանը, մեջբերում անելով Լեհման Հաուպտից (C. F. Lehmann – Haupt, Armenien Einst and Setzt – Berlin, 1910, էջ 333), գրում է[21]. «Տիգրանակերտից մինչև Առերդ, երբեմն եղել է քարանձավաբնակ մի ժողովրդի կենտրոնը»: Ժայռափոր ճարտարագիտական այս կառույցների մասին Լեոն գրում է[22]. «... կարելի է անսխալ ասել, թե այժմյան մեր ունևոր գյուղացին անգամ դրանից լավ բնակարան չունի իր ապրուստը հոգալու համար: Բացի դրանից, պատահում են այնպիսի այրեր, որոնց առջև դուք ակամա կանգ եք առնում: Առանց մեծ ծախսերի չէր կարելի փորել այդպիսի գեղեցիկ, նույնիսկ զարդարուն սենյակներ»: Բնական է, որ ժամանակավոր կացարանը մարդն այդքան խնամքով և ջանասիրաբար չէր բարեկարգի, ավելին, այս երևույթն արդեն խոսում է որոշակի կենցաղային ինքնատիպ մշակույթի առաջացման փաստի մասին: Այս երևույթն առավել ընդգծվում է «ստորգետնյա Անիի» եկեղեցիներն ուսումնասիրելիս: Մառի՝ Անիի արշավախմբի քարանձավագիտական հետազոտություններն իրականացնող Ղիփշիձեն և Տոկարսկին հաշվել են 35 եկեղեցի և վանք, որոնցից մի քանիսը՝ Կարմիր եկեղեցին, Հռնենցների մատուռը, ցնցում են կատարելության և ճարտարապետական լուծումների ինքնատիպությամբ: «Ստորգետնյա քաղաքում» ունևորների միջև մրցակցություն է եղել և եկեղեցաշինության ասպարեզում: Սա միջնադարյան հայկական քաղաքներին բնորոշ մի առանձնահատկություն է, որը ևս գալիս է հաստատելու, որ ստորգետնյա Անին իսկապես ֆունկցիոնալ քաղաք է եղել ուրբանհամակարգերին բնորոշ բոլոր առանձնահատկություններով: «Ստորգետնյա Անիի»՝ որպես առանձին ինքնուրույն քաղաք լինելու օգտին է խոսում և այն փաստը, որ այս տարածքում մի քանի մեծ քարանձավներ կան, որտեղ 2000-2500 ոչխար են տեղավորում[23]:

Այսինքն, քաղաքն իր կարիքները հոգալու համար ունեցել է նաև պահեստներ, պահեստարաններ և տարածքներ, որը միաժամանակ հարմար էր շուկայի դեր կատարելու համար:

Ստորգետնյա Անին եզակի չէ իր ձևի մեջ: Փոքր Ասիայում հետազոտող Պոլ Լուկասը[24] 1713-15 թթ. ճանապարհորդական նոթերում նշում է նվազագույնը տասն այդպիսի քաղաքների մասին, իսկ իտալացի հետազոտողներ Վ. Կաստելանին, Գ. Փանին[25], ինչպես նաև Ռ. Բիկսիոն[26] Կապադովկիայում ութ ստորգետնյա քաղաքների հետազոտության արդյունքում չափագրել և նկարագրել են 19 եկեղեցիներ և վանական համալիրներ:

---

[21] Սողոմոն Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, 1959, Հայպետհրատ, Երևան, էջ 12-13:

[22] Լեո, Անի, 1941, Երևան, Հայպետհրատ, էջ 190:

[23] Տես Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն, 1959, Հայպետհրատ, Երևան, էջ 13:

[24] Տես W. F. Ainsworth. Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia. I-II, London, 1842.

[25] Le Citta sotterrance della Capadocia. Ergo edizioni, 1996, Genova, p. 53-70.

[26] Նույն տեղում, էջ 106-121:

Այսպիսով. ի մի բերելով Փոքր Ասիայում ժայռափոր բնակավայրերի մասին տեղե-
կությունները. կարելի է համարձակորեն խոսել «քարանձավային մշակույթի»[27] մասին. ո-
րի մի հզոր շերտը զուտ հայկականն է, որի ազդեցությունն ինչպես Անատոլիայի. այնպես
էլ Կապադովկիայի. Կիլիկիայի քարանձավաշինության և քարանձավային կենցաղի ա-
ռումով բացահայտ է և անվիճելի[28]: *Քարանձավային մշակույթ* արտահայտությունը չա-
փազանց դիպուկ է բնութագրում այս միջավայրը, որովհետև սկսած ճարտարապետութ-
յունից, ճարտարագիտական և շինարարական առանձնահատկություններից մինչև քար-
անձավաբնակների կենցաղն ու փոխհարաբերություններն ինքնատիպ մի միաձուլություն
և մշակույթ են ձևավորված եղել:

«Քարանձավային մշակույթը», նամանավանդ նրա ճարտարապետա-ճարտարագի-
տական հատվածը համամարդկային քաղաքակրթության մեծագույն նվաճումներից է, ո-
րի ժայռափոր վկայությունները տաճարների և ստորգետնյա այլ կառույցների տեսքով
պահպանվել են աշխարհի գրեթե բոլոր մայրցամաքներում, ամեն տեղ յուրովի զարգա-
ցում ապրած, բայց և բնորոշ տվյալ տարածքի արմատական բնակչության մշակութային
սովորույթներին: Հնագույն քաղաքակրթությունների տարածաշրջաններում հնագետնե-
րը, որպես կանոն, քաղաքակրթության սկիզբը գտնում են քարանձավային բնակավայ-
րերի պեղումների արդյունքում (բացառությամբ բացարձակ հարթավայրային տարած-
քում առաջացած քաղաքակրթությունների): Տվյալ քաղաքակրթության զարգացման գոր-
ծընթացներն անդրադարձել են «քարանձավային քաղաքակրթության» վրա: Այս երևույթն
առավել վառ արտահայտություն է գտել ճարտարապետական կառույցներում, բարձրա-
քանդակներում, որմնանկարներում, ինչպես, օրինակ, Եգիպտոսում Նոր Թագավորութ-
յան շրջանում կառուցված փարավոնների դամբարանները կրկնում են «վերևոնյա» նա-
ռույցների ճարտարապետական մանրամասները, հնդկական I–IV դդ. ժայռափոր տա-
ճարների ինչպես ճարտարապետական մանրամասները, այնպես էլ քանդակները, զար-
դանախշերը, արձանախմբերը կրկնում են վերերկրյա կառույցների մանրամասները:
Նման օրինակները բազմաթիվ են: Բերենք սրանցից մի քանիսը. Ս. Կալիստի, Ս. Դոմեցի-
լի և Ս. Սեբաստյանի կատակոմբները Հռոմում[29] ճարտարապետական լուծումներով՝ կի-
սակլոր կամարներ, սրանց պահող սյուները, խորանները, բեմը և այլ մանրամասներով
կրկնում էին «վերերկրյա» ճարտարապետության տարրերը, իսկ Մաչու-Պիկչու-ի ինկա-
կան քարանձավները հատակագծով իրենց քառակուսի կամ ուղղանկյուն գծագրությամբ,
ինչպես նաև լուսամուտների և մուտքերի գծագրությամբ կրկնում են դարավանդների վրա
փռված հինավուրց քաղաքի տների ճարտարապետությունը[30]: Բուլղարիայի Իվանովյան
ժայռափոր վանքի պատերը զարդարող որմնանկարները[31] կատարվել են XIV դ. բյուզան-
դական եկեղեցական որմնանկարչության լավագույն ավանդների համաձայն:

---

[27] Ընդգծումը հեղինակինն է:

[28] Տես UIS Congress La Chaux-de-Fonds 10-17 August, 1997, V3, **Samvel Shahinian**, The Cave Dwellings and Cherchs.

[29] Տես **Ф. К. Павало**, Цвета Рима. EPITRICE LOZZI. Roma, 1994, p. 84-86.

[30] "ALT – PERU UND SEINE KUNST", Ferdinand Anton, Buch und Kunstverlag. Leipzig. 1972.

[31] Г. **Чавърков**, Български манастири. Септември, 1978, София. с. 152-157.



ԺԱՅՌԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻ
(Այս և հաջորդող լուսանկարները՝ հոդվածագրի)



ԴԱՎՐԻԺԵՑՈՒ ՔԱՐԱՆՁԱՎԻ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԺԱՅՌԱՊԱՏԸ



ՀՈՉԱՆՑ ԱՆԱՊԱՏԻ ԺԱՅՌԱՓՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ



ԱՅՐԻՎԱՆԵՑՈՒ ՔԱՐԱՆՁԱՎԸ

Հայաստանում նմանօրինակ զուգահեռներ է անցկացնում Տոկարսկին[32] համեմատելով ժայռափոր «Կարմիր եկեղեցին» և Հոնենցի մատուռը «վերերկրյա» Անիի ճարտարապետական հուշարձանների հետ:

Եթե «քարանձավային մշակույթի» զարգացման գործընթացները դիտարկելու լինենք քաղաքակրթության ծագման ու զարգացման ծիրում, ապա կհամոզվենք, որ քարանձավների առաջին բնակիչների կենցաղն ամբողջ աշխարհում նույնն է եղել: Բոլոր մայրցամաքներում հայտնաբերված հնագույն մարդկային քարանձավային կացարաններն իրարից տարբերվում են միայն երկրաբանական շերտախմբի (որի մեջ առաջացել է) չափերով և միներալային, պետրոգրաֆիկ կազմով:

Ընդհանրապես անթրոպոգեն քարանձավների բարենորոգման, բարեկարգման ձևն ուղղակիորեն կախված է եղել բնակեցնողների աշխարհընկալման հայեցակարգից, մշակութային և հոգևոր սկզբունքներից:

Մինչ նախնադարյան համայնական հասարակարգի ձևավորումը մեզ հայտնի բնակեցված քարանձավներն ամբողջ աշխարհում օգտագործվել են ժամանակավորապես կամ ընդհատումներով, սակայն որոշ դեպքերում երբ քարանձավը գտնվել է կլիմայական բարենպաստ պայմաններով օժտված բիոտոպում, որը մարդկային պոպուլյացիայի համար գերականյող էկոտիպ դառնալու հնարավորություն է ընձեռնել, մարդկային խմբերի կողմից քարանձավն օգտագործվել է հարյուրավոր և հազարավոր տարիներ ի վեր: Նման քարանձավների օրինակներ ունենք Հայաստանում և հարող տարածաշրջանի երկրներում: Այս քարանձավներում մշակութային շերտը հասնում է մի քանի մետրի և չափազանց մեծ հետաքրքրություն է ներկայացնում հնէաբանների, մարդաբանների, հնագետների համար: Դրանցից են Ազոխը[33], Ցխալտուբոն[34], Շանիդարը[35] և այլն: Այս քարանձավներում հայտնաբերված հնագիտական և հնէաբանական հարուստ նյութերը

---

[32] Տեքստում Ն. Մ. Տոկարսկու հետազոտություններին համեմատաբար հաճախ անդրադարձ կատարելու պատճառն այս ինքնատիպ և համարձակ գիտնականի անթաքույց նվիրվածությունն էր իր մասնագիտությանը, ինչպես նաև պատմական իրողությունների կամայական խեղաթյուրումների ժամանակաշրջանում գիտնականին արժանի կեցվածքը չկորցնելու և հայ քարանձավագիտությանը գիտական մի նոր որակ հաղորդելը: Այստեղ ավելորդ չենք համարում հիշեցնել, որ 1947 թ. Տոկարսկին ամենախիստ քննադատության է ենթարկվել ստալինյան գիտնականների կողմից (տես Об одном примере искажения исторической правды. акад. С. Джанашиа), որտեղ նրան պիտակավորում են որպես հակամարքսիստական և հակաստալինական: Եթե հիշենք նաև Ստալինի պատմաբանասիրական նկրտումների հետևանքում մահացու քննադատության թիրախ դարձած Մառին, Լեոյին, որոնց մերձավոր գործընկերն էր Տոկարսկին, ապա պարզ կդառնա, թե ինչ կամք էր պետք այդ հազվագյուտ մարդուն և գիտնականին շարունակել հետազոտություններն ու մինչև վերջ աննահանջ շարունակել իր գործը:

[33] Տես **Касимова Рабия, Мамед Мехти Кызы**. Первая находка самого древнего пещерного человека на территории СССР, АН Аз. ССР. 1986 г.

**Շահեն Մկրտչյան**. Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Հայաստան, 1985 թ., էջ 108-111:

[34] Նույն տեղում:

[35] "Пещера в горах Загрос на С. Ирана. В 1951 – 65 открыты остатки скелетов ископаемого человека неандертальского типа вместе с орудиями мустьерской культуры. Древность 50–70 тыс. лет". БЭС II том. М. "Сов. Энцикл." 1991. с. 649.

վկայում են վաղ քարե դարերում մարդկության դանդաղ, բայց կայուն զարգացման մասին:

40 հազար տարի առաջ վաղ քարե դարի մարդկանց կյանքում տեղի ունեցավ խոշոր բեկում: Եթե մինչ այդ մարդը կրակի և որսորդական զենքերի ու գործիքների գյուտերը կատարելով իրականացրեց «բանական» հեղափոխություն, որով և իր համար սահմանեց մի այլ կարգավիճակ էկոհամակարգի մյուս բիոտների նկատմամբ, ապա գեղանկարչության հայտնագործությամբ, աշխարհընկալման հոգևոր, գեղագիտական դրսևորման իր ընդունակությամբ, մարդը փաստորեն հայտարարեց անթրոպոգեն էկոհամակարգի ստեղծման իր հաստատակամության մասին[36]: Էկոհամակարգի և ոչ մի բիոտիկ տարր կամ բաղադրիչ չի դրսևորել բանականություն, առավել ևս ստեղծագործական ակտիվություն և առավել ևս չի գրանցվել օրգանիզմների կողմից հոգևոր ներհայեցման որևէ փաստ: Այսպիսով, իրավունք եմ վերապահում ընդունել այդ պահից սկսած անտրոպոգեն համակարգերի ծնունդը, ինչպես նաև անթրոպոգեն քարանձավների ի հայտ գալը: Ամբողջ աշխարհում այսօր հայտնի են 100-ից ավել քարանձավներ, որոնց պատերին նախամարդը պատկերել է իր առօրյան, շրջակա աշխարհը, գույներով և գծով արտահայտել իր վերաբերմունքը, զգացմունքները արտաքին աշխարհի երևույթների և առարկաների նկատմամբ: 1876 թ. սկսած աշխարհի տարբեր ծայրերում մեկը մյուսի ետևից սկսեցին հայտնաբերվել քարանձավներ, որոնց պատերին նախամարդը պատկերել էր կենդանիներ, մարդկանց, որսի տեսարաններ և այլն[37]:

Ըստ էության, մարդու կողմից բիոտոպն իր ճաշակով փոփոխելու առաջին փորձն էր, որով և նա ոչ միայն սկսեց բավարարել ներքին ինքնադրսևորման պահանջները, այլև շրջակա միջավայրի անթրոպոգեն ազդեցության գործընթացի սկիզբը դրեց:

Մարդու կողմից անթրոպոգեն քարանձավների օգտագործման երկրորդ փուլը սկըսվում է այն պահից, երբ մարդը ձևափոխում և իր կարիքներին է հարմարեցնում քարանձավը: Պատմականորեն այս երևույթը սկսվում է զուգահեռաբար որսորդությունից* անասնապահության և հավաքչությունից երկրագործության անցնելու գործընթացում: Որոշակիորեն փոխվում է նաև մարդու վերաբերմունքը քարանձավի նկատմամբ: Եթե նախկինում ինքնապաշտպանության բնազդը ստիպում էր մարդկանց ապրել մեծ խմբերով և համատեղ ջանքերով դիմակայել տարբեր աղետների, ապա առաջընթացը մարդկանց արդեն ավելի փոքր խմբերի դարձրեց դիմադրողունակ արտաքին աշխարհի բացասական գործոնների նկատմամբ: Սկսվեց անթրոպոգեն քարանձավների օգտագործման երրորդ փուլը: Մարդիկ, որոնք դեռևս նախընտրում էին քարանձավում ապրել, այլևս բնակության համար մեծ քարանձավներ չէին փնտրում: Ավելին, նոր հասարակական հարաբերությունների պայմաններում մեծ քարանձավները այլևս բնակության համար պիտանի չէին:

---

36 Այստեղ թվագրումը պայմանական է, քանի որ տարբեր մասնագետներ այս հարցի վերաբերյալ ունեն տարբեր տեսակետներ, սակայն գրեթե բոլորը համընկնում են այն մտքին, որ «մշակութային» այս յուրօրինակ դրսևորումը նախամարդն իրականացրել է վաղ քարեդարի կեսերին:

37 Ալտամիրի (Իսպանիա) քարանձավի հայտնագործումից հետո Ֆրանսիայում և Իսպանիայում հայտնաբերվեցին 30-ից ավելի քարանձավներ, որոնց պատերը և առաստաղը ծածկված էին նախամարդու նկարած տարբեր կենդանիներով և տեսարաններով: Ավելի ուշ նման հայտնագործություններ կատարվեցին Աֆրիկայում, Ասիայում, Ավստրալիայում:

Մեծ քարանձավները դադարեցին ծառայել որպես բնակավայր. լավագույն դեպքում վեր էին ածվում փարախների[38] և կամ պահեստների: Որոշ դեպքերում մեծ քարանձավներն օգտագործվել են որպես ծիսական վայրեր, կամ վերածվել են սրբատեղիների[39]: Այն պահից սկսած, երբ գործածական դարձան փոքր քարանձավները, «քարանձավային» մշակույթն սկսեց ձևավորվել բիոտոպի ընտանեկան, միջընտանեկան հարաբերությունների, ինչպես նաև սոցիալական, հոգևոր և կրոնական փոխհարաբերությունների ազդեցությամբ:

Քարանձավային բնակարանները բարեկարգվում կամ փորվում էին գրեթե նույն սկզբունքով, նույն շինարարական մտահղացմամբ: Տարբեր տարածաշրջանների քարանձավները և քարանձավային բնակելի համալիրները սկսում են ձեռք բերել ինքնուրույն ճարտարապետական բնութագրեր: Քուռից մինչև Եփրատ և ապա Նեղոսի հովիտ բրոնզե դարը բնորոշվում է քարանձավա-բնակարանային մշակույթով, քարանձավները որպես բնակարան օգտագործելու սովորույթով: Երևան են գալիս քարանձավային բնակարաններ, որն այսօր գիտական գրականության մեջ հայտնի է ուրարտական դամբարաններ (Տոկարսկի, Մելքոնյան, Բաթըեր և այլն), վանտոսյան դամբարաններ (Փիլիպոսյան, Մկրտչյան) և «Քսենոփոնյան տներ» (Շահինյան)[40] անուններով: Ք. ա. I հազարամյակում հայտնված այս քարանձավները Հայաստանում, Միջագետքում, Մերձավոր Արևելքում, Եգիպտոսում, Եվրոպայում, Իրանում կիրառական են եղել մինչև մ.թ.ա. VII-V դդ.: Տարբեր երկրներում շինարարաճարտարապետական մշակույթի զարգացումն ուղղակիորեն անդրադարձավ անթրոպոգեն քարանձավների կառուցման ձևի, տեսքի և նշանակության վրա, որի հետևանքում քարանձավային ստորգետնյա ճարտարագիտական կառույցները տարբեր երկրներում սկսեցին ավելի ու ավելի տարբերվել իրարից և ձեռք բերել «ազգային դիմագծեր»:

Ուրարտական դամբարանների տեսքը, մեր համոզմամբ, կրկնում է քարանձավային բնակարանների ճարտարապետական մանրամասները և գծերը: Սա պատճառաբանվում է հետևյալով: Հանգուցյալը հանդերձյալ աշխարհում ոչ միայն պետք է ունենար անհրաժեշտ բոլոր կենցաղային իրերն ու գույքը, շրջապատված լիներ ծառաներով և ստրուկներով, այլև հոգեհարազատ բնակարան, նման այն բնակարանին, որտեղ ապրել էր կենդանության օրոք:

---

[38] Նման դերակատարում են ունեցել Վայքի, Լոռվա, Զանգեզուրի, Գեղարքունիքի մի շարք քարանձավներ: Տե՛ս ՀԽՍՀ ԳԱ Աշխարհագրական ընկերության քարանձավագիտական ջոկատի գիտական հաշվետվությունները 1982 – 89 թթ:

[39] Խոսրովի արգելոցում Ազատի աջ վտակի միջին հատվածում է գտնվում «Դավրիժեցու քարանձավը», որը հեթանոսական շրջանում տաճարի դեր է կատարել, իսկ ավելի ուշ, X–XII դդ., այստեղ եկեղեցի է կառուցվել և վերածվել քրիստոնեական սրբավայրի: Համոզված ենք, որ Գեղարդի աղբյուրով սրահը նույնպես եղել է հեթանոսական սրբատեղի, համալիրի ամենահին կառույցը: Նման աղբյուրով քարանձավ շրջապատում ծիսական կառուցապատումներով ՀԱԿ-ի հետազոտողներին հանդիպել է նաև Վեդի գետի վտակների՝ Խոսրովի և Մանկուքի ձորերի ժայռապատերի վրա (Հեղ.):

[40] **S. M. Shahinyan**, The "Xenophon Dwellings" and their analogues in the basin lake Sevan, UIS 10 congress, 1989, p. 446 – 448.

Ուրարտական ժայռափոր դամբարանների հետազոտությամբ պատմական Հայաստանի տարածքում շատերն են զբաղվել[41], սակայն համեմատական վերլուծության փաստերը բավականին սուղ են: Ավելին, զուտ քարանձավագիտական հետազոտությունների արդյունքները, մասնագիտական այնպիսի հեղինակավոր գագաթաժողովում, ինչպիսին Միջազգային Քարանձավագիտական Միավորման (UIS) կոնգրեսներն են, գրեթե ներկայացված չեն եղել: Քարանձավագիտական հետազոտությունների արդյունքները սովորաբար մաս են կազմում այս կամ այն գիտական ուսումնասիրության՝ հնագիտական, ճարտարապետական, ճարտարագիտական, էկոլոգիական, գեոմորֆոլոգիական, երկրաբանական և այլն:

Ուրարտական քարանձավային դամբարանները հետազոտող գրեթե բոլոր գիտնականները նկատել են, որ անթրոպոգեն քարանձավները (առաջին հերթին նկատի են ունեցել ուրարտական դամբարանները) հիմնականում գտնվում են գետի ափամերձ ժայռապատերի մեջ[42] կամ որևէ ջրային ավազանին մոտ: Հայաստանում ուրարտական շրջանի քարանձավների հետազոտությունները հիմնականում հաստատում է այս տեսակետը, սակայն մեր ունեցած տեղեկությունների համաձայն ժայռափոր գյուղեր, բնակավայրեր Շիրակի դաշտավայրում, Կապադովկիայում, Գեղարքունիքում գտնվում են ջրային ավազաններից բավական հեռու: Այնինքն, նշված երևույթը խիստ օրինաչափություն չէ, չնայած միանգամայն տրամաբանական է, որ հնագույն շինարարները կնախընտրեին կառույցը ստեղծել ջրին մոտ:

Դամբարաններին և ժայռափոր կառույցներին փոխարինելու եկած բնակելի ժողովրդական տները և բնակավայրերը միշտ չէ, որ կառուցվում կամ փորվում էին ձորերում կամ լճափնյա ապարաշերտերում: Աղբյուրի առկայությունը միանգամայն բավարար էր ժայռափոր տներ կառուցելու համար, եթե, իհարկե, տեղավայրի ապարների կազմը և շերտադրությունը այդ հնարավորությունը ընձեռնում էին[43]: Սակայն պատմիչների և հնագետների կողմից արձանագրված փաստը էականորեն կարևոր է եղել ոչ միայն անձավաբնակների համար: Ջրից օգտվելու համար, գրեթե բոլոր ամրացված բերդերն ու բնակավայրերի բնակիչները ստորգետնյա անցուղիներ են կառուցել դեպի մոտակա ջրավազանը և կամ ստորգետնյա ջրատար անցկացրել մինչև բնակավայր: Թունելները, անցուղիները և քարվեզները, որպես ստորգետնյա ճարտարագիտական կառույցներ, զարմացնում են ոչ միայն իրենց լուծումներով, այլև հնագույն վարպետների ու ճարտարագետների բնության և նամանավանդ երկրաբանության ճանաչողության և շինարարության մեջ այդ գիտելիքների գերազանց կիրառման կարողությամբ: Այսօր շատ քիչ ճարտարագետներ կերաշխավորեն իրենց կողմից նախագծված և կառուցված թունելների երկարակեցություն թեկուզ 100 տարով, այն դեպքում, երբ Անիի[44], Բջնիի[45], Ամբերդի[46] թունելները, որ

---

41 Н. Марр, И. Орбели, Археологическая экспедиция 1916 года въ Ванъ. Петербург, Акад. Тип., 1922 г., с. 68. Fr. Ed. Shulz, Memoires suz le lac de Van et Ses environs, "Journal Asiatique" t.s. IX, Paris, 1840.

42 Այս մասին գրում են Շուլցը, Օրբելին, Մ. Մելքոնյանը, Տոկարսկին, Ա. Փիլիպոսյանը և այլոք: Նույնիսկ Մ. Խորենացին իր «Պատմության» մեջ, քարանձավների մասին գրելիս, երեքից երկու դեպքում նշում է գետի կամ լճի մոտիկության մասին, նույնը Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ:

43 Քսենոփոն, Անաբասիս, ՀՍՍՀ ԳԱ, 1970, Երևան, էջ 97:

44 Кипшидзе, Пещеры Ани, с. 151.

այսօր էլ մասամբ կամ ամբողջապես պահպանվում են, 700 – 1000 տարի առաջ են կառուցվել, ավելին, Օրգովի[47] թունելը և Գեղարքունիքի[48] Սանգառ ամրոցի ջրատարները, ամենայն հավանականությամբ, բրոնզեդարյա կառույցներ են:



Միջլեայի (Սիրիա) դամբարանը ըստ Տոկարսկու





Պետրեի միջնաբերդի դամբարանը ըստ Ռուդոլֆ Նաումանի (Լյուդիա, Թուրքիայի հարավ-արևմուտք)



Աղցի դամբարանն ըստ Տոկարսկու

43 ՀԽՍՀ ԳԱ, Աշխարհագրական Ընկերության քարանձավագիտական ջոկատի 1985 թ գիտական հաշվետվությունը, N GO-176:

46 **Токарский**, По страницам истории Армянской Архитектуры, иллюст. 40. 41. 42. 43.

47 ՀՍՍՀ ԳԱ, Աշխարհագրական ընկերության քարանձավագիտական ջոկատի 1986 թ. դաշտային աշխատանքների հաշվետվությունը:

48 Տե՛ս ՀԽՍՀ ԳԱ, Աշխարհագրական ընկերության քարանձավագիտական արշավախմբի 1986 թ. գիտական հաշվետվությունը և Ն. Հ. Միքայելյանի «Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները», ՀՍՍՀ ԳԱ, 1968, Երևան, էջ 33–35:

Միջնադարը քարանձավային ճարտարապետական մի նոր և հետաքրքիր փուլ արձանագրեց. և սկսած II դարից մինչև V-XV դդ. ժայռափոր եկեղեցիների և սրբատեղիների կառուցման ժամանակաշրջանն էր: Հայաստանում այն իր ծաղկման գագաթնակետին հասավ XI-XIII դդ., երբ փորվեցին Անիի Կարմիր եկեղեցին, Գեղարդի ժայռափոր համալիրը, Հոչանց անապատը: Շինարարական այս գործընթացներից անմասն չմնացին սահմանակից պետությունների ժողովուրդները: Հայկական եկեղեցական ճարտարապետության սկզբունքով փորված եկեղեցիներ, վանքային համալիրներ և մատուռներ են կառուցվել Կապադովկիայում, Ճորոխի վերին հոսանքների շրջանում, այսօրվա Ջաքաթալայի շրջանի հյուսիս-արևելյան հատվածում և այլն: Ընդ որում՝ նշված վայրերում ժայռափոր կառույցներում հանդիպող հայկական արձանագրությունները, ինչպես և ճարտարապետական լուծումներն ու խաչքարային արվեստի նմուշները կասկած չեն թողնում սրանց հայկական ծագման մասին: Պավլիկյան և ապա Թոնդրակյան շարժման հետևանքով Հայաստանից հեռացածները երևի թե այս մշակույթը փոխադրեցին Եվրոպա, Մերձավոր Արևելք և Հարավ-Արևելյան Աֆրիկա և այսօր Բուլղարիայում, Հունաստանում, Իտալիայում, Եվրոպայում գտնվող ժայռափոր մի շարք եկեղեցիներ բացահայտ աղերսներ ունեն հայկական ճարտարապետության հետ: IV դ. սկսած քարանձավային ճարտարագիտությունը հայկական մշակույթը հարստացրեց մի հետաքրքիր երևույթով, որը մեր կողմից անվանվել է քարե դռներով քարանձավներ[49]:

Սակայն ժայռափոր ճարտարագիտական կառույցների մեջ շահեկանորեն առանձնանում են եկեղեցիները: Ժայռափոր եկեղեցաշինության փաստեր հայտնի են և այժմ էլ պահպանվում են մի շարք երկրներում՝ Եվրոպայում, Իտալիայում, Կապադովկիայում, Հունաստանում, Բուլղարիայում, սակայն հայկական եկեղեցաշինության ճարտարապետությունը, նամանավանդ XI-XIV դդ., ցնցում է իր ճարտարագիտական լուծումներով, համակարգվածությամբ, սկզբունքային կանոնակարգվածությամբ և գեղեցկությամբ:

Հայաստանում ժայռափոր սրբավայրերի կառուցման շինարարական, ճարտարագիտական և գեղագիտական սկզբունքները, նաև տեխնոլոգիաները հազարամյակներով հղկվել և մշակվել են: Գեղարդի, Անիի Կարմիր եկեղեցիները, Քաշաթաղի՝ Հոչանց և Քրոնք, Վայքի Մարտիրոսաց և Կապադովկիայի վանքերը զարմացնում են իրենց կատարելությամբ և շինարարական ու ճարտարագիտական մտահղացմամբ: Ավելին, այս շինությունները կրկնում են «վերերկրյա» եկեղեցաշինության բոլոր սկզբունքները, մի բան, որն իրականացնելը տասնյակ անգամ դժվար էր, քանի որ ապարները և երկրաբանական շերտերն ու շերտախմբերը, որոնցում սրանք փորվել են, միատարր չեն, ապարների կարծրությունը փոխվում է յուրաքանչյուր մի քանի սանտիմետրի վրա և կատարյալ գիծ կամ ձև (ֆորմա, ֆիգուր) ստանալու համար չափազանց արդիական տեխնիկա և ճարտարագիտական նուրբ տեխնոլոգիաներ են անհրաժեշտ: Չնայած սրան, մենք դասական ճարտարապետության կատարելության և զարմանալի մտահղացումների վկան ենք լինում ամեն

---

[49] Քարե դռներով քարանձավների մասին տողերիս հեղինակի կողմից 1985-90 թթ. հրատարակումներ են եղել ինչպես Հայաստանի գիտական մամուլում, այնպես էլ Ռուսաստանում, Ավստրիայում, Հունգարիայում, ինչպես նաև ներկայացվել է առանձին զեկուցման տեսքով UIS 10-րդ կոնգրեսում, եվրոպական քարանձավագիտության III ազգային կոնֆերանսում և Ցյուրիխի համալսարանում (Հեղ.):

Տես նաև՝ "Жизнь Артеми Араратского", АН Арм. ССР, 1980 г., с. 39-40.

մի ժայռափոր եկեղեցի մուտք գործելիս, մանավանդ, երբ սրանք փորվել են X–XIV դդ.: Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այլ երկրներում ժայռափոր եկեղեցիների կառուցումը որոշակի պատմաքաղաքական իրավիճակի հետևանք է եղել և ոչ թե ճարտարապետական մտքի աստիճանական զարգացման բնականոն ընթացք, օրինակ, Հռոմի կատակոմբները (տես ծնթ. 30): Կամ բարեկարգել են արդեն գոյություն ունեցող այրերը՝ նրանց տալով եկեղեցու կամ մատուռի տեսք, ինչպես, օրինակ, Բուլղարիայում[50] (տես ծնթ. 32): Որոշ ժողովուրդներ ժայռափոր եկեղեցաշինության մեջ բավական հաջողություններ են ունեցել և կառուցել երնելի շինություններ: Սրա տիպիկ օրինակ կարող է ծառայել Եթովպիայում Լալիբելա կոչվող վայրում կառուցված ժայռափորները: Սրանք հավասարաթև խաչի տեսք ունեցող պլանով կառուցված եկեղեցիներ են: Կառուցումն իրականացվել է հետևյալ կերպ: Սկզբում ընտրվել է պինդ ապար ունեցող երկրաբանական շերտ, որի հաստվածքը կբավարարեր ճարտարապետական մտահղացման իրականացմանը, ապա մայր ապարի վրա գծագրվել է եկեղեցու պլանը և ըստ այնմ փորվել դեպի շերտի խորքերը: Եկեղեցու արտաքին պատկերը ժայռեղեն ծավալի մեջ ստանալուց հետո շինարարները ձեռնամուխ են եղել ներքին բարեկարգման գործընթացին: Համոզվենք, որ ունենալով արտաքին բոլոր պատերը բոլորած եկեղեցական շինությունը, շինարարի համար պակաս դժվարություն էր ներկայացնում փորել ժայռեղեն կառույցի ներսը, քան հայկական դասական ժայռափոր եկեղեցիների դեպքում, երբ շինարարը զրկված էր արտաքին որևէ ուղղորդող չափորոշիչ ունենալու հնարավորությունից:

Հաշվի առնելով տեղի սղությունը, ամփոփենք մեր ասելիքը մշակույթի զարգացման հիմնական փուլերը գրանցելով.

1. Քարանձավները որպես ժամանակավոր կամ երկարաժամկետ պատսպարան:

2. Քարանձավը որպես երկարատև պարբերաբար օգտագործման կացարան քարե դարի մարդկանց մեծ խմբերի համար: «Քարանձավային պատկերասրահների» սկզբնավորումը:

3. Հավաքչությունից և որսորդությունից հողագործության և անասնապահության անցման շրջանում ցեղի տրոհումը ընտանիքների և մեծ քարանձավները որպես կացարանբնակավայր ժամանակաշրջանի ավարտը:

4. Քարանձավային բնակավայրեր, ժայռափոր տներ, ուրարտական դամբարաններ: Վերերկրյա ճարտարապետության բաղադրիչների կիրառումը: Բնակարանային ճարտարապետության տարրերի կիրառումը ժայռափոր դամբարաններում:

5. Միջնադարյան ժայռափոր եկեղեցիների մշակույթը:

6. Քարանձավային քաղաքների և բնակավայրերի ծաղկումը X-XIV դդ. և վերացումը XX դ առաջին կեսին:

---

[50] Հայկական ժայռափոր եկեղեցիները կառուցվել են եկեղեցական ճարտարապետության կանոնակարգերի խստագույն կիրառմամբ, օրինակ, մուտքը, որպես կանոն, նայում է դեպի արևելք, բեմը և խորանները կառուցվել են համահունչ ճարտարապետական ընդհանուր լուծմանը, որոշ դեպքերում «կեղծ գմբեթները» իրականացվել են «վերերկրյա» ճարտարապետության դասական օրինակով, ինչպես, օրինակ, Գեղարդը, Մարտիրոսաց վանքը, Քաշաթաղի մատուռը, Քրոնքը, Անիի Կարմիր եկեղեցին և այլն: Իսկ բուլղարական և հունական ժայռափոր եկեղեցիներում այս ամենը բացակայում է:

*ԳԵՎՈՐԳ ԽՈՒԴԻՆՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1889-1891 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1880-90-ական թվականների սահմանագծին, երբ նոր միայն ձևավորվող հայ ազգային կուսակցություններն իրենց առաջին քայլերն էին ձեռնարկում՝ արևմտահայերի ազատագրության խնդիրը խոսքից գործի վերածելու համար, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ի դեմս Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի, հայտնվում էր բարդ, գրեթե անլուծելի երկընտրանքի առջև: Երբ ազգը ցնցվում էր՝ փորձելով համախմբել իր թույլ ու կոտորակված ուժերը, իսկ հայ հոգևորականության ներկայացուցիչներից շատերը դառնում էին անհավասար ու զոհառատ գոյամարտի մասնակիցը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր հայրերը՝ Կաթողիկոս Մակար Ա Թեղուտցին և Կ. Պոլսի Պատրիարք Խորեն Աշըգյանը, շարունակում էին մնալ մեծագույն քաղաքական ու բարոյական պատասխանատվության բեռի տակ: Դա հարկադրում էր նրանց՝ պահպանել իրենց պաշտոնական հարաբերությունները ցարական ու սուլթանական իշխանությունների հետ: Ու քանի որ կաթողիկոսը կամ պատրիարքը նման պայմաններում ակնհայտորեն չէին կարող բացահայտ և անթաքույց աջակցություն հայտնել նոր միայն պատմական ասպարեզ իջնող հայ ազգային կուսակցություններին, անխուսափելի էր դառնում փոխադարձ քննադատության ու պայքարի ծավալումը ազգի հին ու նոր քաղաքական առաջնորդների՝ Եկեղեցու և կուսակցությունների միջև: Նման մրցակցությունը հաճախ անցնում էր բոլոր թույլատրելի սահմանները՝ հանգեցնելով անգամ բացահայտ դիմակայության և առանձին ընդհարումների:

Այդ հեղձուկ մթնոլորտից ծնունդ առան, իսկ հետագայում էլ՝ կուսակցական ու գիտական գրականության մեջ արմատավորվեցին Կ. Պոլսի հայոց Պատրիարք Խորեն Աշըգյանի անուղղելի թրքասիրության, իսկ Մակար Ա Կաթողիկոսի՝ ցարական իշխանությունների կամքի արտահայտիչը լինելու մասին թյուր պատկերացումները: Սակայն քաղաքական սուր և անզիջում պայքարի արդյունքը հանդիսացող նման գնահատականները ժամանակի ընթացքում, դեպքերն ու դեմքերը պատմության գիրկն անցնելուն զուգընթաց, սկսեցին բացահայտել իրենց միակողմանիությունը՝ հակասության մեջ մտնելով գիտական շրջանառության մեջ դրվող արխիվային փաստաթղթերի, իրադարձություններին մասնակից գործիչների հիշողությունների և այլ վկայությունների հետ:

Ներկայումս, հայոց պատմությունն իր ամբողջականության մեջ քննելու և պատմական մոտեցման (իստորիզմի) սկզբունքը անվերապահորեն պահպանելու անհրաժեշտությունը, հրամայաբար թելադրում է պատմաբանների նոր սերնդին՝ միմյանցից սահմանազատել դեպքերի ու դեմքերի ընթացիկ-քաղաքական ու գիտական գնահատականները՝ ընթերցողին ներկայացնելով մեր ոչ վաղ անցյալի պատմության առարկայական շարադրանքը: Այդ տեսանկյունից, ներկայումս ավելի քան ակնհայտ է դառնում, որ, գտնվելով

օրեցօր ծավալվող հայ ազատամարտի և այն իր խանձարուրի մեջ խեղդելու գործում Հայաստանյայց Եկեղեցու բարձրագույն ղեկավարությանը մասնակից դարձնելու ուղղությամբ՝ սուլթանական ու ցարական կառավարությունների շարունակական փորձերի միջև ու հարվածներ ընդունելով թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից, օրվա պատրիարքն ու կաթողիկոսը մի կողմից մեծ համառությամբ ու հետևողականորեն պաշտպանում էին Եկեղեցու ու ժողովրդի իրավունքները, բայց միաժամանակ՝ իրենց կեցվածքներն ու պահանջներն օրինական հողի վրա պահելու համար սահմանազատվում էին ազգային կուսակցություններից:

Այս պայմաններում նրանք ստիպված էին մի կողմից՝ խնդրագրերի ու բողոքների միջոցով անընդհատ բախել սուլթանական կառավարության ու ցարական իշխանությունների դռները, դիմելով անգամ, պատրիարքի պարագայում, հրաժարականների մարտավարությանը, իսկ Սուրբ Էջմիածնի պարագայում՝ Մայր Աթոռը Թուրքիա տեղափոխելու մասին սպառնալիքներին: Բայց դրան զուգահեռ, կաթողիկոսը և մանավանդ՝ պատրիարքը, փորձում էին որոշ չափով զսպել արևմտահայերի ինքնաբուխ բողոքի և արևելահայերի՝ կամավորական շարժում սկսելու ու արևմտահայ եղբայրներին օգնության հասնելու ձգտումները: Սակայն նման «զսպիչ» քայլերի խորքային վերլուծությունը ցույց է տալիս, որ իրականում հոգևոր այս առաջնորդներից և ո՛չ մեկը ամենևին էլ սեփական ժողովրդի ազատության և ինքնիշխանության հակառակորդը չէր:

1889-1891 թվականների ընթացքում նման դերակատարություն ստանձնելու պարտադրանքի տակ էր հայտնվել առաջին հերթին Կոստանդնուպոլսի Պատրիարք Խորեն Աշըգյանը: Դրա առաջին՝ ակնառու վկայությունն էր 1889 թվականի փետրվարի 12-ից մինչև նույն տարվա մայիսի կեսերը տևած՝ Եղիշե վարդապետ Դուրյանի առաքելության կազմակերպումը՝ Եվրոպայում գործող կազմակերպությունների և լույս տեսնող հայկական թերթերի ծավալած հակասուլթանական քարոզարշավը մեղմելու նպատակով: Կանգնելով իր հասցեին՝ եվրոպական ազատ երկրներում հրատարակվող հայկական թերթերի ծավալած պատասխան քարոզարշավում հնչող ամենադաժան որակումների փաստի առաջ, Խորեն Պատրիարքն ամենևին էլ թշնամությամբ չէր լցվել հայ ազատամարտի ղեկավարների հանդեպ: Դրա վկայությունն է այն իրողությունը, որ երբ ազատ Եվրոպայում հրատարակվող հայկական թերթերը՝ «Արմենիան», «Հայաստանը» և մյուսները, պահանջում էին իրականացնել Բեռլինի կոնգրեսի որոշումները և բարենորոգումներ սկսել Արևմտյան Հայաստանում, իսկ Խորեն Պատրիարք Աշըգյանի քաղաքականությունը որակում էին իբրև սուլթանի կամքի ու ցանկությունների սպասարկում, նույն ինքը՝ Խորեն Պատրիարքը պաշտպանում և ընթացք էր տալիս Եկեղեցական համագումար ժողովին և նրա 1889 թ. դեկտեմբերի 11-ով թվագրված ու բավականին խիստ պահանջներ պարունակող հիշատակագիրը 1890 թ. փետրվարի 13/25/-ին հանձնում էր մեծ եպարքոսին: Այդ հիշատակագրի մեջ փաստորեն բանաձևված էին այն նույն պահանջները, հանուն որոնց՝ Եվրոպայում լույս տեսնող հայկական թերթերը «դատափետում» էին պատրիարքին: Փաստաթուղթը պահանջում էր, որպեսզի «1. Հայոց ազգի հոգևորականաց

առանձնաշնորհմունք վերածուին իրենց նախնական վիճակին եւ պահուին անվթար: 2. Անյապաղ գործադրուին վարչական բարենորոգմունք ի հայաբնակ գաւառս»[1]:

Արտաքուստ թվում է, որ կա՛մ պատրիարքը սոսկ խուսանավում էր «երկու կրակների» արանքում, կա՛մ էլ ուղղակի նրա հասցեին հնչող որակումներն էին սխալ ու անհիմն: Իսկ որ տեղի ունեցողն ամենևին էլ «դիվանագիտական» խաղ չէր՝ ցույց տվեցին հետագա իրադարձությունները, մասնավորապես՝ 1890 թ. հունիսի 6-ին Կարինում Սանասարյան վարժարանի, ինչպես նաև հայոց եկեղեցու խուզարկությունը և այդ բարբարոսական քայլին հետևած՝ 1890 թ. հունիսի 8-ի արյունալի ընդհարումը:

Հատկանշական է այն փաստը, որ կարնեցիների համբերության բաժակը լցրած և ի վերջո «Կարնո առաջին դեպքի» պատճառը դարձած հիմնական ազդակը ոչ թե Սանասարյան վարժարանում, այլ հենց եկեղեցու ներսում տեղի ունեցած խուզարկությունն էր: Դարավոր սրբության ոտնահարումը ավանդապահ կարնեցիները համարում էին այնպիսի վիրավորանք, որին անհրաժեշտ էր պատասխան տալ՝ չխուսափելով ոչ մի միջոցից. «Ժամը պղծուած է, կրկնում էին անընդհատ, մեր աղօթքը ընդունելի չի լինի, մինչեւ որ չսրբագործենք. կամ պէտք է քանդել՝ նոր ժամ շինել, կամ պէտք է նորից օծել. կամ պետք է մեր արիւնովը մաքրել»[2]:

Կարնո առաջնորդ Գևորգ վարդապետ Ութուճյանի բոլոր փորձերը՝ ցրել եկեղեցու բակում հավաքված ժողովրդին, իզուր անցան: 1890 թ. հունիսի 8-ին տեղի ունեցավ արյունալի ընդհարում, որը լցրեց նաև Խորեն Պատրիարքի համբերության բաժակը: Նա սկսեց ուժգին կերպով բողոքել անմեղ մարդկանց խուզարկելու, եկեղեցին պղծելու և ապա ժողովրդին սվինահարելու փաստերի դեմ՝ պահանջելով հանդիպում անձամբ սուլթանի հետ: Իր պահանջին վերջնագրի տեսք տալու համար Խորեն Պատրիարք Աշըգյանը սպառնաց հրաժարական ներկայացնել պատրիարքի պաշտոնից: Միաժամանակ պատրիարքը դիմադրում էր նաև սուլթանական կառավարության կողմից ձեռնարկվող ճնշումներին, մասնավորապես՝ երկրի ներսում գրաքննությունն ուժեղացնելու և Կարնո ընդհարման մասին ստահոդ տեղեկություններ տարածելու քաղաքականությանը: Ուստի երբ ասպարեզում հայտնվեց արտասահմանում գտնվող թուրքական դեսպանատներին ուղղված Թ. Դռան շրջաբերականը՝ Կարնո դեպքի կապակցությամբ[3], ուր շարադրված էր տեղի ունեցած ընդհարման թուրքական պաշտոնական վարկածը, հենց Գում-Գափուի ցույցի նախորդ օրը՝ 1890 թ. հուլիսի 14-ին, Խորեն Պատրիարքն Ամենայն Հայոց Մակար Ա Կաթողիկոսին ուղղած իր թիվ 628 ընդարձակ հաշվետվության մեջ գրում էր. «Վեհափառ Տէր, այս շրջաբերական գրոյց գլխովին հակառակ է ճշմարտութեան, և այնպէս իմն կամի ցուցանել եթէ հայք զհայս սպանին և վիրաւորեցին...»[4]: Ներկայացնելով Կարնո ընդհարման իրական պատմությունը, Խորեն Պատրիարքը նշում էր. «... ոչ հայք զհայս սպանին, որպէս

---

[1] Եկեղեցական համագումար ժողովի յիշատակագիրը, «Արմենիա» լրագիր, Մարսել, 29 մարտի 1890 թ., թիւ 63, էջ 3:

[2] Կարնոյ առաջին դէպքը (Օհրամ Ղազարեանի յուշերը). «Դիվան Հ. Յ. Դաշնակցութեան», հատ. առաջին, էջ 7:

[3] Տե՛ս Թ. Դրան հանած շրջաբերական-ծանուցագիրը Էրզրումի դէպքին համար, «Արմենիա» լրագիր, Մարսել, 1890, 19 յուլիսի, թիվ 94, էջ 1:

[4] ՀՀ Պատմության պետական կենտրոնական արխիվ (ՊԿՊԱ), ф. 56, ց. 1, գ. 29, թ. 15:

ի շրջաբերականի Բարձրագոյն Դրան տեսանի, այլ զօրական գունդն եհար և սպան զանմեղ մարդիկն ի հայոց...»[5]:

Աղերսելով Մակար Ա Կաթողիկոսին՝ աջակցել իրեն ճշմարտությունը վերհանելու և արևմտահայության արդար պահանջներին տեր կանգնելու հարցում, Խորեն Պատրիարքը հիշեցնում էր Վեհափառ Հայրապետի պարտականությունը ողջ ազգի հանդեպ. «Առ Ձեզ դիմեմ, Վեհափառ Տէր, ի դարման վիճակի ժողովրդեանս, որ Ձեզ աւանդ յԱստուծոյ հաւատացեալ»[6]:

Սակայն դեպքերը զարգանում էին կայծակնային արագությամբ, և ինչպես «Արմենիայի» թղթակիցն էր վկայում՝ «Ժողովուրդը կը պահանջէ որ Պատրիարքն առանց այլ եւս սպասելու հրաժարականը տայ, քաշուի, որպէսզի խնդիրը բացուի ուժով. իսկ Պատրիարքը որոշած է, որ մի քանի օր եւս սպասէ...»[7]:

Եվ հենց այդ «մի քանի օրվա» ընթացքում էր, որ 1890 թ. հուլիսի 15-ին տեղի ունեցավ Գում-Գափուի հայտնի ցույցը, երբ հնչակյաններն ատրճանակով սպառնալով պատրիարքին, հարկադրեցին նրան կառք նստել՝ սուլթանի պալատ գնալու և ցուցարարների «Մեր պահանջքը» ներկայացնելու համար: Մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, Խորեն Պատրիարքն ինքը նախօրեին ուժգնորեն բողոքել էր Բ. Դրան պաշտոնյաներին՝ պահանջելով հանդիպում անձամբ սուլթանի հետ: Այսպիսով, տեղի էր ունենում Խորեն Պատրիարքի պահանջի «կատարումը» նրան ծեծ ու ջարդի ենթարկելու և հարկադրաբար կառք նստեցնելու միջոցով, որը հանգեցնում էր նոր ընդհարման և նոր զոհերի: Ու երբ վրա էր հասնում սուլթանի թիկնապահ Դերվիշ փաշան՝ Խորեն Պատրիարքի որպիսությունը հարցնելու և նրա դեմ գործադրված բռնության հեղինակներին պարզելու համար, վերջինս պաշտպանության տակ առնելով իրեն ատրճանակով սպառնալով կառք նստեցրած հնչակյան Հարություն Ճանկուլյանին, հայտնում էր, որ կյանքով նրան է պարտական:

Այդ պատճառով ամենևին էլ հիմնազուրկ չէին Հովհաննես քահանա Մկրյանի՝ Էջմիածին՝ Արիստակես եպիսկոպոս Սեդրակյանին ուղարկած նամակում արված դառը խոստովանությունները. «...մեր ողորմելի ժողովուրդը «իշոյն չի հասնելով փալանը կը թեթէ»: Փոխանակ այդ ամբոխով երթալու պալատան առջեւ գանգատելու, իր խեղճ պատրիարքին վրայ կը յարձակի սուսերով եւ բրովք եւ Ազգային վարչութիւնը ձեռնաթափ կ'ընէ. ի՞նչ ընենք, ինչ ընենք, Աստուած ողորմի մեզ»[8]:

Դարերով հայության ֆիզիկական գոյության ու հոգևոր մշակութային դիմագծի համար մարտնչած Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր հայրերը սեփական ժողովրդի ազատության հակառակորդները չէին: Նրանց առջև ծառացած դաժան երկընտրանքն իրականում ոչ թե հայ ազատամարտիկների ու սուլթանական կառավարության միջև ընտրություն կատարելու խնդիրն էր, այլ արևմտահայության կողմից Մակար Ա Կաթողիկոսին գրված նամակներից մեկում հստակորեն բանաձևված հետևյալ միտքը. «Այսօր մեր առաջ բացուած կայ երկու ճանապարհ: Տակաւ առ տակաւ մահանալ կամ դիմա-

[5] Նույն տեղում, թ. 17:

[6] Նույն տեղում, թ. 18:

[7] «Արմենիա» լրագիր, Մարսել, 1890, 26 յուլիս, թիվ 96, էջ 2:

[8] Արիստակես եպիսկոպոս Սեդրակեան, Յիշատակարան, ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 175, ց. 1, գ. 8, թ. 185:

դրելով մահանալ: Առաջինը արդեն դարերէ ի վեր նշարունակուի, իսկ վերջինը կատարե-լու համար նիւթական ոյժ չունինք. պիտի պարտաւորինք գոնէ բռով կամ գաւազանով դի-մադրել ու մեռնել: Եւ ահա այդ կորստաբեր յետնանքներու առաջն առնելու համար, Վե-հափառ Տէր, կը դիմենք Ձեզ, որ ընդհանուրիս Հայրն, Տէրն ու պաշտպանն էք, կ'աղեր-սենք փակել մեր առաջ այդ երկու կորստաբեր ճանապարհներն ու բանալ մեզ համար խաղաղութեան ու կենաց ճանապարհ»[9]: Սա էր իրական երկընտրանքը և նրանից բխող այն փափագը, որով դիմում էր արևմտահայությունն իր հոգևոր հորը:

Արձանագրելով, որ ստեղծված փակուղային կացության մեջ բացակայում էին նման ցանկությունն իրականություն դարձնելու հնարավորությունները, կարելի է հասկանալ այն ողբերգության մեծությունը, որից ծնունդ էր առնում հուսահատ, անհավասար դիմա-դրության անխուսափելիության գաղափարը: Այդ գաղափարի արտահայտությունն էր անհավասար կռվում լիովին չոչնչանալու համար անհրաժեշտ՝ հայ ազատամարտի ցաք ու ցրիվ ուժերի միության խնդիրը, որի դրոշակակիրը դարձավ Գում-Գափուի ցույցից անմիջապես հետո՝ 1890 թ. հուլիսի երկրորդ կեսի և օգոստոսի ընթացքում Թիֆլիսում իր Հիմնադիր ժողովն էր նախաձեռնած Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը: Վեր-ջինս ամենևին էլ չէր փորձում մի նոր ճակատ բացել հայության համար, այլ առաջադրե-լով «...բոլոր յեղափոխական ոյժերի միութեան և դաշնակցութեան...»[10] խնդիրը, ձգտում էր մտնել «... այն կռուի մէջ, որ սկսել է ինքը՝ ժողովուրդը տաճկաց կառավարութեան դէմ...»[11]:

Ուստի պատահական չէ, որ այս նորաստեղծ կազմակերպությունը սկզբնական շրջա-նում ցանկություն էր հայտնում բավարարվել անգամ 1878 թ. Պատրիարք Ներսես Վար-ժապետյանի կողմից Բեռլինի կոնգրեսին ներկայացված՝ բարեփոխումների համեստ ծրագրով[12], «... եթէ Սուլթանը իւր բարի կամքով մտցնի տաճկական Հայաստանում Ներ-սես Պատրիարքի ծրագրում պահանջուած բարենորոգութիւնները...»[13]: Այսպիսով, մեկ-նակետը, որից սկիզբ էին առնում Կ. Պոլսի հաջորդական պատրիարքների, այդ թվում և խորեն Պատրիարք Աշըգյանի պահանջները և Հ. Յ. Դաշնակցության որդեգրած հեղա-փոխական պայքարը, փաստորեն նույնն էր: Իսկ դա նշանակում էր, որ որքան էլ նույն նպատակի համար տարբեր մեթոդներով պայքարողները սկզբնական շրջանում բաժան-վեցին իրարից, ի վերջո նրանց ճանապարհները խաչվելու և միավորվելու էին իրար՝ ի խնդիր սեփական ժողովրդի գոյապայքարի:

Նորաստեղծ Հայ Յեղափոխականների Դաշնակցությունը հենց իր ձևավորման պահից դրսևորեց Ս. Էջմիածնից ունեցած ակնկալիքները: Արդեն 1890-ի սեպտեմբերի 30-ին կա-յացած ավանդական մյուռոնօրհնության արարողությունը վերածվեց շուրջ երկու օր տևած յուրահատուկ ցույցի, երբ ցարական զինվորական նվագախմբի հնչեցրած «Տեր պահյա զկայսր» օրհներգին հետևող կեցցեների միջից լսվում էին նաև «Անկցի Տաճկաս-

---

[9] Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 236, վավ. 48, 1890 թ., թ. 1:

[10] Դիվան Հ. Յ. Դաշնակցութեան, հատ. I, էջ 88:

[11] Նոյն տեղում:

[12] Տե՛ս Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանեան Հայաստանի, Կ. Պոլիս, տպագր. Արամեան, 1878:

[13] Դրօշակ, 1891, թիվ 2, էջ 3:

տան, օգնեցեք հայության» կարգախոսները, որոնք խիստ հուզել էին հիվանդ և ուժասպառ Մակար Կաթողիկոսին:

Անդրկովկասի երիտասարդությանը համակած շարժումը անճկատ չէր մնացել կյանքի մեծ փորձ ունեցող Հայոց Հայրապետի համար: Մակար Կաթողիկոսը տեղյակ էր նաև այն երկակի պահվածքին, որը որդեգրել էր Անդրկովկասի ցարական վարչությունը հայկական շարժման հանդեպ: Նա տեսնում էր, թե ինչպես են հայկական շարժման նկատմամբ ցարական իշխանությունների սկզբնական շրջանի համեմատաբար «անտարբեր» կեցվածքները աստիճանաբար վերածվում Անդրկովկասի հայության շրջանում սկիզբ առնող կամավորական շարժումը զսպելուն ուղղված հետևողական քայլերի:

Անթաքույց ճնշումներն ավելի ուժեղացան 1890-ի աշնանը՝ Սարգիս Կուկունյանի ձեռնարկած արշավանքից հետո, իսկ 1891-ի սկզբներին ցարական վարչության «կանխարգելիչ» քայլերն ուղղվեցին նաև Հայաստանյայց Եկեղեցու սպասավորների դեմ: Ցարական վարչությունը սկսեց մեղադրել Կովկասում բնակվող հայ հոգևորականներին՝ արևմտահայերի շարժմանն ակտիվորեն մասնակցելու մեջ: 1891 թ. մարտի 16-ին կայսր Ալեքսանդր III-ի հավանությանն արժանացած՝ «Հայ-Գրիգորյան հոգևորականների հանդեպ վարչական կարգով պատժիչ միջոցառումների կիրառման կանոնները» նախատեսում էին իշխանության հանձնարարականների կատարումից խուսափող և «հակահասարակական կազմակերպություններին» անդամակցող հայ հոգևորականներին, առաջին անգամ՝ մեկուսացնել վանքերից որևէ մեկում եկեղեցական իշխանության և տեղական ոստիկանության վերահսկողության տակ: Իշխանության պահանջները երկրորդ անգամ անտեսելու պարագայում խախտողները ենթակա էին աքսորի՝ Կովկասյան երկրամասի կամ Ռուսաստանի այլ վայրեր[14]:

Մակար Ա Կաթողիկոսի մահվանից ուղիղ մեկ ամիս առաջ հաստատված այդ «Կանոնները» դարձան Վեհափառի համբերության բաժակը լցնող վերջին կաթիլը: Նրա մեջ արթնացավ ու պոռթկաց 19-րդ դարի Հայոց Հայրապետների՝ ցարական վարչության դեմ ուղղված ընդդիմության ոգին: Մակար Կաթողիկոս Թեղուտցին վերհիշեց իր մեծ նախորդի և ուսուցչի՝ Ներսես Կաթողիկոս Աշտարակեցու պատգամները, և ժամանակակիցների համար ակնհայտ դարձավ, թե որքան կեղծ էին նրան «ցարընտիր» որակումը տված բոլոր հակառակորդների նախորդ՝ մեծ ու փոքր հերյուրանքները: Իր մահվանից ընդամենը երկու օր առաջ, հաղթահարելով անտանելի ցավն ու վիշտը, Մակար Ա Կաթողիկոսը հասցրեց բացասական պատասխան ուղարկել Սանկտ-Պետերբուրգ՝ հայտնելով իր հոգևոր եղբայրներին, որ. «Այլ ևս թող մեռանիմ զի այս գիրն ստորագրեցի, որ հինգ տարու խղճահարութեանս սփոփիչն եղաւ»[15]: Վեհափառը մերժում էր Ռուսաստանում բնակվող հայ հոգևորականության հասցեին հնչող ամբաստանությունները՝ Թուրքիայի հայերի քաղաքական շարժմանը մասնակցելու վերաբերյալ՝ մատնանշելով, որ «...գէթ ցայսօր ժամանակի չեմք նշմարեալ մեք, իսկ արտայայտութիւն ինչ պարզ և անմեղ կարեկցութեան առ թշուառ վիճակ համարիւն և համակրօն եղբարց իւրեանց արժանի աքսորման համարել,

[14] «Կանոնների» ավելի մանրամասն վերլուծությունը տե՛ս Тунян В. Г., Эчмиадзинский престол XIX –нач. XX вв., Ереван. ГИУА. 2001, с. 127.

[15] Վերջին ատորք Մակար Ա կաթողիկոսի Ամենայն Հայոց. «Արմենիա» լրագիր. 1891, 4 յուլիս, թիվ 87. էջ 3:

զայդ ևս մարդասէր սկզբանց և ուղղութեան օրհնաբանեալ պետութեան հակառակս վարկանիմք մենք»[16]: Բացահայտորեն ընդդիմանալով Ներքին գործերի նախարարության կողմից հարուցված և ցարի հավանությանն արժանացած պարտադրանքների դեմ կաթողիկոսը գրում էր, որ «անհնարին է մեզ հաւանիլ... ընդ բանտարգելութիւն եկեղեցականաց Հայոց ի վանօրայս առանց նախընթացաբար գիտութեան Հոգեւոր ծայրագոյն իշխանութեան և ընդ աքսորումն նոցին ի սահմանացն Կովկասու ըստ նկատողութեան քաղաքական իշխանութեան»[17]:

Ժամանակակիցները վկայում էին, որ մահվան մահճին գամված ծերունազարդ Հայրապետը ոչ միայն մերժեց հայ հոգևորականության հասցեին հնչող մեղադրանքները, այլև ուղղակի կերպով մեղադրեց ցարական իշխանություններին՝ 1890 թ. հունիսի 8-ի Կարնո արյունալի ընդհարումը սադրելու մեջ. «... դուք ինքներդ յառաջ բերիք Կարինում վերջին յուզումը, գրգռելով այն կողմի երիտասարդութիւնը սահմանն անցնիլ և այժմ մի կողմից գաղտնի ոչնչացնում էք նրանց և միւս կողմից զայրացնում էք Տաճիկները Հայերի դէմ որ պղտոր ջրի մէջ ձուկ որսաք: Աստուա՛ծ իմ. բաւ ապրեցայ. թող չտեսնեն այս աչքեր այն աղէտները զորս սրանք ուզում են բերել Հայի գլխին. մենք հովիւքս մեղաք, իսկ ոչխարն զի՞ արար»[18]:

Հիրավի, մարգարեանալով՝ Մակար Կաթողիկոսն իր մահվանից առաջ կանխատեսում էր հայ ժողովրդի մոտալուտ ցեղասպանությունը և հավաքելով վերջին ուժերը՝ երդումով պարտավորեցնում էր միաբանությանը. «Երբեք չխոնարհիք այս հրամանների առաջ. ո՛չ զիջանելով և ո՛չ երկիւղ կրելով. մեր փառք՝ եկեղեցւոյ անկախութիւն և ազգի կենդանութիւնն է, իսկ երկիւղ՝ մեր ազգային պատմութեան դատակնիքը...»[19]:

Միաժամանակ, վեհափառը հանձնարարում էր իր հոգևոր եղբայրներին՝ հորդորել ազգային-ազատագրական շարժման գլուխ կանգնած երիտասարդներին, որպեսզի իրենց հույսերը դնեն միայն սեփական ուժերի վրա, ոչ մի օտար պետության չվստահեն և հավատարիմ մնան նախնյաց հավատին, քանզի «... քաղաքականութիւնը գութ չունի, խիղճ չունի, արդարութիւն, իրաւունք չճանաչէ, հետևաբար մեր Եկեղեցւով, մեր խոհեմութեամբ պիտի գտնենք մեր կենդանութիւն. վասն որոյ խրատեցէք երիտասարդութեան ամենակատարեալ գաղտնապահութեամբ և համերաշխութեամբ գործել, հանդարտ, այլ յարատեւ գնալ, աշխատիլ գիտութիւն տարածելու ժողովրդեան ամեն խաւերին մէջ և հարստութիւն դիզելու. աշխարհի ամենաառաջին տէրը դրամն է»[20]: Այսպիսով, զարգացնելով ժամանակի լավագույն մտածողների գաղափարական ավանդները, Մակար Ա Կաթողիկոսը նույնպես բանաձևում էր ծանր կորուստներից հետո, հայ ազատամարտին դեպի փրկարար նավահանգիստ առաջնորդած՝ ինքնօգնության, հույսը սեփական ուժերի վրա դնելու գաղափարը:

---

[16] Պատճէն բողոքագրի հանգուցեալ Հայրապետին առ տէրութիւնն Ռուսաց, «Արմենիա» լրագիր, 1891, 4 յուլիսի, թիվ 87, էջ 3:

[17] Նույն տեղում:

[18] Վերջին ատյան Մակար Ա Կաթողիկոսի Ամենայն Հայոց, «Արմենիա» լրագիր, 1891, 8 յուլիս, թիվ 88, էջ 2:

[19] Նույն տեղում:

[20] Նույն տեղում:

Միաժամանակ, Մակար Ա կաթողիկոսը գիտակցում էր, որ հայկական հարցի շուրջ մեծ տերությունների կողմից ձեռնարկվող խաղերն արևմտահայությանը տանում են դեպի կործանում, ուստի եթե «... Տաճկաստանի այս բաժանումը տեղի ունեցած ատեն մեր հայրենիքը մեզ բաժին չպիտի ընկնի...»[21], անհրաժեշտ է հաշտվել սուլթանի հետ՝ նրան համոզելով, սիրաշահելով ու վերականգնելով նախկինում եղած փոխադարձ վստահությունը: Անշուշտ, անիրականանալի էր Մակար Ա կաթողիկոսի՝ թուրքական կառավարության հետ լեզու գտնելու խորհուրդը, սակայն նրա այդ ցանկության մեջ հարազատորեն արտացոլվում էր այն իրականության ողջ փակուղայնության խոր գիտակցումը, որում հայտնվել էր արևմտահայությունը XIX դարի 90-ական թվականներին: Իդեալի և իրականության ողբերգական հակաթեզը ժամանակավորապես փակել էր ինչպես իդեալը՝ իրականության դարձնելու, այնպես էլ նրանից հրաժարվելու բոլոր ուղիները:

Եվ հայ ազատամարտին մնացել էր միայն հետագայում մեծ բանաստեղծի մատնանշած դառնաղետ ճանապարհը, որն առաջնորդում էր մի ողջ ժողովրդի զավակներին՝ «...նահատակության արյունով լվանալու և սրբելու ստրկության արտասուքը...»[22]:

Այսպիսով, հայ ազգային կուսակցությունների ձևավորման դարաշրջանում՝ 1880-ական թվականների երկրորդ կեսին և 1890-ական թվականների սկզբներին, կուսակցություններ - Հայաստանյայց Եկեղեցի հարաբերություններում տեղ գտած առանձին անհամաձայնությունները, պայքարն ու փոխադարձ մեղադրանքներն իրականում հանդիսանում էին պատմաքաղաքական ընդհանուր գործընթացի մակերեսային՝ երևացող մասը, որի խորքում ընկած էր ազգին ստեղծված վիճակից դուրս բերելու՝ կողմերի հավասարապես անեղծ ու անկեղծ ձգտումը և մյուս կողմից՝ ազգապահպանման ճին՝ հոգևոր-մշակութային (Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի) և նոր՝ եվրոպամետ (ազգային կուսակցություններ) մոդելների հակասությունը:

Հոգևոր Հայրենիքի գաղափարը դավանող Եկեղեցու համար խորթ ու օտար էր XIX դարում Արևմտյան եվրոպայում, իսկ XX դարում՝ նաև ողջ Արևելքում իր հաղթարշավն սկսած ազգայնականության սկզբունքը՝ ազգ-պետություն դառնալու կամ պատմության թատերաբեմից իջնելու դաժան երկընտրանքը: Միաժամանակ, շնորհիվ իր կուտակած դարավոր իմաստության, Հայաստանյայց Եկեղեցու առավել հեռատես առաջնորդները գիտակցում էին, որ ժամանակի ծնունդը հանդիսացող այդ նոր միտումը հայության առջև բացում է համազգային Գողգոթայի ճանապարհը: Դա հարկադրում էր նրանց՝ մի կողմից զգուշության ու գաղտնապահության խրատներ ուղղել երիտասարդ սերնդին, իսկ մյուս կողմից՝ փրկության սեփական իդեալը փնտրել հայության առջև անդառնալիորեն իր դռները փակող անցյալի գրկում:

Անցյալի ու ներկայի ճամփաբաժանին՝ 1889-1891 թվականներին, դեմ-դիմաց կանգնած զույգ սերունդների այդ բանավեճը որպես երկու փակուղիների վրա հաստատված փակուղային երկընտրանք՝ պարզ հայելու նման արտացոլում էր հայ ժողովրդին բաժին ընկած ողբերգության ողջ խորությունը՝ հայրենի հողի նշանակալի մասի մոտալուտ կորստյան անդարմանելի տագնապն ու վիշտը:

---

[21] Նույն տեղում:

[22] Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու. 4 հատորով, հտ. 4, Երևան, 1969, էջ 181-182:

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔԱՏԻԿՅԱՆ*
*Պատմական գիտությունների թեկնածու*

# ԽԱՆԱՍՈՐԻ ՀԵՐՈՍ ՔԱՀԱՆԱՆ

1894-96 թթ. համիդյան ջարդերից հետո ստեղծվեց ազատագրական պայքարի վայրէջքի վտանգ և կարևորվում էին ժողովրդի ոգին բարձրացնող հերոսական քայլերը, որոնցով էր պայմանավորված և Խանասորի արշավանքը:

Մեծ հայդուկը՝ Նիկոլ Դումանը, հենց այս մտահոգությունները նկատի ուներ, որ պնդում էր համարձակ գործողության անհրաժեշտության մասին: Արշավանքից առաջ այս մասին ասում է. «Տղերք ջան, մենք կընկնենք ազատության սրբազան կռվում և պետք է, որ մենք մեր արյունով բաց անենք լեռների ու ձորերի միջով մի կարմիր ճանապարհ մեզանից հետո եկողների համար: Այո՛, մեր արյունով կարմիր ճանապարհ... Մենք պետք է կոխ տանք փշերն ու տատասկները և մեր կարմիր արյունով ցողենք ապագայում. մեզանից հետո եկողների ճանապարհը ու մեր ոսկորները պահապան կանգնեցնենք, որպեսզի մեզանից հետո եկողները երբ սրբազան ու անհավասար կռվում ջարդեն իրենց զենքերը, օգտվեն մեր ոսկորներից, զենքի փոխարեն մեր մարմնի ոսկորներով կռվեն դարերով մեր արյունը ծծող գազանների դեմ: Դեհ, առաջ, տղերք ջան, դեպի արյունի ու զուլումի երկիրը, որտեղից հառաչանքի ու տանջանքի ձայներ են գալիս դեպի մեզ... Հառաջ, տղերք ջան, սուրբ է մեր գործը և ազատության սրբազան դրոշակն է մեր ձեռքին փողփողում...»:

Նպատակը պարզ էր՝ անձնազոհությամբ հարթել ապագա ազատագրական պայքարի ճանապարհը, արթնացնել արևմտահայությանը, նախապատրաստել նրան համընդհանուր պայքարի, որի սկիզբը դրել էր «Դեպի Երկիր» շարժումը:

Նիկոլ Դումանի մտքի հաստատումն է Բիձայի՝ Ֆիդայի քահանա Տեր Գրիգորի խոսքը. «Մինչև հիմա մեզ հայդուկ, ավազակ էին կոչում, իսկ ես անվանում եմ ձեզ հայ բանակի անդրանիկը: Ձեր կատարած ուխտը, ձեր տված երդումը և բոլոր մյուս բաներն առաջին անգամ է, որ պատահում է մեր ժողովրդի պատմության մեջ: Թե ինչ ենք ուզում մենք, ուրիշ առիթներով բացատրված է եղել ձեզ... Ձեր ուշադրությունը հրավիրում եմ այն բանի վրա, որ այսօր առաջին անգամն է, որ բացվում է ձեր աչքի առջև Դաշնակցական խաչը:

Նայեցեք արևմուտք, դուք տեսնում եք այնտեղ ավերակ սրբություններ և եկեղեցիներ, դուք տեսնում եք բռնի իսլամացած ձեր եղբայրներին: Նրանք էլ տեսնում են ձեզ ու լսում զենքի շաչյունը: Քանդված քաղաքներն էլ, ամոթալից կերպով պղծված կույսերն էլ, ամայացած Հայրենիքն էլ նայում են ձեզ, ողջունում են ձեզ լի հույսերով, և նոր եռանդով ապագայի համար: Դուք կանգնած եք այնտեղ, ուր ձեր նախապապերի ոսկորներն են թաղված՝ անցյալ ժամանակվա հերոսների այսօրվա ընկած ձեր եղբայրները և ապագա սերունդներն սպասում են ձեզանից, որ դուք նրանց հույսը պսակեք: Անմեղ, անօգ զառը զարհուրելի վիշապի ճանկերից փրկելը քրիստոնյա, հզոր Եվրոպայի սրբազան պարտականությունն էր: Նա հայտարարեց և խոստացավ մեզ փրկել, բայց երեսի վրա ձգեց մեզ և Վիշապին բաց թողեց մեզ վրա, որ մեզ ոտնակոխ անի: Հայրենիքի տխուր կացությունը և մի սուրբ պարտականություն կանչել է ձեզ և թշնամու դուռը բերել: Դուք քիչ եք հզոր ուժի դեմ, հոգ չէ: Ձեր սակավությունը թշնամուն սարսափելի կլինի, որովհետև դուք սուրբ գաղափարով եք զինված»:

# Ո՞Վ ԷՐ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԸ



Խանասորի հերոսը և ֆիդայի քահանա Տեր Գրիգորը, նույն ինքը՝ «Բիձան», ռուսական ժանդարմերիայի կնքած՝ «տեռորիստ քահանա», ինչպես նաև՝ «դալի քեշիշ» անվանված Խանասորի արշավանքի դասնապետը:

Գրիգոր Տեր-Ավագյանը ծնվել է 1840 թ. Վայոց Ձորի (Դարալագյազ) Էրդափին, այժմ Եղեգիս գյուղում, քահանա Տեր Ավագի ընտանիքում: Տեր Ավագի հայրը՝ Տեր Աբրահամը, գաղթել էր Սալմաստից ու բնակություն հաստատել նշված գյուղում: Ընտանիքի տոհմական զբաղմունքը եղել է մեղվաբուծությունը: Հաստատվելով Եղեգիսում Տեր Աբրահամը, որ ժամանակի կրթված անձնավորություններից էր, շուտով զգում է գյուղում դպրոց բացելու անհրաժեշտությունը: Նրա ջանքերով Վայոց Ձորում բացվում են մի շարք դպրոցներ, ժողովրդին ներկայացվում է սեփական պատմությունը, մատաղ սերնդին գրաճանաչություն պատգամվում: Տեր Աբրահամի որդիները կրթություն են ստանում Լազարյան, Ներսիսյան, Գևորգյան ճեմարաններում, Մոսկվայի, Պետերբուրգի այլ հաստատություններում և, վերադառնալով հայրենիք՝ ծառայում հարազատ ժողովրդին: Դարալագյազում տիրում էր այն համոզումը, թե Տեր-Ավագյաններին ի վերուստ վերապահված էր կրթված լինելն ու գավառում գիտելիքների տարածումը: Այս մասին է վկայում Տեր-Աբրահամյան Ավագի տապանաքարի արձանագրությունը, որը միաժամանակ հայրենակիցների հարգանքի արտահայտությունն է՝ «Աստ հանգչի առաքինի եւ հանճարեղ Աւագ քահանայ Տէր-Աբրահամեանը...»:

Գնալով պապի և հոր հետքերով՝ Գրիգոր Տեր-Ավագյանը շուտով դառնում է հոգևորական և 1876 թ. Եղեգիս գյուղում հիմնում դպրոց: Բայց այլ ճակատագիր էր սպասվում հայրենաշունչ քահանային: Նա շուտով հայտնվում է հայ ազատագրական պայքարի հորձանուտում, մտնում Հ.Յ.Դ. շարքերը և իր կյանքը նվիրում հարազատ ժողովրդի ազատությանը:

Տեր Գրիգորը մտերիմ հարաբերությունների մեջ է եղել Խրիմյան Հայրիկի, Սեբաստացի Սաքոյի, Նիկոլ Դումանի, Վարդանի, Անդրանիկի, Դրոյի, Խեչոյի՝ Սամսոն Տեր-Պողոսյանի, ազատագրական շարժման այլ նվիրյալների, գրողներ Պ. Պռոշյանի, Րաֆֆու, Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և այլոց հետ: Պռոշյանն իր «Հունոն» վեպում, Ալ. Շիրվանզադեն իր հուշերում հիշատակություններ են թողել «Է» գյուղի քահանայի մասին: Տեր Գրիգորն ունեցել է տասներկու զավակ՝ վեց տղա, վեց աղջիկ: Տղաներից ավագը՝ Ավագը, նշանավոր բժիշկ էր, Համազասպ Համբարձումյանի ուսանողական տարիների մտերիմ ընկերը: Խուսափելով հետապնդումներից՝ նա հաստատվում է Նիժնի Նովգորոդ քաղաքում, որտեղ համընդհանուր սիրո է արժանանում, և նրան անվանում են «Աստծո

ուղարկված բժիշկ»: Տեր Գրիգորի որդիներից չորսը զոհ գնացին 1937-1938 թթ. հաշվեհար-
դարին, որպես դաշնակցականի զավակներ:
Ֆիդայի քահանան, որ հազվադեպ էր լինում տանը, լսելով որդիների պահանջները,
զայրացած ասում է. «Գնացեք, աշխատեք ու պահեք ձեզ: Երջանիկ եղեք, որ գլուխներիդ
տանիք կա, իսկ այնտեղ, Երկրում, անօթևան ու անապաստան հայությունն է դեգերում»:
Տեր Գրիգորի պահվածքը և եկեղեցուն չծառայելու, զենք կրելու հանգամանքը նկատի
ունենալով, նաև Էջմիածինը վտանգի չենթարկելու համար, որովհետև ցարական ժանդար-
մերիան հետապնդում էր զինյալ քահանային, կաթողիկոսը հրամայում է վանք չթողնել Տեր
Գրիգորին, ում գլխի համար սահմանված էր 2000 ռուբլի: Այս արգելքը վերացնում է Խրիմ-
յան Հայրիկը՝ իր կաթողիկոս օծվելու առաջին իսկ օրը հրամայելով յուրաքանչյուր անգամ
համապատասխան ընդունելություն ցույց տալ հերոս քահանային: Ի դեպ, Մկրտիչ Խրիմ-
յանն իր ինքնագրով Տեր Գրիգորին է նվիրել իր լուսանկարը, ձեռնափայտը, խաչը, դարձել
քահանայի որդիներից մեկի՝ Մկրտչի կնքահայրը, որից հետո երեխան կրում է Մկրտիչ
Խրիմյան անունը:

Առաջին աշխարհամարտի տարիներին Տեր Գրիգորն անդամագրվել է կամավորական շարժմանը, եղել է Դրոյի ջոկատում, որովհետև 1915 թ. մայիսի 5-ին Դրոյի ջոկատի խնչոյի հրամանատարությամբ գործող հեծյալներն էին, որ առաջինը մտան Վան և Վասպուրականի հայությանը փրկեցին կոտորածից:

Այնուհետև հերոս քահանան մասնակցում է Զանգեզուրյան հերոսամարտին: Տեր Հայրն անցնում էր գյուղից գյուղ, մարդկանց ոտքի հանում, զինում: Պայքարը դժվարանում էր նրանով, որ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո (1920 թ. ապրիլ) Հայաստանի ընդհանրապես հեղկոմը քայքայիչ գործունեություն էր ծավալում: Հերոս քահանան չէր կարող չնկատել այդ ազգադավությունը, բայց զենքը չէր բարձրացնում հայի վրա, սակայն 1920 թ. աշնանը Տեր Գրիգորի ջոկատը Զանգեզուրից քշում է հեղկոմին: Դարանակալ բոլշևիկներին սակայն հաջողվում է գերել հաղթանակով վերադարձող 17 հերոսներին: Գերվածների մեջ էր նաև հերոս քահանան: Նրանց բոլորին տանում են Շուշիի ուղղությամբ և Լիսագորի մի քարայրում գնդակահարում: Տեր Գրիգորը վիրավորվում է, բայց ցույց է տալիս, թե ինքը ևս սպանված է: Բոլշևիկներն ավարտելով իրենց խրախճանքը, քարերով փակում են քարայրի մուտքը և հեռանում: Ուշաբերված Տեր Գրիգորը մեծ դժվարությամբ դուրս է գալիս քարայրից և հասնում Գորիս, բուժվում ու վերադառնում հայրենի գյուղ:

Զանգեզուրի հերոսամարտն ավարտվեց հաղթանակով: 1921 թ. հունիսի 3-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվեց Հայաստանի կառավարության հայտարարությունը, որով Զանգեզուրը հայտարարվում էր հանրապետության անբաժանելի մասը:

Կարծելով, որ իրավիճակը փոխվել է, Տեր Գրիգորը դուրս է գալիս թաքստոցից, ներկայանում ՉԵԿԱ, որտեղ էլ նրան ձերբակալում են, ապա գնդակահարում:

Ասպրիկ անունով դստեր ջանքերով քահանայի դին հողին է հանձնվում Երևանում: Թոռնուհու՝ Հասմիկի վկայությամբ, Տեր Գրիգորի գերեզմանը մինչև 1957 թ. եղել է Սանքաբեցի Սաքոյի գերեզմանի կողքին, Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում: Դժբախտաբար, հետագայում, պանթեոնի վերակառուցումից հետո, այլ գերեզմանների հետ, հերոս քահանայի գերեզմանը ևս տեղահանվեց ու մոռացության մատնվեց:

## ՇԻՐՎԱՆԶԱԴԵՆ ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻ ՄԱՍԻՆ

«Կանգ ենք առնում լեռների մեջ, մի փափարակի վրա: Իջնում ենք ձիերից՝ մի փոքր հանգստանալու:

Դեմուդեմի կիրճերից դուրս են գալիս երեք ձիավորներ: Անկասկած կազակներ են, որ գալիս են Դիադինից:

Սխալված ենք:

Ձիավորները սրընթաց մոտենում են մեզ և ուժգին թափով քաշելով սանձերը՝ բռնովում են մեր առջև:

-Ողջույն Ձեզ,- լսում եմ մի առնական ձայն, որ սառած օդի մեջ հնչում է ինչպես մետաղ:

Երեքից մեկը պապանի է, մյուսը՝ երիտասարդ, երրորդը՝ ծերունի, ալեխառն մորուքով, կապույտ ակնոցներով, գլխին՝ բաշլըղ, ուսին՝ մաուզեր: Նրա՝ արևից ու լեռնային բուք ու բորանից կիզված դեմքը ծածկված էր խորը ակոսներով: Թվում է, որ մարդը ձուլված է բրոնզից՝ իր ձիու հետ միասին:

Դարալագյազի քահանա Տեր Գրիգորն էր: Նրա ուղեկիցներից մեկը կամավոր էր, իսկ մյուս պապանին՝ նրա որդին, որը նույնպես կամավոր էր: Պապանին հիվանդացել էր: Հայրը տանում էր նրան Իգդիր՝ բժիշկներին ցույց տալու և վշտացած էր, որ ստիպված էր կռվի դաշտը թողնել, թեև ժամանակավոր:

Հաղորդելով մեզ մի քանի հետաքրքրական տեղեկություններ Դ.-ի խմբի մասին, ծերունին մտրակեց ձիուն և չքացավ ձյունի փոշու մեջ» (Քահանայի հիվանդ որդին Կավկազն էր, որին հնարավոր չի եղել փրկել և հիվանդությունից մահացել է: Իսկ Դ.-ի խումբը՝ Դրոյի կամավորական ջոկատն էր - Հ. Ջ.):

*

* *

Փիդայի քահանան այցելում է Մալիշկա գյուղում բնակվող աղջկան: Ցարական ոստիկանությունը տեղեկանալով այդ մասին, շրջապատում է տունը և որոնվող քահանային առաջարկում հանձնվել: Տեր Գրիգորը զինվորական թռռանը հանձնարարում է զրույցով զբաղեցնել ոստիկաններին, իսկ ինքը պատուհանից դուրս գալով բարձրանում է մոտակա բլուրն ու գոռում. «Եկեք, ես այստեղ եմ, եկեք և կալանավորեք»:

Մինչ ոստիկանները միջոցներ են ձեռնարկում, քահանան անհետանում է:

*

* *

Տեր Գրիգորին ձերբակալելու նպատակով Նախիջևան է գալիս մի բարձրաստիճան ոստիկան: Մտերիմները տեղեկանալով այդ մասին, որոշում են քահանային հեռացնել քաղաքից:

Լսելով յուրայիններին, Տեր Գրիգորն այլ մեքիո է կայացնում: Այն պահին, երբ ոսփիկա-
նապետը պետք է ուղևորվեր այն գյուղը, որտեղ գտնվում էր քահանան, առաջարկում է իր
ծառայությունը: Գյուղում չհայտնաբերելով քահանային, ոստիկանախումբը վերադառնում
է Նախիջևան: Հասնելով քաղաք, Տեր Գրիգորը հայտնելով իր ով լինելը, ուղևորության
համար շնորհակալություն է հայտնում և նստելով իրեն սպասող ձիուն, հեռանում:

*

* *

Խանասորի արշավանքը ցնծությամբ ընդունվեց հայության կողմից: Նրա մասնակիցնե-
րի մասին խոսում էին ակնածանքով, փառաբանում էին, կազմակերպում հանդիպումներ:
Հանդիպումներից մեկի ժամանակ, երբ Սեքարեցի Սաքոյին հարցնում են, թե ո՞վ կառանձ-
նացնեք հերոսներից, նա ձեռքը պարզում է Տեր Գրիգորի կողմը և ասում. «Այ, նրան, նա է
ամենաքաջը»:

*

* *

Մի առիթով, երբ հերոս քահանային հարցնում են՝ ի՞նչ է հերոսությունը, պատասխանում
է. «Հերոսը նա է, ով առաջինն է արշավելիս, վերջինը՝ նահանջելիս»:

*(Ալ. Շիրվանզադե, Երկեր, հտ. 5, Երևան, 1988, էջ 490):*

*ՊԱՐԳԵՎ ՎԱՅՈՑՁՈՐԵՑԻ*

# ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ ԳԵՎՈՐԳ Զ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՉՈՐԵՔՉՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՈՒՍԱՆՈՂ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻՆ

Այս հրապարակմամբ մենք նպատակ չունենք ներկայացնելու Երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսի գործունեությունը, թե ծանրագույն մի ժամանակահատվածում ինչպես նա իմաստուն և խորագետ մի քաղաքականությամբ ոչ միայն կարողացավ Մայր Աթոռը պաշտպանել վերահաս արհավիրքից, այլև աստիճանաբար վերականգնել Ս. Էջմիածնի նախկին դիրքը և իրավունքները: Դարեր շարունակ մեր երանելի Հայրապետների փափագն ու երազանքն է եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շուրջ տեսնել հայրենանվեր և եկեղեցանվեր հոգևորականներ, որոնք ըմբռնեին իրենց կատարելիք դերը հանդեպ հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու:

Այդպես էր մտածում նաև Հոգելույս Գևորգ Զ Կաթողիկոսը: «Ինձ,- ասում էր նա,- անհրաժեշտ են բարձրագույն ուսում ստացած, լավ վարք ու բարքի տեր հոգևորականներ, որպեսզի բարձրացնեն Հայ Եկեղեցու հեղինակությունը»:

1951 թվականին Ս. Էջմիածնի նորաբաց Հոգևոր Ճեմարանը տվեց իր առաջին շրջանավարտները, որոնցից ութն արդեն սարկավագի կոչում ունեին: Կաթողիկոսը, չբավարարվելով նրանց՝ Ճեմարանում ստացած կրթությամբ, մտածում էր սարկավագներին ուղարկել արտասահման, այնտեղի աստվածաբանական համալսարաններում ուսումը շարունակելու, որը սակայն զանազան պատճառներով չհաջողվեց, որից հետո ութ սարկավագներիս 1952 թվականի աշնանը ուղարկեց Զագորսկ՝ Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու Հոգևոր Ակադեմիա՝ ռուսերեն սովորելու և կրոնական այլ առարկաների դասախոսություններին ունկնդրելու:

1953 թվականին ութ սարկավագներց հինգը հրաժարվեցին երկրորդ անգամ Ռուսաց Հոգևոր Ակադեմիա վերադառնալ: Մնացինք երեքս: Մենք Հոգևոր Ակադեմիայում սովորելուն զուգընթաց Կաթողիկոսի կարգադրությամբ, որպես ազատ ունկնդիրներ, պետք է շաբաթական երկու անգամ գնայինք Մոսկվա՝ պրոֆեսոր Հովսեփ Կուսիկյանի մոտ հետևելու հայագիտական դասընթացներին: Վեհափառը նամակագրությամբ պարբերաբար կապ էր պահում ուսումնառության մեկնած սաներիս հետ: Ուղարկված նամակներում Լուսահոգու յուրաքանչյուր խոսքն իմաստավորված է, ասում էր այն, ինչ որ պետք էր ասվեր՝ գործը հաջող ընթանալու նպատակով, երբեմն քննադատական խիստ ոճով, բայց հայրական սիրով ու գուրգուրանքով: Այդ նամակների բովանդակությունը շատ տեսակետներից ուսանելի են և այժմեական, առանձնապես երբ խոսքը վերաբերվում է կրոնահայրենասիրական հարցերին, և, բացի դրանից, ուշադրության են արժանի նաև գործնական խորհուրդները, որ մեր ժամանակներում էլ պետք է նկատի առնվեն:

Ներկայացվող նամակներից առաջինն ուղղված է բոլոր սարկավագներին: Այդ փոքրիկ նամակը գրված է սքանչելի հայերենով, ուր Վեհափառն ամփոփ կերպով հայտնում է իր մտածումները, թե ինչպիսին պետք է լինի հայ հոգևորականը. և ինչի՞ համար, և ի՞նչ նպատակներ է հետապնդելու նա, որպեսզի իր տեղն ունենա Հայոց Առաքելական Սուրբ Եկեղեցում:

Վեհափառն իր նամակներն առաքում էր Քաջիկ* սարկավագ Գևորգյանի անունով՝ այսպես (իր սեփական ձեռագրով).

Загорск (Москов. область)
Духовная Академия
Архидиакону Каджику Геворгян.

Երանելին հատուկ համակրություն էր տածում հանդեպ Քաջիկ սարկավագը, վերջինս էլ անկեղծ կերպով սիրում էր Հայրապետին՝ որպես հոգևոր հոր, դաստիարակի, խրատատուի և մարդկային բարեմասնությունները օրավուր ավելացնելու քարոզչի:

Երջանկահիշատակ Գևորգ Զ Կաթողիկոսը չտեսավ իր սիրելի սաներին թեկուզև աբեղայի կոչումով, որն իր փափագն էր:

Վերջին անգամ Վեհափառ Հայրապետին Քաջիկը տեսել է Մոսկվայում, «Մոսկվա» հյուրանոցում: Հրավիրված էր Պատրիարք Ալեքսիյ (Առաջինի) կողմից Ռուսաց Ուղղափառ Եկեղեցու անկախության 500-ամյակը նշելու կապակցությամբ: Վեհափառը նախօրոք Լուսահոգի Պատրիարք Ալեքսիյ Առաջինի դիմապատկերով հատուկ թելերով նվեր գորգ էր գործել տվել, որը պետք է տրվեր Պատրիարքին հանդիսության ընթացքում: Գորգը դեռ Մայր Աթոռում էր: Քաջիկ սարկավագին հանձնարարվեց շտապ կերպով բերել Մոսկվա և հանձնել Կաթողիկոսին: Այդպես էլ արվեց: Որից հետո Քաջիկը պետք է մեկներ Զագորսկ, սակայն Վեհը չթողեց. «Թող մնա մեզ մոտ,- ասաց նա,- օգտակար կլինի»:

Վեհափառը և նրան ուղեկցող Վահան արքեպիսկոպոս Կոստանյանն ապրում էին հյուրանոցի երկու ընդարձակ սենյակներ ունեցող հարկաբաժնում: Քաջիկ սարկավագին մահճակալ էր պատրաստվում ընդունարանին կից նախամուտքում: Մի խոսքով, Քաջիկն իրենց ընկերակցում է վեց օր: Այդ օրերը Քաջիկ սարկավագի համար լինում են երջանիկ օրեր, որ նրա կողմից երբեք չեն մոռացվի:

Գևորգ Զ-ի մեկնելուց առաջ Քաջիկը հրաժեշտ է տալիս Վեհին՝ Ս. Աջն առնելով: Վեհափառը, որ մինչ այդ նստած էր բազկաթոռին, ոտքի է կանգնում, բարի երթ մաղթում ու համբուրում Քաջիկի ճակատը: Վեհի այդպիսի վարմունքից Քաջիկը շատ է հուզվում և արցունքոտ աչքերով դուրս է նետվում սենյակից:

Երանաշնորհ Հոգևոր Հոր թաղմանը Քաջիկ սարկավագը ներկա չի եղել, հիվանդանոցում էր ...: Գևորգ Զ Հայրապետին պարուրող հողը թող թեթև լինի երջանկահիշատակ Հայրապետի շիրմին:

---

* Հոդվածագիրն է (ծնթ. խմբ.)

# ՍԱՐԿԱՎԱԳՆԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԸ

18 Ապրիլի 1952 թ.

Սիրելի սարկաւագներ,

Ստացայ ձեր շնորհաւորական հեռագիրը, գոհ եմ. շնորհաւորում եմ փոխադարձաբար: Մաղթում եմ յարուցեալ Փրկչին, որ վառ պահէ ձեր մէջ ազգային եւ կրօնական ոգին, որով զինուած մեր նախնիքը անձնուիրաբար պայքարել են Ազգի եւ Հայրենիքի ազատութեան եւ անկախութեան, ինչպէս եւ կրօնա-բարոյական վսեմ ու սուրբ գաղափարների համար եւ մարտիրոսացել են. սակայն անմահացել են եւ ցայսօր պահպանել ու անմահացրել են Հայի ֆիզիկական գոյութիւնը: Ազգի ապրելու ճամբան մեր նախնեաց բռնած ուղին է, որով ընթանում են այսօր ի ծագս աշխարհի ցրուած ժողովուրդները, որի համար նաեւ պայքարում է այսօր ողջ մարդկութիւնը: Այդ ուղին ձեր եւ բոլոր հոգեւորականների ուխտի ուղին է. հաւատարիմ մնացէք ձեր ուխտին եւ ընթացէք ձեր նախնեաց շաւղով: Դժուարին է այդ ուղին, սակայն հանգիստ խիղճ կունենաք, գաղափարական կեանքով կապրէք եւ հարգանք ու փառք կը վայելէք:

Ես մխիթարուեցայ եւ հոգու հանգստութիւն ստացայ, երբ հաղորդեցին ինձ պրոֆ. Ց. Կուսիկեանի դրական գնահատականը ձեր եւ ձեր պատրաստութեան մասին եւ նորա ենթադրական կարծիքը ձեր խոստումնալից ապագայի մասին: Յոյս ունիմ, որ շուտով գամ եւ անձամբ տեսնեմ ձեզ ու աւելի մխիթարուած վերադառնամ: Մնաք խաղաղութեամբ:

Հայրական սիրով եւ Օրհնութեամբ՝

Գէորգ Կաթողիկոս

*

* *

20 Փետրուարի 1953 թ.

Սիրելի սարկաւագներ,

Մեծ հաճոյքով լսեցի Ռուսաց Հոգեւոր Ճեմարանի ներկայ Վարչութեան գովասանքը ձեր կենցաղի եւ կրթական յառաջադիմութեան մասին: Շատ գոհ եմ, որ ձեզ այնպէս էք պահում, որ անցեալում կազմուած յոռի կարծիքը՝ սարկաւագների եւ՝ այդ հետեւանքով՝ նաեւ մեր Հոգեւոր Ճեմարանի եւ վանքի մասին՝ պիտի փոխուի եւ նոր լաւագոյն կարծիք կազմուի, որ մերձաւոր կամ հեռաւոր ապագայում, անշուշտ կարող է ծառայել սարկաւագների շահերին: Ներկայ Վարչութիւնը ձգտում է, որ դուք ճեմարանում ձեռք բերէք ռուսաց լեզուի հմտութիւն՝ համարելով այն իրենց համար պատուաբեր գործ եւ որ ճշտիւ համապատասխանում է ձեր շահերին: Պաշտօնական հաւաստիեցում է տրուած Մեզ, որ եթէ ներկայ ժամանակի պայմանները չներեն թոյլատրել ձեզ առժամապէս Արտասահման երթալու մասնագիտական պատրաստութիւն ձեռք բերելու համար՝ յայն դէպս հնարաւորութիւն կը տրուի ձեզ այստեղ պաշտօնական ճամբով գիտական պատրաստութիւն ձեռք

բերելու, որի համար անհրաժեշտ է սակայն ռուսաց լեզուի բաւարար գիտութիւն: Առայժմ
դուք միայն իմացէք՝ եւ այսքան միայն:
Տէր Խաչատուր քահանայի միջոցով խնդրել էինք Պրոֆ. Յովսէփ Կուսիկեանին, որ՝
իր խոստման համաձայն, փետրուարի 15-ից սկսէր իր գիտական պարապմունքները ձեզ
հետ եւ այն՝ երեքիր, միասին: Պատասխան ունիմ, որ համաձայն է, ուստի եւ միամիտ եմ, որ
այդ կարեւոր գործն էլ կազմակերպուած է: Այդ մասին՝ եւ ընդհանրապէս ձեր մասին՝ թէ՛
կրթական եւ թէ՛ կենցաղային տեսակէտով, երբեմն-երբեմն գրութիւններ ուղարկեցէք Մեզ
ի միասնութիւն: Պրոֆ-ի վարձատրութեան մասին հաղորդուած է Մեզ Տէր Խաչատուրի
միջոցով. Նշանակուած է ժամը հարիւր ռուբլի: Որքան Մեզ յայտնի է, Նա պարապելու է
ամեն շաբաթ եւ շաբաթական երկու ժամ: Պրոֆ-ը իր պարապմունքների եւ վարձատրու-
թեան մասին պիտի յայտնէ նաեւ ձեզ, որ ճշտութեամբ կը հաղորդէք ինձ, որպէսզի ես եւս
իմ պարտքը ճշտութեամբ կատարեմ:
Մաղթում ենք ձեզ առողջութիւն եւ յաջողութիւն ձեր պարապմունքներին:

Հայրական սիրով եւ Հայրապետական Օրհնութեամբ՝

Գէորգ Կաթողիկոս

*

*   *

3 Մայիսի 1953 թ.

Սիրելի սարկաւագներ,

Ստացել ենք ձեր երկու նամակները եւ իրազեկ ենք այնտեղ չեշտուած ձեր տենչալի ցանկութեան ամառը երեք ամիս, մնալ Մոսկուայում եւ աշխատել Պրոֆ. Կուսիկեանի ղեկավարութեամբ: Ուրախ ենք, տեսնելով, որ դուք գիտութեան ուղիի վերայ էք ընկել եւ գիտութեան քաղցր համը ճաշակել սկսել, որ Մենք միայն ողջունել կարող ենք եւ ըստ ամենայնի հնարաւոր եւ կարեւոր աջակցութիւն ցոյց տալ ձեր ցանկութեան իրագործման: Սակայն պայմանով, որ ձեր կեանքը զուսպ լինի եւ ձեր կենցաղը համեստ: Այս մասին Մենք գրել ենք Տէր Խաչատուրին կարեւոր աշխատանքներ կատարել եւ հեռագրով հաղորդել Մեզ հետեւանքի մասին: Մեր պահանջների նպատակն է միայն, որ դուք տոկուն եւ յանուն գաղափարի պայքարող լինէք մեր նախնեաց նման, որպէսզի ապրէք եւ ապրեցնէք ձեզ հետ նաեւ Հայ ժողովուրդը: Այս տեսակէտով տեսնում ենք ձեր մէջ, այս երկու տարուայ ընթացքում, մեծ յառաջադիմութիւն, որ որոշակի արտայայտուած է ձեր վերջին գրութեան մէջ: Այս գրութեան հետ Մենք համապատասխան գրութիւններ ուղարկել ենք Պրոֆեսորին եւ Տէր Խաչատուրին:

Գոհունակութեան գրութիւններ կուղարկենք եւ Սրբազան Պատրիարքին եւ Հոգեւոր Ճեմարանի Վարչութեան: Դուք եւս չմոռանաք բանաւոր շնորհակալութիւն յայտնել Հոգեւոր Ճեմարանի Վարչութեան եւ ներկայանալ Սրբազան Պատրիարքին, աջն առնել, հրաժեշտ տալ եւ շնորհակալութիւն յայտնել:

Հայրական ողջունիւ եւ Հայրապետական Օրհնութեամբ՝

Գէորգ Կաթողիկոս

# ԳՐԱԽՕՍՈՒԹՅՈՒՆ

*ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

## ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ԷՋ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑԻ ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ

Անցյալի պատմագիտական ժառանգության հայտնաբերումը, հրապարակումն ու լուսաբանությունը օգտակար ու գնահատելի է երկու տեսակետից. նախ՝ այն մեծապես կարող է նպաստել գիտության զարգացմանը, եւ երկրորդ՝ երախտիքի մի տուրք է, որով հետագա սերունդները փորձում են հատուցել իրենց վաստակաշատ նախնյաց առջև ունեցած պարտքը: Այս երկյակ նպատակին է հետամուտ XX դ. հայ պատմագիտության սյուներից մեկի՝ Նիկողայոս Ադոնցի «Պատկերների խնդիրը» անտիպ մնացած աշխատության լույս ընծայումը (Երևանի Պետական Համալսարանի հրատ., 2003 թ.): Այն հրատարակության է պատրաստել ու ծանոթագրել ճանաչված պատմաբան, Երևանի Պետական Համալսարանի և Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի դոցենտ Պետրոս Հովհաննիսյանը:

Գրքի հրապարակումն իրականացվել է՝ խմբագրությամբ, «արդեամբ եւ ծախիւք Աստուածաբանութեան ֆակուլտետի դեկան, դոկտոր, պրոֆեսոր Շահէ արքեպիսկոպոս Անէմեանի»: Սա Պ. Հովհաննիսյանի հերթական ադոնցագիտական հրապարակումն է: Ինչպես այս, այնպես էլ սրան նախորդած հրապարակումները[1] ներկայացնում են մեծանուն պատմաբանի գիտական վաստակի տարբեր երեսները: «Նիկողայոս Ադոնցի կրոնագիտական ժառանգությունը» խորագրով ներածության մեջ (էջ 5-14) Պ. Հովհաննիսյանն ուրվագծում է պատմաբանի գիտական ժառանգության ընդհանուր պատկերը: Ներկայացնելով մեծ գիտնականի կրոնագիտական վաստակը՝ նա խոսքը մասնավորում է խնդրո ա-

---

[1] «Հայկական հարց», Եր., 1996, «Մի էջ կաթողիկոսության մերձավոր անցյալից», «Ամենայն Հայոց Կաթողիկոս Խորեն Ա-ի հիշատակին» «Հայկազեան հայագիտական հանդէս», հտ. ԺԷ, Բեյրութ, 1997, էջ 266-278: «Միհրդատ Եվպատոր, Տիգրան Մեծ», «Պատմաբանասիրական հանդես», 2001, N 2, էջ 279-290: «Դավիթ Կյուրոպաղատ», անդ, 2002, N 3, էջ 3- 37:

ռարկա աշխատության մասին, ցույց տալիս պատմաբանի մյուս երկերի հետ ունեցած նրա աղերսները, գնահատում նրա բերած նպաստը պատմագիտությանը:

Ներկա աշխատությունը բաղկացած է 4 գլխից. 1. Պատկերների խնդիրը (էջ 15-33), 2. Պատկերամարտություն (էջ 34-49), 3. Միքայել Բ կակազի եկեղեցական քաղաքականությունը (էջ 50-58), 4. Պատկերամարտության վախճանը (էջ 59-69): Այստեղ շոշափվում են պատմաեկեղեցական կարևոր խնդիրներ, որոնք վերաբերում են Բյուզանդական (և ոչ միայն Բյուզանդական) Եկեղեցու պատմության, իրադարձություններով հարուստ, մի ժամանակափուլի (726-842 թթ.): Այն հատկորոշվում է պատկերամարտների ու պատկերապաշտների միջև տեղի ունեցած անզիջում պայքարով, պայքար, որի շարժառիթը որքան կրոնադավանաբանական, աստվածաբանական և ներեկեղեցական էր, նույնքան՝ քաղաքական: Հակադիր կուսակցություններն իրենց գաղափարաքաղաքական նկրտումները քողարկում էին կրոնադավանաբանական ջերմեռանդությամբ: Պատկերամարտ-պատկերապաշտ բևեռների հակընդդեմ պայքարում իր լուրջ մասնակցությունն է բերում հայ տարրը: Գնահատելով այդ՝ Ադոնցն իրավացիորեն եզրակացնում է, որ հայերի դերն այդ պայքարում «եղել է չափազանց վճռական ու որոշիչ» (էջ 12):

Ինչպես երևում է, աչքի առջև ունենալով Վրթանես Քերթողի, Հովհան Օձնեցու երկերում և հարակից աղբյուրներում առկա համապատասխան ակնարկները՝ պատմաբանը գտնում է, որ պատկերամարտությունն ավելի համակիրներ ուներ հայերի մեջ (էջ 62): Այդպիսիք էին Բյուզանդիայի հայազգի կայսր Վարդան Փիլիպպիկոսը, Լևոն V Հայկազնը, Վարդանը, Թովմա Գազիրացին, Կ. Պոլսի Պատրիարք Հովհաննես Քերականը, Լևոն Մաթեմատիկոսը, Արշավիր Պատրիկը և ուրիշներ: Սակայն հայեր կային նաև հակառակ ճամբարում. պատկերապաշտներ էին կայսրուհի Թեոդորա Մամիկոնյանը, սպարապետ Մանուել Մամիկոնյանը, կեսար Վարդ Մամիկոնյանը և ուրիշներ: Պատմագրական, սրբախոսական աղբյուրների մանրակրկիտ հաշվառումով ու համադրումով հեղինակը վերհանում է հայ տարրի գործուն մասնակցությունն այդ տարընթաց հոսանքներով բնութագրվող քաղաքական կյանքին: Այս տեսակետից գրախոսվող աշխատությունը ներկայացնում է Ա. Պ. Կաժդանի հայտնի մենագրության[2] ընդգրկած ժամանակահատվածին նախորդող շրջանը:

«Պատկերների խնդիրը» գլխում Ադոնցը կատարում է երևույթի պատմաաստվածաբանական լուսաբանությունը: Ելնելով պատկերների մասին հայրախոսական վկայություններից՝ այստեղ որոշարկված է Խաչի և պատկերի ընկալման երկու «վերաբերում. 1) Պատկերը որպես զարդարանք կամ ուսուցման միջոց, որ փոխարինում է անգրագետներին գիրը կամ հորդորիչ միջոց բարեպաշտության և կրոնասիրության, 2) Պատկերը որպես օրինակ նախատիպի, սուրբ և պաշտելի ինքնին»:

Առաջին մոտեցումը հեղինակն իրավացիորեն անվանում է պատկերահարգություն, իսկ երկրորդը՝ պատկերապաշտություն: Այս կարգորոշման հիման վրա նա ներկայացնում է սրբապատկերի հանդեպ դրական վերաբերմունք որդեգրած այս ուղղությունները: Ըստ Ադոնցի, Հիսուս Քրիստոսի և Մարիամ Աստվածածնի անձեռագործ պատկերների

[2] Տես А. П. Каждан, Армяне в составе господствующего класса Византийской империи в XI-XII вв., Е., 1975.

վերաբերյալ ավանդազրույցները սկիզբ են առել պատկերապաշտության տարածումից հետո միայն: Նա ասում է, որ «Աբգար թագավորին ղրկված պատկերի հրաշագործության մասին գիտե VI դարի պատմագիր Եվագրիոս» (էջ 17): Մինչդեռ, ինչպես հայտնի է, այդ հրաշագործության նկարագրությունն ու Քրիստոս-Աբգար նամակագրությունը բերված են Եվսեբիոս Կեսարացու (+339), Եփրեմ Ասորու (+373), Մովսես Խորենացու երկերում[3]: Սա ինքնին ցույց է տալիս, որ այդ ավանդազրույցները հրապարակ են եկել ոչ թե ի հետևանս պատկերապաշտության, այլ, ընդհակառակը, վերջինս սկզբնավորվել և աստվածաբանորեն արդարացվել, զորացել է այդ ավանդազրույցների հիման վրա:

Աշխատության մեջ ամենայն իրավամբ պատկերամարտական շարժման ակունք է նկատվում միաբնակ, եվտիքյան քրիստոսաբանությունը, որը շեշտը դնում է Քրիստոսի աստվածային բնության վրա, ինչը ստվերի մեջ թողնելով մարմնացման ու մարդեղացման խորհուրդը, ինքնին բացառում է Քրիստոս Աստծո որևէ պատկերագրում: Փիլոքսենյան, Սևերյան միաբնակ մեկնաբանության համաձայն, Քրիստոսի մարդկային բնության յուրաքանչյուր շեշտում կամ զատորոշում պարզիպարզո նշանակում է նեստորականություն: Այս հիմամբ Քրիստոսի պատկերագրումը դառնում է մերժելի: Մինչդեռ պատկերահարգների և պատկերապաշտների համար Քրիստոս Աստծո պատկերագրումն արդարացվում է Բանի մարմնավորման իրողությամբ[4]:

Պատմագիտական ընդհանուր ետնախորքի վրա հեղինակն արձանագրում է պատկերամարտությունը խթանող երկու կարգի խնդրահարույց իրողություններ՝ արտաքին և ներքին. արտաքինը պատճառաբանված էր օտար կրոններով (հրեական, մահմեդական) և մասնավորաբար պավլիկյան աղանդով, ներքինը՝ Աստվածաշնչական, քրիստոսաբանական, ներեկեղեցական տեսություններով: Արտաքին ազդակների, հատկապես պավլիկյան աղանդի պատկերամարտական գործունեության փաստագրումով Ադոնցը գալիս է այն իրատես եզրակացության, որ «շարժումը ազգայնական դրոշակ չուներ, այլ ազատամտական երևույթ էր» (էջ 26): Սրանով հեղինակը կանխում է պատմագիտության մեջ ընդունվելիք այն տեսակետը, թե պավլիկյանների կողմից (հարկավ՝ ժամանակավորապես) հովանավորվող պատկերամարտական շարժումն ուներ քաղաքական բնույթ. այն միտված էր ոչ միայն սահմանափակելու Եկեղեցու նյութական միջոցները, այլև տիրելու դրանց[5]: Պատմաբանը խոսում է նաև հակառակ կուսակցության կեցվածքի մասին և, ի դեմս պատկերապաշտության խոսափող Հովհան Դամասկացու, ներկայացնում պատկերապաշտության աստվածաբանական հիմունքները, որոնց շնորհիվ կարելի կլիներ հաստատել նյութական (և ոչ միայն նյութական) միջոցների նկատմամբ Եկեղեցու իրավասությունը: Այն իրականություն դարձավ 787 թ. «Յոթերորդ Տիեզերական» հորջորջված Նիկիո Բ ժողովում, որը պատկերների հանդեպ դրական վերաբերմունքն արդարացրել է

---

[3] Տե՛ս Е. Н. Мещерская, Легенда об Авгаре – Раннесирийский литературный памятник, М., 1984, с. 6, Պատմութիւն Հայոց, Գիրք Բ, գլ. ԼԱ-ԼԲ:

[4] Հայ իրականության մեջ այդ աստվածաբանորեն հիմնավորված է Վրթանես Քերթողի, Հովհան Օձնեցու երկերում:

[5] Տե՛ս М. Я. Сюзюмов, Проблемы иконоборчества в Византии, «Учен. Зап. Свердлов. гос. пед. ин-та», 1948, т. IV, с. 48-110. З. В. Удальцова, Византийская культура, М., 1988, с. 84.

Բանի մարդացման իրողության վկայակոչումով և. սահմանազատելով պատկերապաշտությունը պատկերահարգությունից (անշուշտ զիջելով պատկերամարտական կողմին), վավերացնում է պատկերահարգությունը, որը բյուզանդական իրականության մեջ ըստ էության պատկերապաշտություն էր՝ իր դրսևորման բոլոր ծայրահեղ ձևերով: Մյուս կողմից՝ ժողովն արձանագրեց և հաստատեց մի խիստ կարևոր սկզբունք պետություն-Եկեղեցի հարաբերության մեջ. «Դավանաբանական խնդիրները ենթակա են Եկեղեցու իրավասության, և Եկեղեցին միանգամայն անկախ է այսպիսի վեճերում պետության միջամտությունից» (էջ 29):

«Պատկերամարտություն» գլխում հանգամանալից ներկայացված են 787 թ. Նիկիո Բ ժողովի որոշումների դեմ աստիճանաբար աճեցող դժգոհությունը և այն ծնող քաղաքական պատճառները, որոնք ստիպում են Լևոն Ե Հայկազն կայսրին (813-820) որդեգրելու բացահայտ պատկերամարտության քաղաքականություն: Քաղաքական այս ընթացքն իրավաքանորեն հաստատվեց 815 թ. պատկերամարտական ժողովով:

Աշխատության մյուս՝ «Միքայել Բ Կակազի եկեղեցական քաղաքականությունը» գլխում խոսվում է այն չափավոր ընթացքի մասին, որ որդեգրել էին Միքայել (820-829 թթ.) և Թեոփիլոս (829-842 թթ.) կայսրերն իրենց պատկերամարտական քաղաքականության մեջ: Ըստ այդմ, պատկերների պաշտամունքը թույլատրելի էր միայն քաղաքից դուրս գտնվող եկեղեցիներում: Այս քաղաքականությամբ կայսրերը փորձում էին մի ներդաշնակ վիճակ ապահովել պետություն-Եկեղեցի հարաբերության մեջ և թող որ փխրուն խաղաղությունը դարձնել հարատև:

Վերջին՝ «Պատկերամարտության վախճանը» գլխում ցույց է տրվում ուժերի հարաբերակցության մեջ կատարված այն կտրուկ շրջադարձը, որ տեղի ունեցավ Թեոփիլոս կայսեր մահից հետո: 815 թվականից թվում է, մեկընդմիշտ հաստատված պատկերամարտ իշխանությունը շատ անսպասելի կերպով իր տեղը զիջեց հակառակ կուսակցությանը: 843 թ. մարտին սպարապետ Մանուել Մամիկոնյանի, Թեոկտիստոս ներքինիի, Վարդ Մամիկոնյանի թելադրանքով և Թեոդորա կայսրուհու գլխավորությամբ կայացած եկեղեցաժողովը վերականգնեց 787 թ. Նիկիո ժողովի պատկերապաշտական որոշումները: Պատմաբանը բացատրում է իրերի այսօրինակ շրջադարձը պայմանավորել լոկ բարեպաշտական դրդապատճառով: Նա կարծում է, որ պատկերապաշտական քաղաքականության իսկական հեղինակներն ու թելադրիչները թագաժառանգ Միքայելի խնամակալ Թեոկտիստոս ներքինին և Մեթոդիոս եպիսկոպոսն էին: Վերջինս գործում էր ըստ իրավիճակի թելադրանքի. սկզբում թունդ պատկերապաշտ էր, Թեոփիլոս կայսեր ժամանակ՝ պատկերամարտ, ապա՝ դարձյալ պատկերապաշտ: Թեոկտիստոս ներքինին առանձնաշնորհյալ դիրք էր զբաղեցնում թե՛ Միքայել Բ-ի և թե՛ Թեոփիլոս կայսեր օրոք: Վերջինիս մահից հետո «Թեոկտիստոսի դրությունը կարող էր խախտվել: Հայերը, որ շրջապատել էին գահը, հիմք չունեին սիրելու Թեոկտիստոսին: Սա իր դրությունն ապահովելու համար որոնում է նեցուկ և այն գտնում պատկերապաշտների բանակում (էջ 62), որ կազմված էր հույն վանականներից: Մինչդեռ պատկերամարտությունը շատ ավելի տարածվում էր հայերի մեջ: Ի հեճուկս պատկերամարտ հայերի, նորոգելով պատկերների խնդիրը՝ Թեոկտիստոսը դրանով պետք է փորձեր տկարացնել գահի շուրջ գտնվող հայերի ազդեցութ-

յունը՝ «հուսալով, որ հայերը կընդդիմանային և կկորցնեին ժողովրդի աչքում իրենց մեծ հռչակն ու հմայքը» (Ճշվ. հրատ., էջ 63): Սակայն Թեոկտիստոսի հաշիվները չիրականացան. հայ վերնախավը հանդես բերելով ողջախոհ մոտեցում՝ իր պատկերամարտական դիրքերը զիջեց և դրա շնորհիվ պահպանեց արքունիքում ունեցած բարձր դիրքը:

IX դարի երկրորդ կեսին պատկերամարտական շարժումն ապրում է իր մայրամուտը. աստիճանաբար վերանում են նրա «հիմնական կառույցները»: Այն մեկընդմիշտ դատապարտվեց Կ. Պոլսի 869 թ. եկեղեցաժողովում, որն օրինականացրեց 787 թ. ժողովի որոշումները: Սակայն իսպառ հաղթահարված չէր պատկերամարտական մտածողությունը: Աղոնցն իրավացիորեն վերջինիս առկայությամբ է բացատրում այն, որ «եկեղեցուց վերացան քանդակագործ պատկերները» (էջ 69): Պատկերամարտության ազդեցությամբ հասարակության գիտակից զանգվածն ի մտի ունենալով ստորին խավի մոտ տարածված հոռի սովորույթները (տե՛ս Ճշվ. աշխ., էջ 81, ծնթ. 56)՝ պատկերապաշտության մեջ տեսնում էր հեթանոսական նյութապաշտություն, որի պատճառով այդ խավը հավանություն տալով սրբապատկերների կիրառմանը՝ բացառում էր նրանց հանդեպ պաշտամունքը: Այս գիտակցությամբ էր շարադրված Միքայել Բ Կակազի՝ ֆրանկների կայսր Լյուդովիկոս Ա Բարեպաշտին (781-840 թթ.) ուղղված նամակը, գիտակցություն, որ հայ իրականության մեջ, հանձին Անանիա Սանահնեցու (XI դ.) և Հովհաննես Սարկավագի (+1129) երկերի, պետք է ստանար իր աստվածաբանական սահմանումն ու հիմնավորումը:

Ն. Ադոնցի աշխատությունն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Ճշմարտությունը միջին ուղու վրա էր՝ պատկերահարգություն և ոչ պատկերապաշտություն» (էջ 69): Սրանով հետազոտողը հստակորեն արտահայտում է իր վերաբերմունքը երևույթի նկատմամբ. պատկերահարգությանը տրված դրական գնահատականն ըստինքյան ենթադրվող դրական արժևորումն է Հայ Եկեղեցու պատկերահարգական աստվածաբանության:

Ն. Ադոնցի այս աշխատությունն իր ուսանելի նպաստն է բերում ոչ միայն տվյալ շրջափուլի եկեղեցաքաղաքական պատմության, այլև մշակույթի, արվեստի աստվածաբանության ակունքների հետազոտման գործին:

*ԱՎԵՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

# ՀԱՅՈՑ ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Քրիստոնեական Եկեղեցում առանձնահատուկ տեղ ունի սրբապատկերը՝ իկոնան: Անկախ նրանից, թե ինչպիսի նյութից կամ նյութի վրա է արված սրբապատկերը (փայտ, քար, կտավ և այլն), Եկեղեցու պաշտամունքային-ծիսական կյանքում այն ի սկզբանե ունի իրեն հատուկ կիրառությունն ու գործառույթը: Սրբապատկերը զարդարում, ձևավորում, համախմբում և մեկտեղում է եկեղեցու ներքին՝ աղոթական-խորհրդապաշտական տարածքը: Արդեն Դ դարում աստվածաբանորեն ձևակերպվել և հստակվել էր սրբապատկերի ընկալման կերպը եկեղեցական կյանքում: Հոգևոր կյանքի փորձառությունը ցույց էր տալիս, որ սրբապատկերը նպաստում է ավելի պատկերավոր ու ամբողջական դարձնելու քարոզիչ հոգևորականի խոսքը, պարգևում է հոգևոր մխիթարություն՝ յուրահատուկ կապ ստեղծելով պատկերվածի ու աղոթողի միջև, ներգործում դիտողի խղճմտանքի վրա, հեռու պահում մեղսածին մտքերից, տեսանելի կերպով հիշեցնում և ուսուցանում աստվածաշնչյան պատմություններն ու պատգամները և այլն: Այսպես է սրբապատկերի նշանակությունը մեկնաբանվում Ընդհանրական Եկեղեցում, որի մի մասն է և Հայոց Եկեղեցին:

Պատմահայր Մովսես Խորենացին հիշատակում է, որ աստվածային հրաշքով ի հայտ եկած առաջին երկու սրբապատկերները (որոնցով փաստորեն սկզբնավորվեց քրիստոնեական սրբանկարչության արվեստը) պատկանել են Հայոց Եկեղեցուն՝ Անձեռակերտ Դաստառակը և Աստվածամոր պատկերը: Սա խոսում է այն մասին, որ մեր Եկեղեցում պատկերների կիրառությունը սկսվել է շատ վաղուց: Հետագայում հայոց եկեղեցական կերպարվեստը մեծ ծաղկում ապրեց: Միջնադարյան հայ արվեստագետները ստեղծեցին բազմաթիվ բարձրարվեստ և պատկերագրորեն առանձնահատուկ աշխատանքներ: Զարգացան որմնանկարչությունը, մանրանկարչությունը, քանդակագործությունն ու խաչքարի արվեստը: Անշուշտ, գեղարվեստական այդ համակարգում էր նաև սրբապատկերը (իկոնա):

Մեզ հայտնի է Հայոց Եկեղեցու վերաբերմունքը սրբապատկերի վերաբերյալ, որը հիմնված է Ընդհանրական Եկեղեցու հայրերի արտահայտած տեսակետների վրա: Սրբապատկերի կիրառությունը Եկեղեցում նույնպես հայտնի է, այն հիմնված է ավանդականության սկզբունքի վրա, որպես Եկեղեցու Սրբազան Ավանդության անքակտելի մաս: Սակայն ինչպիսի՞ն էր Հայոց սրբապատկերը: Կա՞ր արդյոք զանազանություն հայկական սրբապատկերի և, ասենք, բյուզանդականի միջև, և եթե կար, ո՞րն էր տարբերությունը: Այս հարցը երկար ժամանակ դուրս էր մնացել միջնադարյան հայ արվեստն ուսումնասիրողների տեսադաշտից:

Այստեղ տեղին է հիշել հայագետ Կարապետ Կոստանյանի խոսքերը «Հին հիշատակներ» հոդվածից («Արարատ», 1897 թ.), որը վերաբերում է Հայոց հնագույն սրբապատկերներին՝ Հիսուսի Դաստառակին, Հովհաննես Ավետափանչի նկարած Ս. Աստվածամոր պատկերին և Հավուց Թառի Ամենափրկչին: Հոդվածագիրը հետևյալ հարցն է տալիս. «Հետաքրքիր է իմանալ՝ ո՞ւր և ո՞ր ժամանակից գոյութիւն ունին հայոց վանքերում և եկե-

ղեցիներում հենց այդպիսի պատկերներ և ինչպիսի" գծագրութիւն ունին նոքա. և երկրորդ, աչքի առաջ ունենալով, որ Ս. Աստուածածնի անուանը նուիրուած բազմաթիւ հին վանքեր կան, պէտք է մտածել, որ նոքա ունեցել են և պատկերներ քանդակուած կամ նկարուած. նոյն Տիրամօր նկարներով լի են և հայոց գրչեայ մատեաններն. ցանկալի է հրատարակել այդպիսի քանդակների և նկարների մի ժողովածու, որպէսզի կարելի լինի նոցա ուսումնասիրութեամբ գաղափար կազմել թէ ո՞րն է այն առանձնութիւնը, որով զոկւում էին հայոց պատկերները ուրիշներից»: Այս հարցադրումը կատարվել է հարյուր տարի առաջ...

Օրերս հայ արվեստաբանական գրականությունը հարստացավ ևս մեկ արժեքավոր ուսումնասիրությամբ: Լույս է տեսել Մաշտոցյան Մատենադարանի բաժնի վարիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի «Հայոց Տերունական սրբապատկերները» աշխատությունը: Եվ կարող ենք փաստել, որ Կ. Կոստանյանի առաջ քաշած հարցերը ստացել են իրենց պատասխանները:

Նկատի ունենալով նյութի ծավալը, հեղինակն աշխատության մեջ քննության առարկա է դարձրել միայն Հիսուս Քրիստոսի, Ս. Խաչի և Ս. Աստվածամոր պատկերները:

Առաջին գլխում՝ «Հայ Եկեղեցին և սրբապատկերները», ամենայն մանրամասնությամբ ներկայացված է քրիստոնեական պատկերագրության սկզբնավորումը: Պատմական վկայությունների, ավանդության և քրիստոնեական ծեսի ուսումնասիրությամբ քննության է առնված գաղափարական այն հենքը, որի վրա զարգացավ սրբապատկերը: Այս աստվածաբանական-գեղարվեստական համակարգի միջոցով էլ գնահատվել է սրբապատկերի էությունն ու նշանակությունը:

Այս գլխում հեղինակը նշել է Ֆայումյան դիմանկարի (Ն. Ք. Դ դար - Բ դար) դերը սրբապատկերների ձևավորման գործում և առանձին-առանձին ներկայացրել Հիսուս Քրիստոսի, Ս. Աստվածամոր այդ ժամանակ ընդունված պատկերագրական տիպերը:

Հիսուսի Դաստառակին վերաբերող պատմական փաստերն ու բանավոր ավանդազրույցները ի մի բերելով, Հ. Հակոբյանը փաստում է, որ վաղ միջնադարյան Հայաստանում եղել են սրբապատկերներ, ինչպես, օրինակ, Հոգեաց վանքի Ս. Աստվածամոր պատկերը, Խոր Վիրապի Աստվածամոր պատկերը, Հիսուս Քրիստոսի սրբապատկերը Վարագավանքում և այլն:

Ամփոփելով առաջին գլխի ասելիքը, հեղինակն անդրադառնում է այն նոր մոտեցումների սրբապատկերների նկատմամբ, որոնք ձևավորվեցին Քաղկեդոնի ժողովից հետո:

Երկրորդ գլուխը՝ «Տերունական սրբապատկերները VI-XVII դդ. հուշարձաններում», նվիրված է այն սրբապատկերային նմուշներին, որոնք տեղ են գտել հայկական մանրանկարչության, քանդակագործության և որմնանկարչության մեջ: Խոսքը վերաբերում է այն պատկերներին, որոնց գաղափար օրինակները սրբապատկերներ են (իկոնա): Մանրանկարներից որպես այդպիսիք առանձնացվել են Էջմիածնի Ավետարանի Զ դարի պատկերները, Տրապիզոնի, Ադրիանուպոլսի, Վեհափառի Ավետարանների (Ժ-ԺԱ դդ.) մանրանկարները, Վասպուրականի և Սյունիքի ձեռագրերի համապատասխան պատկերները և այլն:

Քանդակագործական օրինակներից, որպես ամենավաղ շրջանի պատկեր, առանձնացվել է Օձունի Աստվածամոր քանդակը (Զ դար): Քննության են առնված Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու (Ժ դար) քանդակները: Առանձին ուշադրության են արժանացել հայոց միջնադարյան խաչքարերը, հատկապես նրանք, որոնց վերնամասում քանդակված է Դեիսուս (Բարեխոսության) պատկերը և «Ամենափրկիչ» անվանված խաչքարերը: Ինչ վե-

րաբերում է որմնանկարչությանը, ապա այստեղ նույնպես քիչ չեն սրբապատկերային բնույթի օրինակները, որոնք նույնպես մանրամասնորեն ներկայացված են:

Գրքի եզրափակիչ՝ երրորդ գլուխը. «Նոր շրջան (XVII դ. - XVIII դ. I կես)», վերաբերում է այն ժամանակաշրջանին, որը բեկումնային էր հայկական մշակույթի համար: Եվրոպական մշակութային կյանքում, հատկապես գեղարվեստական մտածողությունում տեղի ունեցած ահռելի փոփոխությունները, իրենց ուղղակի կամ միջնորդավորված ազդեցությունն են թողնում նաև հայկական արվեստի և մասնավորապես սրբանկարչության վրա:

Արդեն ԺԶ դարից հայ մանրանկարիչները հատուկ ուշադրություն են դարձնում դիմանկարին: Այդ տիպի մանրանկարները սկսում են մոտենալ հաստոցային գեղանկարչության սկզբունքներին: Դրանց ազդեցությամբ սկսում են փոխվել Ս. Աստվածամոր պատկերագրական տիպերը, որոնք անփոփոխ էին ողջ միջնադարի ընթացքում՝ Օդիգիդրիա, Օրանտ և այլն: Սակայն նոր գաղափարախոսությունը, որը հաստատվել էր հայկական կերպարվեստում, զարգանում էր՝ համապատասխանելով ազգային և եկեղեցական առանձնահատկություններին, հաստատելով արվեստի զուտ հայկական պատկերացումները: Իրենց տեսական աշխատություններով դրան էին նպաստում ժամանակի հայ մտածողները՝ Սիմեոն Ջուղայեցին (ԺԶ դարի վերջ - 1657 թ.), Ստեփանոս Լեհացին (ԺԷ դ. սկիզբ - 1687 թ.), Հովհաննես Ջուղայեցին (1643-1715 թթ.) և այլոք:

ԺԷ դարը շրջադարձային եղավ հայ մշակույթի համար: Այդ շրջանում կերպարվեստում գնահատվում և արժեվորվում է աստվածաստեղծ մարդու անհատականությունը: Այդ դարից էլ հայկական միջավայրում մեծ տարածում գտան հաստոցային բնույթի սրբապատկերները, մասնավորապես կտավի և փայտի վրա:

Երրորդ գլխում ԺԷ-ԺԸ դարերի սրբապատկերների քննությունը կատարված է ըստ ստեղծման ժամանակի և տեղի: Այսպես՝ ա) սրբապատկերներ, որոնք ստեղծվել են Պատմական Հայաստանում, բ) սրբապատկերներ, որոնք ստեղծվել են Ռուսաստանում, Եվրոպայում. Մերձավոր Արևելքում, Եգիպտոսում, և գ) սրբապատկերներ, որոնք ստեղծվել են Նոր Ջուղայի մշակութային միջավայրում:

Այս դարերից պահպանված սրբապատկերներից առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև նրանք, որոնք դրվագված են ձեռագիր մատյանների կազմերին և գրեթե անհայտ են արվեստասերներին:

Կարող ենք ասել, որ Հրավարդ Հակոբյանի «Հայոց Տերունական սրբապատկերները» աշխատությունը նյութի ընդգրկմամբ, վերլուծությամբ և մատուցման խորությամբ ծանրակշիռ ներդրում է հայկական սրբապատկերի ուսումնասիրման բնագավառում, լուրջ նպաստ՝ հայ միջնադարյան արվեստի ու գեղագիտության մասնայականացման գործում, քանի որ ուղղված է ընթերցող լայն լսարանին: Այն հանձնարարելի է ոչ միայն սրբապատկերի խնդիրներով զբաղվող մասնագետներին, այլև հայ միջնադարյան արվեստով հետաքրքրվողներին ու այն նկարիչներին, որոնք զբաղվում են սրբանկարչությամբ:

Եզրափակելով մեր խոսքը, առանձնակի շնորհակալություն ենք հայտնում գրքի հրատարակչին, «Տաթև Գիտակրթական համալիրի» գլխավոր տնօրեն պարոն Սոկրատ Մկրտչյանին, որի բարի կամեցողության շնորհիվ հնարավոր դարձավ «Հայոց Տերունական սրբապատկերները» աշխատության լույս ընծայումը:

*ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ*
*Բանասիրական գիտությունների թեկնածու*

# ՀԱՅ ՈԳԻՆ ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ

*«Հայերը հայությունը դեռ ուսումնասիրած չեն...»:*
Կոստան Զարյան

Հայ իրականության և ընդհանրապես մշակույթի պատմության մեջ Կոստան Զարյանի դերի արժևորումն այսօր ավելի քան ժամանակապահանջ է, քանզի տասնամյակներ շարունակ անտեսվելով նրա գրական-մտածողական վաստակը, ըստ էության չի մասնահատկվել հայության ոգեկորովի կազմավորման և զարգացման մի ողջ ժամանակաշրջան, այն, ինչը գրականության պատմագետների խնդիրն է: Բայց մինչ այդ հանուրի ուշադրությունը պետք է բևեռել նրա ստեղծագործության այն շերտերի վրա, որոնց առկայությամբ Կոստան Զարյան գրողը, գրագետը, իմացաբանը հայ ոգու և համաշխարհի իմացականության զուգակշռումներում հայտաբերում է մինչ այդ մեր իմացության մեջ *չգրանցված*, չփաստված իրողություններ: Ըստ այդմ, «Մեր ժողովրդի փրկութունը նրա հոգեկան զարգացման մեջ է, նրա մտավոր վեհության և մեծության մեջ, ինչ որ առաջ կարելի է բերել շատ դժվարին աշխատանքով: Այն բոլոր ազգերը միայն պիտի կարողանան ապրել գալիք սարսափելի դեպքերի միջոցին, որոնք ինքնուրույն և ուժեղ մշակույթ ունեն, որոնք մարդկության համար անհրաժեշտ տարր են կազմում, որոնք կարող են իշխել ուրիշների վրա իրենց մտքի հոգու զորությամբ...Հայ ազգը պետք ունի թե՛ զենքով կռվող հերոսների և թե՛ մտավոր ազնվական դասի: Այն, որ ես անվանում եմ Արարատյան մարդը»:

Արդ, Կոստան Զարյանի քննարժան ժողովածուները («Նավատոմար» 1999, «Դեպի Արարատ» 2001, «Միացյալ Նահանգներ» 2002) մեծապես գալիս են լրացնելու այն բացը, այն վերապահ վերաբերումն ու *չհասկցված* լռությունը, որ ցարդ կար մեծագույն գրողի, մտածողի նկատմամբ: Քիչ է ասել, թե արժանին պիտի հատուցել հիշյալ բոլոր ստվարածավալ ժողովածուների աշխատասիրողին՝ Ցուրի Խաչատրյանին, որ կազմել, համահավաքել, առաջաբանել, ծանոթագրել է, գեղագիտորեն, տեսաբանորեն օժտել, ամբողջացրել, չափազանց ներկայանալի է դարձրել (գիտականորեն) զարյանական մտածումն ու միտքը, մի հանգամանք, որ ինչո՞ւ չէ, որոշակի օրինակելիություն է «հուշում» ընդհանրապես անցյալի արժեքների վերահրատարակության ժամանակ հոգածության ճիգ ու ջանքի «մղում» ամեն մի աշխատասիրողի: Նույն գնահատալից վերաբերմունքի է արժան և «Սարգիս Խաչենց» հրատարակչությունը՝ ժողովածուների հրատարակման, ինչպես նաև տեխնիկական խնամյալ, բարձրորակ հրատարակչական աշխատանքի համար (միջանկյալ նշենք, որ Կ. Զարյանի «Երկրներ և աստվածներ» նոթագրաշարի առաջին մասը՝ «Սպանիան», տպագրվել է 2000 թ. Ցու. Խաչատրյանի աշխատասիրությամբ, «Նաիրի» հրատ.): Այս ամենով ակներև է դառնում, որ իրականացվել է չափազանց արժեվոր մի հրատարակություն, այն, ինչը գրողի կողմից ժամանակին փայփայվել-մտահղացվել է

կյանքի կոչելու: Եվ, ի բարեբախտություն մեզ. այսօր այն իրագործված է. մնում է զարյանական «իրականությունների և տեսիլների» համընթացությամբ ոգեկոչել մեր անցյալի և ապագայի մշտարթուն առաջնորդ ոգուն... մինչ այդ ապրելով Զարյանի հոդվածների. փորձագրությունների, օրագրերի, ճամփորդական նոթագրությունների ողջ վայելքն ու իմացականությունը:

«Նավատոմար» հավաքածուում զետեղված «Մառը իր արմատն է փնտրում» (1910-1922), «Արարատյան դաշտում» (1922-1924), «Մտքի հավիտենական ճամփորդը» (1924-1961), «Վերջին նավակայան» (1961-1969) բաժիններում ամփոփված մտածումները, խոհերը, ինքնախոստությունները, որոնք ժամանակին տպագրվել են արևմտահայ, սփյուռքյան և Հայաստանյան մամուլում, արծարծում են տարբեր խնդիրներ: Երբեմն մեզ քաջածանոթ երևույթների զարյանական մեկնաբանություններն առավելս են բացորոշում, առարկայացնում գրողի գեղագիտատեսաբանական վերաբերումն այս կամ այն իրադարձության, երևույթի նկատմամբ: Պատմաքաղաքական իրադարձությունների կիզակետում նույնպես Զարյանը «արդարությունը տարփողելու և ճշմարտությունը հաստատելու համար» բարձրաձայնում էր «իր լեռներում կատարեն և իր դաշտերում խորերեն»:

«Հայության կոչումը» խոհը, գրված տակավին 50-ական թվականներին, քննարկվում է հատկապես այն առումով, որ զարյանական ՄԻՏՔԸ թափանցում է «երկու հսկա աշխարհների՝ մշակութային Արևելքի և քաղաքակրթական Արևմուտքի» հոգեբանական ներշերտերում, հայտնաբերում հայության դիմադրողունակ ինքնության առնչակից և դրանից ուղղակիաբար բխող ճշմարտություններ կամ գոնե հետագա ընթացքի որոնումներում չխարխափելու ազգային գիտակցում. «Պիտի կառչե՞նք եվրոպական քաղաքակրթության, թե՞ առաջին պլանի վրա կանգնած՝ արևելյան մտքի նոր ճառագայթումի և նոր ստեղծագործական թափին հետ, պիտի հանդիսանանք նրուժ մշակութային կենտրոն:

Պիտի կրկնե՞նք մեր նախնիների սխալը, թե գիտակցորեն, հերոսաբար պիտի կարողանանք հակառակ մեզ շրջապատող աննողոք պայմաններին, դրսևորել մեր ազգային ԵՍը (ընդգծումը Զարյանինն է, Ա. Ա.), ընդունել պատմությունից մեզ վիճակված խորհրդավոր, հակատրամաբանական ճակատագրական դերը»:

Ընդհանրապես «Նավատոմար» ժողովածուի գերակշիռ մասը կազմող օրագրություններում և ճամփորդական նոթերում, Զարյանի գրողական-իմաստասիրական-իմացաբանական դրսևորումներում հնագույն աշխարհի արվեստն ու մշակույթը մշտաբար զուգահեռվում են իրենց արտահայտչական կարելիություններով: Ասել է, թե Զարյանը, կարևորելով ավանդույթի, ժառանգորդության դերը, երբեք չի սահմանափակվում հին, անցյալի արժեքների սոսկական ջատագովմամբ, այն, ինչ չափազանց ուսուցողական լինելով՝ ենթադրում է նոր ժամանակների մշակույթների ստեղծման, արժեվորման պահանջներ: Այնուհանդերձ, «Ավանդույթը պահել՝ չի նշանակում հինը պահել կամ ընդօրինակել: Իսկական արվեստի մեջ անցյալը երբեք չի կրկնվում: Միքելանջելոն կամ Կորաչինոն չեն կրկնվում: Մոցարտը չի կրկնվում: Ավանդությունը նշանակում է կենտրոնացում և ինքնամփոփում: Հանգստություն, լրջություն, ազնվություն: Ավանդությունը նշանակում է պահել այն արժեքները, որոնք դարաշրջաններից ու դպրոցներից դուրս՝ հավիտենական բնույթ են

կրում: Ավանդությունը նշանակում է նաև խուսափել ժամանակի տենդագին սատանայական պահանջներից, որոնք արվեստագետին պարտադրում են խեղկատակի, մարզական մրցումներ շահողի դիրք բռնել, գլխի վրա մաս գալ և տիրող իշխանությունների կամ կուսակցությունների թևերի մեջ ոստոստել»:

«Նավատոմար» ժողովածուի եզրամասի «Վերջին նավակայան» (1961-1969) նոթագրումներում, ինչպես նաև «Լեոնարդո Դա Վինչին և Հայաստանը» ուսումնասիրության մեջ Կ. Զարյանի մտածողական փորձառությունը համընդհանուր ճշմարտություններ արձանագրելուց զատ, նաև հորձանք տվող մարդկային «մտքի և լռության» իմաստավորված ուրվագծումներ է կյանքի կոչում:

Զարյանը՝ «ստեղծագործության կարողության և մտքի հաստացման, ընդլայնման» ջատագովությամբ ապրողն ու իմաստասիրողը, մշտաքար, իր փոթորկալից կյանքի ողջ ընթացքում չափազանց կարևորել և հետևողական է եղել ամենայն ԱԶԱՏՈՒԹՅԱՆ նկատմամբ, այն, ինչ կատարելապես և ըստ ամենայնի էր ներշնչում գրողին. «Միջերկրական քաղաքակրթությունը մեծ էր, որովհետև նա հիմնվել էր և զարգացել ազատության հիմքերի վրա, երբ ավելի ուշ նա այդ ազատությունը կորցրել էր, առաջ էր եկել մշակույթի հսկա անկում»:

Զարյանն ընդդիմադիր էր մշակութա-մտածողական ամեն անկման և տարտղնումի: Նրա համար կարևորելին, արժեվորելին առաջընթացն ու շարժումն էր՝ հայի բանականության անկորուստ ու նաև ազնվաշունչ արտացոլեցումներով: Այդ իսկ պատճառով նաև չափազանց անինքնաբավ՝ որոնումի, հայտնաբերումի պատրաստ և պարտ. «Մենք մինչև այսօր դեռ լրջորեն ուսումնասիրած չենք մեր ժողովրդի տոնախմբությունները, ծեսերը, կրոնական և այլ սովորությունները: Բեմ հանենք այդ ամենը, միամտորեն, առանց իմաստակության, առանց անմիտ ու օտար ձևակերպումներ մտցնելու: Ու ականջ դնենք, պարզ սրտով, պարզ երգերին՝ ըմբռնելու համար մեր օրերի գերագույն իմաստը»:

Այդ իմաստի ըմբռնումն ու վերաարտահայտումը՝ հոգևոր ճամփորդության ընթացք և շարժունակություն էր ենթադրում, այն, ինչ զարյանական բնորոշմամբ՝ «դեպի Արարատ» խորքային բովանդակավորումով էր առարկայական: Ընդհանրապես «Դեպի Արարատ» ժողովածուում, ուր ի մի են բերված գրողի Բեյրութի Ամերիկյան համալսարանում կարդացած, ցարդ անտիպ՝ Արվեստի դասընթացը, նաև մտածումներ, նավատոմարներ, հարցազրույցներ, որոշապես և առարկայորեն ընդլայնում են Զարյանի՝ իբրև համաշխարհային արվեստի խորասույզ տեսաբանի և ուսումնասիրողի իմացականության ոլորտները: Հատկապես ճարտարապետությանը վերաբերող մտածումներում, հնագույն աշխարհի «քարեղեն տեսիլքներ» ու ժամանակներն իմաստավորող մարդկային մտքի արգասիք հոգևոր պոռթկումներ,- սրանք խնդիրներ են, որոնց Զարյանը չէր կարող չանդրադառնալ, ավելին՝ «ճարտարապետության, իբրև հավաքական գործակցության» արդյունքը չդիտեր արվեստի համաժամանակայնության մտաըմբռնումներով:

Այս առումով հատկապես ուշարժան են Զարյանի հայկական ճարտարապետության նախաքրիստոնեական և հետագա շրջաններին վերաբերող դիտարկումները: Ընդհանրացնելով ճարտարապետության ոգեկանության և գեղագիտական ճանաչողության ինքնեղայնության բնույթն ու բնութենականությունը՝ իբրև «համառոտված տիեզերք», Զար-

յանն արձանագրում է. «Արվեստը հակաճակատագիր է: Սա այն մեծ կենսական ուժն է, որ անգոյությանը հակադրում է գոյության կատարյալ, անմիջական, անկեղծ արտահայտությունը: Բնազանցական անորոշության, հաճախ քաոսի դեմ նա պայքարում է կառուցանելով: Նա ազատագրում է անհատներին և ժողովուրդներին՝ պարտադրելով նրանց այն ղեկավար արժեքները, որոնցից նրանք զրկված էին: Արվեստի միջոցով է, որ մարդկային անհատը, չնայած նրան սպառող անխուսափելի մահվանը, ճիգ է անում միանալ աստղերը շարժման բերող կշռույթին և այդ կշռույթը վերածել հավիտենության մոտեցող ներդաշնակ ձևերի: ...Հայ ժողովուրդն այն հազվագյուտ ժողովուրդներից է, որոնք կարողացել են իրենց մտքի և հոգու բարձրագույն արտահայտությունները ճարտարապետել կատարյալ կերպով և այդ ճարտարապետությունը մտցնել ընդհանուր մարդկության այն շտեմարանի մեջ, որով հայությունը պահպանել է իր դիմագիծը»:

Ընդհանրապես հայ ճարտարապետության միջազգային համբավով է պայմանավոր հայի «ներքին հոգեկան կառույցը»: Հայ ճարտարապետության կրոնական լինելու զարյանական ընկալումը, ինչ-ինչ առումներով, «գերազանցապես երկրաչափական» լինելու հանգամանքով է մեկնաբանվում: «Երկրաչափական բոլոր ձևերը շարժական են և խորհրդանշում են շարժում և կենդանություն»: Իսկ շարժունության, կյանքի շարունակումի խնդիրն ուղղակիաբար առնչվում է հայ մտքի հետ, ըստ այդմ՝ «հայ կրոնական մտքի համար եկեղեցին հավաքատեղի չէ, այլ այն վայրը, ուր աստվածայինը միանում է մարդկայինին, ուր Աստված մարդկայնանում է, մարդը՝ աստվածանում»:

Ընդհանրապես Կոստան Զարյանի գրական, մտածողական ժառանգության մեջ Հայի (հաճախաբար հավաքականության խորքային առումներով) գոյակերպի և ինքնության խնդիրները չափազանց հետնողականորեն են քննարժանվում: Նույնիսկ եթե ոչ ուղղակիաբար, ապա գրողի ընդհանրացումներում հողի զարկերակի տրոփն ու «զգայարանների առկայությունը» չեն կարող չհիշեցնել, որ պատումի կենսունակությունը բոլորովին այլ է, մի տեսակ բոլբոջ-տաքարյուն՝ դրանով իսկ նպաստելով տեղանքի աշխարհագրական և հոգեբանական-ճանաչողական պատկերման իսկությանը: Այս նկատառումը վերաբերում է «Երկրներ ու աստվածներ» շարքին ընդհանրապես: Հիշյալ շարքի երկրորդ մասը կազմող «Միացյալ Նահանգներ»-ը (30-ական թվականներին շարունակաբար տպագրված «Հայրենիք» ամսագրում), գրողի «թափառումների ու մտածումների» արգասիք լինելով, ունի պատմաճանաչողական, մշակութաիմացաբանական անժխտելի նշանակություն: Այստեղ քաղաքակրթության բազմակողմ ու բյուրաշերտ խնդիրները չեն կարող վրիպվել «Արարատյան ցեղի վերածնվող» նկարագրի տեր գրողի կողմից:

Այսպիսին է «իր տեսակի մեջ անհավասարելի» Կոստան Զարյանը: Իր ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ մշտաբար մեզ ազդարարող. «Ես հայությունը չեմ կարող երևակայել առանց Հայաստանի»:



# ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

## ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԸ

Հուլիսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ ընդհանուր միաբանական եռօրյա հավաք՝ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» խորագրով՝ նվիրված Ս. Էջմիածնի Մայր Տաճարի օծման 1700-ամյակին, որին մասնակցեցին Հայաստանյան և Սփյուռքի թեմերից ժամանած շուրջ 65 միաբան հոգևորականներ՝ ծայրագույն վարդապետներ, վարդապետներ ու աբեղաներ: Ժողովական հայրերի համար սա մի առիթ էր՝ նորոգելու իրենց ուխտը 1700-ամյա Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առջև, միմյանցով զորանալու, միաբանակից եղբայրների հետ քննարկելու հովվական-եկեղեցական առաքելությունն առավել արդյունավետ դարձնելու միջոցներն ու հեռանկարները, ինչպես նաև խորհրդածելու այսօր մեր Եկեղեցու առջև ծառացած մարտահրավերների և դրանց դիմագրավելու առավել ճիշտ մոտեցումների մասին:

Պետք է ասել, որ 1988 թ. ի վեր սա նման երրորդ ընդհանուր միաբանական համագումարն է, որն էլ սկսվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով.

### Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

*Սիրելի միաբանակից եղբայրներ,*

*Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում ձեզ ամենքիդ, որ ընդառաջ Մեր հրավերին, եկել եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ձեր մասնակցությունը բերելու միաբանական մեր հավաքին, որը գումարվում է Մայր Տաճարի 1700-ամյակի հոբելյանական պարում, Միածնակառույց մեր Սրբօրրանի խորհրդի ներքո: Մեր մասնավոր գնահատանքն ենք բերում Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Պերպերյանին՝ հավաքի կազմակերպական աշխատանքները նախանձախնդրորեն հոգալու համար:*

*Մեր խոսքն այսօր կուզենք սկսել այն պարզամով, որը երանաշնորհ մեր Հայրապետները շարունակ ուղղել են Մայր Աթոռի միաբանության ու ողջ ժողովրդին: Վարահաբար, յուրաքանչյուր Հայրապետի սրտի անկեղծ փափագն է*

հնչում իբրև պատգամ. կոչելով սիրել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ մեր հավատքի նվիրական սուրբ կենտրոնը, սիրել այն սիրով, որ ծնվում է Սուրբ Էջմիածնի առաքելության հանդեպ մեր հավատից, սիրել այնպիսի սիրով, որը դառնա Մայր Աթոռի բարեզարդումի և պայծառության գործ:

Մենք ենք այսօր կրում պատիվն ու պատասխանատվությունը՝ իրականացնելու մեր Եկեղեցու առաքելությունը, և թե որքան նախանձախնդրություն, որքան նվիրում ու սեր մենք կներդնենք մեր ծառայության մեջ, դրանով պայմանավորված կլինի հաջողությունը մեր առաքելության: Այսօր, երբ մեր ժողովուրդը վերստին իր քայլերն է ուղղում դեպի Եկեղեցի, ակնկալություններ ունի մեր Եկեղեցուց ու եկեղեցականից, որպեսզի ճիշտ ընթացքով առաջնորդեն իրենց քայլերը դեպի Աստված: Դահն այս իմաստով կարևոր ու վճռական է:

Գնահատանքով պիտի արձանագրենք, որ իրապես տեսնում ենք նվիրյալ ծառայությունն ու գործունեությունը մեր եկեղեցականաց, և հավատում ենք, որ ավելին կարող ենք իրագործել՝ մեր Եկեղեցու շուրջ մեր ժողովրդին համախմբված պահելու, հավատարիմ պահելու մեր հայրերի սրբազան հավատքին և մեր հոգևոր ժառանգությանը:

Քարոզչության ընդարձակմամբ ժողովրդի մեջ և մեր ու մեր ժողովրդի աղոթական կյանքի զորացումով պիտի կարողանանք լրացնել հոգևոր կյանքում այսօր առկա բացերը, որոնք տեղ են թողնում օտարամուտ գաղափարների ու օտար ճանապարհների համար: Պիտի ջանանք, որ մեր ժողովուրդն ավելի լիարժեք ճանաչի մեր Եկեղեցին ու հաղորդ դառնա մեր հոգևոր արժեքներին, և այս ճանապարհին նախ և առաջ մեր հավատքը՝ իբրև քրիստոնյա անձեր ու եկեղեցականներ, մեր հոգևոր զգացումն է, որ պիտի կարողանանք փոխանցել մեր ժողովրդին:

Վերստին ուզում ենք հաստատել այն գնահատելի ծառայությունը, որն իրականացնում են մեր հոգևոր հայրերը Հայաստանում և Սփյուռքում, և որի արդյունքում մենք տեսնում ենք եկեղեցական մեր կյանքի օրավուր զորացումը: Սակայն, անշուշտ, բոլորս էլ ավելին ենք ձգտում, և ավելին է նաև պահանջվում, քանզի, գիտեք, ժամանակը չի սպասում արդի կյանքի ընթացքների մեջ, ներկա իրամայականների առջև:

Մենք հավատում ենք, որ միաբանական մեր այս հավաքն իր առջև դրված խնդիրներով, իր քննարկելիք հարցերով հոգևոր մեր կյանքի զորացման նոր հանգրվան պիտի դառնա: Մասնավանդ, կուզենայինք և առաջարկում ենք, որ միաբանական հավաքների քննարկումները՝ իբրև հոգևոր թեմաներով մտածումներ, իբրև եկեղեցականաց պատասխաններ այսօր բարձրացող հարցերի, հրապարակվեն առանձին տպագրքով: Դաքբերական նման հրապարակությունները, ուր զետեղված կլինեն մեր միաբանների հոդվածները, ուսումնասիրությունները, ներկա ժամանակի զանազան խնդիրների առնչությամբ՝ հասարակական, սոցիալական, քաղաքական, տնտեսական և այլն, կրոնական հայե-



ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ



ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

*ցակները, պիտի ընդլայնեն մեր Եկեղեցու քարոզչական գործունեության դաշտը:*

*Վերստին Մեր ուրախությունն ենք հայտնում միաբանական մեր հավաքի աողջությամբ և Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում ամենքին՝ հայցելով Բարձրյալի հովանավոր Աջի զորակցությունը մեզ բոլորիս մեր կոչման մեջ ու առաքելության ճանապարհին:*

*Թող Տերն Իր բարի հայացքը միշտ պահի մեր Եկեղեցու, նրա սպասավորների ու բարեպաշտ մեր ժողովրդի վրա: Ամեն:*

Նորին Սրբության օրհնության խոսքից հետո ժողովի բացումը կատարեց երիցագույն վարդապետ և հավաքի ընդհանուր ատենապետ Նարեկ վրդ. Պարոնյանը, որն էլ ներկայացրեց ժողովի ընդհանուր օրակարգը: Ապա ատենապետ ընտրվեց նաև Զատիկ վրդ Ավետիքյանը, իսկ ատենադպիրներ՝ Տ. Վազգեն աբղ. Նանյանը և Գարեգին աբղ. Հարությունյանը: Այնուհետև Հոգեշնորհ Նարեկ վարդապետը հանդես եկավ բանախոսությամբ՝ «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» բնաբանով:

Բանախոսությունից հետո տեղի ունեցան քննարկումներ, որոնց ընթացքում ներկա ժողովականներն իրենց հուզող հարցերն ուղղեցին բանախոսին, ինչպես նաև ներկայացվեցին նյութի շուրջ անձնական կարծիքներ և մոտեցումներ, որոնք ևս քննարկման առարկա դարձան, որով և ավարտվեց օրվա առաջին նիստը:

Ընդմիջումից հետո համագումարը շարունակեց իր աշխատանքը, որի ընթացքում ժողովականներն ունկնդրեցին Տ. Զատիկ վրդ. Ավետիքյանի «Եկայք առ իս» (Մատթ. ԻԵ 30) բնաբանով զեկուցումը, որից հետո միաբան հայրերը բաժանվեցին վեց տարբեր խմբերի, որոնցից յուրաքանչյուրին առաջադրվել էին տարբեր հարցեր, ինչպես, օրինակ՝ ինչպե՞ս և ինչո՞ւ հետևել Քրիստոսին, ի՞նչ է պահանջում Քրիստոս ինձանից այսօր, ինչո՞ւ և ինչպե՞ս եմ Աստծո կողմից ընտրված, ո՞վ է Քրիստոս հոգևորականի կյանքի մեջ, ինչո՞ւ ոչխարը չի հետևում հովվին և նմանատիպ այլ հարցադրումներ, որոնց ամեն խումբ փորձեց պատասխանել՝ համաձայն միաբաններից յուրաքանչյուրի անձնական փորձառության:

Ապա ժողովականները մեկտեղվեցին՝ միասնաբար քննարկելու և ներկայացնելու յուրաքանչյուր խմբի պատասխանները: Իսկ վերջում միասնաբար որոշեցին կիրակի օրը, հուլիսի 27-ին, Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին, մեկնելու Գեղարքունյաց թեմ, ուր բաժանվեցին առանձին խմբերի, այցելելու թեմի շուրջ 30 համայնքներ և իրենց պատգամն ու օրհնությունը բաշխելու հավատացյալ ժողովրդին:

Հաջորդ օրը, հուլիսի 25-ին, ժողովականները շարունակեցին իրենց աշխատանքը:

Առաջին նիստի ընթացքում Տ. Զարեհ ծ. վրդ. Պարոնյանը բանախոսեց՝ «Ինչպե՞ս կարելի է «Քրիստոսի Մարմնի շինությունը» գործնական դարձնել թե՛ մեր մեջ և թե՛ մեր հավատացյալ ժողովրդի համար» թեմայով, և ապա Վազգեն եպս. Միրզախանյանը զեկուցում կարդաց՝ «Հովհաննու Ավետարանի «Քաջ հովիվը» և ներկա հովիվ-միաբանը. նմանություններ և տարբերություններ» թեմայով, որոնք և դարձան օրվա քննարկման նյութը:

Առանձին քննարկումների ընթացքում միաբան հայրերն անդրադարձան քրիստոնեության առջև ծառացած ներկայիս մարտահրավերներին, հովվական աշխատանքում ունեցած

դժվարություններին ու դրանք հաղթահարելու միջոցներին: Արծարծվեցին ազգային ինքնության. ընտանիքի ու քրիստոնեական արժեքների պահպանմանը վերաբերող հարցեր:

Հավարտ օրվա երկրորդ նիստի միաբան հայրերը մեկնեցին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցի. ուր մասնակցեցին երեկոյան ժամերգության:

Հուլիսի 26-ին տեղի ունեցան եռօրյա միաբանական հավաքի վերջին երկու նիստերը:

Օրվա առաջին նիստի բանախոսն էր Տ. Արմաշ աբեղա Նալբանդյանը՝ «12 առաքյալների առաքելությունը և մեր նպատակի իրականացումը» թեմայով: Վերջինիս շուրջ ծավալվեցին քննարկումներ. ապա ամփոփվեցին համագումարի արդյունքները:

Եզրափակիչ նիստը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նիստին իրենց մասնակցությունն էին բերել նաև Հայաստանի և Սփյուռքի մի շարք թեմակալ առաջնորդներ. որոնք ներկայացրեցին թեմերից ներս կատարվող աշխատանքները. պատասխանեցին միաբան հայրերի հարցերին՝ առնչված եկեղեցական կյանքի կազմակերպման մի շարք խնդիրներին:

Ամենայն Հայոց Հայրապետն այնուհետև իր օրհնության խոսքն ասաց ներկա ժողովականներին. որով և ավարտվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցած եռօրյա միաբանական ժողովը:

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ՝ ԱՍՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԻՆ

*Սիրելի միաբաններ Մայր Աթոռի,*

*Վերստին Մեր ուրախությունն ենք հայտնում, որ ահա մի քանի օր դուք գտնվում եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և միաբանական հավաքի տարբեր նիստերով խմբվեցիք իրարու հետ՝ ձեր հոգևոր մտածումներն ու զգացումները, հովվական կյանքում ձեր անձնական փորձառությունը միմյանց փոխանցելու, նաև՝ խորհելու, թե ինչպես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը պիտի կարողանա առավել օգտակար ծառայություն բերել մեր Եկեղեցուն ու ժողովրդին:*

*Մենք պարբերաբար հետաքրքրվեցինք հավաքների ընթացքով, և ընդհանուր առմամբ դրական տպավորություններ ու գնահատականներ փոխանցվեցին Մեզ: Նարեկ Հայր Սուրբն այստեղ ասաց, որ տեղ գտան նաև թերություններ ու անպատեհություններ: Ընդունելով, որ դրանք բխում են մեր կյանքի ներկա իրողություններից, բնական ենք համարում նաև, բայց աստիճանաբար պետք է ձերբազատվենք նման բացերից, և միաբանական այս հավաքներն ավելի լիարժեք, նպատակային ու արդյունավոր պիտի լինեն, արձագանքող հրատապ անհրաժեշտություններին, հոգևոր մեր կյանքի պահանջներին: Այնուամենայնիվ, ժողովների մասին գոհունակ արտահայտությունները գերակշռող են: Գիտենք և ուրախ ենք, որ միաբանական այս հավաքները ողջունվում են ձեր կողմից, և յուրաքանչ-*

*յուրդ տեսնում եք օգտակարությունը նման համախմբումի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ ինչպես յուրաքանչյուրիդ համար անձնապես, այնպես և՝ իբրև մեկ ամբողջություն, իբրև՝ միաբանություն:*

*Եզրափակելիս այս հավաքին Մեր գնահատանքն ենք բերում մեր Եկեղեցու թեմական առաջնորդներին և բոլոր Սրբազան Հայրերին, ովքեր ընդառաջ Մեր հրավերին՝ եկել են Մայր Աթոռ և միաբանական հավաքի առիթով ներկայացրեցին մեզ իրենց թեմական կյանքը, առկա խնդիրներն ու մտահոգությունները, նաև՝ հաջողություններն ու նոր հեռանկարները, որպեսզի այդ ամենով ապրենք բոլորս:*

*Այսօր կուզեմ մեկ անգամ ևս հորդոր և կոչ ուղղել ձեզ, որպեսզի մշտապես առաջնորդվեք այն գիտակցությամբ, որ դուք ուր էլ լինեք, ներկայացնում եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ ձեր ուսերին կրում եք հայ եկեղեցականի՝ Մայր Աթոռի միաբանի պատիվը, բարի անունն ու համբավը, և որ ձեր ծառայությամբ ու կյանքով կոչված եք պանծացնելու լուսավոր ու նվիրական անունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Էջմիածնի միաբանի ճանապարհը միշտ պիտի բաց լինի դեպի աշխարհասփյուռ թեմերը մեր Եկեղեցու, դեպի կրթական հաստատությունները քույր Եկեղեցիների, և ամենուր, ամեն կառույց ու հաստատություն, ուր նրա ծառայության կարիքը կա: Ձեր ամեն լավը, ձեր հաջողություններն ուրախացնում են, զորեպնդում ու քաջալերում Մեզ, ձեր առաջնորդներին, Սուրբ Էջմիածնի լույսը առատացնում մեր ժողովրդի հոգում:*

*Սիրելի միաբաններ, այսօր ուրախ ենք նաև ձեզ փոխանցել Կ. Պոլսո Սրբազան Պատրիարք Հոր ողջույնները: Ամենապատիվ Տ. Մեսրոպ Պատրիարքի հետ այսօր առիթն ունեցանք խոսելու, և ցանկանում ենք ծանուցել ձեզ, որ հաջորդ մեր ժողովը հավանաբար կգումարվի իբրև Հայ Եկեղեցու երիտասարդ միաբանության համաժողով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կհավաքվեն ոչ միայն Մայր Աթոռի միաբանները, այլև բոլոր երիտասարդ միաբանները՝ մինչև եպիսկոպոսական աստիճան ունեցող:*

*Կրկին Մեր ուրախությունն ենք բերում այս ժողովի առիթով, որ հնարավորությունն ունեցանք ձեզ տեսնելու, որ հնարավորությունն ունեցանք ձեզ լսելու, ձեր խնդիրներին տեղյակ դառնալու, ձեր իղձերին, ցանկություններին, մտածումներին, նաև դժգոհություններին և այս հանդիպումների մեջ մեր եղբայրական սերը զորացնելու, մեր միաբանությունը ամրացնելու, մեր առաքելության ճանապարհին կարևոր, առաջնային խնդիրները վեր հանելու և մեր քայլերը ուղղորդելու դեպի այդ կարևորագույն խնդիրների բարվոք լուծմանը:*

*Թող Աստված հաստատուն պահի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, շեն՝ Նվիրապետական մեր Աթոռները, պայծառ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Թող Աստված զորացնի ձեզ, որպեսզի Էջմիածնի լույսը ձեր անձերի միջոցով միշտ ճառագի դեպի մեր ժողովուրդը՝ լուսավորելով ու ջերմացնելով նրանց կյանքը և Էջմիածնի սիրով շաղախելու նրանց կյանքը: Աստված օգնական մեզ բոլորիս՝ այն նվիրական առաքելության մեջ, որին կոչված ենք:*

*Շնորհք եւ սէր Աստուծոյ եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան: Ամէն:*

Երեկոյան համագումարի մասնակիցներն ուխտի մեկնեցին Օշական, ուր մասնակից եղան երեկոյան ժամերգությանը:

Կիրակի, հուլիսի 27-ին, Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին, միաբանները քարոզչական առաքելությամբ մեկնեցին Գեղարքունյաց թեմ: Մարզային իշխանությունների ներկայացուցիչների ուղեկցությամբ միաբան հայրերն առանձին խմբերով այցելեցին թեմի երկու տասնյակից ավելի համայնքներ, հանդիպում ունեցան հավատացյալների հետ, մասնակից եղան տոնի առիթով կազմակերպված հանդիսություններին:

*ԱՐԹՈՒՐ ՄՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*



ԹԵՂԵՆԻՔԻ ՆՈՐԱՕԾ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ



ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

# ՁԵՌԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՎԵՑ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԹԵՂԵՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիսի 5-ին Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Կոտայքի թեմում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և ընթերակա եպիսկոպոսների, օծվեց Թեղենիք գյուղի նորակառույց Սրբոց Նահատակաց եկեղեցին:

Եկեղեցին կառուցվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և Պոզապալյան ընտանիքի հովանավորությամբ ու ջանքերով և շվեյցարաբնակ բարերարներ տեր և տիկին Հակոբ Գաբրիելյանների աջակցությամբ: Եկեղեցու հիմնարկեքը կատարվել էր երեք տարի առաջ՝ ձեռամբ Ներսես Սրբազանի:

Օծման արարողությանը մասնակցում էին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը, Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Դերենիկ վրդ. Դավթյանը, Մայր Աթոռի միաբաններ, Կոտայքի մարզպետ Կովալենկո Շահգելդյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ:

Մինչ եկեղեցու օծման արարողությունը Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը բարիգալըստյան խոսք ուղղեց Նորին Սրբությանը և մասնակից բոլոր հյուրերին: Սրբազան Հայրը մասնավորապես ասաց. «Թող Ձեր օծած այս Սուրբ Սեղանից, Սուրբ Մկրտարանից և այս Սրբոց Նահատակաց եկեղեցուց ծնվեն բազում որդիներ՝ պերճ լինելու համար իրենց Հայրենիքին, իրենց Եկեղեցուն և իրենց հայրերի սուրբ հավատքին»: Այնուհետև կատարվեց Ս. Սեղանի, սյուների և Մկրտության Ս. Ավազանի օծման արարողությունը:

Սրբազան արարողությունից հետո Վեհափառ Հայրապետն իր շնորհավորանքի խոսքն ուղղեց ներկաներին՝ նշելով. «Մենք փառք և գոհություն ենք տալիս Աստված բարձրացնում, որ երկար տարիներ հոգևոր կյանքից, աղոթատեղիներից զուրկ այս տարածաշրջանում ահա մի նոր եկեղեցի է կառուցվում և իր դռները բացում հավատացյալ մեր ժողովրդի առջև՝ շնորհիվ Գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի ջանքերի ու նվիրումի: Մեր աղոթքն է, որպեսզի մեր ժողովրդի զավակներն ապրեն իրենց կյանքը եկեղեցու կամարների ներքո և առաջնորդվեն եկեղեցու Սուրբ Խորանից բացվող՝ Քրիստոսի Սուրբ Ավետարանի պատգամներով ու պատվիրաններով, մեր հայրերի սրբազան հավատքով, հավատարիմ դարավոր մեր ավանդույթներին ու կարգերին»:

Ի գնահատումն Սրբազան Հոր գեղեցիկ այդ իրագործման՝ Նորին Սրբությունը Ներսես արքեպս. Պոզապալյանին պարգևատրեց Հայ Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» պատվո շքանշանով (տե՛ս էջ 3), իսկ նորաօծ եկեղեցուն նվիրեց Ս. Հաղորդության սկիհ:

Սրբոց Նահատակաց եկեղեցու օծման ավարտին Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս. Քարամյանը մատուցեց անդրանիկ Ս. Պատարագը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հուլիսի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ընդունեց հերթական ուխտավորներին: Մայր Տաճարի օծման 1700-ամյակի առիթով Ս. Էջմիածին էր ժամանել վրաստանաբնակ ուխտավորների Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանի առաջնորդությամբ: Ուխտավորների թվում էին թեմական և համայնքային կառույցների ղեկավարներ՝ Վիրահայոց թեմի թեմական խորհրդի անդամ, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը, Աջարիայի հայերի «Վերածնունդ» միության նախագահ Արմեն Գևորգյանը, Ծալկայի շրջանային խորհրդի նախագահ Ռազմիկ Անեսյանը, հայկական ռադիոժամի փսօրեն Սուսաննա Խաչատրյանը, ներկայացուցիչներ Վրաստանի հայերի միությունից, բազմաթիվ ուխտավորներ Թբիլիսիից, Բաթումիից, Ջավախքից, Ծալկայից և այլ վայրերից:

Մայր Տաճարում Ուխտի Պատարագ մատուցեց Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը: Սրբազան Հայրը մեկ ամիս առաջ այս նույն տաճարում, ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ստացավ եպիսկոպոսական ձեռնադրություն և օծում:

Հանուն Նորին Սրբության՝ ուխտավորներին ողջունեց Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանը: Հայր Սուրբը մասնավորապես նշեց, որ Վիրահայոց թեմը հարուստ ավանդույթներ ունի, որ երկար տարիներ կարևոր դերակատարություն է ունեցել և այսօր էլ շարունակում է ունենալ Ս. Էջմիածնի հոգևոր առաքելության մեջ:

Ապա ուխտապահ ժողովրդին դիմեց պատարագիչ Սրբազան Հայրը՝ անդրադառնալով Ս. Էջմիածնի խորհրդին և հորդորելով հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն և լուսավորչահաստատ Ս. Աթոռին, մատնանշելով նաև Ս. Էջմիածնի պատմական դերը հայոց պետականության զորացման գործում (տե՛ս էջ 17):

Հավարտ Ս. Պատարագի Վեհարանում տեղի ունեցավ ընդունելություն:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՀԱՐԱՎԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Տիրոջ Պայծառակերպության տոնին՝ հուլիսի 27-ին, Հարավային Ռուսաստանի թեմակալ առաջնորդ Տ. Մովսես եպս. Մովսիսյանի գլխավորությամբ Ս. Էջմիածին ուխտի էին եկել թեմի տարբեր կառույցների ներկայացուցիչներ և բազմաթիվ հավատացյալներ՝ ի նշանավորումն Մայր Տաճարի օծման 1700-ամյակի: Ուխտավորներին միացել էին նաև Նոր Արմավիրի քաղաքային դումայի նախագահ Վ. Ի. Պավլիչենկոն, Սլավյանսկի քաղաքային իշխանության ներկայացուցիչներ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ մատուցվեց Ուխտի Ս. Պատարագ: Պատարագիչն էր առաջնորդ Սրբազանը:

Դիմելով ուխտապահ ժողովրդին՝ Սրբազան Հայրն անդրադարձավ Ս. Էջմիածնի խորհրդին՝ հորդորելով հավատարիմ մնալ Մայր Եկեղեցուն և առաքելահիմն ու լուսավորչահաստատ Ս. Աթոռին:

«Մենք այսօր եկել ենք համայն հայության սրբազան այս վայրը՝ մեր որդիական խոնարհությունն ու անմնացորդ սերն արտահայտելու հանդեպ Ամենայն Հայոց Հայրապետը և ուխտելու, որ պիտի արժանի զավակները լինենք Մայր Աթոռ Ս. Էջմիածնի»,- նշեց Սրբազան Հայրն իր քարոզում (տե՛ս էջ 20):

Հավարտ Ս. Պատարագի Վեհափառում Նորին Սրբությունն ընդունեց ուխտավորներին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԳԱՅ ԳՅՈՒՂԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՑՈՒՑԱԴՐՎԵՑԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մեկ տարի առաջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արմավիրի թեմի Գայ գյուղի Ս. Նշան ծխական համայնքի հոգևոր հովիվ Տ. Գևորգ քահանա Կրտիկաշյանի և երեցկնոջ նախաձեռնությամբ և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղանի հովանավորությամբ Գայ գյուղում հիմնվեց մշակութային կենտրոն դպրոցահասակ երեխաների համար:

Հուլիսի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում բացված ցուցահանդեսը մեկամյա կենտրոնի գործունեության յուրօրինակ հաշվետվությունն էր: Ներկայացված էին կենտրոնի ասեղնագործության և նկարչության խմբակների սաների աշխատանքները՝ ավետարանական թեմաներով արված 25 ջրանկար և Թորոս Ռոսլինի մանրանկարներով՝ 15 ասեղնագործ աշխատանքներ:

Ցուցահանդեսի բացումը կատարեց Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Ադամյանը: Ներկաները բարձր գնահատեցին երեխաների աշխատանքը և մշակութային կենտրոնի գործունեությունը:

Բացի վերը նշված խմբակներից՝ կենտրոնում գործում է նաև թատերական խմբակ և դպրաց դաս: Վերջինիս անդամները, շուրջ 15 աղջնակներ, ամեն կիրակի գյուղի եկեղեցում երգում են Ս. Պատարագի դպրաց բաժինը:

«Գոհ են և՛ երեխաները, և՛ ծնողները, և՛ մենք: Կենտրոնը գյուղական այս բնակավայրում երեխաներին արվեստի հետ շփվելու հնարավորություն է ստեղծում և միաժամանակ այս ճանապարհով մոտեցնում նրանց Եկեղեցուն»,- ասաց կենտրոնի պատասխանատու, երեցկին Հասմիկ Մխիթարյանը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

*ԼՈՒՐԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻՑ*

# ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԻՐԱՑ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԷՋ

Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան թեմի բարեխնամ առաջնորդ՝ Գեր. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանի հրաւէրով, Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութիւնն իրենց Վարչական Մարմնով եւ հաւատացեալներով՝ շուրջ 70 հոգի, Շաբաթ, Յուլիս 12-ին, 2003, երեկոյեան ժամը 7.30-ին, հաւաքուեցան Առաջնորդարանի «Արմէն եւ Կլորիա Համբար» դահլիճին մէջ, երեկոյեան մասնաւոր արարողութեան մասնակցելու համար:

Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ եւ մասնակցութեամբ առաջնորդի օգնականներ՝ Արժ. Տ. Սիփան քհն. Միսեանի եւ Արժ. Տ. Յովսէփ քհն. Յակոբեանի, ինչպէս նաեւ Կլէնտէյլի Սուրբ Գէորգ Հայց. եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Մամբրէ քհն. Քեսապեանի եւ Արարատ Տան այցելու հովիւ Արժ. Տ. Զարեհ քհն. Մանսուրեանի, տեղի ունեցաւ երեկոյեան ժամերգութիւն, որուն իրենց բաժինը բերին նաեւ ներկայ հաւատացեալները:

Առաջնորդ Սրբազան Հայրը քարոզեց Քրիստոսի Այլակերպութեան մասին եւ շեշտեց աղօթքին կարեւորութիւնը՝ հոգեպէս այլափոխուելու եւ միշտ Տիրոջ ներկայութիւնը զգալու մեր հոգիներուն մէջ: Սրբազան Հայրն իր գոհունակութիւնը յայտնեց, որ Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութիւնը, գլխաւորութեամբ Արշակ Եղբայր Գալէմտէրեանի, առաջին անգամ ըլլալով նորակառոյց դահլիճին մէջ հաւաքուելով, թեմիս հոգեւորականներուն հետ միասնաբար շաբաթ երեկոյեան ժամերգութիւն կը կատարէ եւ իր աղօթքը կը բարձրացնէ առ Աստուած:

Ապա Հայ Եկեղեցւոյ Եղբայրակցութեան անդամներէն խումբ մը երիտասարդ-երիտասարդուհիներ շարականներ երգեցին, որուն յաջորդեց փոքրիկ պատանիի մը ջութակի ընկերացութեամբ, հոգեւոր երգերու փունջ մը՝ ցնծութիւն եւ մխիթարութիւն պատճառելով բոլորին:

Արշակ Եղբայր Գալէմտէրեան Եղբայրակցութեան անունով իր շնորհակալութիւնը յայտնեց առաջնորդ Սրբազան Հօր, որ սրտբաց եւ սիրով հրաւիրած էր զիրենք միասնաբար աղօթելու: Ան ներկաներուն յիշեցուց Գեր. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանի կողմէ իր լսած պատգամէն մարդ արարածին փրուած հոգեւոր արժէքին եւ ծառայութեան ոգիին մասին: Ապա Հին Ուխտէն առնելով կարգ մը ընտրեալ անձերու կեանքը եւ քարոզչութիւնը, շեշտեց, թէ այսօր մարդիկ ծարաւի են Աստուծոյ խօսքին, եւ թէ Աւետարանը պէտք է քարոզուի ամենուրեք:

Եղբայր Արշակ կարդաց Եղբայրակցութեան հիմնադիրներուն անունները եւ յայտնեց, թէ իրենք առանձին Եկեղեցի մը չեն, այլ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ կողքին Աւետարանի քարոզչութեամբ կը յուսադրեն մեր Սուրբ Եկեղեցւոյ հաւատաւոր զաւակներուն միտքն ու հոգին: Ան իր պատրաստակամութիւնը յայտնեց լսելու եւ հետեւելու Սրբազան Հօր ցուցմունքներուն եւ ուղղութիւններուն:

Պաշտամունքի աւարտին Սրբազան Հայրը գնահատեց Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան երկարամեայ ծառայութիւնը եւ խոստացաւ աջակցիլ անոնց՝ ի նպաստ մեր ժողովուրդի հոգեւոր վերազարթնումին:

Սրբազան Հայրն իր հեղինակած *«Գանձարանայոց Համայնքին՝ Ջրոյս ի Քոյոց..»* գիրքէն մէկական օրինակ նուիրեց իւրաքանչիւր ընտանիքի: Իսկ փոքրիկներուն նուիրեց չորսական գունաւոր գրքոյկներ՝ աւետարանական պատմութիւններով եւ նկարներով:

Ներկաները հոգեւոր մթնոլորտի մէջ ընկերային ջերմ պահ մը անցուցին միասնաբար, ուր հիւրասիրութեան ընթացքին առիթը ունեցան անձամբ խօսակցելու առաջնորդ Սրբազան Հօր եւ հոգեւորականներուն հետ:

## ԴԱՏԱՒՈՐ ԱՐՄԱՆԴ ԱՐԱՊԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԻ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Յուլիս 24-ին, 2003 Վէն Նայսի Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցին լեցուած էր, երբ բարեկամներ և գործակիցներ եկած էին իրենց յարգանքն ու սէրը յայտնելու Գալիֆորնիա նահանգի Գերագոյն Ատեանի հանգստեան կոչուած պատուարժան դատաւոր Արմանդ Արապեանի, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ արժանացած է «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանին (տե՛ս էջ 5):

Արևմտեան թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեան նախագահեց տպաւորիչ արարողութեան: Առաջնորդի օգնականներէն Արժ. Տ. Միփան քհն. Մխսեան կարդաց Վեհափառ Հայրապետին կոնդակը, իսկ եկեղեցւոյ հոգևոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քհն. Տէմիրճեան կարդաց կոնդակին անգլերէն թարգմանութիւնը: Արարողութեան մասնակցեցան նաև Արժ. Տ. Ղշան աւագ քհն. Պէյլէրեան, Արժ. Տ. Զաւէն աւագ քհն. Տէմիրճեան և եկեղեցւոյ մի քանի սարկաւագներ:

Առաջնորդ Սրբազան Հայրը իր գնահատական խօսքը ըսաւ և դատաւոր Արապեանին մատուցած ծառայութիւններուն մասին ամփոփ կերպով անդրադառնալէ ետք, Նորին Սրբութեան կողմէ պարգևատրուած «Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ» շքանշանով զարդարեց անոր կուրծքը և շքանշանով մըն ալ պարգևատրեց անոր փիկինը՝ Նէնսի Արապեանը, որ աւելի քան տասը տարիներէ ի վեր Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմնի միջոցաւ կը ծառայէ Արևմտեան թեմին:

Տպաւորիչ արարողութենէն ետք, ներկաները ուղղուեցան դէպի եկեղեցւոյ Գարակօզեան Սրահը, ուր սեղանները գեղեցիկ կերպով զարդարած էին ծաղիկներով: "The Heavenly Chants"-ի Սալբի Գերոնեանի սրինգով և մօր՝ Սօսիի մեղմ քնարով, ջերմացաւ մթնոլորտը: Եկեղեցւոյ Ծխական Խորհուրդի ատենապետ փիար Ճէզ Տէրտէրեան բարի գալուստ մաղթեց բոլորին: Սեղանին օրհնութիւնը կատարեց առաջնորդ Սրբազան Հայրը: Մարի Յակոբեան արտասանեց «Գովք Հայաստանի» բանաստեղծութիւնը: Ընթրիքը պատրաստուած էր եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կողմէ:

Պատուարժան դատաւոր Տիգրան Թէվրիզեան ներկայացուց պատուարժան հիւրերը, ինչպէս Շրջանային իրաւաբան Սթիվ Գուլին, ոստիկանապետ Լի Պաքան, վերակացու Մայքըլ Անթոնովիչը, Հայաստանի գլխաւոր հիւպատոս Վայերի Մկրտումեանը և երգիչ-դերասան Ճէմզ Տէրընը, ինչպէս նաև մի քանի ուրիշ դատաւորներ, փաստաբաններ, պետական պաշտօնեաներ և նշանաւոր հիւրեր: Դատաւոր Թէվրիզեան ապա կարդաց դատաւոր Արապեանին կենսագրութիւնը և յիշեց անոր ստացած շատ մը պատուոյ շքանշանները աշխարհի զանազան վայրերուն մէջ: Դատաւոր Արապեան արժանացած է նաև Երուսաղէմի հայոց Պատրիարք Ամեն. Տ. Թորգոմ արքեպս. Մանուկեանի կողմէ «Սուրբ Յակոբոս Առաքեալ»-ի շքանշանին, որ շատ քիչեր միայն արժանացած են այս պատուին:

Յայտագրի աւարտին դատաւոր Արապեան անձամբ և իր կնոջ՝ Նէնսիի անունով, իր խորին շնորհակալութիւններն ու զգացումները յայտնեց բոլորին, որոնք եկած էին գիեք պատուելու: Ան յատկապէս իր երախտագիտութիւնը յայտնեց թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան արքեպս. Տէրտէրեանի, որ անձամբ կատարած էր պարգևատրումը և արտայայտած իր սրտի խօսքը: Նոյնպէս շնորհակալութիւն յայտնեց դատաւոր Տիգրան Թէվրիզեանին, Սուրբ Պետրոս Հայց. եկեղեցւոյ հոգևոր հովիւ Արժ. Տ. Շնորհք քհն. Տէմիրճեանին, եկեղեցւոյ Տիկնանց Միութեան, որոնք պատրաստած էին օրուան ընթրիքը: Յիշատակելի այս երեկոն փակուեցաւ առաջնորդ Սրբազան Հօր Օրհնութեան աղօթքով:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

*ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄՈՒՄ*

# ՃԱՏՐԱԿԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ ԳԱՐՐԻ ԿԱՍՊԱՐՈՎԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԻՐ ԱԶԳԱԿԻՑՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Կիրակի Յուլիս 13, 2003, յետ միջօրէի ժամը 2:30-ին, աւելի քան 300 անձեր փեղ գրաւած էին Առաջնորդարանի համալիրի Հայկ և Ալիս Գավուքճեան հանդիսասրահին մէջ՝ վայելելու համար ճատրակի աշխարհի ախոյեան Գարրի Կասպարովի ելոյթը և հանդիպում ունենալու անոր հետ:

Այս ձեռնարկը, որուն կը նախագահէր Ամերիկայի Արևելեան թեմի առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, կազմակերպուած էր Ս. Վարդան Մայր Տաճարի Ցայտագիրներու Յանձնախումբի երիտասարդ անդամներուն կողմէ՝ ղեկավար ունենալով Ս. Վարդան Տաճարի լուսարարապետ Արժ. Տ. Մարտիրոս քհն. Չևեանը:

Ներկայ էին նաև Անգլիոյ հայոց նախկին առաջնորդ Գեր. Տ. Եղիշէ արքեպս. Կիզիրեան, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն և լիազօր դեսպան փիար Արմէն Մարտիրոսեան, Ռուսաստանի Նիւ Եորքի փոխհիւպատոս Վահէ Էնկիպարեան, ՄԱԿ-ի Ցայտագիրներու և Վարչական Յանձնախումբի քարտուղար տոքթ. Մովսէս Աբէլեան և Նիւ Եորքի մարզական պատասխանատու Քէնէթ Փոպզիպա:

Այս հանդիպումը կարելի եղաւ իրականացնել շնորհիւ փիար Սեդրակ Ակոնեանի, որը ներկայացուց օրուան հիւրը: Այնուհետև խօսք ըսաւ նշանաւոր շախմատիստը:

Հանդիպումն ամփոփեց Ամերիկայի Արևելեան թեմի առաջնորդ Գեր. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, որ ըսաւ. «Ես ճատրակ խաղցող մը չեմ, այդ պատճառաւ չեմ կրնար ճատրակի մասին խօսիլ, սակայն կրնամ արտայայտուիլ այսօրուան պատգամին մասին: Կասպարով խօսեցաւ հոգևոր միասնութեան մասին, և անոր արտայայտութիւնները շատ տեղին էին: Անոր խօսքերը ցոյց տուին, թէ ան որքան խելացի է, որովհետև կրցած է ըմբռնել, թէ մենք կրնանք իրարմէ տարբեր ըլլալ, ապրիլ զանազան վայրերու մէջ, խօսիլ տարբեր լեզուներ, սակայն կրնանք միացած ըլլալ հոգիով»:

Ապա, առաջնորդ Սրբազան Հայրը Արևելեան թեմի անունով Գարրի Կասպարովին նուիրեց Վերազարթօնքի մեդալը:

Սրբազան Հօր խօսքէն ետք՝ ներկաները օրուան հիւրին ուղղեցին զանազան հարցումներ, որոնց ան պատասխանեց մեծ համբերութեամբ և սիրով:

Երեկոյթի աւարտին՝ ճատրակի բոլոր ժամանակներու աշխարհի ուժեղագոյն վարպետ Գարրի Կասպարով ստորագրեց ***«Կասպարովն Աշխարհի Դէմ»*** իր գիրքը, որ փեսակ մը օրագրութիւնն է Microsoft Zone համակարգիչին դէմ իր ունեցած պատմական մրցումին:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

# ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ (CEC) 12-ՐԴ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՆ ՆՈՐՎԵԳԻԱՅԻ ԹՐՈՆԴՀԱՅՄ ՔԱՂԱՔՈՒՄ

(25 հունիսի - 2 հուլիսի 2003 թ.)

Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսը (ԵԵԿ) տարածաշրջանային էկումենիկ կազմակերպություն է՝ ստեղծված 1950-ական թվականներին, և իրենում ներառում է Եվրոպայի բոլոր երկրները ներկայացնող 123 Եկեղեցիներ, ինչպես նաև 25 համագործակցող կազմակերպություններ: Այստեղ հանդես են գալիս Անգլիկան, Բապտիստ, Լյութերական, Ռեֆորմիստական, Հոգեգալստական, Ուղղափառ, Արևելյան Ուղղափառ և Հին Կաթոլիկ Եկեղեցիները: ԵԵԿ-ն կոչ է անում Քրիստոնեական Եկեղեցիներին ապրել սերտ միության, հաշտության և համընդհանուր հույսի մթնոլորտում՝ հաղթահարելով Եվրոպայում առկա բոլոր պատմական և լեզվամշակութային, աշխարհագրական և տնտեսական բաժանումները:

ԵԵԿ-ի հովանու ներքո Եկեղեցիները միասնաբար աշխատում են մեկ համընդհանուր Եկեղեցու կայացման և Եվրոպայի ժողովուրդներին միասնական քրիստոնեական վկայության բերելու ուղղությամբ:

ԵԵԿ-ի գերագույն ղեկավար մարմինը Ասամբլեան է: Այն գումարվում է վեց տարին մեկ անգամ և իր մեջ ներառում բոլոր անդամ Եկեղեցիները:

Սույն թվականի հունիսի 25-ից հուլիսի 2-ը Նորվեգիայի Թրոնդհայմ քաղաքում տեղի ունեցավ ԵԵԿ-ի 12-րդ Գլխավոր Ասամբլեան, որին Ս. Էջմիածնից մասնակցեցին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը, Շիրակի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Միքայել եպս. Աջապահյանը, ԵՀԽ Հայաստանյան Կլոր Սեղանի Կոորդինատոր պրն Կարեն Նազարյանը, Էկումենիկ Տեղեկատվական Կենտրոնի ծրագրերի տնօրեն տիկին Նաիրա Մարտիրոսյանը՝ որպես Հայ Առաքելական Եկեղեցու ներկայացուցիչներ, և Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի աշխատակցուհի Գայանե Ալեքսանյանը:

ԵԵԿ-ի վարչության կողմից Ասամբլեայի Ծիսական արարողությունների կազմակերպիչ մարմնի մեջ էր ընդգրկված նաև Շվեյցարիայի հայոց հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Աբել քահանա Մանուկյանը:

Ասամբլեայի թեման էր «Հիսուս Քրիստոս բուժում է և հաշտեցնում. մեր վկայությունը Եվրոպայում», որն իր ենթատեքստում ուներ տարբեր երկրների միջև առկա անցյալի տարաձայնությունների և խնդիրների հաղթահարումը:

Բացման արարողությունը տեղի ունեցավ հունիսի 26-ին, Թրոնդհայմ քաղաքի Նիդարոս Մայր Տաճարում, ուրին ներկա էին Նորվեգիայի թագավորը և վարչապետը, իսկ քարոզիչն էր Նորին Ամենասրբություն Բարդուղիմեոս Ա Տիեզերական Պատրիարքը:

Այդ արարողությունը ներկայացնում էր ջրի մաքրագործող խորհուրդը. բոլոր պատվիրակություններն իրենց երկրներից բերել էին ջուր, որը արարողության ընթացքում լցվեց մի ընդհանուր ամանի մեջ՝ որպես միավորման խորհրդանիշ: Այն ամբողջ մի շաբաթ մնաց եկեղեցում:

Ժողովի ընթացքում կարդացվեցին տասնհինգ թեմատիկ զեկուցումներ «ամոքման և հաշտության» հետ կապված մի շարք հարցերի վերաբերյալ, և ներկայացվեց, թե ԵԵԿ ինչպես է զբաղվում այդ հարցերով Եվրոպայում: Այդ զեկույցները նաև մարտահրավեր էին ԵԵԿ-ի հետագա աշխատանքի համար տարբեր ոլորտներում, ինչպիսիք են հաշտեցման գործընթացները, գլոբալիզացիան, վկայությունն ու առաքելությունը, փոքրամասնություն և մեծամասնություն հանդիսացող Եկեղեցիները, հաղորդակցությունը, կրոնների միջև երկխոսությունը և այլն: Ասամբլեայի աշխատանքներն ընթացան չորս բաժիններով: Այդ քննարկումների ժամանակ ԵԵԿ-ի գլխավոր քարտուղարը և Կենտրոնական Կոմիտեն հանդես եկան զեկույցներով, ներկայացվեցին առաջարկություններ ԵԵԿ-ի հետագա աշխատանքների վերաբերյալ:

Բաժինների աշխատանքներին զուգահեռ Ասամբլեայի ընթացքում կազմվեցին հանձնախմբեր, որոնցից երկուսում ընդգրկվեցին Հայ Եկեղեցու ներկայացուցիչները՝ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը՝ ԵԵԿ քաղաքականության ուղղությունների, և Նաիրա Մարտիրոսյանը՝ հասարակայնությանն առնչվող խնդիրների հանձնախմբերում:

Ասամբլեայում տեղի ունեցան նաև երեք հատուկ նիստեր.

1. Քարտա Էկումենիկայի քննարկում, որը մի փաստաթուղթ է Եվրոպայի Եկեղեցիների միջև աճող համագործակցության մասին՝ պատրաստված ԵԵԿ-ի և Եվրոպայի Կաթոլիկ Եպիսկոպոսների Կոնֆերանսների Խորհրդի կողմից, 2001 թ. (Այս մասին տե՛ս «Էջմիածին» ամսագրի նախորդ համարը՝ էջ 127):

2. Երիտասարդական ժողով՝ կազմակերպված Համաշխարհային Ուսանողական Քրիստոնեական Ֆեդերացիայի կողմից, որի ժամանակ ներկայացվեցին երիտասարդ սերնդի էկումենիկ տեսիլքներն ու մարտահրավերները:

3. Նիստ՝ նվիրված Եվրոպային, որը մի փորձ էր բացահայտելու, թե եվրոպական միավորման գործընթացում ինչ է կատարվում Եվրոպայում «միություն բազմազանության մեջ» որոնումների ընթացքում, Եվրոպայի դերը աշխարհում և Եկեղեցիների դերը այդ հարցերի լուծման գործում:

Ընտրվեց նաև ԵԵԿ նոր Կենտրոնական Կոմիտե: Կենտրոնական Կոմիտեն 40 անդամից բաղկացած վերահսկող մարմին է, որն իր ամենամյա հանդիպումների ժամանակ քննարկում է ԵԵԿ Ասամբլեայի կայացրած որոշումների իրականացման ընթացքը: Հայ Եկեղեցու կողմից Կենտրոնական Կոմիտեի անդամ ընտրվեց Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Կենտրոնական Կոմիտեն իր առաջին գումարման նիստում որոշեց առաջիկա հանդիպումը կայացնել Ժնևում, 2003 թ. դեկտեմբերի 14-18-ը:

Ասամբլեայի ընթացքում մատուցվեցին երեք Պատարագ՝ Բողոքական, Հայկական և Բյուզանդական ծեսերով: Հայկական Պատարագը մատուցվեց հունիսի 29-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 9-ին, Նիդարոսի Մայր Տաճարում: Պատարագիչն էր Գերաշնորհ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը:

Հաջորդ օրը, հունիսի 30-ին, առավոտյան, տեղի ունեցավ ժամերգություն, որն իր հիմքում ուներ հայկական գիշերային ժամերգությունը: Ինչպես բոլոր չորս առավոտյան ժամերգությունները, հայկականը նույնպես ուներ իր խորհրդանիշը՝ հայկական խաչքարը: Ժամերգության սկզբում բոլոր մասնակիցներին բաժանվեցին հայկական փոքրիկ խաչեր, և արարողության ընթացքում հայկական խաչքարի նշանակության մասին գերմաներենով բացատրական խոսք ասաց Տ. Աբել քահանա Մանուկյանը:

Հուլիսի 2-ին փակման արարողությունը տեղի ունեցավ Նիդելվան գետի ափին: Քարոզիչն էր Քենթրբերիի Արքեպիսկոպոս Գերաշնորհ Ռոուան Ուիլիամսը: Արարողության ընթացքում Ուղղափառ ծեսով օրհնվեց տարբեր երկրներից բերված ջուրը, որը թափվեց Նիդելվան գետի մեջ: Այնուհետև Ոսկան և Միքայել Սրբազանները հայկական մյուռոնով օրհնեցին Նիդելվան գետը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի և Էկումենիկ Տեղեկատվական կենտրոնի աշխատակիցների ջանքերով պատրաստվել և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հովանավորությամբ տպագրվել էր նաև մի գիրք՝ «ԵԵԿ-ի անդամ Եկեղեցիները» վերնագրով, անգլերեն լեզվով, որը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվերն էր Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի 12-րդ Գլխավոր Ասամբլեային: Գիրքը բաժանվեց բոլոր եկեղեցիների պատգամավորներին:

*ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*
*Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

# ՋՐՎԵԺԻ Ս. ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐՁԱՎ «ՍԻՆԴԵՍՄՈՍԻ» ԱՆԴԱՄ

Հուլիսի 14-22-ն Ալբանիայի Դյուրես քաղաքի մոտ գտնվող Ս. Վլասի (✝ 316, Սեբաստիա) գողտրիկ վանական համալիրում «...*դուք Իմ վկաները պիտի լինեք*» (Գործք. Ա 8) խորագրով տեղի ունեցավ «Սինդեսմոսի» XVII հոբելյանական համաժողովը, որին մասնակցում էին շուրջ 40 երկրներից եկած ավելի քան 150 ներկայացուցիչներ: Համաժողովի նպատակն էր մեկ անգամ ևս վկայել և հաստատապես ամրագրել այն ճշմարտությունը, որ մենք՝ ուղղափառ երիտասարդներս, անբաժանելի ու անքակտելի անդամներն ենք Մեկ. Ընդհանրական. Առաքելական և Սուրբ Եկեղեցու, ինչպես նաև նոր ուղիներ ու ճանապարհներ գտնել երկրի վրա «Սինդեսմոսի» կոչումն առավել ամբողջական իրականացնելու համար՝ «*ծառայելով Եկեղեցուն և Նրա միությանը, վկայությանը, առաքելությանը և աշխարհի կյանքի վերանորոգմանը*» («Սինդեսմոսի» Սահմանադրություն, Հոդված 2.1): Հոբելյանական այս արարողությանը Հայաստանից մասնակցեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Տիգրան սրկ. Բաղումյանը և Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու երիտասարդաց միության ատենապետուհի Լիլիթ Սարգսյանը:



Համաժողովի ընթացքում

«Սինդեսմոսը» հունարեն բառ է, որ նշանակում է «կապ», այս դեպքում՝ «միության կապ» ուղղափառ երիտասարդների միջև, որտեղ ամենուրեք տիրում է քրիստոնեական սերն ու փոխադարձ վստահությունը միմյանց նկատմամբ: «Սինդեսմոսը» հիմնադրվել է 1953 թ. Ֆրանսիայում, թեպետ ուղղափառ երիտասարդներին համախմբող այս կազմակերպության արմատներն ավելի խորն են:

Դեռեւս 1920-1953 թթ. տեղի են ունեցել բազմաթիվ հանդիպումներ ուղղափառ զանազան երիտասարդական կազմակերպությունների միջեւ, որոնք էլ հետագայում հիմք են հանդիսացել «Սինդեսմոսի» ստեղծմանը: Ընդհանրապես ուղղափառ երիտասարդներին համախմբելու այս վեհ գաղափարի առաջին ջատագովները երկու ռուս փարագիր աստվածաբաններ էին՝ Հայր Բարսեղ Զենկովսկին և Հայր Լեոն Զանդերը: Եվրոպայում բնակություն հաստատած ռուս ուղղափառ աստվածաբանների նպատակն էր ուղղափառ հավատքի սերմանումը երիտասարդ սերնդի մեջ ու «Հավատո հանգանակի» «Ընդհանրական» եզրի իրագործումը կյանքում: 1953 թ. ուղղափառ նշանավոր աստվածաբան Հովհաննես Մեյենդորֆը, խոսելով «Սինդեսմոսի» մասին, ասել է. *«Ընդհանրականություն այլեւս վերացական վարդապետության խնդիր չէ, որ շարադրված է կատեխիզմների մեջ, այլ մի կենդանի իրականություն, առանց որի ուղղափառ քրիստոնեական կյանք գոյություն չունի»*:

Այսօր «Սինդեսմոսի» անդամ են 125-ից ավելի ուղղափառ երիտասարդական կազմակերպություններ, ուսումնական և աշխարհիկան հաստատություններ շուրջ 42 երկրներից: 1961 թ. սկսած «Սինդեսմոսի» գործունեությանը մասնակցել են նաև Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների ներկայացուցիչները: Մասնավորապես նույն թվականին տեղի ունեցած «Սինդեսմոսի» V համաժողովին մասնակցել են Հայր Գարեգին Սարգսյանը (հետագայում Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս) ու Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Հայր Անտոնիոս Ամինը: Հետաքրքիր է, որ 1936 թ. կատարված մի լուսանկարում, ուր պատկերված են Ուղղափառ ուսուցիչների միջազգային երկրորդ կոնգրեսի անդամները, հանդիպում ենք նաև Նինա Ներսիսյանի անվանը, որի մասին, ցավոք, այլ մանրամասներ հայտնի չեն: Նշենք, որ Ֆինլանդիայում տեղի ունեցած «Սինդեսմոսի» XVI գագաթնաժողովին Հայ Առաքելական Եկեղեցու կողմից մասնակցել է Միքայել սրկ. Մելիքյանը (այժմ Տ. Վահրամ քհն. Մելիքյան):

Հուլիսի 15-ին համաժողովի բոլոր մասնակիցները եկեղեցում մասնակցեցին Առավոտյան ժամերգությանը, իսկ այնուհետև՝ Ս. Պատարագի սրբազան արարողությանը: Հավարտ Ս. Պատարագի պատարագիչ հոգևորականը բարի գալուստ մաղթեց համաժողովի մասնակիցներին՝ անդրադառնալով Ս. Վլասի վանական համալիրի պատմությանը, անցած դժվարին ուղուն, Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու առաջ ծառացած ներկա մարտահրավերներին ու անդուլ աշխատանքի շնորհիվ ձեռքբերված հաջողություններին:

Առաջին նիստն սկսվեց միասնական «Տերունական աղոթքով», որից հետո բացման խոսքով հանդես եկավ Տիրանայի և Համայն Ալբանիայի Անաստասիոս արքեպիսկոպոսը: Նա բարի գալուստ մաղթեց ներկաներին՝ հանգամանալից անդրադառնալով Եկեղեցու կյանքում երիտասարդներին վերապահված կարևոր դերին: Այնուհետև «Սինդեսմոսի» ընդհանուր քարտուղար Ռեբեկա Հուկուեյն ընթերցեց Եկեղեցու գահակալների գագաթնաժողովին ուղղված ողջույնի խոսքերը: Ողջույնի խոսքեր էին հղել Տիեզերական Պատրիարք Բարթուղիմեոս Ա-ը, Մոսկվայի և Համայն Ռուսիո Ալեքսի Բ Պատրիարքը, Հնդիկ Մալաբար Եկեղեցու Գահակալ Մար Բասիլեոս Թովմաս Մաթթեոս Բ-ն ու այլք: Բոլոր առաջնորդներն էլ իրենց օրհնության խոսքերում արժեվորում և գնահատում էին ուղղափառ երիտասարդների ընկերակցության գործունեությունը, հաջողություն մաղթում հանուն Քրիստոսի Եկեղեցու միության ու պայծառացման:

Կեսօրին բոլոր մասնակիցներն իրենց հատկացված վայրերում ներկայացրեցին երիտասարդական կազմակերպությունների մասին պատմող լուսանկարներ, թերթոններ, բուկլետներ, ձայնասկավառակներ և այլ ոիդակտիկ նյութեր: Այս ամենի մեջ իր ուրույն տեղն ուներ նաև Հայ Առաքելական Եկեղեցուն հատկացված մասը, ուր մասնավորապես ներկայացված էր Մայր Աթոռ Ս. Էջմիածինն ու հատկապես Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու երիտասարդաց կազմակերպության գործունեությունը՝ լուսանկարներով, տպագիր նյութերով, «Սաղմոս» երգչախմբի լազերային սկավառակով և այլ նյութերով: Միով բանիվ՝ այդ փոքրիկ անկյունն անխոս պատմում էր քրիստոնյա Հայաստանի և նրա երիտասարդաց միությունններից մեկի արգասաբեր գործունեության մասին: Զարմանալի էր, բայց փաստ, որ շատերն առաջին անգամ էին լսում Հայոց աշխարհի և առաքելահիմն մեր Եկեղեցու մասին: Ուստի, օգտվելով պատեհ առիթից, ջանում էինք մեր նոր ընկերներին պատմել Հայաստանի, նրա պատմության, հարուստ մշակույթի, առաքելահիմն Եկեղեցու, նրա գանձերի, սրբերի, աստվածպաշտության և այլնի մասին: Վստահաբար նմանատիպ հավաքներն են, որ խթանում են համագործակցության ոգին երիտասարդներիս մեջ և հույս ներշնչում ապագայի համար, ինչպես նաև նոր մտահղացումներ և ծրագրեր ծնում մեր հոգիներում:

Երեկոյան ներկայացվեցին երկու զեկուցումներ՝ *«Ուղղափառ երիտասարդությունը Կորեայում և ուղղափառության առաքելությունը ընդհանրապես Ասիայում»* և *«Ուղղափառ երիտասարդները Ս. Երկրում»* թեմաներով, որից հետո բուռն քննարկումներ ծավալվեցին:

Հունիսի 16-ի նիստն սկսվեց Ալբանիայի Անաստասիոս արքեպիսկոպոսի ոգեշունչ խոսքով: Վերջինս շատ հանգամանալի կերպով անդրադարձավ համաժողովի խորագրի՝ Գործքի Ա 8 համարի մեկնությանը՝ այն քննելով Աստվածաշունչ մատյանի և հայրախոսական աղբյուրների լույսի ներքո՝ կարևորելով հատկապես երիտասարդների դերը Քրիստոսի Եկեղեցու զորացման և ամրապնդման գործում: Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու Գահակալը նշեց. *«Մեր վկայությունը պետք է խարսխված լինի նախևառաջ Քրիստոսի փորձառության վրա, Աստվածորդին Ինքը պետք է լինի մեր բոլորիս կյանքի ուղենիշն ու առաջնորդը՝ հիշելով և ընդմիշտ ամրագրելով մեր մտքում, որ «վկայել» եզրը ոչ միայն նշանակում է արյամբ մարտիրոսանալը, այլ նաև անսակարկ և անմնացորդ ծառայությունը սոցիալական, մասնագիտական, ընկերային, համայնական և կյանքի այլ բնագավառներում»*:

Այնուհետև 1999-2003 թթ. «Սինդեսմոսի» ծավալած գործունեության մասին հաշվետվությամբ հանդես եկավ վարչությունը: Նույն օրը տեղի ունեցան նաև տարածաշրջանային համաժողովների նիստերը, որտեղ ի մի բերվեցին նախորդ տարիների արդյունքներն ու առաջադրվեցին նոր թեկնածուներ:

Հետաքրքիր և աշխույժ մթնոլորտում անցավ հունիսի 17-ի նիստը: Մասնավորապես այդ օրը «Սինդեսմոսին» անդամագրվեցին նոր երիտասարդական կազմակերպություններ և միություններ, որոնց թվում էր նաև Կոտայքի թեմի՝ Ջրվեժի Ս. Կաթողիկե եկեղեցու երիտասարդաց միությունը: Վերջինիս ատենապետուհի Լիլիթ Սարգսյանը շատ հակիրճ, բայց բովանդակալից խոսեց մեր դրախտավայր երկրի, քրիստոնյա Հայաստանի մասին՝ անդրադառնալով իրենց երիտասարդաց միության գործունեությանը, որից հետո միաձայն քվեարկությամբ նրանք դարձան «Սինդեսմոսի» անդամ:

Շատ հետաքրքիր էին նաև տարբեր խմբերում ընթացող քննարկումները զանազան հրատապ խնդիրների շուրջ: Այստեղ հարկ ենք համարում նշել թեմաներից մի քանիսը.

*«Ուղղափառ Եկեղեցին միավորված Եվրոպայում»,*

*«Աստվածաշնչի սերտողության մեթոդաբանությունը»,*

*«Ուղղափառ Եկեղեցին գլոբալիզացվող աշխարհում»,*

*«Երիտասարդությունը և խնդիրները»,*

*«Ի՞նչ ուղղությամբ է գնում էկումենիկ շարժումը»* և այլն:

Նմանատիպ քննարկումներն ավելի գրավիչ էին դարձնում առօրյան՝ նոր թարմություն հաղորդելով մեզ բոլորիս: Դրանք ավելի բուռն կերպով ընթանում էին երբեմն նույնիսկ ողջ օրվա ընթացքում, որովհետև շատ հաճախ կարծիքների բախում էր լինում: Սակայն, վերջիվերջո, հենց այս կարծիքների փարաբնույթ լինելն էր, որ ծնում էր ճշմարտությունը:

Հունիսի 18-ը ևս հագեցած էր մասնակիցների համար՝ զանազան քննարկումներ, Աստվածաշնչի սերտողություն և այլն: Իսկ երեկոյան տեղի ունեցած միջոցառման ընթացքում մասնակիցները ներկայացրեցին իրենց ազգային կերակուրները, խմիչքները, ուտեստները, ինչպես նաև ազգային երգերն ու պարերը:

Հունիսի 19-ի առավոտյան մատուցվեց Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միացյալ Ս. Պատարագ: Պատարագիչն էր Հնդիկ Ուղղափառ Եկեղեցու Մադրասի թեմի Մար Իրինեոս Միտրոպոլիտը, որին սպասավորում էին երեք քահանա և երկու սարկավագ՝ Հնդիկ Մալաբար Եկեղեցուց, մեկ սարկավագ՝ Ղպտի Ուղղափառ Եկեղեցուց, և մեկ սարկավագ՝ Հայ Եկեղեցուց: Սրբազան արարողության ընթացքում հայերեն հնչեցին «Սուրբ սուրբն» ու «Տէր ողորմեա»-ն:

Նույն օրը, երեկոյան, տեղի ունեցան վարչության նոր անդամների ընտրությունները: Ընտրվեցին նոր նախագահ և վարչության անդամներ: Այնուհետև ցուցադրվեց «Ալբանիայի Ուղղափառ Եկեղեցու վերածնունդը» խորագրով լազերային սկավառակը, որի ընթացքում իր մեկնաբանություններն էր տալիս Ալբանիայի Անաստասիոս արքեպիսկոպոսը: Հիրավի այդ Եկեղեցին վերածնունդ է ապրում կոմունիստական բռնատիրության փապալումից հետո: Նոր Հովվապետի ջանքերով փասը տարվա ընթացքում 80 նոր եկեղեցի է կառուցվել, 70-ը ավերակներից վերաշինվել են, 140-ից ավելի խոնարհված եկեղեցիներ՝ վերանորոգվել, իսկ հինգ վանքերում գործում է վանական կյանքը: Մի խոսքով՝ ամլության տարիներից հետո Ալբանիայում, որի ազգաբնակչության 70 %-ը մուսուլմաններ են, այսօր ուղղափառությունը վերելք է ապրում:

Գազաթնաժողովին թարմ լիցք հաղորդեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի Պատրիարքարանի Արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի նախագահ Կիրիլ Միտրոպոլիտի գալուստը: Նա շատ հետաքրքիր զեկուցում կարդաց քրիստոնյա աշխարհի առաջ ծառացած մարտահրավերների մասին, որոնց լուծման գործում մեծ դերակատարություն ունեն նաև երիտասարդության ներկայացուցիչները: Երեկոյան ներկաները դիտեցին «Սինդեսմոսի» մասին պատմող լազերային սկավառակը, ուր համակողմանիորեն ներկայացված է կազմակերպության ողջ գործունեությունը:

Համաժողովի շրջանակներում մասնակիցներն այցելեցին նաև վանական համալիրներ՝ ի մոտո ծանոթանալով վանականների առօրյային ու նրանց կենցաղին:

*ՏԻԳՐԱՆ ՄՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆ*

# ՀԱՆԳԻՍՏ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ՍԱՀԱԿ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԱՇԱԿԵՐՏՅԱՆԻ

Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգը սրտի ցավով հայտնում է Դամասկոսի հայոց թեմի Սուրբ Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Սահակ ավագ քահանա Աշակերտյանի վախճանման լուրը:

Ազգիս Վեհափառ Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն Արժանապատիվ Տեր Հոր վախճանման կապակցությամբ իր ցավակցությունն է հայտնել թեմի հոգևոր սպասավորներին՝ գլխավորությամբ առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Եփրեմ աբեղա Սարգսյանի, թեմական վարչության անդամներին և հանգուցյալի հարազատներին:

Տ. Սահակ ավագ քահանա Աշակերտյանը ծնվել է 1920 թ.: 1974 թվականից ստանալով քահանայության աստիճան՝ շուրջ 30 տարիներ նվիրյալ իր ծառայությունն է բերել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցում՝ որպես հոգևոր հովիվ Դամասկոսի հայոց թեմի Սուրբ Սարգիս եկեղեցու:

Խունկ և օրհնություն հանգուցյալի հիշատակին:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԻՏԱԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Հուլիսի 1-ին Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Իտալիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեին:

Շնորհավորելով դեսպանին նոր նշանակման համար՝ Վեհափառ Հայրապետն արդյունաշատ աշխատանք մաղթեց նրան՝ ուրախությամբ նշելով հայ-իտալական զարգացող հարաբերությունների մասին:

Զրույցի ընթացքում Հայոց Հայրապետն անդրադարձավ նաև երկու Եկեղեցիների միջև առկա եղբայրական կապերին:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԱԿ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Նույն օրը Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՄԱԿ-ի փախստականների հարցով գերագույն հանձնակատարի տեղակալ Կամել Մորջանեին և Հայաստանում հանձնակատարի ներկայացուցիչ Լյոդ Դեյքին:

Ողջունելով ՄԱԿ-ի ներկայացուցիչներին՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց այն բոլոր ծառայությունների համար, որ իրականացնում են Հայաստանում՝ հոգածություն դրսևորելով հայ փախստականների նկատմամբ:

«Անշուշտ խնդիրները դեռ շատ են: Գիտենք նաև, որ Եկեղեցին այս ասպարեզում կարևոր առաքելություն ունի»,- ասաց Նորին Սրբությունը՝ պատրաստակամություն հայտնելով աջակցել փախստականների օգնության գործին:

Իր հերթին պրն Մորջանեն անդրադարձավ Հայաստանում իրականացվող ծրագրերին:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Հուլիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՊՀ երկրների իրավաբանների միջազգային միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության դատական կառույցների մի խումբ իրավաբանների՝ միջազգային իրավունքի հարցերին նվիրված երևանյան գիտաժողովի մասնակիցներին:

Վեհափառ Հայրապետն իր մաղթանքն ու օրհնությունը տվեց հյուրերին՝ նշելով, որ նմանատիպ ժողովները, աշխատանքային փորձառության փոխանակման կարևոր միջոց լինելու հետ մեկտեղ, նպաստում են երկրների միջև բարեկամության ու փոխհասկացողության մթնոլորտի ձևավորմանը:

## ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԿԱՆԱԴԱ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Հուլիսի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կանադայի խորհրդարանի Կանադա-Հայաստան բարեկամության պատգամավորական խմբի անդամներին՝ Կանադայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Արա Պապյանի ուղեկցությամբ:

Նորին Սրբությունը ողջունեց երկու երկրների խորհրդարանների միջև ստեղծված բարեկամական կապերը՝ վստահությամբ, որ նմանատիպ փոխհարաբերությունները նպաստում են ժողովրդավարական արժեքների հաստատմանը Հայաստանի երիտասարդ Հանրապետությունում: Վեհափառ Հայրապետը միաժամանակ համոզմունք հայտնեց, որ այս ջերմ կապերը կծառայեն մարդկության առաջընթացին ու խաղաղության ամրապնդմանը: Անդրադարձ եղավ նաև մարդկության դեմ իրականացված հանցագործությունների, մասնավորապես Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման կարևորությանը այլ երկրների խորհրդարանների կողմից, ինչը կկանխի նման ոճրագործության կրկնությունը որևէ այլ ազգի նկատմամբ:

Զրույցի ընթացքում հյուրերը Վեհափառ Հայրապետին ներկայացրեցին խմբի աշխատանքները, հետաքրքրվեցին Հայ Եկեղեցու գործունեությամբ:

# ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ

Հուլիսի 28-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Սիրիայի Արաբական Հանրապետության գործերի նորանշանակ ժամանակավոր հավատարմատար Հասան Ռասլանին:

Ողջունելով նորանշանակ հավատարմատարի այցը հայոց հոգևոր կենտրոն՝ Վեհափառ Հայրապետն անդրադարձավ երկու երկրների միջև առկա ջերմ հարաբերություններին, վստահություն հայտնեց, որ այդ հարաբերությունները կշարունակեն զարգանալ և խորանալ տարբեր մակարդակներում ու ոլորտներում: Վեհափառ Հայրապետն անդրադարձավ նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Ասորի Ուղղափառ Եկեղեցու միջև եղբայրական կապերին՝ նշելով, որ այսօր Ս. Էջմիածնի երիտասարդ միաբաններից մեկն իր ուսումնառությունը շարունակում է Դամասկոսում Ասորի Ուղղափառ Եկեղեցու Ս. Եփրեմ Աստվածաբանական ճեմարանում:

Նորին Սրբությունն անդրադարձավ նաև 2001 թ. Հայոց Մեծ եղեռնի տարելիցին Դեր Զոր կատարած իր ուխտագնացությանը, որը երկու ժողովուրդների միջև բարեկամական հարաբերությունների զարգացման մի նոր առիթ հանդիսացավ:

Հանդիպման ավարտին պրն Ռասլանը, շնորհակալություն հայտնելով Վեհափառ Հայրապետին ընդունելության համար, հավաստեց, որ նույն եռանդով կշարունակի իր նախորդների աշխատանքը:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Հուլիսի 5-ին, շաբաթ. - Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:***

Այսօր Մայր Տաճարում, Իջման Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Տաճատ աբղ. Ծատուրյանը:

***Հուլիսի 6-ին, կիրակի. - Դ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նարեկ եպս. Շաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 12):

Հավարտ Ս. Պատարագի կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

***Հուլիսի 12-ին, շաբաթ. - Սրբոցն Տրդատայ թագաւորին մերոյ եւ Աշխէնի տիկնոջն եւ Խոսրովիդխտոյն:***

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ս. Տրդատ արքայի Բաց Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Խաչատուր աբղ. Կնյազյանը:

***Հուլիսի 13-ին, կիրակի. - Գիւտ տփոյ Սրբուհւոյ Աստուածածնի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նորվան եպս. Զաքարյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 14):

***Հուլիսի 20-ին, կիրակի. - Զ. կիր. զկնի Հոգեգալստեան:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Հաւատամք յեկեղեցի սուրբ, հաղորդութեամբ սրբոց...» (Ժամագիրք) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 17):

***Հուլիսի 27-ին, կիրակի. - ՎԱՐԴԱՎԱՌ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մովսես եպս. Մովսիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը «Դա՛ է Որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ, Դմա՛ լուարուք» (Մատթ. ԺԷ 5) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 20):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Հուլիսի 28-ին, երկուշաբթի. - Բ. օր Վարդավառի: Յիշատակ մեռելոց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Նշան աբղ. Պետրոսյանը:

Ս. Պատարագի սրբազան արարողությունից հետո կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն՝ վասն համորեն ննջեցելոց:

# "ЭЧМИАДЗИН" ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА

**(Июль 2003 г.)**

## ПАТРИАРШИЕ ЭНЦИКЛИКИ И БЛАГОСЛОВЕНИЯ

1. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, Его Высокопреосвященству архиепископу Нерсесу Позапаляну по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 5 июля 2003 г., № 199 (с. 3-4).
2. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Арманду Арапяну по случаю его награждения орденом «Св. Григория Просветителя», 4 июля 2003 г., № 176 (с. 5-6).
3. Энциклика Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, г-ну Фадею Саргсяну по случаю его награждения орденом «Св. Саак – Св. Месроп», 4 июля 2003 г., № 173 (с. 7-8).
4. Патриаршие награды (пожалование в июле 2003 г. энциклик и благословений Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, духовным и светским лицам, оказавшим большие услуги Армянской церкви) – (с. 9).
5. Поздраления Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Конституции Республики Армения, 4 июля 2003 г. (с. 10).
6. Соболезнования Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, семье Армена Хостикяна, 24 июля 2003 г. (с. 11).

## ПРОПОВЕДИ

7. Проповедь Его Преосвященства епископа Нарека Шакаряна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургию Обета, 6 июля 2003 г. (с.12-13).
8. Проповедь Его Преосвященства епископа Норвана Закаряна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургию Обета, 13 июля 2003 г. (с. 14-16).
9. Проповедь Его Преосвященства епископа Вазгена Мирзаханяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургию Обета, 20 июля 2003 г. (с. 17-19).
10. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Мовсеса Мосисяна в Кафедральном соборе Святого Эчмиадзина на Литургию Обета, 27 июля 2003 г. (с.20-24).

## РЕЛИГИОЗНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

11. **ПРЕПОДОБНЫЙ АДАМ МАКАРЯН** – «Иосиф же муж Ее» (посвяшён стихи 1, 19 от Матфея) – (с. 25-27).

12. **ВЛАДИМИР СОЛОВЬЕВ** – О жертве и милостыне (отрывок книги «Духовные основы жизни». перевод с русского иеромонаха Геворка Сарояна) – (с. 28-36).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

13. **АРАМ ОГАНИСЯН** – Первый военно-политический конфликт Киликийской Армении с египетскими мамлюками (научное исследование) – (с. 37-43).
14. **РУБЕН СИМОНЯН** – Крепость Махканаберда (научное исследование) – (с. 44-49).

### Киликийские эпизоды

15. **МИСАК ДЖЕВАХИРДЖЯН** – История одного тимпана (научное исследование) – (с. 50-54).
16. **САМВЕЛ ШАГИНЯН** – Пещеры в процессе формирования менталитета и культуры армянского народа (научное исследование) – (с. 55-74).
17. **ГЕВОРК ХУДИНЯН** – Армянская Апостольская церковь и армянские национальные партии в 1889-1891 гг. (научное исследование) – (с. 75-79).
18. **ОГАНЕС ЗАТИКЯН** – Героический священник Ханасора (посвящается жизни священника Григора Тер-Аваkяна (1840-1921). Помещены также воспоминание А. Ширванзаде о Тер-Григоре) – (с. 80-84).
19. **ПАРГЕВ ВАЙОЦДЗОРЕЦИ** – Письма Католикоса Геворка VI Чорекчяна дьяконам Первопрестольного Святого Эчмиадзина, находившимся на учебе в Москве (воспоминание и тексты) – (с. 85-88).

## РЕЦЕНЗИИ

20. **АКОП КЕОСЕЯН** – Новооткрытая страница религиозных исследований Николаёса Адонца (об издании новоявленной книги «Проблема икон» Николаёса Адонца) – (с. 89-93).
21. **АВЕТ АВЕТИСЯН** – Армянские иконы (о книге «Армянские иконы» доктора проф. Граварда Акопяна) – (с. 94-96).
22. **АРТУР АНДРАНИКЯН** – Армянский дух в изысканиях Костана Зарьяна (о недавно изданных книгах Костана Зарьяна) – (с. 97-100).

## В СВЯТОМ ПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

23. **ДЬЯКОН АРТУР ОГАНИСЯН** – Общее собрание Конгрегации Св. Эчмиадзина в Святом Престоле, 24-27 июля 2003 г. Помещено слово открытия и слово закрытия Его Святейшества Гарегина II (с. 101-106).
24. Освящение новой церкви Святых Мучеников сёла Тегеник Котайкской области Его Святейшеством Гарегином II, Католикосом всех армян, 5 июля 2003 г. (с. 107).
25. Паломничество Епархии армянской церкви Грузии в Первопрестольный Св.

Эчмиадзин, 20 июля 2003 г. (с. 108).
26. Паломничество Епархии армянской церкви Юга России в Первопрестольный Св. Эчмиадзин, 27 июля 2003 г. (с. 109).
27. Выставка работ детей деревни Гай в Первопрестольном Св. Эчмиадзине, 5 июля 2003 г. (с. 110).

## В армянской западной епархии США

28. Церемония церковного братства в престоле епархии, 12 июля 2003 г. (с. 111).
29. Судья Арманд Арабян награжден орденом «Св. Григория Просветителя», Вен Найс (США), 24 июля 2003 г. (с. 112-113).

## В армянской восточной епархии США

30. Встреча чемпиона мира по шахматам Гарри Каспарова с соотечественниками в зале им. Гайка и Алисы Гавукчян престола епархии, 13 июля 2003 г. (с.114).

## МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ

31. **ГАЯНЭ АЛЕКСАНЯН** – XII Генеральная Ассамблея Конференции европейских церквей в г. Трондхайме (Норвегия), 25 июня – 2 июля 2003 г. (с. 115-117).
32. **ДЬЯКОН ТИГРАН БАГУМЯН** – Церковный союз церкви Св. Катогике села Джрвеж стал членом «Синдесмоса», Дюррес (Албания), 14-22 июля 2003 г. (с. 118-121).
33. Кончина Преподобного Саака Ашакертяна (Некролог) – (с. 122).

## АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ

34. Аудиенция у Его Святейшества Гарегина II нового Чрезвычайного и Полномочного посла Италии в Республике Армения г-на Марко Клементе, 1 июля 2003 г. (с. 123).
35. Аудиенция у Его Святейшества Гарегина II представителей ООН, 1 июля 2003 г. (с. 123).
36. Аудиенция у Его Святейшества Гарегина II участников Симпозиума, посвященного вопросам международного права, 3 июля 2003 г. (с. 124).
37. Аудиенция у Его Святейшества Гарегина II членов парламентской группы канадо-армянской дружбы, 4 июля 2003 г. (с. 124).
38. Аудиенция у Его Святейшества Гарегина II нового Временного поверенного в делах Сирийской Арабской Республики в Республике Армения г-на Гасана Раслана, 28 июля 2003 г. (с. 125).

39. Краткие церковные новости. Информация о Святой Службе, проповедях и других церемониях в Кафедральном соборе и Святом Престоле Эчмиадзина в течение июля 2003 г. (с. 126).

# "ETCHMIADZIN" OFFICIAL MONTHLY REVIEW OF HOLY ETCHMIADZIN
( July 2003)

## PONTIFICAL ENCYCLICALS AND LETTERS OF BLESSING


1. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to His Eminence Archbishop Nerses Bozahalian on the occasion of his decoration with the Order of "Saint Gregory the Illuminator", July 5, 2003, no. 199 (p. 3-4).
2. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Armand Arabian on the occasion of his decoration with the Order of "Saint Gregory the Illuminator", July 4, 2003, no. 176 (p. 5-6).
3. Encyclical of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Fadey Sargsian on the occasion of his decoration with the Order of "Saint Sahak – Saint Mesrop", July 4, 2003, no. 173 (p. 7-8).
4. Pontifical Awards (Encyclicals and Blessing messages granted in July 2003 by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to devoted clergymen and laymen of the Armenian Church) – (p. 9).
5. Message of Congratulations of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, on the occasion of Constitution Day of the Republic of Armenia, July 4, 2003 (p.10).
6. Message of Condolence of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the family of Armen Khostikian, July 24, 2003 (p.11).


## SERMONS


7. Sermon delivered by His Grace Bishop Narek Shakarian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath, July 6, 2003 (p.12-13)
8. Sermon delivered by His Grace Bishop Norvan Zakarian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath, July 13, 2003 (p.14-16).
9. Sermon delivered by His Grace Bishop Vazgen Mirzakhanian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath, July 20, 2003 (p.17-19).
10. Sermon delivered by His Grace Bishop Movses Movsissian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of the Divine Liturgy of Oath, June 27, 2003 (p.20-24).


## RELIGIOUS STUDIES


11. **REV. FATHER ADAM MAKARIAN** – "Her Husband, Joseph" (investigation devoted to the verse Matthew 1:19) – (p. 25-27).
12. **VLADIMIR SOLOVIEV** – The Victim and Mercy (a passage from the book "Spiritual Bases of Life" translated from Russian by Rev. Fr. Gevork Saroyan) – (p. 28-36).

## HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES

13. **ARAM HOVHANNISIAN** – The First Political and Military Conflict between Cilician Armenia and the Sultanate of the Egyptian Mamlukes (Investigation) – (p.37-43).
14. **RUBEN SIMONIAN** – The Fortress of Mahkanaherd (Investigation) – (p.44-49).

**Cilician Episodes**

15. **MISSAK JEVAHIRIAN** – History of a Tympanum (Investigation) – (p. 50-54).

16. **SAMVEL M. SHAHINIAN** – Caverns in the Process of the Formation of the Mentality and Culture of the Armenian People (Investigation) – (p. 55-74).
17. **GEVORK KHUDINIAN** – The Armenian Apostolic Church and Armenian National Parties in 1889-1891 (Investigation) – (p. 75-79).
18. **HOVHANNES ZATIKIAN** – The Heroic Priest of Khanasor (devoted to the life and the liberation struggle of Rev. Father Grigor Ter-Avakian (1840-1921). Thoughts of Shirvanzadeh re: Father Grigor) – (p.80-84).
19. **PARGEV VAYOTSDZORETSI** – Letters of His Holiness Catholicos Gevork VI Chorekchian of Blessed Memory to Deacons of the Mother See Studying in Moscow (memoirs and texts) – (p. 85-88).

## CRITICAL REVIEW

20. **HAKOB KEOSEYAN** – A Newly Discovered Page of the Religious Studies of Nicholas Adontz (regarding the edition of the newly discovered book "The Problem of Icons" by Nicholas Adontz) – (p. 89-93).
21. **AVET AVETISIAN** – Dominical Armenian Icons (Regarding the book "Dominical Armenian Icons" by Professor Dr. Hravard Hakobian) – (p.94-96).
22. **ARTHUR ANDRANIKIAN** – The Armenian Spirit in the Research of Kostan Zarian (Regarding the recently published books by Kostan Zarian) – (p.97-100).

## IN THE MOTHER SEE AND THE DIOCESES

23. **DEACON ARTHUR HOVHANNISIAN** – Conference of the Brotherhood of Holy Etchmiadzin in the Mother See, July 24-27, 2003. Opening and closing speeches of His Holiness Karekin II (p.101-106).
24. Consecration of the Newly Built Church of the Holy Martyrs in the Village of Teghenik of the Diocese of Kotayk by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, July 5, 2003 (p.107).
25. Pilgrimage of the Diocese of the Armenian Church of Georgia to the Mother See of Holy Etchmiadzin, July 20, 2003 (p.108).
26. Pilgrimage of the Diocese of the Armenian Church of Southern Russia to the Mother See of Holy Etchmiadzin, July 27, 2003 (p.109).
27. Art Exhibition of children's works from the village of Gai in the Mother See of Holy Etchmiadzin, July 5, 2003 (p.110).

**In the Western Diocese of the Armenian Church of North America**

28. Ceremony of the Church Brotherhood in the Diocese See, July 12, 2003 (p. 111).
29. Judge Armand Arabian was decorated with the Order of "Saint Gregory the Illuminator", Venice (USA), July 24, 2003 (p. 112).

**In the Eastern Diocese of the Armenian Church of North America**

30. Meeting of the World Chess Champion Garry Kasparov with his Compatriots in the Haig and Alice Kavookjian Hall of the Diocese, July 13, 2003 (p. 114).

## INTER-CHURCH RELATIONS

31. **GAYANE ALEXANIAN** – 12th General Assembly of the Conference of European Churches (CEC) in Trondheim, Norway, June 25 – July 2, (p.115-117).
32. **DEACON TIGRAN BAGHOUMIAN** – The Church Youth Organization of the St. Katoghike Church of Jrvej became a member of "Syndesmos", Durrës (Albania), July 14-22, 2003 (p. 118-121).
33. Rev. Father Sahak Archpriest Ashakertian enters eternal rest. (Obituary) – (p. 122).

## AUDIENCES AT THE MOTHER SEE

34. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Marco Clemente, newly appointed Ambassador Extraordinary and Plenipotentiary of Italy to the Republic of Armenia, July 1, 2003 (p.123).
35. Audience granted by His Holiness Karekin II to Representatives of the UN, July 1, 2003 (p.123).
36. Audience granted by His Holiness Karekin II to Members of the Symposium devoted to International Law, July 3, 2003 (p.124).
37. Audience granted by His Holiness Karekin II to Members of the Canada-Armenia Parliamentary Friendship Group, July 4, 2003 (p.124).
38. Audience granted by His Holiness Karekin II to Mr. Hasan Raslan, newly appointed Chargé d'Affaires of the Arabic Republic of Syria to the Republic of Armenia, July 28, 2003 (p.125).

39. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during July 2003 (p.126).

# "ETCHMIADZINE"
# ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(Juillet 2003)

## ENCYCLIQUES PONTIFICALES ET MESSAGES DE BENEDICTION


1. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à Son Eminence l'archevêque Nerses Pozapalian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », 5 juillet 2003, no.199 (p. 3-4).
2. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Armand Arabian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », 4 juillet 2003, no.176 (p. 5-6).
3. Encyclique de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à M. Fadey Sargsian à l'occasion de sa distinction de l'Ordre « Saint Sahak – Saint Mesrop », 4 juillet 2003, no.173 (p. 7-8).
4. Distinctions pontificales (Encycliques pontificales et messages de bénédiction accordés par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à des personnalités religieuses et laïques ayant rendu d'éminents services à l'Eglise arménienne au mois de juillet 2003) – (p. 9).
5. Message de félicitations de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à l'occasion du Jour de la Constitution de la République d'Arménie, 4 juillet 2003 (p. 10).
6. Message de condoléances de Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, à la famille d'Armen Khostikian, 24 juillet 2003 (p. 11).


## SERMONS


7. Sermon de Son Eminence l'évêque Narek Chakarian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Messe du Vœu, 6 juillet 2003 (p. 12-13).
8. Sermon de Son Eminence l'évêque Norvan Zakarian a la Cathédrale de Saint Etchmiadzine à la Messe du Vœu, 13 juillet 2003 (p. 14-16).
9. Sermon de Son Eminence l'évêque Vazguen Mirzakhanian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Messe du Vœu, 20 juillet 2003 (p. 17-19).
10. Sermon de Son Eminence l'archevêque Movses Movsissian à la Cathédrale de Saint Etchmiadzine à la Messe du Vœu, 27 juillet 2003 (p. 20-24).


## ETUDES RELIGIEUSES


11. **REVEREND ADAM MAKARIAN** – «Joseph, son fiancé » (recherche scientifique sur le vers de Matthieu 1, 19) – (p. 25-27).
12. **VLADIMIR SOLOVIEV** – Sur la victime et la charité (un passage du livre « Les fondements spirituels de la vie », traduit du russe par Fr. Guévork Saroyan) – (p. 28-36).

## ETUDES HISTORICO-PHILOLOGIQUES


13. **ARAM HOVHANNISSIAN** – Le premier conflit politique et militaire de l'Arménie Cilicienne avec le sultanat des Mamelouks d'Egypte (recherche scientifique) – (p. 37-43).
14. **ROUBEN SIMONIAN** – La forteresse de Mahkanaberd (recherche scientifique) – (p. 44-49).


### Episodes ciliciens


15. **MISSAK DJEVAHIRIAN** – Histoire d'un tympan (recherche scientifique) – (p. 50-54).
16. **SAMVEL M. CHAHINIAN** – Les cavernes dans le processus de la formation de la mentalité et de la culture du peuple arménien (recherche scientifique) – (p.55-74).
17. **GUEVORK KHOUDINIAN** – L'Eglise Apostolique arménienne et les partis nationaux arméniens aux années 1889-1891 (recherche scientifique) – (p. 75-79).
18. **HOVHANNES ZATIKIAN** – Le prêtre héroïque de Khanassor (consacré à la vie et au combat de libération nationale du Révérend Grigor Ter-Avakian (1840-1921). Pensées de Chirvanzadeh sur le Révërend Père Grigor) – (p. 80-84).
19. **PARGUEV VAYOTSDZORETSI** – Lettres de Sa Sainteté le Catholicos Guévork VI Tchorektchian de bienheureuse mémoire aux diacres du Saint-Siège d'Etchmiadzine étudiant à Moscou (Mémoires et textes) (p. 85-88).


## CRITIQUE LITTERAIRE


20. **HACOB KEUSSEYAN** – Une page nouvellement découverte des recherches sur la religion de Nicolas Adontz (sur la publication du livre nouvellement découvert de Nicolas Adontz « Le problëme des icônes ») – (p. 89-93).
21. **AVET AVETISSIAN** – Les icônes arméniennes (sur le livre «Les icônes arméniennes » du professeur Dr Hravard Hacobian) – (p. 94-96).
22. **ARTHUR ANDRANIKIAN** – L'esprit arménien dans les recherches de Kostan Zarian (sur les livres récemment publiés de Kostan Zarian) – (p. 97-100).


## AU SAINT- SIEGE ET DANS LES DIOCESES


23. **DIACRE ARTHUR HOVHANNISSIAN** – Réunion générale de la Congrégation de saint Etchmiadzine au Saint-Siège, 24-27 juillet 2003. Interventions d'inauguration et de fermeture de Sa Sainteté Garéguin II (p. 101-106).
24. Bénédiction de la nouvelle église des Saints-Martyrs du village de Téghénik du district de Kotayk par Sa Sainteté Garéguin II, Catholicos de tous les Arméniens, 5 juillet 2003 (p. 107).
25. Pèlerinage du Diocèse de l'Eglise Arménienne de Géorgie au Saint-Siège d'Etchmiadzine, 20 juillet 2003 (p. 108).

26. Pèlerinage du Diocèse de l'Eglise Arménienne de la Russie du Sud au Saint-Siège d'Etchmiadzine, 27 juillet 2003 (p. 109).
27. Exposition des œuvres des enfants du village de Hay au Saint-Siège, 5 juillet 2003 (p. 110).

### Nouvelles du Diocèse occidental de l'Eglise Arménienne d'Amérique du Nord

28. La cérémonie de la Confrérie de l'Eglise au Siège diocésain, 12 juillet 2003 (p. 111)
29. Le juge Armand Arabian décoré de l'Ordre « Saint Grégoire l'Illuminateur », Venice (Etats-Unis d'Amérique), 24 juillet 2003 (p. 112-113).

### Nouvelles du Diocèse oriental de l'Eglise Arménienne d'Amérique du Nord

30. Rencontre de Garry Kasparov, champion du monde du jeu d'échecs, avec ses compatriotes, Salle Hayk et Alice Gavouktchian du Siège diocésain, 13 juillet 2003 (p. 114).

## RELATIONS INTER-ECCLESIASTIQUES

31. **GAYANE ALEXANIAN** – XII$^{e}$ Assemblée générale de la Conférence Ecclésiastique Européenne (CEC) à Trondheim (Norvège), 25 juin – 2 juillet 2003 (p. 115-117).
32. **DIACRE TIGRAN BAGHOUMIAN** – L'Union de l'église St.-Katoghiké de Djervej est devenue membre de « Sindesmos », Durrës (Albanie), 14-22 juillet 2003 (p. 118-121).
33. Décès du Très révérend archiprêtre Sahak Achakertian (Nécrologue) – (p. 122).

## AUDIENCES AU SAINT-SIEGE

34. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Marco Clemente, Ambassadeur Extraordinaire et Plénipotentiaire de l'Italie nouvellement nommé en République d'Arménie, 1$^{er}$ juillet 2003 (p. 123).
35. Audience accordée par Sa Sainteté Garéguin II aux représentants de l'O.N.U., 1$^{er}$ juillet 2003 (p. 123).
36. Audience accordée par Sa Sainteté Garéguin II aux participants du Symposium consacré aux questions du droit international, 3 juillet 2003 (p. 124).
37. Audience accordée par Sa Sainteté Garéguin II aux membres du groupe parlementaire de l'amitié Canada-Arménie, 4 juillet 2003 (p. 124).
38. Audience accordée par Sa Sainteté Garéguin II à M. Hassan Raslan, Chargé d'affaires de la République Arabe de Syrie nouvellement nommé en République d'Arménie, 28 juillet 2003 (p. 125).

39. Brèves nouvelles ecclésiastiques. Information sur les Saintes Messes, les sermons et les autres services accomplis au Saint-Siège et à la Cathédrale d'Etchmiadzine au mois de juillet 2003 (p. 126).

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала "Эчмиадзин"**
**Rédaction de la revue "Etchmiadzine", Etchmiadzine, Arménie**

ԴԱՄԻՉ՝ 77764

---

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ